

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ

ՅԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Հրատարակիչ՝ *Հայաստանի Հանրապետական
կուսակցություն*

Երեւան – 2016

**Նվիրվում է
Գարեգին Նժդեհի ծննդյան
130-ամյակին**

Գ. Նժդեհ, Յիշի՛ր պատերազմը: Հրատարակիչ՝ Հայաստանի
Հանրապետական կուսակցություն: Եր., 2016, 159 էջ:

Ներկա ժողովածուի մեջ ամփոփված են Գ. Նժդեհի «Յիշի՛ր
պատերազմը» հոդվածաշարը, «Նորահայտ նամակներ»-ը եւ Բոստոնի
«Հայրենիք» օրաթերթում տպված չորս հոդվածները, որոնք դուրս են
մնացել նրա «Երկեր»-ի երկհատորյակից եւ «Հատընտիր»-ից:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գարեգին Նժդեհի «Երկեր»-ի երկհատորյակից (Եր., 2002) եւ «Հատընտիր»-ից (Եր., 2006) հետո հայտնաբերվել ու հրատարակվել են նոր հոդվածներ եւ նամակներ:

Ներկա ժողովածուի մեջ ամփոփված են Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում հրապարակված «Յիշի՛ր պատերազմը» հոդվածաշարը (Եր., 2013), ԱՄՆ Ցեղակրօն Ուխտերի հայտնի գործիչ Հովհաննես Հովհաննեսյանին հղված նամականին («Նորահայտ նամակներ», Եր., 2011) եւ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում տպված չորս հոդվածները:

Նկատի ունենալով Գ. Նժդեհի երկերի ամբողջացման անհրաժեշտությունը՝ նպատակահարմար համարվեց այս ամենը տպագրել մեկ գրքով:

ՅԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՍԸ

*Իր ցեղի ծայնին չհնազանդելով
ժողովուրդը պատժում է մահուամբ:*

Տարիներէ ի վեր իմ մտածումը կը դառնայ մի հիմնական հարցի շուրջը. ճիշդ այնպէս, ինչպէս կալանաւորը անվերջ կը դառնայ այն սիւնի շուրջը, որին շղթայուած է ինքը:

Իմ «Բաց նամակներ հայ մտաւորականութեան» յօդուածա-
շարքը մի վճռական փորձ էր՝ հայ քաղաքական միտքը ներգործօն
կերպով զբաղեցնելու մեր ժողովրդի ֆիզիքական ինքնապաշտ-
պանութեան խնդրով: Իսկ «Որդիների պայքարը հայրերի դէմ» իմ
գիրքը մի անհանգստացուցիչ աղաղակ էր հայութեան վտանգուած
ապագայի մասին:

Այդ երկու աշխատութեանց մէջ ցանցնուած մտածումներս
կարելի պիտի լինէր բիրտեղացնել հետեւեալ հատուածի մէջ.-

«Զնայած որ հարեւաններէդ մահուան ես դատապարտուած,
հայ ժողովուրդ, բայց եւ այնպէս մահուան դատավճռից խուսա-
փելու բազում ճամբաներ ունիս»:

Ահա այդ մահէն խուսափելու միջոցներէն մէկը հայութեան
ցոյց տալու համար է, որ ձեռնարկում եմ այս նոր աշխատութեանը՝
«Յիշի՛ր պատերազմը»:

I ԿԱՅ ՄԱՐԴԸ՝ ԿԱՅ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Մարդն ու պատերազմը միաժամանակ են յայտնուել մեր երկրագնդի վրայ: Այսպես է վկայում մարդկային ցեղի պատմութիւնը, որը չունի մի հատիկ էջ, որ գրուած չլինէր արիւնով:

Մարդը աշխարհ է եկել սեղմուած բռունցքով, որ իր առաջին զէնքն է եղել՝ միշտ պատրաստ յարձակուելու, հարուածելու, ոչնչացնելու այն ամէնը, ինչ որ սպառնացել է իր գոյութեան:

Նա իր թշնամին է համարել այն բոլոր ոյժերը, որոնց գոյութեան փաստը այս կամ այն ձեւով ու չափով փորձել է սահման դնել իր տարամերժ «ազատութեան»: Եւ եթէ մի օր միանալով իր նմաններին, մղուել է վարելու ցեղային՝ եւ ապա դարեր յետոյ պետական կեանք, դա եղել է ոչ թէ գոյութեան պայքարին վերջ տալու ցանկութեամբ, այլ այդ վերջինը աւելի հեշտ եւ արգասաւոր դարձնելու նպատակով:

Առաջին կազմակերպութիւնը, որին ծնունդ է տուել մարդը, եղել է զինուորականը. ինչպէս եւ առաջին արուեստը, որ մշակել է նա, եղել է ռազմարուեստը:

Բնագրական մարտիկ էր մարդը, երբ մենակեաց էր՝ դէմ յանդիման բնութեան ոյժերին: Նոյնն է մնացել եւ այսօր, որպէս անդամ հասարակութեան ու պետութեան:

Մարդը պատերազմ է վարել իր բարեշրջութեան բոլոր աստիճանների վրայ: Մշտական կռուի մէջ էր, որ նա ստիպուած էր ապահովել իր սնունդը: Այլ բան չէր նրա թափառիկ, վաչկատուն կեանքը: Մի օր էլ, երբ իր նստակեցութեան հետ ծնունդ առաւ սեփական հողի գաղափարը՝ պատերազմը բորբոքուիլ սկսաւ եւ հայրենիքների շուրջը:

Այսպէս, արիւնն է գծել եւ դեռ արիւնն է գծում մարդկային ցեղի ուղին: Գիշդ է, ժամանակի ընթացքում, բնաշրջման ճամբով փոխուած են միջցեղային պայքարի զէնքերն ու ձեւերը, բայց դրա ելութիւնը մնացել է նոյնը:

* * *

Մարդկային ցեղի գոյութեան ձիգ տարածութեան վրայ չի եղել մի ժամանակաշրջան, որ նրա մէջ գազանն աւելի ուժեղ չլինէր, քան՝ մարդը: Քաղաքակրթութիւնը սպանելու փոխարէն միայն թշնամացրել է գազանը մարդու մէջ: Նա երկաթ սանձեր է

դրել մարդու անասնական հակումներին՝ դարձնելով աւելի զուսպ, բայց ոչ այլասեր:

Սեր պատմութեան ծանօթ Ալանները կը պաշտէին *մերկ սուրը՝ թաղուած գետնի մէջ՝* ճշմարիտ անձնաւորունը իրենց վայրագութեան:

Եապէս փոխուած չէ ռազմական պաշտամունքի առարկան եւ այսօր: «Անյայտ զինուորի» գերեզմանն այլ բան չէ, եթէ ոչ սրի պաշտամունքը, անշուշտ, աւելի գեղարուեստական ձեւի տակ:

Թշնամու գանկերը կը կազմէին տօնօրեայ զարդն ալանների: Այսօր ջախջախուած թշնամուց խլուած թնդանօթները, դրօշակները և այլ ձևի աւարներն են զարդարում յաղթականի թանգարանները:

Հին ժամանակ, որպէս արիանալու միջոց կը պատռէին կռուում ընկած առաջնորդի կուրծքը եւ երկիւղածօրէն կը վայելէին նրա սիրտը: Եւ որեւէ հերոսի սիրտն ուտողը կը համարուէր անպարտելի: Արիութեան եւ ռազմական խանդավառութեան աղբիւրների կարիք ունի եւ այսօրուայ մարդկութիւնը, որն իր հերոսների սիրտը ուտելու փոխարէն դաստիարակչական ճիգեր չէ խնայում՝ նրանց մարտական ոգին տեղափոխելու նոր սերունդների սրտի մէջ:

Միկադօյի հայրենիքում¹ ամէն տարի, երբ խորհրդանշական բալէնին փթթել է սկսում, ճապոնական հայրենապաշտ ժողովուրդը իր հանդիսաւոր ուխտագնացութիւններն է սկսում դէպի իր անմահների՝ իր փառքի եւ մեծութեան ճամբին իրենց արիւնը թափած ռազմիկների գերեզմանները, եւ նրանց ամենամեայ ոգեկոչումով իր մարտնչող սերունդների հոգու մէջ հրահրում է պաշտամունքը հայրենի երկրի: Ահա՛ թէ ո՞ւր է գաղտնիքն այն հրաշագործ ոյժի, որ ռազմադաշտերում քաջաբար ընկնող ճապոն մարտիկների շրթունքներին դնում է ժպիտ եւ աստուածային արհամարհանք դէպի մահը:

Օրուայ մարդկութեան պաշտած սուրը մերկ չէ եւ թաղուած չէ գետնի մէջ, ոչ էլ հրապարակի վրայ է: Նա թաղուած է ժողովուրդների հոգու մէջ:

Կայ ամենակուլ եսականութիւնը, ատելութիւնը, նախանձը, կայ եւ այդ չար ոյժերի տարերային պոռթկումը ինչպէս անհատների, այնպէս էլ ազգերի եւ ցեղերի միջև:

¹ Ճապոնիա:

Չկայ մի ժողովուրդ, բացի հայութիւնից, որի հանճարն այսօր չժառայէր աւելի պատերազմի քան խաղաղութեան գործին, որի մի ձեռքը եթէ քրտնում է խաղաղ շինարարութեան մէջ, միւս ձեռքը զէնք է կռում թշնամու համար, որը հակառակ նիւթական զինաթափութեան մասին այնքան յաճախ լսուող խօսքերին, շարունակում է զինուիլ միշտ աւելի կատարելագործուած զէնքերով:

Կայ, վերացած չէ երբեք արտաքին վտանգը եւ ժողովուրդները տենդօրէն կը պատրաստուին՝ վաղը յաղթական կամ նուազ պարտուած դուրս գալու համար ճակատագրական բախումներից:

II ՉԽՐԱՏՈՒՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴ

*«Ոչ երիվարիս զրահ հագցուցի,
ոչ էլ մարտիկներ սպառազինեցի,
որ կարենայի ճակատ յարդարել»:*
Նարեկացի

Սողոմոն իմաստունը, ըստ Թալմուդի, մի մատանի կը կրեր, որի վրայ փորագրուած էր Եհովայի անունը: Եւ ամէն մարդ, դէպի որը նա կը դարձներ մատանու խորագրութիւնը՝ կը հարկադրուէր ասելու այն ամէնը, ինչ որ կը մտածէր այդ վայրկեանին:

Նման մի կախարդական մատանի ունի եւ պատերազմի գիշատիչ աստուածը, որով նա հարկադրում է պատերազմի բռնուած ժողովուրդներին ցուցահանելու իրենց հոգու լուսաւոր թէ ստուերային բոլոր կողմերը, իրենց ողջ տութիւնը իր բացարձակ մերկութեամբ:

Այո՛, ճիշդ է ասուած, թէ *ճշմարտութեան օրեր եւ պատերազմի օրերը*, երբ ժողովուրդները մատնում են իրենց ինչ եւ ինչպիսին լինելը, երբ անհատին ու հաւաքականութեան չէ յաջողում կեղծել:

Պատերազմը՝ քննութիւնն է, դատաստանը ազգերի, երբ քննիչի եւ դատաւորի անաչառանքը անկարելի է դարձնում խաբէութիւնն ու կաշառքը: Չբաւարարեցի՞ր քննիչիդ՝ կորած ես. չկարողացա՞ր պաշտպանուել այդ անողոքելի դատաւորի առջեւ՝ դատապարտուած ես:

Ճակատամարտ չէ շահուում յաջող ռազմարուեստով միայն, ոչ էլ զինուորի անձնութեամբ եւ ռազմավարի հանճարով միայն, չնայած որ այդ ազդակները կռում կատարում են վճռական դեր:

Արդիական պատերազմը, որն այլեւս կոպիտ ոյժերի բախում չէ, պահանջում է ժողովուրդների բովանդակ նիւթա-բարոյական մշակոյթը, ինչպէս եւ նրանց մշտական ու չնւազող սպասարկութիւնը: Նա պահանջում է, որ մարտնչող ժողովրդի բովանդակ ոյժերը լինեն խստօրէն ներդաշնակուած եւ առանց մնացորդի դրուած ի սպաս բանակին: *Կազմակերպչական ոգին է* միաւորող ու ներդաշնակող այդ կարողութիւնը, որն աճեցնելով ու տնտեսելով ժողովուրդների ոյժերը, հանդիսանում է որպէս ամենավճռական ազդակը յաղթանակի:

Այդ հրաշագործ ոգու շնորհիւ միայն Զոռնը ժամանակին հասաւ իր հզօրութեան ու փառքի գագաթնակէտին: Կազմակերպական տաղանդին կատարելապէս տիրապետել են այն բոլոր ազգերը, որոնք յաջողել են պատմութեան մէջ անջնջելի հետքեր թողնել:

* * *

Հայերս, ինչպէս եւ երէկուայ մեր բոլոր բախտակից ժողովուրդները ունինք ապստամբաւոր հոգեբանութիւն՝ արգասիքը մեր հայրուկային ազատագրական շարժումների: Մեր հայրենասիրութիւնը տարիներով իր հոգեւոր սնունդն առած է մեր նորագոյն ապստամբական պատմութիւնից: Վիպապաշտական է եւ մեր ազատասիրութիւնը:

Երէկ, մեր քաղաքական զարթօնքի արշալոյսին դա հասկանալի էր եւ ներելի, իսկ այսօր դա չունի արդարացում: Դա վտանգաւոր է մասամբ: Լաւերի հետ դա ունի եւ իր վատ կողմերը: Դա պէտք է սրբագրուի, լրացուի եւ ազնուանայ: Վիպապաշտ հայրուկի ազատասիրութիւնը պէտք է դառնայ զինուորի եւ քաղաքացու զգաստ ազատասիրութիւն, զերծ անիշխանական գունաւորումից՝ ստեղծագործ, խոհուն, կարգապահ:

Կարգապահութիւնը ոչ ժխտում, ոչ էլ սահմանափակում է անհատի ազատութիւնը, ինչպէս հասկացել է հայը: Դա կանոնաւորիչն է ճշմարիտ ազատութեան: *Առաւելագոյն ազատութիւնը, ինչպէս եւ հասարակական մօտաւոր արդարութիւնը, հնարաւոր է առաւելագոյն կարգապահութեամբ միայն:*

Հասարակութեան ամեն մի անդամ յարաբերօրէն եւ տեր եւ ծառայ է միաժամանակ, որին պետութիւնը – որպէս այդպիսին – ոչ թէ դիմագրկում է, այլ լրացնում: Այդ տեսակէտից չափազանց ուսանելի է գերման ժողովրդի պատմութիւնը: Գիտենք, որ նախաբիսմարկեան գերմանը ամենաշեշտուած ներկայացուցիչն էր անհատապաշտութեան: Սակայն, տունն ու դպրոցը, գործարանն ու զօրանոցը տարիների ճիգերով վերադաստիարակեցին գերման ժողովուրդը՝ կարգի ու կարգապահութեան զգացումը դարձնելով գրեթէ բնագոյնրա մէջ:

Թո՛ղ չի խաբի մեզ համաշխարհային պատերազմի ծանօթ վախճանը: Յաղթանակը տարուեց հաւաքական ճիգերով, եւ անարդար կը լինէր պնդել, թէ չափուող ժողովուրդներից ամենակենսունակը

գերմանը չէ: Չի կարելի պարտութիւն բառով որակել գրեթէ ամբողջ աշխարհի դէմ ճակատ յարդարած ժողովրդի անյաջողութիւնը:

* * *

Հայութեան հաւաքական գոյութեան օրուայ ամենամեծ չարիքը *թրքական վտանգն է* երկրի մէջ, *աստիճանական ապագա-գայնացումը*՝ արտասահմանի մէջ:

Կայ Մեծ Չարիքը, որ ճակատ է յարդարել հայութեան դէմ, եւ որ մահուամբ կը սպառնայ մեզ: Չկայ, սակայն, իր ամբողջութեան մէջ կազմակերպուած, յաղթաշունչ, չարիքը դիմագրաւելու պատրաստ եւ կարող հայութիւնը:

Մեր շուրջն ազգերը – մեծ թէ փոքր – տենդօրէն զինուում, պատրաստուում են հաւանական վտանգի դէմ, առանց հարցնելու՝ ո՞վ է թշնամիս, ո՞ւր է թշնամիս: Ջրահներ է, որ փոխում են նրանք, առանց մի օր իսկ անգէն մնալու: Իսկ մե՞նք: Սօտալուտ վտանգի հանդէպ մենք միայն անգօր ճիչեր ենք արձակում, - ճիչը սարսափի ու շուարումի մատնուած անգօր զոհի եւ ոչ թէ ահազանգը կռուի պատրաստ ռազմիկի:

Թմբկահարել զալիք վտանգի մասին եւ ոչինչ չանել ժամանակին այն չէզոքացնելու կամ կասեցնելու եւ կամ նրա հարուածը մեղմելու համար, կը մնայ ամենահայկականը հայ յատկութիւններին:

«Վա՛յ այն ժողովրդին,- ասել է Ժոմինին¹, - որը զինուորական գիտութեան վրայ նայում է որպէս մի աւելորդ բեռի եւ որը չէ ըմբռնում նրա կարելորութիւնը: Այսպիսի ժողովուրդը պիտի հարկադրուի ուսումնասիրել այդ գիտութիւնը, եթէ միայն այլեւս ուշ չլինի»:

Այո՛, հայութիւնը ճակատագրօրէն պիտի հարկադրուի յիշելու պատերազմի գործին ծառայող գիտութիւնների մասին, հէնց որ հնչէ ինքնապաշտպանութեան չարաշուք ժամը:

Իմ կարծիքով, երեք են այն ուժերը, որ հայութիւնը պէտք է լծի իր ինքնապաշտպանութեան ու բախտի կառքին՝ յետ այսու, որպէս ազգ, ապրել կարողանալու համար: Այդ փրկարար ուժերն են՝ ռազմարուեստ, ցեղային ինքնաճանաչութիւն եւ ցեղային բարոյական:

¹ Ֆրանսիացի գեներալ, ռազմական գրող (1779-1869):

III
ՌԱԶՄԱՐՈՒԵՍ
(ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ)

Մեր օրերում այլևս ոչ ոք է ժխտում պատերազմի հոգեբանական կողմը, ինչպես եւ ոչ ոք է ընդունում, թէ զինուորը աւելի չէ քան մի կենդանի մեքենայ:

Նուաճումների մասին երազող սպան պիտի սովորի նախ նուաճել իր զինուորների սիրտը, իսկ այդ բարոյական յաղթանակի համար՝ նա ընդունակ պիտի լինի, տարրական ռազմարուեստ ուսուցանելուց զատ, ղեկավարել գիտնալ նաեւ նրանց ներքին, հոգեկան կեանքը:

Չկայ աւելի սխալ, բարբարոս եւ բարոյագուրկ կարծիք քան այն, թէ պատիժներով կարելի է ուղղել մարդը. ինչպես աւելի միամիտ կարծիք քան այն, թէ ձեւական օրէնքի ուժով կարելի է ստիպել զինուորին նետուելու մահուան գիրկը:

Անհատն ուզում է գիտենալ, թէ ինչո՞ւ է մեռնում, թէ ինչո՞ւ պիտի զոհաբերի իր կեանքը: Դա մեռնողի սրբազան իրաւունքն է, որ պէտք է յարգուի իր ղեկավարների կողմից:

Չօրքը, որպէս ազգամիջեան պայքարի գործիք, հոգի ունեցող հաւաքական մարմին է եւ ոչ մեռեալ մեքենայ:

Սպայ եւ զինուոր պէտք է լրացնեն զիրար, նրանցից ամէն մէկը կատարում է ազգային ընդհանուր պարտականութեան իր բաժինը:

Հրամայել ու հնազանդուել՝ երկու համարժէք երեւոյթներ են, հաւասարապէս անհրաժեշտ բանակի գործառնութեանց համար:

Մէկը հրամայում է, զոհաբերութիւն պահանջում մի գերագոյն հեղինակութեան անունով, միւսը հնազանդում է յանուն այդ միեւնոյն հեղինակութեան:

Այսպէս անձնական չէ պետի իշխանութիւնը, ինչպէս եւ զինուորի հնազանդութիւնը:

Ասել է՝ կայ մի *երրորդը, որի անունով մէկը հրամայում է, միւսը ենթարկւում:*

Ցեղն է այդ երրորդը, որի համար զինուորն ու զօրավարը՝ եթէ հաւասար ուժեր չեն, ապահովաբար արժէքներ են, երբ կը զոհաբերուին:

Չինուորը, որն երէկ գրեթէ ծառայ էր, այլևս պէտք է համարուի սպայի ինքնագիտակից աշխատակիցը:

Նուիրապետական ստորադրելիութիւն ասելով այլեւս պէտք է հասկանալ աշխատակցութիւն եւ ոչ ծառայականութիւն:
Ահա՛ թէ ո՞ր է զինուորական ծառայութեան վեհութիւնը:

Ռազմական Ղաստիարակութիւն

Ոչինչ արժեն նիւթեղէն ամրութիւնները մի երկրի համար, եթէ նրա որդիների սրտերը բարոյական բերդեր չեն:

Եականը ժողովուրդների քանակը չէ, այլ նրանց որակը, նրանց ոգին:

Խօսքերիս վկայ՝ մեր անմահ Վարդանակերտը, ուր մի բուռ հայերի անպարտելի արիութիւնը սրբեց թշնամու հազարեակները եւ թափեց Երասխը: Վկայ՝ Մարաթոնը, ուր հազարի չափ յոյներ ծառացան պարսից բանակների դէմ եւ յաղթանակեցին. վկայ՝ Ֆրիդրիխ Մեծի¹ վարած ճակատամարտը Լաուտենի մօտ, ուր թուապէս հինգ անգամ նւագ ոյժերով նա ոչնչացրեց աստրիական բանակը: Հապա լեհական մանգաղաւորնե՞րը, որոնք յաճախ անգէն բազուկներով լռութեան կը դատապարտէին ռուսական հրետանին: Հապա Պիոն-Կոպի դե՞պքը, ուր բուրերը եօթնիցս նուագ ոյժերով յարձակուեցին անգլիական մի զօրամասի վրայ եւ ոչնչացրին այն:

Բայց ինչո՞ւ շարունակել ծաղկաքաղը հերոսական օրինակների: Աճապարենք հարցնել, թէ ինչո՞ւմն է մէկը՝ եօթին, հարիւրը հազարին յաղթելու գաղտնիքը:

- Դա պէտք է փնտռել յաղթականի ռազմական, անձնուէր ոգու մէջ:

Յաղթութիւնը ժպտում է ռազմիկին, որ գիտէ աներկիւղ աչք աչքի գալ մահուան հետ:

Յաղթութիւնը ժպտում է նրան, ով գիտէ ժպտադէմ մեռնելու աստուածային գաղտնիքը:

* * *

Ամէն մի առաջնորդ այնքան է պահանջում իր զինուորներից, որքանի ընդունակ է ինքը: Միայն այնքան անվեհերութիւն եւ անձնագոհութիւն, որքանի ընդունակ է ինքը, եւ ո՛չ աւելին: *Եւ ուր վերջանում է լաւ առաջնորդը, այնտեղ սկսում է վատ զինուորը:*

¹ Պրուսիայի թագավոր 1740-1786թթ.:

Իր կաշուի համար դողացող անարիւն մահուան երեսին ծիծաղող արի զինուոր չի ունենայ:

Ինչպէ՞ս կարելի է ապրել, երբ հայրենիքդ եւ վայրկեանը հրամայում են մեռնել:

Ինչպէ՞ս կարելի է անձնապէս վայելել այն կեանքը, որը զլացար զոհաբերել աստուածներիդ՝ հայրենիքիդ եւ ազգիդ: Փոքրոգութեան չափ յիմարութիւն չէ՞ փախցնել երջանիկ առիթը, երբ կարող էիր օրերի կեանքիդ զոհաբերութեամբ անմահութիւն ձեռք բերել: Դժբախտութիւն չէ՞ չհասկանալ, թէ մի օր *ոչնչի համար մեռնելուց գերընտրելին մի բանի համար մեռնելն է*: Անմտութիւն չէ՞ կարծել, որ եթէ չընկար կռուում, մի օր, մի ժամ, զուգէ եւ մի վայրկեան յետոյ չես մեռնի կռուից դուրս «խաղաղ պայմաններում»:

Գիտցի՞ր մեռնել, երբ կարիք կայ, երբ պէտք է մեռնել: Եղի՞ր տէրը կեանքիդ, որը չգիտես տարինե՞ր թէ վայրկեաններ պիտի տես:

«Լաւ է մեռնել՝ ապրելու, քան թէ ապրել մեռնելու համար»:

Հայ սպայ, սրիդ վրայ գրիր իմ այդ խօսքը, որ նրա ոգով դաստիարակես զինակիցներիդ, քանզի միայն հայրենապաշտ եւ արիացուցիչ դաստիարակութիւնն է, որ ոյժ պիտի տայ քեզ եւ զինուորիդ՝ ուրախ լինելու ե՛ւ մահուան հանդէպ, յաղթելու ե՛ւ մահը:

Արուեստից Արուեստը

Կայ արուեստից արուեստը, որին անժանօթ զօրավարը միայն դիպուածով կարող է դափնիներ շահիլ: Մարդկային սիրտը ճանաչելու եւ այն վարելու արուեստն է դա:

Չուտ հոգեբանօրէն վերցրած ճակատամարտն այլ բան չէ, եթէ ոչ ինքնամարտ: Հրամանատարը ինքնաղեկավարութեամբ է ղեկավարում իր զօրամասը: Ղեկավարելով ինքն իրեն, իր ներքին հոգեկան աշխարհը՝ նա ղեկավարում է եւ իր զօրամասը: Պայթեց առաջին գնդակը՝ իրական վտանգի թագաւորութիւնը թեւակոխելու առաջին վայրկեանից մինչեւ ռազմագործողութիւնների դադարը, մինչեւ հաշտութեան կնքումը՝ ղեկավարն ունի մի հատիկ անելիք - *արի եւ խանդավառ վիճակի մէջ պահել իր զօրամասերի հաւաքական սիրտը*:

Առաջնորդը կենդանի խորհրդանշանն է յաղթանակի եւ պարտութեան, փառքի եւ անփառունակութեան, աղբիւրը խանդավառութեան, հոգեբանական զինովութեան, ինչպէս եւ յուսալքումի:

Թերթեցէք անուանի ռազմավարների կեանքի եւ գործերի գիրքը եւ պիտի համոզուէք, որ այն բոլորը, որոնք պատերազմի վարպետ անունը եւ արնոտ հետքեր են թողել պատմութեան մէջ՝ եղել են հանճարեղ հոգեբաններ:

Յաղթելու գաղտնիքը

Մա՛րդը, նրա ստեղծագործ միտքը, նրա կամքը, նրա ոգին է դէպի իրեն թեքում յաղթութեան նժարը:

Նիւթական, զէնք, ամրութիւն, յաջող դիրքեր միայն այնքան արժէք ունին, որքան միտք, կամք, ցանկութիւն է դնում մարդը նրանց գործածութեան մէջ:

Մա՛րդն է իր յաղթութիւնների եւ պարտութիւնների պատճառը: Եւ *յաղթում է նա, որն արդէն յաղթել է իր կենդանական բնագոյր, իր ետը, իր վախը, երբ արդէն յաղթել է ինքն իրեն:*

Պարտուում է նա, որ արդէն պարտւած է ինքն իրենից, իր վախից, իր բնագոյից, իր եսից:

Վախն է իրական թշնամին:

Դա աներեւոյթ թշնամին է, երրորդ ոյժը կռուադաշտում:

Պատերազմող երկու կողմերը էապէս կռուում են երրորդի դէմ, իսկ այդ երրորդը՝ երկուսի էլ դէմ: Թշնամի կողմերը էապէս ճգնում են պարտութեան մատնել իրենց սեփական վախը, իրենց սրտի մէջ նստած յամառ թշնամուն:

Ջարդելով, խորտակելով իրար, նրանք, միաժամանակ, զինաթափում, գերում են իրենց սեփական վախը: Եւ ապահովաբար *յաղթում է նա, որն ւաւելի շուտ է ինքնայաղթութիւն ստանում*, որն ւաւելի առաջ է յաղթում իր վախը, իր սարսափը, կեանքին կառչած իր կենդանական բնագոյր:

Վախը, դա ինքը, մարդ-կենդանին է, որը սիրում է կեանքը եւ ապրելու կոյր ցանկութիւնից մղուած դիմագրաւում է իրեն սպառնացող ամէն մի վտանգ: Եւ որքան կոյր, այնքան ուժեղ է դա, որ պարտութեան է մատնում բազում ուժեր, յաղթւում, սակայն, մի հատիկ ոյժից:

Մի բան ւաւելի քան կեանքը, կեանքից ւաւելի ուժեղ, ւաւելի խանդավառօրէն սիրելն է այդ միակ ոյժը:

Մահն արհամարհել կարողանալն է այդ ամենայաղթող ոյժը, որի առաջ լայնօրէն բացւում են ոսկէ դռները յաջողութեան տաճարի:

Իսկ, այդ «աւելի քան կեանքը» մէկի համար եղել է, միւսի համար է, երրորդի համար շարունակում է մնալ հայրենի երկիրը, ժողովուրդը, ազատութիւնը, փառքը, ճշմարտութիւնը եւ այլն:

Ասել է՝ մեր զօրքին մահն արհամարհելու մղելուց առաջ պէտք է կարողանաք նրա պաշտամունքի առարկան դարձնել անձնական կեանքից աւելի քաղցրը, աւելի արժէքաւորը, աւելի ցանկալին: Պէտք է կարողանաք մեզ հետեւողներին ներշնչել այն վսեմ համոզումը, թէ մեր կեանքն էլ անմահութիւնը՝ մեր հայրենիքն է, ժողովուրդը, մեր գէնքի փառքը:

Կարողացա՞ք անել այդ, կարողացա՞ք գեղեցկացնել, քաղցրացնել, ցանկալի դարձնել մահը, կարողացա՞ք ժխտել մահը, ձեր զինուորների համար՝ եղէք վստահ, նրանք զարմանք ու հիացում պատճառով խոյանքներով կ'ապահովեն ձեր գէնքի յաջողութիւնը: Չկարողացա՞ք՝ միամտութիւն մի՛ ունենաք յաղթանակի յոյսով պատերազմ ու ճակատամարտեր վարելու:

Չկարողացա՞ք – պատրաստուէ՞ք լիուլի զգալու պարտութեան դառնութիւններն ու նուաստացումները, պատրաստուէ՞ք՝ նուաստ եւ խոնարհ դիմաւորելու յաղթական թշնամուն, որն ազատ է յարգելու փոխարէն եւ թքելու ձեր մատուցած աղ ու հացի վրայ:

Յաղթանակի իրաւունքն է՝ պարտւած հակառակորդին իր ոտներուն պատուանդան դարձնել:

Վախի ազդեցութիւնը

Քանի դեռ մարդ արարածը անզօր զոհն է վախի՝ կեղծ են եւ կրօնը, եւ գիտութիւնը, եւ դաստիարակութիւնը: Չկայ հրէշ, աւելի անողոք եւ անողորմ քան վախը՝ կոյր անասունների,- բնազդական՝ վայրենիների եւ գիտակցական մարդու մէջ. մի հրէշ, որը կռուադաշտում իրեն ապաւինողներին յանձնում է թշնամու եւ մահուան ձեռքը:

Վախը վտանգ է տեսնում այնտեղ, ուր չկայ:

Չկայ աւելի վատ եւ ստոր խորհրդական քան վախը, որ սպանում է իրեն ենթարկուողներին երբեմն ֆիզիքապէս, բայց միշտ էլ բարոյապէս:

Վախը, որ առաջացնում է խաւարը, մենակութիւնը, անորոշութիւնը, չարագուշակ լռութիւնը, ծայրայեղ յոգնածութիւնը, քաղցր, տկարութիւնը, արմատաւ լքելը, սպանուածի դիակը եւ այլն,-

հարուածուն է մեզ միաժամանակ եւ ֆիզիքապէս, եւ մտաւորապէս, եւ բարոյապէս: Վախը սպանում է մեր խիղճը, մոռացնել տալիս մեր պարտականութիւնները, ուժեղացնելով անասունը մեր մէջ:

Կայ վախը՝ չկայ այլեւս կամաւոր ուշադրութիւն, անսխալ նշանառութիւն, հակառակորդի տկարութիւնից եւ ռազմավարական սայթաքումներից օգտուելու կարողութիւն: Կա՞յ վախը՝ այլեւս զինուորի ուշադրութիւնը հաւասար չափով բաժանուած չէ իր պետի եւ հակառակորդի միջեւ, այլեւս նա անկարող է դառնում տալ աչքը թշնամուն, ականջը՝ պետին:

Փախուստի գաղափարը

Կռուի բախտը վճռում են վայրկեանները, եւ իմաստուն ռազմավարները գործում են վայրկեաններով եւ ոչ ժամերով:

Որսացի՞ր վայրկեանը՝ տօնի՞ր յաղթանակը:

Փախցրի՞ր վայրկեանը՝ չկայ՞ յաջողութիւն:

Լինում են վայրկեաններ կռուի ժամանակ, երբ ամբողջ զօրամասեր առանց լուրջ պատճառի փախչում են, թողած իրենց դիրքերը:

Ի՞նչ է, ի՞նչ կայ, ինչո՞ւ են փախչում, արդեօք անկարելի՞ է մնալ միեւնոյն դիրքերում: - Ո՛չ:

Թշնամի՞ն է երեւացել նահանջողների թիկունքում: - Ո՛չ:

Անյաղթելի՞ է թշնամին: - Ո՛չ:

Հապա ինչո՞ւ է ձեր զօրամասը լքել իր դիրքերը:

- Չգիտեմ,- նման դէպքում պատասխանում է տգէտ սպան կամ էլ զայրացած հայիոյուն - «Չինուորներ չեն, այլ վախկոտ ոչխարներ»¹:

Սակայն, առանց պատճառի չէր զինուորների անսպասելի փախուստը եւ սպային զինուորներ էին տրուած ղեկավարելու եւ ո՛չ ոչխարներ: Ամբողջ դժբախտութիւնը նրանումն է, որ ղեկավարը չգիտէ, որ անսպասելի եւ անգիտակցական փախուստը հոգեբանական մի պարզ երեւոյթն է, որի համար զինուորը չէ մեղաւոր, այլ իր պետերը:

Անգիտակցական փախուստի պատճառը յաճախ լինում է տեսողական պատրանքը կամ փախուստի գաղափարը, առաջ եկած *թշնամու* կրակի յանկարծական ուժեղացումից: Այսպիսի դէպքում

¹ Մի՛ վիրաւորիւր զինուորիդ, դաստիարակիչ միջոց չէ վիրաւորանքը: Գ. Նժդեհ:

*զինուորը անգիտակցաբար պատկերացումից անցնում է գործող-
ութեան:* Այսպիսի դեպքում փախուստի ձգտումը, մի կամ մի քանի
զինուորների կողմից, ընդունվում է իսկական փախուստի ձեւը եւ
նրանց ոտքի հանում: Մնացածները ենթարկվում են փախչողների
օրինակին, նրանց նախաձեռնութեան ոգու ազդեցութեան:

Ոչ մի տեղ անձնական օրինակը այնքան վարակիչ չէ, որքան
կռուադաշտում: Հոգեբանօրէն իրեն մինակ չզգալու համար, զին-
ուորը ենթարկվում է այն բուլորին, որոնք իրենից ուժեղ են թւում,
որոնք գիտեն խիզախել, յանդգնիլ, նախաձեռնել: Նա նետում է
առաջ խիզախի հետ, անմտաբար յետ փախչում վախկոտի հետ.
Մա չէ կարող հոգեբանօրէն մինակ մնալ: Զգա՞ց իրեն մինակ -
այլեւս զօրամասն այն չէ, ինչ որ էր ժամ, վայրկեան առաջ, երբ
իրեն հետ, իր կողքին էր զգում իր ցեղի բովանդակ ոյժը: Նա պատ-
րաստ է այլեւս փախչելու, այլեւս մա պատժուած է հոգեբանօրէն:
Այսպիսին է զինուորը կռուում:

* * *

Չափազանց կարելոր են առաջին տպաւորութիւնները: Ահա՛
թէ ինչու պէտք է ամէն կերպ ձգտիլ, որպէսզի զօրամասդ յաղթ-
ական հանդիսանայ առաջին իսկ բախումների ժամանակ:

Ոգին տկարանում է՝ կրաւորական պաշտպանողականից,
նահանջից, լուրից հարեւան զօրամասերի պարտութեան մասին,
թիկունքից եկած տխրապատում նամակից, թերթերու եւ սուրհան-
դակի վատ տեղեկութիւններից, դէպի պետն ու ընկերն ունեցած
անվստահութիւնից, անգործութիւնից, ընդունայն յոգնածութիւնից,
վիրաւորների ու սպանուածների տեսքից, դասալիքներից, եւ
անպարտաճանաչների անպատիժ մնալուց եւ այլն:

Վա՛յ այն ռազմավարին, որ ծանօթ չէ զինուորի հոգեկան
կեանքի գաղտնի զսպանակներին, եւ վա՛յ այն բանակին, որի
ղեկավարը չգիտէ, թէ զօրքը հոգեբանական տագնապներից զերծ
պահելու միակ փրկարար միջոցը՝ *անմիջական ղեկավարութիւնն*
է: Հրամանատարը պէտք է լինի միշտ զօրամասի կողքին եւ ազդէ,
անդադրում ուժարձակ զինուորների վրայ:

Նկատուե՞ց տատանում զինուորների մէջ, վիատութիւն,
փախուստի ձգտում, հրամանատարը անմիջապէս պէտք է երեւայ
զինուորների մէջ, ծաղրէ թշնամու ճիգերը, համոզէ զինուորներին,

թէ թշնամու կրակի սատկացունը, ինչպէս եւ նրա գոռ հուռռան հետեւանք են վախի:

Նման տագնապներից ազատ չէ եւ թշնամիդ, գիտցիր այդ եւ օգտուիր նրանցից: Ոչինչ այնքան հանգստացուցիչ, գօտեպնդիչ չէ կռուի ժամանակ, որքան դեկավարի խրոխտ ձայնը:

* * *

Նա, որ ցանկութիւն եւ ժամանակ է ունեցել ուսումնասիրելու մեր վերջին տարիների ռազմական անյաջողութեանց պատճառները, անվերապահօրէն կը խոստովանի, որ մեր բոլոր պարտութիւնների մէջ վճռական դեր են կատարել մեր տարերային գաղթերը:

Եւ հասկանալի է դա: Ոչ մի հիւանդութիւն այն աստիճանի տարափոխիչ չէ, որքան խուճապը: Այդ զարհուրելի «հիւանդութիւն»-ն էլ իր վարակիչ մանրէն կը ստանայ վտանգից, վտանգուած վայրերից փախչող անհատից կամ զանգուածից:

Փախչելով կռուից, թշնամուց, վտանգից, զինուորը թէ ոչ-զինուորը, դառնում է վտանգաւոր միայն իրեն եւ իւրայինների համար: Նա, ականայից, ամենամեծ ծառայութիւնն է մատուցում առաջացող թշնամուն: Նա անում է այն, ինչ որ չպիտի կարողանային կատարել թշնամու բանակները:

Երեւալով այս կամ այն վայրում, նա իր նկուն եւ խղճալի տեսքով, իր պարտուածի եւ զէնընկէցի հոգեբանութեամբ ականայից թշնամու հզօրութեան գովքն է անում, հարիւրապատկելով նրա ուժերը, թնդանօթները, միջոցները:

Նա ականայից դառնում է թշնամու առաջամարտիկ զօրագունդը, նրա ամենաանշան յաջողութիւնները ուռցնողն ու տարածողը:

Վտանգից փախչողն է դաւադրաբար թիկունքից իր զօրքերին առաջին հարուածը հասցնում: Նա է բարձրացնում սեփական կաշուի արժէքը եւ պսակազրկում սրբութիւններն ու իդէալները:

Ձարհուրելի՞ է գաղթը:

Որքան մեծ, այնքան աղէտալի է դա: Իսկ մեծանում է նա ժամերով, վայրկեաններով: Որպէս ձիւնագունդ՝ որքան թաւալում, որքան առաջանում, այնքան աճում է, մեծանում:

Գաղթը, գաղթականութիւնը՝ ահա՛ հայ զօրքի ներքին թշնամիներից մէկը:

«Վտա՛նգ կայ, մա՛հ կայ»,- դաւաճանօրէն յիշեցնում է թշնամու հետ չափուող զօրքերին խուճապի մատնուած գաղթականութիւնը եւ ստիպում անգամ ամենախիզախներին ու անձնուէրներին ցնցուել, յետ նայել, ասել է՝ նտածել նահանջի մասին: Եւ կռուող-ների հոգիների մէջ սկսւում է տագնապը: Նրանց համար, երբեմն կամաց-կամաց, երբեմն էլ մի վայրկեանի մէջ գունատուում են, անարժէքանում, կորցնում իրենց լուսապսակն այն բոլոր իդէալները, որոնց պաշտամունքն իրենց թշնամու դէմ էր հանել:

Եւ այսպիսով իւրայիններից դաւադրուած ու պարտուած դժբախտ զօրքը, որն ուխտել էր տուն վերադառնալ կա՛մ վահանով կամ վահանի վրայ, վերադառնում է սարսափով բռնուած գաղթականութեան հետ, վերադառնում է վահանը լքած՝ իր յետելից դէպ իր երկրի խորքերը քարշ տալով, յաճախ թւապէս իրենից շատ թոյլ թշնամուն:

Ահա՛ թէ ինչո՞ւ խելօք թշնամին՝ ծանօթ բանակների հոգեկան կեանքի թագուն զսպանակներին, ամէն կերպ ճգնում է գաղթեր առաջացնել, գաղթականութիւն ստեղծել իր հակառակորդի անմիջական թիկունքում:

Ահա՛ թէ ինչո՞ւ կռուի հոգեբանութեան ծանօթ հրամանատարութիւնը ո՛չ մի միջոցի առաջ չափտի կանգ առնի՝ կռուի օրերին, կռուի վայրերում անհնարին դարձնելու գաղթ կոչուած չարիքը:

Վախի դէմ

Որպէս վահան վախի դէմ բանակները գործածել են եւ գործածում են մի շարք նիւթական եւ բարոյական միջոցներ:

Սպարտացիները, ասում է պատմութիւնը, կռւում կարմիր էին հագնում, որպէսզի չսարսափին արեան գոյնից: Հին Գաղղիացիք վախի դէմ կռւում էին ամենակոպիտ միջոցներով, նրանք կռուի առաջին զօրի վրայ գտնուողներին իրար էին կապում երկաթ շղթաներով, որ նահանջելու մասին չմտածեն: Չինացիք վախի դէմ կռւում էին իրենց հռչակաւոր պատնէշով:

Սեւաստոպոլի պաշարման օրերին ֆրանսիացիք գրոհներից առաջ խմում էին հարբելու աստիճան: Նախավերջին պատերազմում գերմանացիք, իրենց զօրամասերը բարոյալքիչ տեսարաններից հեռու պահելու նպատակով, վիրաւորների տեղափոխութիւնը եւ մեռելների թաղումը կատարել էին տալիս տեղի ազգաբնակութեան:

Ամբոխը, ինչպես եւ զօրքը, միշտ էլ կարօտ է խթանի: Նա կարիք ունի առաջնորդի, առաջնորդուելու: Նա սիրում է ուժեղին, սիրով ենթարկւում է նրան, որի ղեկավարութեան տակ քիչ անգամ է կարմրում, պարտւում: Նա յաճախ յուսախաբում է, դաւաճանում, լքում տկար եւ անվճռական առաջնորդներին:

Կարող առաջնորդի անձնական օրինակը՝ անվեհերութեան եւ խիզախութեան օրինակը վայրկենաբար բոցավառում է զօրքը, ամբոխը եւ նրանց մղում մեծագործութիւնների: Իսկ երբ պակասում է կարող եւ արի առաջնորդը, վախը կենդանի դիակների է վերածում բանակը:

Քիչ են այն ռազմավարները, որոնք իրենց բանակներին խանդավառելու նպատակով օգտագործած չլինեն նրանց անասնական ախորժակները:

«Ես ուզում եմ ձեզ առաջնորդել դէպ աշխարհի ամենաարգասաւոր դաշտերը, հարուստ նահանգներ, մեծ քաղաքներ կը լինեն ձեր իշխանութեան տակ: Այնտեղ կը գտնէք պատիւ, փառք եւ հարստութիւն», - ասում էր Նապոլէոն իր զինուորներին:

«Պէտք է լինել լաւ անասուն, այն էլ լաւ անասունների ցեղից, - դա առաջին պայմանն է յաջողութեան»:

Սպենսերի այդ խօսքերը եւս զուրկ չեն որոշ ճշմարտութիւնից: Ֆիզիքական դաստիարակութեամբ անհատը դառնում է աւելի տոկուն, բայց չէ փրկւում մահուան վախից:

Այդ բոլորը՝ ֆիզիքական դաստիարակութիւն, կողոպուտի տենչ, բարոյականութիւն, պատիժ, երկաթէ կարգապահութիւն, վարձատրութիւն, կարող են, անշուշտ, թուլացնել, լռութեան մատնել մահուան վախը, բայց այդ բոլորը մեզ կարող են տալ միայն յարաբերական գերազանցութիւն եւ ոչ աւելին, ոչ այն ամենակարող ոյժը, որը ստուգապէս մեր սրտին եւ քմահաճոյքին է յանձնում թշնամու բանակները:

Ի՞նչն է սակայն, այդ ամենայաղթ ոյժը, որի առաջ տեղի է տալիս մահուան վախը, մահը:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ *անհատը որոշ դէպքերում ընդունակ է գերազանցելու իրեն*, անգիտանալու վտանգը, յաղթելու մահը, երբ իր մէջ խօսում է մոլեռանդ սէրը դէպի կրօնը, դէպի հայրենիքը, դէպի ազատութիւնը, դէպի արդարութիւնը, դէպի անմահութիւն խոստացող փառքը:

Վախ եւ կատաղութիւն

Թշնամին, որ կը մարմնաւորէ վտանգը, իսկ այդ վերջինը՝ ցան ու մահը, մեր մէջ ոտքի է հանում ինքնապահպանման բնագոյր, որի երկու երեսներ են վախն ու բարկութիւնը:

Չկայ բարկութիւն, որ վախախառն չլինի, եւ ընդհակառակը: Եւ հէնց դրանից է, որ վտանգի ենթական բնագոյական մղում է զգում՝ կամ նետուելու առաջ թշնամուն ոչնչացնելու համար, կամ յետ՝ խելայեղօրէն փախչելու նրա առջեւից:

Աւելի պարզ. *ցաւի ու մահուան նախատեսութիւնից ազատուելու խելագար ցանկութիւնը տագնապի է մատնում զինուորը*: Եւ որովհետեւ տագնապները չափազանց սպառնիչ են՝ զինուորն ածապարում է իր անհանգստութիւնն արտայայտելու որոշ ելք գտնել, [ինչը] նայած ղեկավարի արժէքին կարող է դրական կամ բացասական լինել:

Ահա նման տագնապներից է, որ հոգեբան պետերը զերծ պիտի պահեն իրենց զօրամասերը:

Պատերազմում չի բաւում միայն քաջ լինել, պէտք է եւ կատաղի լինել: Պէտք է կարողանալ *զարհուրանք* ստեղծել ու *սայրեցնել դա թշնամու բանակում*: Կատարեալ մարտիկ չէ նա, որ կատաղութիւն չէ շնչում: Միայն մեր կատաղութիւնն է, որ հակառակորդի մէջ մեռցնում է յաղթանակի յոյսը: Որպէսզի մեր գրոհները լինին յաղթաբեր, պէտք է լինին սարսափեցուցիչ:

Դա պահանջում է մասնաւորապէս Արեւելքում:

Նայիր դրօշակին

«Հասկանո՞ւմ ես կատարածդ», - կը հարցնէր նաւապետը մէկին, որը նոր էր ընդունուած, որպէս նաւագ, եւ կայմի վրայ բարձրանալու փորձեր կը կատարէր:

Երիտասարդը արդէն կը մօտենար կայմի ամենաբարձր կէտին, երբ նայեց ներքեւ լեռնացող ալիքներին եւ գլխի պտոյտ զգաց:

«Նայիր դրօշակին, նաւագ», - ձայն տուեց նաւապետը՝ տեսնելով իր զինուորը վտանգի մէջ:

Տղան հնազանդուեց իր ղեկավարի ձայնին եւ յաջողութեամբ հասաւ կայմի ծայրը:

Նոյնը յաճախ զհիմուորի հետ տեղի է ունենում կռուադաշտում, ուր ամէն ինչ խօսում է, վկայում ստոյգ վտանգի, ցաւի ու մահուան մասին:

Ճակատագրական վայրկեանին զհիմուորը պէտք է լսէ իր պետի սրտապնդիչ ձայնը - «Ջիմուոր, նայիր վերեւ, դրօշակիդ»:

Դա ասել է՝ յիշիր նպատակը, որի համար հազարներ ու հազարներ քեզ հետ զենք են վերցրած:

Դա ասել է՝ արիացիր, քանզի քեզ հետ է ցեղդ, որն ապրել է ուզում:

Դա ասել է՝ նայէ՛, վերեւն աչք կայ, որ տեսնում է քեզ, արթուն աչքը նախահայրիդ, որ կը հետեւի քո բոլոր շարժումներին:

Նայիր դրօշակին: Դա ասել է՝ մի մոռանար, որ *սկսուած ճակատամարտի ելքից է կախուած հայրենիքիդ ճակատագիրը:*

«Սրանով կը յարթես»

Մէկից անելի են այն միջոցները, որոնց կռուի ժամանակ կը դիմէ ղեկավարը՝ իր զօրքերի բարոյական թելն ու թափը ամրացնելու համար: *Ջիմուորն իր հոգեւոր հացն ունի.*- վերյիշումներ նախկին յաղթութիւնների մասին, նրա երեւակայութիւնը յուզող վեհ պատկերներ, վառ ու կենդանի նկարագրութիւն նրա յաղթահարած դժուարութիւնների, բարեգուշակ նշաններ եւ այլն:

Ալեքսանդր Մեծի գուշակը,- ասում է Պլուտարքոսը, որ կը հետեւէր իր թագաւորին պատերազմների ժամանակ,- մի օր զօրքերի ուշադրութիւնը հրաւիրեց արծուի վրայ, որ կը սաւառնէր աշխարհակալի գլխի վերեւ եւ իր թռիչքով կ'առաջնորդէր նրա զօրքերը: Այդ բարեգուշակ նշանը ոգեւորեց բոլորին եւ փաղանգը արագ վազքով՝ նման ծովի ալիքին, հետեւեց հեծելագօրքին, որ կը գրոհէր թշնամու դէմ:

Ջիմուորի հոգու շարժումներին ծանօթ աշխարհահռչակ զօրավարներից մի ուրիշը՝ Յաննիբալը, նոյն նպատակով կը շոյէր իր զօրքերի փառասիրութիւնը, ասելով նրանց՝ «Ես, որ եղել եմ ձեր բոլորի աշակերտը, ձեր պետը դառնալուց առաջ»:

Ահա՛ եւ զօրավարների զօրավարը՝ Աւարայրի Վարդանը.

«Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արիութեամբ, եւ զահուի վեր ըստ հայրենի պատուոյն, բայց յորժան ձերով կամօք

եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ ի փոքունց»:

* * *

Հարո՛ւստ է Սիւնեաց աշխարհը հինաւուրց վանքերով ու բերդերով՝ կիսաւեր ու փլատակ սրբավայրեր, որոնք դարեր շարունակ թուրքի համար ախոռի եւ դարձանանոցի տեղ կը ծառայէին: Այս պարագան, որն իմ ուշադրութիւնը գրաւել էր Սիւնիք մտածս հենց առաջին օրերից, ինձ հնարաւորութիւն ընձեռեց իմ վարած ռազմագործողութիւններին տալ խաչակրաց արշաւանքի բնոյթ: Իմ զինուորը սրբազան դողով կը նայէր հեքեաթական Գեղուածորի դուռը փակող Բաղաբերդին, երբ նրա ճակատը կը խոնարհուէր եւ շրթունքները կը շօշափէին իր փլատակների մէջ այնքա՛ն վեհ բերդի քարերը: Իմ զինուորը չէր կարող այլեւս անտարբեր անցնել իր երկրի պատմական յիշատակների մօտով:

Եւ հենց այդ թուլութեան մէջ էր նրա անպարտելի ոյժը:

- Այս շրջանի թրքութիւնը եւ ուժեղ է եւ լաւ կռուող,- մեր յարձակումներից մէկի նախօրեակին ասաց ինձ իմ զինուորներից մէկը:

- Եթէ կասկածում ես մեր յաջողութեան մասին, կարող ես վերադառնալ տուն,- նկատեցի իրեն:

Խօսելու փոխարէն նա լաց եղաւ, պէտք էր սիրտն առնել: Աւելացրի:

- Երեւի չգիտես, որ այդ շրջանում ե՛ւս կան հայկական եկեղեցիներ եւ բերդեր, որոնք հսկայ մագնիսների պէս մեզ պիտի քաշեն, տանին, եւ որոնց մէջ ես եւ դու պիտի աղօթենք վաղը:

- Ո՞վ կարող է,- դարձայ վաշտերիս, ուզելով խռովել նրանց պետերի հոգին,- ո՞վ կարող է ձեզնից հանգիստ լինել, երբ դեռ որոշ թրքական շրջաններում հայկական սրբավայրեր կան:

- Ո՛չ ոք:

- Ուրեմն, գոհ լինի՞ք ճակատագրից, որ մեզ է վիճակուած դարաւոր պղծանքից փրկելու Սիւնիքի սրբութիւնները:

- Գո՛հ ենք,- գոռացին վաշտերս:

- Ուրե՛մն, ուր հայկական սրբութիւններ՝ այնտեղ մենք, այնտեղ մեր սուրը:

- Այո՛, այո...

Սկսուեցին կռիւները:

Եւ, այնուհետեւ թշնամու դիրքերի եւ քանակի մասին հարց-
նելու փոխարէն, Սիւնեցին կը հարցնէր հայկական եկեղեցիների եւ
բերդերի մասին եւ առաջ կը խոյանար որպէս խաչակիր:

Յաղթական տրամադրութիւն

Չոգեկան ուրախ տրամադրութիւն՝ քրիստոնէական կրօնի
հիմքերից մէկն է դա,- ասել է անգլիացի մի աստուածաբան:

Բանակների յաջողութեան մայրն է դա, յաղթութեան դայեակը,-
աւելացնենք մենք:

Ես մի սպայ գիտեմ, որին իր սրամիտ զինուորներն անուա-
նում էին «ուրբաթախօս»: Մի զոյգ ուսադիր, խթանները եւ սուրը,-
ահա՛ այդ զինուորականը եւ իր բովանդակ արժէքը: Թթուած
դէմքով, սակաւախօս եւ անհամբոյր այդ մարդը պաշտօնական էր
անգամ իր սպասեակի հետ:

- Լռութիւն,- սա էր ամէնից յաճախ գործածած խօսքը:

Մարդկային հոգեբանութիւնից անտեղեակ այդ զինուորա-
կանը չգիտէր, թէ ծիծաղը, երգը, խաղը հոգեւոր կազդուրիչներ էին
զինուորների համար: Չգիտէր, որ *բանակները յաղթում են եւ
պարտուում միշտ էլ կռիւներից դուրս, բախտումներից առաջ՝ նախ
հոգեբանօրէն*: Նա ծանօթ չէր այդ պարզ ճշմարտութեան եւ մինչեւ
վերջն ալ անծանօթ մնաց յաղթութեան:

* * *

- Ի՞նչ է վշտի ֆիզիքական ազդեցութիւնը,- հարցնում է ԲԺ.
Ժակոբին եւ պատասխանում.- Նոյնը, ինչ որ է գնդակից կամ սրից
ստացուած վէրքինը: Վիշտը սպանում է նոյնքան ստոյգ, թէեւ
դանդաղ կերպով, ինչպէս եւ հրացանը: Եւ աւելի մեծ է թիւը
նրանց, որոնք վերջին դարի ընթացքում սպանուած են վշտից,
քան նրանք, որ մեռած են կռւադաշտում:

Լիկուրգոսի իմաստուն կարգադրութեամբ՝ սպարտական
ճաշարաններում դրուած կը մնար ծիծաղի աստուածը:

Ուժեղ ծիծաղը,- ասում է Տալմանը, նման է ուժանակային
փամփուշտի, որը պայթում է ճիշդ իր տեղը, իսկ սեւամաղծութիւնը,
կը նմանի այն հրացանին, որը յետ է տալիս եւ գետին գլորում
իրեն գործածողին:

Չեն կարող չմտածել, թե աշխարհն անելի գեղեցիկ եւ երջանիկ պիտի լինի, եթէ մեր դաստիարակիչները մշակել կարողանան պարտականութիւն դէպ ուրախութիւնը, եւ ուրախութիւն դէպի պարտականութիւնը,- ասուն է Կարլէյլ:

«Տոյց տուէք մեզ մի մարդ, որ երգում է աշխատելու ժամանակ: Դա անելի գործ կը կատարի, անելի լաւ կը կատարի եւ անելի երկար կ'աշխատի: Նա, որ առաջանում է երաժշտութեան հնչիւնների տակ, յոգնածութիւն չի զգում: Ասում են, թէ աստղերը երաժշտութիւն են ստեղծում, երբ դառնում են իրենց մոլորակային ուղեգծի շուրջը,- շարունակում է Կարլէյլ:

Ձօրամասիդ մէջ - անելացնենք մենք – նայած իր տրամադրութեան, աճում կամ տկարանում է *հաւաքական սիրտը*: Առաջին դէպքում նա զգում է իրեն անելի ուժեղ եւ յարձակողական: Երկրորդ դէպքում նա մտածում է միայն մահանջի մասին:

Թախիծն առաջացնում է անհանգստութիւն: Իսկ այդ վերջինը՝ հոգեկան անզօրութիւն եւ վախ:

Ուրախութիւնն, ընդհակառակը, սնուցանում է մեր ոյժերը, ամրացնելով մեր թեւն ու թափը:

Ձինուորը չի սիրում խժոռադէմ դեկավարներին, որոնց հայեացքը «թթուեցնում է կաթը»:

Արդ, թէ ինչու են ասում՝ *եղի՛ր կենդանի արեւ*, քանզի յաղթական հանդիսանալու համար, զօրամասերդ պետք ունին լոյսի, ջերմութեան եւ ուրախ տրամադրութեան»:

Չկայ անելի գօտեպնդիչ, արիական եւ գեղեցիկ շարժումներ, քան ծիծաղը ցրտի, սովի, յոգնածութեան ժամանակ, ծիծաղը թշնամու քթի տակ վտանգի դէպքում, մահուան երեսին:

Ես զինուորներ ունեի, որոնց մշտուրախ դէմքի պայծառութիւնը չէր կարող ծածկել եւ ոչ մի սեւ ամպ:

Չկայ, նոյնպէս, անելի տխուր եւ բարոյալքիչ պատկեր քան անժպիտ, մռայլ, աներգ, քան հոգեպէս թթուած զօրամասը: Այդպիսին պարտում է դեռ կռուադաշտ չհասած, գերում իր վախից, դեռ գերի չընկած:

Որպէս մշտուրախ տրամադրութեան հետեւանք՝ իմ ժողովրդական զօրամասերում միշտ էլ կարելի էր լսել նման յատկանշական զրոյցներ.

- Ասում են թէ - պատմում է մէկը - այս անգամ թաթարները գալիս են անելի մեծ ուժերով:

- Աւելի լա՛ւ,- եւ աւելացնում է մի ուրիշը,- մենք էլ աւելի մեծ թուով գերիներ եւ զենքեր կը վերցնենք:

- Ասում են թէ դէպի Սիւնիք շարժուող կարմիր բանակի մեծագոյն մասն այս անգամ կազմում է հեծելազօրքը:

- Շա՛տ ուրախ եմք, վաղը բոլորս էլ կը դառնանք ձիաւոր,- պատասխանում էր մի ուրիշը:

- Վատ չէր լինի,- միջամտում է մի այլ զինուոր,- թէ եկողներն այս անգամ հետերն ունենային կենսամթերք եւ ռազմամթերքով բեռնաւորուած մի մեծ քարավան:

- Աստուած տայ, տղայք,- լսւում էր հարիւրապետներից մէկի ձայնը:

- Աստուած ձայնդ լսի, պարո՛ն հարիւրապետ, եւ եկողների հետ մի սայլ էլ ծխախոտ ուղարկի մեզ,- աւելացնում է մի տարեց զինուոր:

- Չլինի թէ լուցկին մոռանան...

- Սիւնեցու ւխորժակ է, հա. ուզում ենք, որ խեղճ թուրքը, թաթարը, բոլշեւիկը թէ՛ գան մեռնելու եւ թէ՛ մեզ նուէրներ բերեն,- սրախօսում է մի ուրիշը եւ բորբոքում զօրամասի վարակիչ քրքիջը...

Այս զրոյցից միայն երեք օր անց՝ Սիւնիքը կարմիր զօրավարներից Կուրոչկինի եւ տաճիկ փաշաներից Ջաւալի միջոցաւ ստացաւ մի քանի հարիւր ձիեր, մօտ երկու հազար գերի, թնդանօթ, գնդացիր, հրացան, դրօշակներ՝ այն ամէնը, ինչ որ Սիւնեցի զինուորը կատակով խնդրել էր երկնքից: Թշնամու միացեալ ուժերի պարտութիւնն այս անգամ աւելի մեծ եղաւ, քան մեր տարած յաղթանակը:

Չմայքը

«Ձինուորները կռւում են պարտականութիւնից կամ պարտադրանքից մղուած, բայց յաղթում են այն յարգանքի եւ հաւատարմութեան շնորհիւ, որ տածում են դէպի իրենց պետերը»:

Խոր ճշմարտութիւն կայ Գարիբալդիի այս իմաստուն խօսքերի մէջ:

Այդ կարծիքը չբաժանող զինուորականը կա՛ն վառօդի հոտ չէ առած կա՛ն տօգէտ է մահացիօրէն:

Չանաշխարհային պատմութիւնն իրենց անուան շքինդով լցրած հսկաները ոչ միայն կը սիրուէին իրենց բանակների կողմից, այլեւ կը պաշտուէին որպէս պատերազմի աստուած:

Անձնական հմայքը երկնքի շունչն է, աստուածների գաղտնի ազդեցութիւնը, որով հոգեկան ռազմավարը կախարդում է իր ղեկավարութեան յանձնուած զանգուածները եւ հրաշագործութիւններին մղում նրանց:

Մտաւոր արհուրթիւն

Օրերը եւ ժամերը նախապատրաստում, իսկ վայրկեանները վճռում են ռազմական գործողութեան բախտը:

Ճակատագրական դէր են խաղում տագնապի վայրկեանները կռոււմ, երբ ղեկավարը պիտի կարողանայ գնահատել վայրկեանը, չափել հաւանականութիւնները, վճռել, եւ անյապաղօրէն գործի անցնել: Սրա համար ղեկավարը պէտք է օժտուած լինի մտաւոր արհուրթեամբ:

Քիչ բան արժէ հանճարեղ միտքը, իդէալական մարտագիրը, պարզատեսութեան հասնող շրջահայեցութիւնը, եթէ ղեկավարին պակասում է մտքի արհուրթիւնը՝ ամենաանհրաժեշտը զօրականի բարձր յատկութիւններից:

Արագ վճիռ եւ կորովի գործողութիւն,- ահա՛ յաջողութեան գլխաւոր գաղտնիքներէն մէկը: Դժուարանձում ես կանգ առնել այս կամ այն վճռիդ վրայ, տատանւում ես՝ կը նշանակէ փախցրիլ վայրկեանը, սրա հետ եւ յաղթութիւնը:

Չկայ աւելի աղէտալի յատկութիւն քան ղեկավարի մտաւոր թուլութիւնը եւ երկչոտութիւնը:

Չկայ աւելի ձախող ղեկավար քան տատանուողը:

Եղի՛ր արի եւ մտքով, եւ մի մոռանար, որ կայ աւելի վատը քան վատ վճիռը՝ որոշ եւ հաստատ վճռի չգոյութիւնը, տատանումը եւ՝ որպէս հետեւանք՝ պարտութիւնը:

Նախաձեռնութեան ոգի

Ղեկավարի բարձր յատկութիւնը՝ մտաւոր արհուրթիւնը ունի իր հարագատ քոյրը՝ նախաձեռնութեան ստեղծագործ ոգին: Այս երկուսը փոխադարձաբար լրացնում եւ ուժեղացնում են իրար: Չի կարելի ասել, թէ ո՞րն է աւելի արժէքաւոր. անհրաժեշտ են երկուսն էլ:

Ռազմարուեստի հին ձեւերը ու միջոցները, որոնք երեկ ե՛լ նպատակայարմար էին, ե՛լ արդիւնաբեր ե՛լ զօրաւոր, այսօր այդպէս չեն:

Կան շատ ծանօթ եւ ծեծուած ճամբաներ, որոնք այսօր չեն տանում դէպի յաղթանակ: Տհաս եւ ծոյլ միտքն է կուրօրէն ընդունում այս կամ այն դասականացած հեղինակութիւնը, կարծիքը, ձեւը: Այսօր կռոււմ տեղ չունեն մեռեալ մեթոդն ու տարրը:

Մի՛ յենուիր այս կամ այն քարացած կանոնին, ինչպէս կոյրը՝ իր ձեռնափայտին: Հեռո՛ւ կանոնամոլութիւնից: Եղի՛ր նախածեռնող, կենդանի եւ ստեղծագործ:

Չկայ աւելի խղճալի դեկավար քան իր տէրերի հրամանները մեքենաբար գործադրողը: Այդպիսիներից փախչում է յաջողութիւնը:

Ուզո՞ւմ ես յաղթել, եղի՛ր կռոււմ նախածեռնող, ստեղծագործ եւ արի:

Ծանհի՛ր թշնամուդ

Ճանաչի՛ր թշնամուդ: Այդ երկու բառն էլ գրիւր հոգիիդ մէջ, որ չմոռանաս երբեք:

Մարդկային է՝ անյայտից վախենալ:

Մեզ անծանօթ մի աննշան զօրախմբակի գիշերուան գրոհն աւելի ահաւոր է, քան մի ծանօթ գնդի յարձակումը ցերեկը:

Թշնամին աւելի ուժեղ է, երբ չենք ծանաչում նրան:

Մենք աւելի թոյլ ենք, երբ անծանօթ ենք մեզ մահ սպառնացողին:

Մի ժողովուրդ, որի ռազմական միտքն ընդունում է միայն պաշտպանողական կռուի ձեւերը, կարող է չափազանց յարձակողական թուալ մեզ. մի ռազմավար, որի հետեւակ եւ անհաստատ միտքը վճռական ձեռնարկներից զերադասում է տազնապի աղէտալի ձգձգումը՝ կարող է մեզ չափազանց ներգործօն թուալ, *եթէ ստուգապէս ծանօթ չենք նրան:*

Իսկ երբ ծանօթ ենք նրա հոգեբանութեան՝ մենք մեծապէս կարող ենք օգտուել նրա թերութիւններից, կրաւորական եւ տատանուող ոգուց, ինչպէս եւ կարող ենք տեղին ու ժամանակին հեշտութեամբ ամլութեան դատապարտել նրա առաւելութիւնները:

Ծանօթանալով թշնամու ռազմավարական հայեացքներին, ասել է՝ նրա կռիւները մղելու եղանակներին ու ոգուն, մենք որոշ

չափով ապահովագրում ենք մեզ յանկարծակիի գալու անհաճոյ վտանգներից:

Չկայ ակելի անմեղ բան, քան թաթար կռուողների դիրքերում բարձրացած «ալլա՜հ, ալլա՜հ» գոռում, գոչումը: Անշանթ որոտում է դա, որ դեռ չի նշանակում թէ թշնամին յարձակում է, առաջանում: Բայց այդ ցեղի հոգեբանութեան անժանօթը կարող է այդ անմեղ աղմուկը ընդունել որպէս որոտումնք՝ շանթից, հարուածից առաջ:

Փորձեցէք երկու անգամ, միեւնոյն ժամին կամ միեւնոյն կէտի վրայ պարտութեան մատնել թուրք եւ թաթար զօրքը, եւ այլեւս այդ անուղղայ ճակատագրապաշտը չի յանդգնի նոյն կէտի վրայ անհանգստացնելու ձեզ, որքան էլ որ պայմանները նպաստաւոր լինեն իրեն համար:

Վա՛յ թաթար զօրքին, եթէ նրա առաջին փորձը անյաջող անցաւ, կորած է նա: Ինչ որ ժողովուրդն է, այն էլ՝ իր զօրքը:

Որքան հոգեբանօրէն տարբերում են ժողովուրդները, նոյնքան էլ՝ իրենց բանակները: Գերազանցօրէն կարգապահ եւ յարձակողական է գերման զինուորը, հնարագէտ եւ ուրախ՝ ֆրանսացին, անասելիօրէն տոկուն է ռուսը, պաղարիւն՝ անգլիացին:

Երիտասարդ ժողովուրդները ակելի ռազմասէր եւ անհանգիստ են լինում: Քաղաքական իտէալները զգալիօրէն ուժեղացնում են ազգերի ռազմական խանդը:

Ձէնքի յաջողութիւնները բարձրացնում են, անյաջողութիւնները՝ ձգում նրանց ռազմունակութիւնը:

Ցեղերի խառնուածքի ինչպէս եւ ռազմագիտական մտքի վրայ մեծապէս ազդում է ֆիզիքական միջավայրը, դաստիարակութիւնը, հարեւանների վերաբերմունքը եւայլն:

Երբ գիտես այդ բոլորը, երբ ճանաչում ես թշնամուդ՝ դու ակելի ուժեղ ես զգում քեզ, ակելի թոյլ՝ թշնամուդ:

Այո՛, որքան լաւ ես ճանաչում հակառակորդիդ, այնքան թոյլ է նա քեզ համար: Ճանաչի՛ր թշնամուդ, որ հեշտութեամբ յաղթես նրան:

«Կեսարը - ասում է Պլուտարքոսը - ճանաչում էր նրանց, որոնց կ'առաջնորդէր դէպի կռիւ, եւ նրանց, որոնց դէմ կը պատերազմէր»:

* * *

Հայութեան մահացու թշնամին՝ թրքութիւնը կարող է բազում քաղաքական ցուցանակներ փոխել, բայց էապէս միշտ էլ է եւ կը

մնայ նոյնը՝ նենգ, տմարդ, մարդակեր: Հակառակ ուրիշներին՝ այդ ցեղի մարդկայնացումը իր թուլութեան մէջ է:

Եթէ երբեւիցէ քեզ յաջողուել է մի հատիկ ազնիւ թուրք տեսնել, նշանակում է թէ դու նրան տեսել ես անզօրի, անզէնի, պարտեալի վիճակում:

Այդպիսիներին ես հանդիպել եմ Բալկանեան պատերազմի եւ Լեռնահայաստանի գոյամարտի օրերին՝ որպէս գերիների, պարտեալների, թոյլերի:

Ցեղերէն ամենավայրագը եղել է եւ շարունակում է մնալ թուրքը: Իսկ *վայրագութիւնը նշան է վախկոտութեան - ասում է հոգեբանութիւնը:*

Աւելի վախկոտ է հաւաքական թուրքը՝ ամբոխը, զօրամասը:

Երկու դար է, ինչ այդ ցեղը կառչած է մնում պաշտպանողական պատերազմին եւ ճակատամարտին, քանզի կրօնական զգացումը այլեւս նրա հոգեկան կեանքին չէ հաղորդում նախկին սաստկութիւնն ու թափը, որին ընդունակ էր մինչեւ 17-րդ դարը:

Թուրքերի քաջութեան առասպելը ծնունդն է իրենց բարբարոսութեան եւ ոչ թէ իրենց մարտական առաքինութիւնների: Նրանց անուան ու զէնքի սարսափը Արեւելքում եղել է ոչ այլ ինչ, եթէ ոչ խաղաղ եւ անզէն ժողովուրդների կոտորածն ու կողոպուտը: Եւ *միշտ էլ թուրքն իր բարբարոսութիւնը ծառայեցրել է որպէս ահ ու սարսափ տարածելու միջոց:*

Դա եղել է եւ շարունակում է մնալ թուրքերի զինուորական խաբուսիկ քաջութեան միակ աղբիւրը:

Դեռ ամէն ինչ չէ կոյր կրօնամոլութիւնը: Գիտութեան եւ բարոյականի ոյժին անճանօթ տաճիկ զինուորը վճռական է միայն կռուի առաջին վայրկեաններում: Եւ վա՛յ իրեն, եթէ իր առաջին հանդիպումը թշնամու հետ անցաւ անյաջող: Շատ անգամ, զրեթէ, առաջին անյաջողութիւնից յետոյ, նա դառնում է «ընկած ձի՝ անընդունակ աքացելու»:

Այս է իրական թուրք զինուորը:

Զօրաւոր խօսքը

Գուցէ եւ միակ տեղն է կռուադաշտը, ուր ամէն բանից աւելի եւ ամէն բանից սուր զգացում է կարիքը բարոյապէս ազդելու եւ իշխելու մտքերի, սրտերի եւ կամքերի վրայ:

Կարողանալ բռնակալօրէն իշխել հոգիների վրայ,- ահա՛ ղեկավարի ամենամեծ եւ ամենաանհրաժեշտ կարողութիւնը, առանց որին զօրանոցն ու մարտադաշտը զինուորներին չի կարող յաղթութեան մղել:

Այն, ինչ որ յաճախ դժուարանում է կատարել արդիական հեռաձիգ թնդանօթը, հեշտութեամբ կատարում է ղեկավարի զօրաւոր խօսքը:

Խօսքը՝ երբեմն հրամայող ու իշխող, երբեմն՝ կանչող ու մղող, խօսքը միշտ պատկերաւոր ու սեղմ, սրտերին կրակ, բազուկներին թափ, կամքերին մղում տուող խօսքն է իշխելու եւ վարելու միակ միջոցը:

Եւ որքան զօրաւոր՝ այնքան մեծ է նրա հմայքը, այնքան ընդարձակ է նրա տիրապետութիւնը:

Խօսքը՝ դա ինքը ղեկավարն է:

Յաղթելու համար քիչ է խելքը, տաղանդը, պէտք է զօրաւոր խօսքը:

Առանց զօրաւոր խօսքի բութ են սրերը, թոյլ՝ բազուկները, անվճռական՝ կամքերը:

Առանց զօրաւոր խօսքի չկայ իշխանութիւն հոգիների վրայ, իսկ առանց այդ իշխանութեան՝ չկայ յաղթութիւն:

Մարդկային լեզուն չունի մի հատիկ բառ, որն այս կամ այն կերպ չազդեր կռում գտնուող զինուորի հոգեբանութեան վրայ:

Պէտք է գիտենալ՝ ի՞նչ եւ ինչպէ՞ս խօսել զինուորին: Իսկ դրա համար պէտք է ծանօթ լինել, եթէ այսպէս կարելի է ասել, «հոգեկան քիմիայի» օրէնքներին: Պէտք է բաղադրել կարողանալ որոշ զգացումներ զինուորի մէջ՝ մեր ցանկացած հոգեկան յուզումն առաջացնելու համար:

Տպաւորութիւն է գործում շատ անգամ ոչ թէ այն, թէ ինչ որ ասում ենք, այլ այն, թէ ե՞րբ, որտե՞ղ եւ ինչպէ՞ս ենք ասում:

Հայրենապաշտութիւն, կրօնական մոլեռանդութիւն, ազատասիրութիւն, բարի նախանձ եւ այլն,- ահա՛ զինուորական զօրաւոր խօսքի աղբիւրները:

Բարձր հայրենասիրութիւն: Դա զինուորի սրտի ամենազգայուն լարն է, որի թրթռումներից մեծապէս օգտուել են եւ օգտուում են ղեկավարները: Չկայ, չգիտեն մի պատմական զոհաբերութիւն, մի մեծագործութիւն, մի հերոսական թռիչք, որին ընդունակ չլինէր

այդ հօր զգացումը: Դա է անմահացրել Թերմոպիլեան կիրճը, Բուլկարական Շիպկան, հայկական Սիւնիքը:

Կրօնական զգացումը հրաշքներ է կատարել անցեալում:

«Ձեր առջելը արքայութիւնն է, ձեր յետելը դժոխքը, ընտրեցէք մէկն ու մէկը: Որպէս կայծոռիկներ կը ճառագայթեն պատերազմում ընկածների վերքերը: Նրանք կը մտնեն Եդէմի գեղեցիկ պարտէզները, եւ կը պառկին ոսկեթել բարձերի վրայ...»:

Այսպէս կը խօսէր արաբի հոգուն ծանօթ ռազմիկ մարզարէն եւ իր ղեկավարած սպառազէն ամբոխը կը մղէր դէպի մահ ու նուաճումներ:

Նոյն հրաշագործ զգացումը կը մղէր խաչակիրներին դէպի Յիսուսի գերեզմանը:

Գուստաֆ Ադոլֆը¹ ամէն ճակատամարտից առաջ ծունկի կը բերէր իր բանակները Տիրոջ առջեւ:

Կրոնութեան զինուորների համար մահը նահատակութիւն էր հաւատքի համար: Նրա բանակներում սպաները կը կատարէին եւ քահանայի դեր:

Սուվորովի ամենասիրած խօսքն էր՝ «Աստուած է մեզ առաջնորդում, Նա՛ է մեր զօրավարը»:

Ազատասիրութեան կրակով իր մարտիկների սիրտը կը վառէր Գարիբալդին:

Իսկ Բոնապարտը՝ ծանօթ ֆրանսացու հոգուն՝ իր զինուորի եւ զօրավարի ոգեւորութեան աղբիւրն էր դարձնում պատուոյ լէգեոնը:

Եթէ խօսքդ հայրենիքի մասին է, *մի՛ խօսիր, այլ խօսեցուր* հայրենիքը: Այս ձեւով վարուիւր եւ հերոսների եւ նահատակների նկատմամբ: Մի խօսիր, այլ խօսեցրու նրանց. խօսիր, զգալով նրանց սրտի զարկը, շունչը, ներկայութիւնը:

Երբ ես կը խօսեմ Հայաստանի մասին, խօսքեր չէ, որ կը փնտռեմ մտքերս արտայայտելու համար, այլ՝ հայրենիքիս հոգեւոր դէմքը, որ՝ նրանով գինովցած ու սիրահար, կարողանամ սէրս, կարօտս, պաշտամունքս փոխանցել լսարանիս:

Գիտական դարձուածքներ չէ սիրում զինուորը:

Հեռու դատողութիւններից: Մի՛ փիլիսոփայեր, մի՛ ապացուցեր, այլ եղիր պատկերաւոր եւ հոգեգրաւ: Շատախօսութեան տեղ չէ կշուադաշտը՝ «քիչ խօսէ, շատ ակօսէ»: Խօսիր զինուորիդ սրտին:

¹ Շվեդիայի թագավոր 1611-1632թթ.:

* * *

Բալկանեան պատերազմի ընթացքում ես զգացի զօրաւոր խօսքի ազդեցութեան ոյժը:

Մայր բանակից անջատ՝ բաւականին առաջացել էր թեթեւ զօրամասը եւ երեկոյեան դէմ անսպասելիօրէն դէմ առել մի անտառ-ապատ լեռան, որի կատարից թշնամին անդադար ռմբակոծում էր մեր դիրքերը:

«Մինչեւ այստեղ եւ էլ ոչ մի քայլ առաջ»՝ զգացնել էր տալիս հակառակորդը:

Դրութիւնը սպառնում էր դառնալ եղերական մեզ համար: Մայր բանակը շա՛տ էր հեռու, որպէսզի ուժեղացներ մեր գրոհը կամ ապահովէր մեր կանոնաւոր եւ անկորուստ նահանջը: Քիչ յետոյ թշնամին պիտի պարզէր իր ուժերի քանակը, եւ անցներ յարձակողականի՝ մեզ իսպառ ոչնչացնելու համար: Մնում էր խելայեղօրէն նետուել առաջ: Դրա համար պէտք էր սակաւաթիւ զինուորներիս մէջ բորբոքել յարձակողական ոգին այն աստիճան, որ յարձակողների համար աննկատելի դառնար հակառակորդի թուական եւ դիրքային գերազանցութիւնը:

Տեղն ու վայրկեանը պահանջում էին խօսել եւ թշնամու կրակի տակ խօսեցի զինուորներիս: Դեռ չէի վերջացրել միայն վայրկեաններ տեւող խօսքս, երբ որպէս մի կենդանի պատմէչ դիրքերից բարձրացան մարտիկներս եւ տարերային թափով նետուեցին առաջ: Քիչ անց՝ «768»-ի կատարին վեհօրէն ու յաղթական կը ծածանուէր մեր եռագոյնը, որը հայ զինուորների խիզախ քայլի համար բուլղար զօրաց հրամանատարութիւնը պիտի զարդարէր քաջութեան խաչով:

* * *

Վսեմ խօսքի ազդեցութիւնից մեծապէս օգտուել եմ երկրորդ անգամ, Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրեակին:

Հայ զօրքը, որի հետ եւ հայրենի հողից պոկուած բազմահազար գաղթականութիւնը՝ լքելով Կարինից մինչեւ Ղարաքիլիսա տարածուող հողամասերը՝ եկել թափուել էր Դիլիջան: Դա այլեւս զօրք չէր, այլ անձեւ եւ անկերպարան մի զանգուած, այլ քայքայուած ու բարոյալքուած մի անանուն բազմութիւն: Դա նահանջ չէր, այլ մի ժողովրդի գաղթ, տեղահանութիւն, փախուստ իր երկրից:

Ընդհանուր շփոթի մէջ, «տեղագրական հայրենասիրութիւնից» մղուած՝ ծնունդ էին առնում համերկրացիական խմբեր եւ բռնում

Երեւանի, Ղարաբաղի, Գանձակի ճամբաները: Չկար ծիծաղ, երգ, բարձր խօսակցութիւն իսկ չկար: Երէկուայ չքնաղ ամարանոցը այլեւս կը նմանէր մի լուռ գերեզմանատան, ուր հաւաքուած յուղարկաւորների հսկայ բազմութիւնը՝ իր ապրելու յոյսը թաղելուց յետոյ, ինքն էլ չգիտէր, թէ ինչո՞ւ է շարունակուծ մնալ այդտեղ: Անյուսութիւն, շուարանք եւ սարսափ բոլոր դէմքերի վրայ:

Երկրի այս դրութեան մէջ ընդհանուր զօրահրամանատարի կայանից տեղեկացնուծ են, թէ զօրավար Նազարբեգեանը ցանկանուծ է տեսնել Յ.Յ. Ղաշնակցութեան Շիրակի Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցչի հետ:

«Երեւանից խնդրուծ են երեք օրով եւս զբաղեցնել տաճիկ զօրքերին եւ հնարաւորութիւն տալ մեր պատուիրակութեան հաշտութիւն կնքելու տաճիկների հետ: Ես, ինչպէս գիտէք,- ասուծ է ծեր զօրավարը,- ես զօրք չունիծ: Յերթը ծերն է, կատարեցէք, եթէ կարող էք, Երեւանի հրամանը»:

Մե՞րն է այժմ հերթը: Պէտք է վերադառնալ Ղարաքիլիսա, բայց ինչպէ՞ս, ի՞նչ ուժերով: Պէտք է կամաւորներ հաւաքել, առնուազն հազար հրացանակիր, այն էլ ժամերի ընթացքուծ, եւ դա հոգեբանական մի այնպիսի մթնոլորտուծ, ուր ամէն ինչ կորած է համարուծ:

Գիտէի, որ մի բուռ հին զինուորներից զատ ոչ ոք պիտի միանայ ինձ, եթէ յայտարարեմ, թէ ինձ հրամայուած է՝ «Հէնց այսօր մի թեթեւ զօրամասով վերադառնալ Ղարաքիլիսա, շփման մէջ մտնել թշնամու ուժերի հետ եւ սպասել օգնական ուժերի»: (Այդպէս էր ինձ գրուած հրամանագիրը):

Գիտէի եւ այն, թէ հարկադրանքի մասին նման պարագաներուծ խօսք լինել չէր կարող: Կար, մնուծ էր մի հատիկ միջոց միայն, այն է՝ անվերջ նահանջների ճամբան բռնած հայ զինուորութիւնը թեքել դէպի թշնամին: Կախարդական խօսքի ազդեցութիւնն էր այդ հոգեբանական միջոցը: Եւ ես՝ խնդիրն իրագործելու համար դիմեցի այդ միջոցին: Խօսեցի: Ծաղկաձորի եկեղեցու բակուծ խռնուած ժողովողին էր ուղղուած իմ խօսքերը:

Պերճախօս չեմ, բայց հանդիսաւոր վայրկեանը ինձ այդ օրը մի ժամով դարձրել էր հռետոր: Խօսուծ էի եւ դիտուծ: Խօսքերիս կայծերն ընկնուծ էին վառօդի մէջ: Յուզուծ կար, բայց դեռ քիչ էր դա. ուզուծ էի եւ կատաղութիւն տեսնել բազմութեան շարքերի մէջ: Եւ քիչ անց տեսայ, թէ ինչպէ՞ս կատաղութիւնից իր բռունցքն էր սեղմուծ հայ մարդը:

Մտադիր էի դեռ շարունակել, երբ բազմութեան միջից բարձրացան աղաղակներ՝ «Պատրա՛ստ ենք, առաջնորդէ՛ք, տարէ՛ք, կեցցէ՛ կռիւր...»:

Այսպէս բազմահազար անբոխի խանդավառ աղաղակների մէջ խեղդւեցին իմ վերջին խօսքերը:

«Թող հետեւի ինձ, ով դեռ չէ մեռել բարոյապէս»:

Քիչ անց՝ հազարի անցնող կամաւորների մի զօրամասով ես շարժոււմ էի դէպի Ղարաքիլիսա տանող ճանապարհով:

Միւս օրը մեզ օգնութեան պիտի հասնէին նոր ուժեր եւ տեղի պիտի ունենար այն, ինչ որ կատարուեց Ղարաքիլիսայի եւ ձորերի մէջ, այսինքն՝ այն, ինչ որ շարժեց անգամ թշնամու հիացումն ու զարմանքը:

Այդ փառահեղ ճակատամարտը ինձ մի անգամ եւս համոզեց, թէ ամենատկար հոգիների մէջ իսկ կան թաքուն ուժեր, որ պէտք է գիտնանք արթնցնել եւ գործի դնել:

Աճերեւոյթ դատաւորը

Սիւնիքը կը չափուէր թուրք, թաթար եւ կարմիր հորդանների հետ: Կտրուած էինք աշխարհից, պաշարուած: Ռազմամթերք չկար, պակասում էր հացը:

Այդ գերազանցօրէն ծանր օրերից մէկն էր: Շրջագայում էի ճակատէ ճակատ, դիրքէ դիրք՝ զօրամասերս հոգեպէս գօտեպնդելու համար:

Արեւիքի հարաւ-արեւմտեան ռազմաճակատներից մէկում, Ալանգեազի բարձունքների վրայ, մօտեցաւ ինձ հարիւրապետներիցս մէկը.

- Պարոն սպարապետ, անկարելին կարելի դարձնելով մենք դիմադրեցինք մինչեւ օրս, չէ՞ք կարծում, թէ այլեւս անկարելի է դիմադրել:

Չուզեցի իսկոյն եւեթ պատասխանել նահանջի մասին մտածող վաշտապետիս, որը կարծես դադարել էր գիտակցելէ, թէ տեղի տալ այդ կէտի վրայ կը նշանակէր թոյլ տալ թշնամուն Արեւիքի հայութեան գերեզմանի վրայով միանալ թաթար Ադրբեյջանին: Հրամայեցի կանչել բոլոր ղեկավարներին: Եկան:

Շատերն առանց արտայայտուելու մատնում էին իրենց անհանգստութիւնը մեր հետագայ յաջող դիմադրութեան կարելի-

ուրժեան մասին: *Նախ հոգեպէս են պարտուում ե՛ւ դեկավար տարրերը*: Եւ թշնամու յաջողութիւնը սկսուում է հենց այն վայրկեանից, երբ իր դէմ կռուող բանակի հրամանատարութեան մէջ սկսուում է տկարանալ յաղթելու հաւատը: Զօրքը նման դէպքերու մը բնագրաբար զգու՛մ է, թէ ինքն այլեւս բարոյապէս անտէր է, անզուլիս:

Հոգուս աչքերով տեսնում էի պարտութիւնը՝ կախուած մեր գլխին: Մենք պարտուած էինք արդէն. մնում էր, որ թշնամին արիութիւն ունենար հազար քայլ առաջանալու, որպէսզի մենք լքէինք մեր դիրքերը:

Երբեմնակի լսուում էր գնդակների չար երգը եւ խռովում գիշերուայ լռութիւնը:

Նահանջելու տրամադիր վաշտապետս սպասում էր պատասխանի: Ես խորհրդածու՛մ էի: *Հերիք չէ ասել՝ հրամայում են կռուել, մեռնել*: Նման վայրկեաններում անզօր են հրամանն ու սպառնալիքը: Փորձով գիտէի այդ եւ շարունակում էի դեռ մտմտալ: Խոհերս սկսել էին բիրեղանալ, արդէն գիտէի ասելիքս եւ անելիքս, բայց եւ այնպէս շարունակում էի լուռ մնալ, երբ կորովաթափ վաշտապետս խզեց լռութիւնը.

- Ի՞նչ էք մտածում, պարոն սպարապետ:

- Այն, հերոս վաշտապետս, որ դու, ինչպէս տեսնում եմ ե՛ւ մի քանի ուրիշներ մոռացել էք հայոց պատմութիւնը, որը մեր կռիւներով չէ սկսուել եւ մեզնով չէ վերջանալու: Այս լեռների վրայ կռիւներ են տեղի ունեցել մեզմից առաջ, տեղի պիտի ունենան եւ մեզմից յետոյ: Ասացէ՛ք, ի՞նչ անուն կը տայիք Դաւիթ Բեգին, եթէ մարդկային այս կամ այն տկարութիւնից մղուած՝ նա Սիւնեաց աշխարհը յանձնած լինէր թուրք ու թաթար հորդաներին: Մեզմից առաջ այս լեռների վրայ կռուող հայը խորապէս գիտակցել է, թէ *Սիւնիքը յանձնել թշնամուն՝ կը նշանակէ հայ երկրի բանալիները եւ հայ ժողովրդի բախտն ընդմիշտ յանձնել իր իսլամ հարեւաններին*: Նոյն փրկարար գիտակցութեամբ այս բարձունքների վրայ պետք է կռուէ, մեռնէ ու յաղթէ ե՛ւ վաղուայ հայութիւնը: Ի՞նչ, միայն ձե՞զ է պակասում այդ գիտակցութիւնը: Սոռացե՞լ էք, թէ ժողովուրդը հրամայել է մեզ՝ յաղթել կամ մեռնել:

- Ո՛չ,- եղաւ վաշտապետներիս պատասխանը:

- Ես բնաւ չեմ մտածում նահանջի մասին, որովհետեւ սովորութիւն ունիմ նման օրհասական վայրկեաններում դիմելու իմ

խղճին՝ հարցնելու իմ ներքին դատաւորին.- ինչպէ՞ս են վարուել նման եւ ւաւելի ծանր վիճակում Վարդաններն ու Դաւիթ Բէգերը:

- Մեռնել, բայց յաղթել:

- Ինչպէ՞ս կ'ուզէի, որ վարուէին նման դէպքերում այն բոլոր ղեկավարները, որոնց ապագայում պիտի վիճակուի վարել մեր ժողովուրդի ինքնապաշտպանութեան սրբազան գործը:

- Մեռնել, բայց չզիջել հայոց լեռնաշխարհը:

- Իմ ներքին դատաւորի թելադրութեամբ միշտ էլ այսպէս են պատասխանել, այսպէս են պատասխանում ինձ եւ այժմ...

- Ես,- արդարանալ փորձեց վաշտապետս,- ես ուզեցի ասել, թէ այլեւս ռազմամթերք չունենք:

- Բայց ո՞վ ասեց, թէ առատ ռազմամթերքով են յաղթում: Շատ անգամ յաղթում է այն կողմը, որը շատ քիչ է կրակում: Վախկոտն է յաճախակի կրակում, մատնելով իր անարիւթիւնը: Զրացանից, գնդացիից, թնդանօթից չէ, որ սարսափում է թշնամին, այլ քար լռութիւնից: Չկայ ւաւելի ահաբեկիչ բան՝ քան լուռ առաջխաղացումը՝ մասնաւորապէս գիշեր ժամանակ, երբ քարը, թուփը՝ այն ամէնը, որ կարող է զբաղեցնել մարդուս աչքն ու երեւակայութիւնը, դառնում է գրոհող հակառակորդ: Լուռ առաջացող տասնեակը մի ամբողջ գունդ է, վաշտը՝ մի ամբողջ բանակ պաշտպանուողի համար: Գիշեր ժամանակ յարձակողի զինակիցներն են՝ խաւարը, լռութիւնը, ժայռերը: Իսկ երբ նախայարձակուողը մենք ենք՝ այդ լեռների տէրը՝ մեզ հետ են նաեւ այն բոլորի վրէժխնդիր ստուերները, որոնք մեզնից առաջ հեզնել են մահը եւ ընկել այդ սրբազան բարձունքների վրայ: Իսկ երբ մենք ենք նախայարձակուողը՝ մեզ հետ է նաեւ մեր լեռների հզօր ոգին: Ուրեմն, ռազմամթերքի կարիքը չզգալու համար՝ մնանք հաւատարիմ մեր օրինւած ռազմավարութեան տարերային ձեւերին: Գիշերամարտը թող լինի մեր բաժինը: Ուրեմն *յարձակուիւնք, ինչպէս յարձակում է մահը՝ լուռ եւ անակնկալ:*

- Յարձակուիւնք,- միաբերան կրկնեցին վաշտապետներս եւ յուսադրուած՝ վերադարձան դէպի իրենց վաշտերը, դէպի կրակի գիծը:

Լուսաբացին Ալանգեազի բարձունքներում թշնամին ծեծուած ու գերուած էր գրեթէ առանց ռազմամթերքի:

Իմ զինուորը այդ օրը օրինում էր ճակատագիրը, որ չէր յապաղել թշնամու ձեռքով մեզ առատ ռազմամթերք հասցնելու:

Այդ կռուում Սիւնեցիւն մի անգամ նաեւ զգաց, թէ ցեղի ոգու ձեռքով ղեկավարուող ժողովուրդը կարիք չունի երկար սրի:

Ռազմավարական հայեացքներ

Սկսուեց կռիւը՝ այլեւս կռուադաշտը դառնում է փորձադաշտ, ուր պատերազմող կողմերը հաստատում կամ ժխտում են գոյութիւն ունեցող զինուորական տեսութիւններու ճշտութիւնը:

Ազատ ստեղծագործութիւն է ռազմավարութիւնը՝ ոչ միայն հաշիւի, այլեւ ներշնչումի ու արիութեան գործ:

Ի՞նչ են ուզում: Ինչպէ՞ս կարող են կատարել ուզածս: Հակառակորդս պիտի աշխատի խանգարել ինձ. ինչպէ՞ս կարող են ի դերել հանել ինձ խանգարելու նրա փորձերը եւ պարտադրել կամքս:

Երբ որ արի ենք, անձնուէր ու վճռական մեր տրամադրութեան տակ յաղթելու համար աւելի միջոցներ կան, քան պէտք են:

Եղի՛ր միշտ էլ ավելի անձնուէր, վճռական եւ արի քան թշնամի՛ն՝ ահա՛ էականը:

«Ճանաչի՛ր մի հատիկ ռազմավարութիւն՝ աննիբալեանը, որ ասել է՝ մի հատիկ շարժում միշտ յառաջ քանզի նահանջի մասին մտածող զօրամասին պարտութիւնն ու ամօթանքը հետեւում են ճիշտ այնպէս, ինչպէս անիւր՝ եզան:

Եւ ո՛չ մի քայլ յետ, քանզի զինուորդ նահանջի գաղափարը միշտ էլ կցորդում է իր զօրամասի թուլութեան եւ պարտութեան գաղափարին: Չկայ աւելի զգուելի արարած, քան մարտիկը, որի հայեացքը յետ է, որ բռնած է նահանջի ճամբան: Ուր չկայ նահանջ՝ պարտութիւն չկայ:

Յաղթում է այն կողմը, որը վստահ է ոչ թէ իր սպառազէն բռունցքի, այլ իր ներազէն ոգու գերազանցութեան: Երկաթ զէնքերի դէմ հեշտ է վահան գտնել, բայց ոչ նաեւ ոգու զէնքերի դէմ, որ քոնը պիտի լինի, հա՛յ զօրական:

Գիտցի՛ր եւ հետեւեալը՝ *անպարտելի է մնում միայն այն դրօշակը, որը պարզւում է ցեղի անունով եւ ցեղի համար:*

IV ՅԵՂԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹԻՒՆ

*Մականախաղեր: Շաւասպ Արծրունին երկու անգամ
խլեց գնդակը Շապուհի ձեռքից: Գոռոզ, բայց թուլամորթ
Սասանեանը հայ իշխանի այդ յանդուզն յաջողակութիւնից
առնուած, ասաց՝ «Ճանաչի՞ր քեզ» - «Այո՛, ճանաչում եմ ինձ,
ասաց Շաւասպը, ես էլ թագաւորագն եմ»:*
Հայոց պատմութիւն

Սիրի՛ր պատմութիւնը

Քեզ չպիտի յորդորեն մօտենալ պատմութեան, որպէս ուսում-
նատէր: Սօտեցիր նրան որպէս ղեկավար, որին զբաղեցնողը
ամենից առաջ եւ ամենից շատ մարդն է՝ իբրեւ զինուոր, քաղաքացի,
պետական գործիչ, եւ զանգուածը, որպէս զօրք, ամբոխ, հասարակութիւն,
որոնց ճանաչելու համար պէտք է ուսումնասիրել նրանց գաղափարները, կիրքերը եւ գործերը:

*Պետական գործիչի համար բացարձակ անհրաժեշտութիւն է
պատմութեան ուսումնասիրութիւնը, որովհետեւ պատմութիւնը այլ
բան չէ, եթէ ոչ գործնական հոգեբանութիւն: Նա է փաստեր եւ
ապացոյցներ մատակարարում քեզ հետաքրքրող գիտութիւններին՝
ռազմագիտութեան, հոգեբանութեան եւ այլն:*

Նա է լուսաբանում անցքերը, մերկացնում կեղծիքը, ասում
ճշմարտութիւնը՝ կայացնելով իր դատավճիռը անհատների եւ
ազգերի մասին:

Գիտէմ, քո միտքն ամենից առաջ կանգ պիտի առնէ մեծանուն
ռազմավարների վրայ: Դու պիտի լսես Մեծ Մակեդոնացուն, որը
կ'ողբար, թէ այլեւս նուաճելու համար երկիր չի մնացել: Կը լսես
Կեսարին ու կը սքանչանաս նրանով, բայց եւ այնպէս պիտի
դժուարանաս դատապարտել նրանց, որոնք ազատասիրութիւնից
մղուած դաշնահար արին կամքի ու կորովի այդ եզակի տիտանին:

Քեզ պիտի խօսի Աննիբալը՝ Հռոմի փառքի ու մեծութեան ան-
հաշտ թշնամին, որը յաճախ յաղթական եղաւ, բայց ոչ եւ երջանիկ:

Իր խօսքը կ'ասի քեզ նաեւ հայ Տիգրան Աշխարհակալը, որը
ըստ օտար պատմիչների, կ'ընդունէր թէ երկրագունդն ստեղծուած
է միայն իրեն համար:

Քեզ կ'երեւայ վերջին մեծ ռազմավարը՝ Նապոլէոնը, որն ունեցաւ եւ Սուրբ Յեղիմէն:

Ահա՛ փոքրիկ, բայց մեծ ու խստամբեր Սպարտան, որը մի օր հարկադրեց իր երաժշտին՝ փետել տաւիդի նոր լարերը, որոնք կարող էին բարքերի անբարոյացման ծառայել:

Տես եւ Հին Եգիպտոսը, ուր ծուլութիւնը կը համարուէր պետական յանցագործութիւն եւ ծոյլերը որպէս անօգուտ արարածներ, կը դատապարտուէին մահուան:

Ահա՛ աւարառու մեծահարուստ Ասորեստանը, արեւապաշտ Իրանը, գեղամոլ Հելլադան, Հռոմը, որ մեռան պերճանքի ու շքեղութեան մէջ:

Տաճկաստանը, որը պարբերաբար կը սեղմուի, կը ծուատուի, մինչեւ որ մի օր կործանուի դարերի ամօթն ու զգուանքը շարժող իր ոճիրների ծանրութեան տակ:

Ահա՛ քո հայրենիքը...

Ազգային պատմութիւն

Քիչ չեն այն գրքերը, որոնք գրուած են դարերի համար, բայց չկայ մի այլ գիրք, որն այնքան անհրաժեշտ եւ օգտակար լինէր քեզ համար, որքան ցեղիդ պատմութիւնը:

Տեղիդ կեանքի հայելին է դա: Մօտեցիր իրեն եւ դա ցոյց պիտի տայ քեզ դարերի այն վիթխարի գոյամարտը, որ մղել է հայութիւնը իր պետութեան սահմաններից դուրս եւ ներս: Պիտի ասի քեզ, թէ իր ո՞ր առաքինութիւնների շնորհիւ նա յաճախ յաղթական է հանդիսացել, եւ ո՞ր բացասական յատկութիւններն են ճակատագրական դեր խաղացել իր հաւաքական նաւաբեկութիւնների մէջ:

Տեղիդ պատմութիւնը կը վկայէ, թէ ի՞նչ աստիճան հայութիւնը ազդուել է իր հարեւաններէն եւ ունեցել քաղաքակրթական ազդեցութիւն նրանց վրայ: Սեղմ ասած՝ նա կը պատմէ քեզ մեր անցեալ կեանքի բոլոր ելեւէջները, մեր յաղթական խոյանքները ու տխուր անկումները, մատնանշելով եւ դրանց պատճառները:

Տեղիդ պատմութիւնը սակայն, անցեալի ցամաք նկարագրութիւնը չէ միայն: Այլ նաեւ անցեալի խօսքը՝ ուղղուած ներկային ու ապագային. մեռելների ծայնը, որ կը խրատէ ողջերին, կը պատմէ քեզ, թէ ի՞նչո՞ւ եւ ի՞նչպէ՞ս հայութիւնը կորցրեց իր անկախութիւնը. թէ ի՞նչն էր հեշտացնում օտար տիրապետութիւնները Հայաստանում:

Սօսեցի՛ր մեր պատմութեան: Դա ունի էջեր, որոնց ծանօթ օտարականն իսկ չի կարող յարգանքով չը լեցուիլ մեր ցեղի նկատմամբ: Անմահ էջեր, որոնց հերոսական վեհութեան մէջ հոգեպէս աճում է ընթերցողը:

Հաւաքի՛ր, իմաստուն հրամանատար, այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ, հերոսական մեր պատմութեան էջերում եւ լիաբուռն ցրիր բանակիդ հոգու եւ գիտակցութեան մէջ:

Միայն այսպիսով կը դաստիարակես մարտիկներ՝ միշտ պատրաստ իրենց մեծագործութիւններով աւելի եւս գեղեցկացնելու մեր ցեղի պատմութիւնը:

Սիրով եւ երկիւղած մօտեցիր ազգային պատմութեան, եւ մի՛ մոռանար, որ *ցեղի հոգին ճանաչելու համար բաւական չէ միայն ուսումնասիրել նրա պատմութիւնը, պէտք է եւ վերապրել այն:*

Վերապրի՛ր, պատմութեան միջոցով վերապրիր ցեղիդ կեանքը:

Մեր պատմութեան տխուր կողմը

«Մենք հենց սկզբից տեսնում ենք տեղական իշխանների այն նախանձը, որ ամբողջ հայոց պատմութեան ընթացքում գլխաւոր պատճառն է դառնում այդ պետութեան կործանման, այդ ազգի թշուառութեան»:

Օտար պատմագրի այս վկայութիւնը անվերապահօրէն հաստատում է եւ մեր պատմութիւնը:

Նախանձը, որ բազմիցս մեր անկախութեան գարշապարից է զարկել, քանիցս հայ ժողովուրդի տունն ու պետութիւնն է քանդել:

Շահն էն տխուր անփառունակ եւ ամօթալի մեր պատմութեան այն էջերը, ուր կը խօսուի նախանձի դեւով բռնուած հայ թագաւորի, մելիքի եւ սրանց գործերի մասին:

Քրքրեցէք մեր պատմութիւնը եւ պիտի տեսնէք, թէ Արեւելքի եւ ոչ մի բռնակալ այնքան չարիք չէ պատճառել հայ ժողովուրդի դէմ, որքան իր մելիքի, իր իշխանի, իր թագաւորի նախանձը: Խօսեցրէք մեր պատմութիւնը, եւ պիտի համոզուիք, թէ թշնամին Հայաստան է ներխուժել յաճախ այն ժամանակ, երբ իր նախանձոտ գլխաւորների շնորհիւ մեր ժողովուրդը ներքուստ պառակտուած է եղել:

Այո՛, ոչ մի արտաքին թշնամի այնքան անգթօրէն չէ հարուածել մեր ժողովուրդին, ինչպէս իր որոշ գործիչները:

Մատնութիւն, դաւաճանութիւն, եղբայրասպանութիւն,- ահա՛ սեւ գործերը նախանձի, որի երեսից այնքան արիւն ու արցունք է տեսել հայ երկիրը:

* * *

«Ոսկրի որդ» այսպէս է խօսում Աստուածաշունչը նախանձի մասին: Միշտ էլ թուլութեան ծնունդ՝ նախանձը չէ կարողանում տանել ուրիշների բարիքը, յաջողութիւնը, փառքը եւ զինուում է նրանց դէմ:

Երբ կայ ղեկավարների նախանձը՝ այլեւս ակելորդ են դառնում ժողովրդի բարձր առաքինութիւնները, նրա որդիների արիւթիւնը, անձնւիրութիւնը, հայրենապաշտութիւնը:

Երբ մի ժողովրդի պետերը կը ղեկավարուեն նախանձի չար ոգով՝ այլեւս կարիք չկայ, որ այդ ժողովրդի հայրենիքը ներխուժող թշնամին ունենայ թուական, հոգեբանական եւ այլ գերազանցութիւնները: Այն՝ ինչ որ չպիտի կարողանային կատարել թշնամու բանակները, կը կատարէ ինքնապաշտպանուող երկրի ղեկավարների չար նախանձը:

Չայ զէնքի փառքն ու ողբերգութիւնը

Բարոյապէս սնանկ է անհատը, երբ նրան պակասում է ազգային հպարտութեան զգացումը՝ ծնունդ ազգային ինքնաճանաչութեան, որն իր սնունդն առնում է մեր պաշտամունքից դէպի այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ եւ հերոսական հայրենի պատմութեան մէջ:

Առանց այդ բարձր առաքինութեան բարոյապէս պակասաւոր է անհատը որպէս մարդ եւ որպէս անդամ որոշ հաւաքականութեան:

Իր սրբազան պահն ունի իր ամէն մի օրը, երբ մտովին անհուն կարօտով կը սկսիմ իմ պրպտումները հայոց պատմութեան էջերի մէջ: Քաղցրութեամբ կ'ոգեկոչեմ նրանց, որոնք հոգեկան գեղեցկութեան, անդիմազրաւելի արիւթեան ու մեծագոյն վեհութեան համբուրելի հետքեր են թողել հայոց աշխարհում: Կ'ոգեխառնուիմ հայ զինուորին ու զօրավարին, կը վերապրիմ նրանց գոռ յաղթանակները եւ կարօտով կը բաժնուիմ նրանցից իրենց ազնուացուցիչ ընկերութիւնը վերստին վայելելու ցանկութեամբ:

Այսպես կը սնուցանեն ազգային հպարտութեան իմ զգացումը: Չտկարանալու համար՝ կը կատարիմ իմ ամենօրեայ խորհրդաւոր զօրահաւաքը մեր պատմութիւնը զարդարող հոգիների, ապա կը խօսեցնեն ու կը լսեն նրանց:

Եւ ասում են նրանք.-

Գրեթէ չմնաց ցեղ, ազգ աշխարհում, որ մեր բազկի ոյժը չզգար՝ պոռոտ բաբելացին, հռոմէացիները կաշառող, աղուէսաբարոյ սասանեանները, բիւզանդացին նենգ, արաբն ու սկիւթացին ընչաքաղց, ալանները, քուշանները, կովկասեան լեռնականները աւարառու: Այդ բոլորի եւ շատ ուրիշների հետ անհամար անգամ հարուածներ ու վերքեր փոխանակեցինք: Եւ յաճախ մեր բազուկը յաղթեց: Սակայն, քիչ անգամ մեր արիութիւնից լիուլի օգուել կարողացաւ մեր ցեղը, քանզի *կար ընտանի թշնամին, ներքին թշնամին, որի վատութեանց կը պարտի հայոց աշխարհն իր դարերի քաղաքական խեղճութիւնը:*

Մեր բազուկէն՝ զինուորի եւ ռազմավարի՝ աւելի օտարն օգտուեց քան հարազատ երկիրը: Եւ դրա համար էլ մեր քաջութեան հռչակը տարածուեց շատ հեռուները՝ մինչեւ Ասորեստան, Յռոմ, Յրէաստան եւ լեռները կովկասի:

Տէն, ո՞րքան շատ են մեր վերքերը՝ ստացուած օտար հայրենիքների համար: Անպարտելի էր օտար բանակը, երբ նրա զէնքի յաջողութեան համար, նրա կօղբին կը կռուէր եւ հայը, կամ երբ դա կ'առաջնորդուէր հայ զօրավարի կողմից:

Մասնաւորապէս պարսիկն ու յոյնը չարաչար շահագործեցին հայ արիութիւնը,- ազգեր, որոնց անկայուն գահերի համար հայ արիութիւնը հանդիսացաւ որպէս ուժեղ սիւն: Մեզ զբաղեցնելով իրենց արտաքին թշնամիների դէմ՝ այդ ազգերը մեր արիութիւնը ծառայեցրին որպէս ամխորտակելի պատուար իրար դէմ, մինչեւ որ մի օր էլ կը բաժանէին մեր աշխարհը: Պարսիկն իր փառքի կէտէն աւելին մեզ կը պարտի: Խոշոր բաժին ունինք եւ յունական փառքի մէջ...

«Միշտ էլ ուժեղին պիտի պատկանի երկիրը»: Յովբի այդ խօսքերով է ազգերին խրատում պատմութիւնը:

Ուժեղը՝ ճշմարտօրէն արժանաւորն է, արին: Ոգու ոյժն է ճշմարիտ ոյժը: Ոգու ոյժն էր, որ քանակօրէն տկար Յելլադային առջեւ ծունկի բերեց անծայրածիր Պարսկաստանը: Ոգու ոյժն էր, որ Յռոմ քաղաքի ձեռքին դրեց աշխարհի ճակատագիրը: Այդ ոյժն

էր, որ Տիգրան Մեծի օրով Հայաստանը վերածեց մեծ թագաւորութեան:

Ընկաւ Հայաստանը, քանզի *անմիաբանութեան չար ոգին մեր ժողովրդից խլեր էր անօրինակ քաջութիւնից ազատօրէն ու լիուլի օգտուելու կարելիութիւնը:*

* * *

Արիութիւնը միակ ճշմարիտ կրօնն է՝ առանց որին ոչինչ արժեն կրօնները:

Կեղծ է ամէն մի գրականութիւն, բարոյական, քաղաքական վարդապետութիւն, եթէ ոյժ եւ արիութիւն չէ ներշնչում իրեն դաւանողին: Դատապարտելի է ամէն մի դպրոց, եկեղեցի, կուսակցութիւն, որն արի եւ արիադաւան չէ դարձնում մարդը, որպէս անհատ եւ հաւաքականութիւն:

Կորցնելով իրենց արիութիւնը, այսինքն՝ իրենց առաքինութիւնները, ժողովուրդները կորցնում են նաեւ իրենց գոյութեան բարոյական իրաւունքը:

Արիութիւնն է կեանքի ու պատմութեան անիւը շարժողը: Մեծ նկարագրեր, սրտեր, մտածումներ՝ արիութեան հարազատներն են, նրա արեւի ճառագայթներն են:

Արիութիւնը կորցնելով՝ ժողովուրդները կորցնում են իրենց մարդկային կարողութիւնները եւ առաքինութիւնները անկաշկանդ կերպով զարգացնելու եւ կատարելագործելու կարելիութիւնը:

Անարի ժողովուրդները ընկնում են օտար լուծի տակ, կորցնում իրենց անկախութիւնը, այսինքն՝ միակ հոգեւոր մթնոլորտը, որի մէջ միայն հնարաւոր է ցեղերի առանձնայատուկ հանճարի փթթումը:

* * *

Քաջութիւնը երբեք չտկարացաւ մեր ժողովրդի հոգու մէջ, մինչեւ մեր անկախութեան վախճանը, որից յետոյ հայ ձեռքը պիտի զրկուէր դարերով զէնք կրելու կարելիութիւնից:

Հայութիւնը չզիտէ իր պատմութիւնը, ինչպէս եւ չզիտ օգտուել իր պատմութիւնից, - ահա՛ իր դժբախտութիւնը:

Նա ծանօթ չէ իր հերոսական անցեալին, իր հիասքանչ դիցազնականին, եւ դրա համար էլ նա հաւատում է ամէն ինչի, միայն ոչ իր սեփական բազկի ոյժին. դրա համար էլ իր ամբողջութեան մէջ նա անմարտունակ է եւ պարտուողական:

Նրա համար Աւարայրի Մամիկոնեանը աւելի սուրբ է, նահատակ քան հերոս, ռազմիկ:

«Մեզ պէս անռազմասէր ու երկչոտ է եղել եւ հին հայը, այլապէս ինչո՞ւ պիտի կործանուէր մեր թագաւորութիւնը», - այսպէս է տրամաբանում օրուայ հայութիւնը՝ մասնաւորապէս նրա առեւտրապաշտ մասը:

Նա չգիտէ, որ հայկական հարստութիւնները կործանուել են ոչ թէ արիութեան պակասի շնորհիւ, այլ մեր ցեղի ղեկավար տարրերի տարապայման երկպառակութիւնների եւ խռովութիւնների երեսից: *Ինքնակործան են եղել գրեթէ մեր բոլոր թագաւորութիւնները:*

Նա ոչինչ գիտէ իր ցեղի հնաւանդ ռազմունակութեան եւ ռազմական մեծագործութիւնների մասին, եւ դրա համար էլ նա անհաւատ է դէպ իր բազուկը, անյոյս՝ դէպ իր ապագան: Դարերով հոգեւոր շանթարգելի դեր է կատարել հայ քաջութիւնը հայոց աշխարհի համար, զինաթափելով ու չէզոքացնելով բոլոր տեսակի մահաբեր հարուածները: Եթէ Հայաստան արշաւող թշնամի հորդաները եղել են ծովի ալիքները, ապա ինքնապաշտպանուող հայ արիութիւնը յաճախ հանդիսացել է որպէս ծովափեայ ժայռ, որին զարնուել եւ ցնդել են արտաքին թշնամութեան յորձանքները:

Այո՛, օրուայ հայութիւնը չի ճանաչում իր դասական արիների համաստեղութիւնը: Իր անմեռ քաջերի պաշտամունքը նա չունի: Նա չէ դաստիարակւում նրանց մեծագործութիւններով: Ահա՛ մեր դժբախտութիւնը:

Եւ մեղաւորը ժողովուրդը չէ, այլ այն տարրը, որի ջանքերով ինքնաճանաչութեան է բերւում ժողովուրդը: Մտաւորականութիւնն է մեղաւոր:

* * *

Մէկից աւելի անգամ դժբախտութիւն են ունեցել լսելու հայրենի պատմութիւն դասաւանդող հայ ուսուցչին եւ խորապէս ցաւել են մեր աշակերտող սերունդի համար: Մեռելների մասին է խօսում մի կենդանի մեռեալ: Պատմութիւնը նրա համար անհոգի կմախք է եւ ոչ թէ բաբախուն սիրտ: Նա գիտէ ցամաք անցքեր, թուեր, անուններ... այսքանը միայն: Նա միեւնոյն տրամադրութեամբ է խօսում եւ Տիգրան Մեծի եւ վեստ Սարգիսի մասին:

Հպարտութիւնից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգները, երբ պատմում է թէ ինչպէս պարսից արքան՝ հայ սպարապետի

(Մուշեղ Մամիկոնեանի) անօրինակ քաջագործություններից հիացած, ամեն անգամ, երբ գինու բաժակը շրթունքներից կը մօտեցնէր՝ կը դժուարանար չբացազանչել՝ «Ճերմակաձին գինի խմէ»:

Ամօթի զգացումը չէ այրում նրան, երբ իր խօսքը խռովաւեր հայ նախարարների մասին է:

Սեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չէ հայ ուսուցչին աւանդած պատմութիւնը, որովհետեւ իրեն պակասում է ազգային հպարտութեան նուիրական զգացումը:

Գերազանցօրէն հայրենասէր,- ահա՛ թէ որպիսի մէկը պէտք է լինի պատմութեան դասատուն: Եթէ այդպէս չէ, ասել է՝ նրա տեղը դպրոցը չէ. ասել է՝ նա բարոյապէս ազատ չէ ձեռքն առնելու մեր ցեղի կեանքի սրբազան գիրքը:

Նահապետ, թագաւոր, սպարապետ

Չա՛յկը, անմեռ փառքը իր ցեղի, այսպէս կը խօսեր իր մարտիկներին.

«Յարմար վայրկեանին կը լարի փորձ որսորդն իր աղեղը եւ միշտ անվրէպ ու մահառիթ է իր հարուածը»:

- Մի սեղմ խօսք, որի մէջ խտացուած է ռազմարուեստի ողջ գաղտնիքը:

Յարմար վայրկեանին մահառիթ հարուած,- ահա՛ թէ ինչ է պահանջում իմաստուն ռազմագիտութիւնը:

Այսպէս, բնագդական ռազմագէտ ու մարտավար է հայ նահապետը, որի աննուաճ արիասրտութիւնը այսպէս կը պատասխաներ Ներքովթի բանբերներին՝ - «Որսորդի հեռաձիգ նետը պէտք ունի ազատ եւ ընդարձակ տեղերի»:

Ասել է՝ գիտէ հայ ահաւոր աղեղնաւորը, թէ ժողովուրդներն անկաշկանդ կերպով զարգանալու համար հարկաւոր է երկու բան՝ յարաբերօրէն ընդարձակ երկրամաս եւ քաղաքական անկախութիւն:

Ահա՛ եւ Արամը, որն իր ուխտն ունի՝ *մեռնել, բայց չտեսնել օտարի պղծիչ զարշապարը հայ երկրի վրայ*:

Նինոսը, դեռ անծանօթ հայ բազկի ոյժին եւ նետի անվրէպութեան՝ հեղեղի պէս շարժում է դէպի Չայաստանի սահմանները՝ իր աշխարհակալական ազահութիւնը յագեցնելու յանդուգն ցանկութեամբ:

Արթուն է, սակայն հայ նահապետի աչքը, եւ ահա՛ սակաւագօր, բայց արհաշունչ մի զօրաբաժինով նա դիմաւորում է թշնամուն իր երկրի սահմանների վրայ, արհամարհում է նրա բազմաւորութիւնը, նետուում նրա վրայ, խորտակում նրա ոյժերը, եւ գերելով գոռոզ Մադէսին, բերում է Արմաւիր, ուր նրա գանկը երկաթէ ցիցերով մխում է աշտարակի բարձր գագաթի վրայ՝ առ ի խրատ Յայաստանի արտաքին թշնամիների...

Հաւասար չափով հայրենապաշտ եւ ռազմիկ է հայ նահապետը:

Ուխտի ոյժն է նրա ոյժը՝ մեռնել, բայց տեղի չտալ:

Խորտակելով Նինոսի գերադաս ոյժերը, նա ոչ միայն խստիւ պատժում է հայ երկրի թշնամիներին, այլեւ իմաստուն դաս է տալիս հայութեան գալող առաջնորդներին, թէ ինչպէս պէտք է ապահովել Յայաստանի անմատչելիութիւնը արտաքին վտանգի դէպքում:

Հայ նահապետը պիտի ուզենար ասել՝

- Մահն ու թշնամին միշտ էլ տեղի են տալիս մեռնելու մտքի հետ հաշտուած ռազմիկի առջեւ: Ուխտեցէ՛ք մեռնել եւ ձեր ճակատէն չպիտի ընկնի փառքի պսակը:

* * *

Ահա՛ եւ հայ աշխարհակալը՝ Մե՛ծն Տիգրանը:

Լսենք Պլուտարքոսին հայ մեծ ռազմիկի մասին, որ մինչեւ խոր ծերութիւն անձամբ կը ղեկավարէր իր բանակները: «Հռոմէական ամենատաղանդաւոր զօրավարներն անգամ, թէւ անհաշտ թշնամիներ, ընդունում էին, որ աշխարհի ամենահզօր եւ մեծ թագաւորները Միհրդատ Պոնտացին եւ Տիգրան Հայն է»: «Նա, Տիգրան Մեծը, այնպիսի ջարդ տուեց պարթեւներին, - ասում է Պլուտարքոսը, - որ մինչեւ մեր օրերը ոչ ոք չի կարողացել գերազանցել հայերին»:

«Տիգրանի անձնաւորութիւնը, - ասում է Դոլենսը, - կարող է մեզ ներկայանալ իբրեւ իր ազգի ամենաբնորոշ պատկերը: Նրա մէջ առաւելութիւնները եւ պակասութիւնները արտայայտուում են մեծ ծայրայեղ չափերով: Որոշ դատաւորների աչքում պակասութիւնները շատ դէպքերում գերակշռում են»:

Ո՛չ, ո՛չ, անարդար է օտարի այդ դատաստանը:

Հայ աշխարհակալի թերութիւնները *մեծութեան յատուկ թերութիւններն են:*

«Որքան մեծ կարողութիւններ ու բոցավառութիւն ունի անհատը՝ այնքան ասելի գործունեայ է նա, այնքան ասելի սխալներ է կատարում»:

Ահա՛ եւ Արշակ, որը որպէս նշանակ պոնտացիների դէմ տարած իր յաղթանակի Սեւ Ծովու եզերքում կանգնեցնել է տալիս մի քարէ կոթող եւ ապա արծակելով նետը՝ խորապէս թաղում է նրա մէջ:

Եւ օտարը տարիներով պաշտում է հայ բազկի թափը խորհրդանշող բոլորատեղ միզակը՝ համարելով դա գերմարդկային գործ:

Այս դիւցազնին պիտի յաջորդէր իր աշխարհակալ որդին՝ Արտաշէս Ա, որի բանակների մասին ասում է պատմիչը. «Երբ ամենքը նետ արծակէին՝ արեւը կը մթազներ, եւ եթէ ամէն մէկը քար նետէր՝ բլուր կը ձեւանար»:

Հպարտ էր, ռազմասէր եւ կ'եռար աշխարհակալելու կրքով:

Ըստ Դիոտորոսի՝ մի մեծ երագ ուներ նա՝ նուաճել ողջ տիեզերքը: Ահա՛ այդ կամքի տիտանը, որ կը սիրէր յաճախ մտնտալ եւ աշխարհի ունայնութեան մասին պիտի բացագանչէր մի օր՝ «Աւա՛ղ փառացս անցաւորի»:

Հապա Տիգրան թագաւորա՞ցն, Կիւրոսի աշխատակիցը, որը փրկեց Պարսկաստանը Մարաց Աժդահակի սարսափից:

Հապա Վահա՞գն, որդին Տիգրան Մեծի, հայ Հերակլէսը, որն իր անօրինակ քաջագործութիւնների համար կը պաշտուէր եւ վրաց ժողովրդէն:

* * *

Մեծն Տրդատը, բարեկամն ու դաշնակիցն էր աշխարհակալ Հռոմի: Ըստ Կոստանդիանոսի՝ «Արեւելքի ահեղանշան թագաւորը»:

Նրան ճանաչում է յաւիտենական քաղաքը, ուր նա դափնիով պսակուած էր իր քաջագործութիւնների համար:

Դիոկղետիանոսի օրով նա մենամարտել էր Գոթաց հսկայի հետ, յաղթել նրան եւ փրկել Հռոմի անունը: Հայերի քաջութեան հռչակը այնքան էր տարածուած Հռոմէացիների մէջ, որ Կոստանդիանոսը խնդրում էր հայ թագաւորէն Հռոմ ուղարկել երեք հարիւր «հասակով եւ արիութեամբ հոյակապ» հայ զինուորներ, որոնց պիտի նշանակէր որպէս գահապահ, թիկնապահ եւ որպէս առաջապահներ պատերազմի ժամանակ:

Այս մեծ հայը պատմութեան մէջ, իր գործերի հետ, թողել է նաեւ մի իմաստալի դարձուածք՝ «Մարդկային դրութեան բարձունքներում արդար է այն, ինչ որ ուժեղ է»:

Նա պիտի ուզեր ասել եւ հետեւեալը.

«Եղէք քաջ, եւ աշխարհի ամենաուժեղն իսկ պիտի փնտռի ձեր զինակցութիւնը»:

* * *

Հայաստանի ամենանշեղ օրերին էր, երբ բախտը հայ սուրը յանձնեց Մուշեղին, որ խնկելի Մամիկոնեան էր՝ անզուգական որպէս մենամարտիկ, ռազմավար եւ ասպետ: Հայ բազկի ոյժին ծանօթ թշնամին եկել, տիրել էր Միջագետքին եւ աւեր ու մահ էր սփռում մինչեւ Վասպուրական: Մուշեղին էր վիճակուած չափուիլ նրա հետ:

«Իբրեւ թռչուն ձիարշաւ կը սլանայ թշնամին: Ահագին է նրա գեղարդը, բայց ոչինչ: Հայ բազուկը ճարտարութեամբ յետ է մղում հակառակորդի առաջին հարուածը եւ ապա, անցնելով յարձակման, շանթահար գետին է փռում թշնամին: Յաղթական է հայոց զօրքը, Մուշեղի գլխաւորութեամբ: Մուշեղի համբաւը փառքի թելերով կը տարածուի մինչեւ Ասորեստան, ուր օտար ժողովրդի հիացումը պողովատիկ գրչով կը գծագրէ Մուշեղի պատկերը՝ - հայ սպարապետը երկվարի վրայ եւ հոնը իր ոտքերի տակ:

Այս հերոսին էր վիճակուած, Պապ թագաւորի օրով, Հայ Երկրի ամբողջութիւնը վերականգնելու ճիգեր կատարել: Այդ իսկ նպատակով նա վերակազմում է Հայաստանի զինուորական ոյժը եւ վերապրեցնում հայ զէնքի հմայքը: Նա է սանձահարում եւ հնազանդութեան բերում Հայաստանի ծայրագաւառները:

Զօրահանդէս է, եւ ահա՛ թագաւոր եւ կաթողիկոս օրհնում են Մուշեղի բանակը: Այլեւս պարսիկների սարսափն է Մուշեղը:

Ահա՛ եւ Չիրաւը, ուր իրար են մաշում հայ եւ պարսիկ սրերը: Հայ սպարապետի քաջութիւնը այստեղ, այս անգամ էլ հոմանիշ է յաղթութեան: Մեծ է հայոց յաջողութիւնը, եւ երախտագէտ ժողովուրդը Չիրաւի յաղթութեան ժամը կոչում է «Ժամ Մուշեղայ»:

Եւ այդ մեծ ժամը,- որն ըստ մեր պատմիչների, իրաւունք ունէր Արտաշէսի եւ Տիգրան Մեծի շարքը դնելու իրեն, բայց մնաց մի համեստ սպարապետ,- մի օր պիտի զարնուէր հայ նախանձից: Վարազդատ թագաւորը, իր պալատական քսուներից թելադրուած՝ ընթրիքի է հրաւիրում մեծագործ Մամիկոնեանին եւ սպանել տալիս դաւադրաբար:

«Ի վերայ բազում իմոց վաստակացն արեան եւ քրտան ա՞յս հատուցումն եղաւ ինձ», - ասում է հոգով դառնացած սպարապետը, ապա ցաւ է յայտնում, որ չէ մեռնում ձիու վրայ:

Այսպես, եղբայրասպան ձեռքից կ'ընկնէր նա, որն իր բոլորա-
նուէր անձն էր դրել իր երկրի շէնութեան ու ապահովութեան համար:

* * *

Ահա՛ Մանուէլ Մամիկոնեանը:

Նա ունի գերագոյն իշանութեան նշաններ՝ սամոյր, ոսկէ եւ արծաթ գարգմանակ¹, սաղաւարտի զարդ, լանջազարդ, որ կը կրէին թագաւորները եւ մեծամեծ արծուանշան վրաններ ունենալու իրաւունք:

Մի մտասելեռում ունի այս մեծանուն հայ սպարապետը՝ վերականգնել Արշակունիների թագաւորութիւնը: Ահա՛ թէ ինչու նա պիտի քշէր պարսկական զօրքերը Հայաստանի սահմաններէն դուրս եւ վերացնէր պարսկական մարզպանութիւնը: Պարսկաստանը, սակայն, չէ ուզում հաշտուել ստեղծուած դրութեան հետ եւ Հայաստան է մտցնում մեծամեծ բանակներ: Ահա՛ այդ կռիւներն էին, որ պիտի աճեցնէին Մանուէլի փառքը: Միայն երկու բիւրեակներով նա աննախընթաց յաջողութեամբ ջարդում է թշնամու մեծամեծ բանակները: Նրա նուիրական սրի վրայ երեք պարսիկ զօրավարների արեան հետքերը կան:

Վերջին անգամ այդ ծեր առիւծը չափուում է հայ հայրենիքին այնքա՛ն չարիքներ հասցրած Մերուժանի հետ: Ճակատամարտի ժխորի մէջ սպարապետը փնտռում է հայ դաւաճանին: Բայց ի զուր. չկայ, չի երեւում ուրացողը. իր նշանները նա տուել է կրելու իր մի զինուորին եւ ինքը կռւում է որպէս սոսկական զինուոր: Հայ սուրը դիակի է վերածում ե՛ւ Մերուժանի շքանշանները կրողին: Դարձեալ ի զուր. դաւաճանը չէ սպանուածը: Վերջապէս, մատնուում է հրէշը: Մանուէլը ճանաչում է նրան ձի նստելու եղանակից եւ յարձակուում նրա վրայ: Ուժեղ է բախումը, եւ ահա՛ երկու ախոյեանները վայր են գլորուում ձիերից: Այդ վայրկեանին վրայ է հասնում Բաբիկ Սիւնին եւ կտրում ուրացողի գլուխը: Վերստին պարսիկ զօրքերի բաժինն է խուճապը, կոտորածը, փախուստը...

Այդ փառահեղ օրէն հայոց աշխարհի վրայով խաղաղ տարիներ են անցել, եւ ահա հայութիւնը՝ ծերացած: Դառնօրէն լալիս է մեծ սպարապետը, որ մեռնում է կռուից դուրս: Ա՛հ, նա, որ կ'երազէր արծուի իր աչքերը փակել մի գոռ ճակատամարտում, հայոց զօրքերի յաղթական աղաղակների մէջ, այժմ կը հոգեվարէ անկողնում: Հայ հսկան՝

¹ Սաղավարտի վրայի զարդ:

ապաւենը հայոց աշխարհի՝ բիրլիական պարզութեամբ մերկացնում է իր մարմինը իր մահիճը շրջապատողների առջեւ եւ ցոյց տալիս պատուոյ իր վերքերը՝ ստացուած հայ երկրի անկախութեան եւ փառքի համար: Նա թողնում է իր անարժաթ կտակը՝ «Անուն քաջութեան յերկրի թողուք եւ ամենեւին մահուանէ մի երկնչիք»:

Վարդան

Վայրկեաններ կան, աստուածային պահեր, երբ անհատն աւելին է, քան սոսկական մարդ, օրինակ՝ երբ նա համոզուած է, որ իր առնելիք հերոսական խոյանքի ժամանակ շանթահար պիտի լինի, պիտի զարնուի մահէն, բայց եւ այնպէս առնում է իր վերջին թռիչքը: Այո, այսպիսին այլեւս աւելին է քան մարդ: Այսպիսիներից էր Աւարայրի Վարդանը՝ խնկելի առարկան իր ժամանակի հայութեան հիացումի ու սիրոյ:

Արդար է, որ Վարդանի մասին մտքի գինովութեամբ խօսի Ալիշանը: ...«Եւ երբ մեծամեծ ոսկեփայլ գալարուն եւ անգալար պղինձներն լայնաբոլոր բերաններն յերկինք շտկած՝ իբրեւ յետ երկայն հառաչանաց՝ հայկական պատերազմի եղանակը հնչեց, ո՛հ, բոլոր բանակն, գետին ու լերինք թնդալով դոփելով որոտացին. «Փա՛ռք հայոց, սուրբ սպարապետ, Վարդան քաջ»:

Հայոց ընդամենը վեց բիրտեակ գօրք դիւցազնի գլխաւորութեամբ ճակատ է յարդարել պարսից եօթնիցս առաւելաթիւ ուժերի դէմ: Այս անգամ հայ ռազմիկը հազած է եւ հաւատքի գրահ: Այստեղ էլ թշնամու կողմն է թուական գերազանցութիւնը, բայց ոչինչ: Ձինակցած են հայ խաչն ու նիզակը: Հայը մեռնիլ գիտէ եւ ահա՛ սկսուել է տերեւաթափը պարսից սուլիների անտառում: Բայց - անէ՛ծք դաւաճանին – պարսկասերների կուսակցութեան պետի ղեկավարութեան յանձնուած չորրորդ հայ գունդը անսպասելիօրէն անցնում է թշնամու կողմը՝ յաջողութեան նժարը թեքելով անարի թշնամու կողմը: Եւ հայ ժողովրդի հետ ողբում է նաեւ պարսից արքան՝ յիշելով հայ ռազմիկի անլուր քաջագործութիւնները «ի վերայ աշխարհին արեաց»:

* * *

Աւարայրից իսկ յետոյ հայութիւնը անխօս կը յայտարարէր իր հարեւաններին՝ «տակաւին անխոնարհելի է իմ բարկութեան սուրը», քանզի *հերոսական ամէն մի մահ աշխարհ է բերում նոր*

հերոսներ, քանզի Վարդանին յաջորդել էր իր եղբորորդին՝ Վահանը, որն իր ռազմավարական վարպետութիւնների համար հիացող ու պաշտող ժողովրդի կողմից Գայլ անունն է ստացել:

Վահան, Աշոտ Երկաթ, Բաբգէն Սիւնի, Գեորգ՝ Երկաթի զինակիցներէն, Դաւիթ Կուրապաղատ, Վասակ՝ Սմբատ Բ-ի զօրավարը, - ահա՛ փաղանգը հայ պարտիզան ռազմիկների, մէկը միւսէն կայծակնաշունչ, պատերազմափորձ եւ արի. բոլորն էլ ծանօթ՝ սակաւ ոյժերով մեծաթիւ բանակների դէմ յաղթական կանգնելու աստուածային արուեստին. բոլորն էլ մահուան հետ կանխածանօթ եւ անմահացած՝ իրենց քաջագործութիւններով:

Պարսից սպառազէն բազմութիւնները հեզնող Վահան Սամիկոնեանը մի օր անսպասելիօրէն պաշարուում է Դուլինում: Չուզելով պատճառ դառնալ քաղաքի դժբախտութեան՝ հայ ասպետը դուրս է նետուում քաղաքից, ճեղքում պարսից զօրաշղթան եւ անցնում Շտղագոմ գաւառը: Թշնամին նրան պաշարում է եւ այստեղ, բայց ի գուր: Անընկճելի եւ հնարագէտ է հայ ռազմիկը: Բահ ու բրիչներ տալով գիւղացիների ձեռքը, նրանց բերում շարում է իր զօրամասի գրաւած դիրքերի վրայ եւ ապա մի բուռ կտրիճ պարտիզանների հետ, թեւանցի դիմելով, շանթի պէս ընկնում է պարսից զօրքերի վրայ, խուճապի, խռովութեան ու ջարդի մատնելով թշնամուն:

Սի ուրիշ անգամ այդ օրինակելի պարտիզանը Շապուհի զօրքերը յանկարծակիի է բերում երեք տասնեակ ուխտակիցներով միայն, այնուհետեւ մնալով ահն ու սարսափը պարսից զօրավարների, որոնք դողում են նրա անունից անգամ:

* * *

Ահա՛ եւ երկաթ ռազմիկը, Աշոտ Բ-ը, որ երկու հարիւրակ հրոսակներով իր խօլական թռիչքն է առնում Շամշուղէ բերդի դէմ, որի պաշտպանութիւնը յանձնուած էր հազար բերդապահների: Կայծակի արագութեամբ նա խորտակում է թշնամու ասպարափակ ճակատը եւ սեպածեւ թաղւում նրա ջուլիրների¹ մէջ: Շատ քիչերին է յաջողւում փրկել իրենց կաշին:

Սի ուրիշ անգամ երկու հարիւր ռազմիկներով նա դուրս է գալիս թշնամու ութ հազարի դէմ եւ «իբրեւ հողմ» փոթորկում, ցանուցրիւ տալիս թշնամու զօրամասերը, դափնեպսակելով հայ պարտիզանի ճակատը:

¹ Բազմություն, խումբ:

Երկաթն իր ուխտակիցներն ունի, որոնցից մեկը գործում է Գեղամայ լճի ափերում: Գեորգն է դա, որին մի օր յանկարծակիի է բերում հազարացւոց մի հազարեակ: Ոչինչ, կտրիճ հայը, թող որ միայն երկու տասնեակ առձեռն զինակիցներ ունի, չի տատանուում ձիարձակ նետուելու թշնամու վրայ եւ փախուստի մատնելու նրան: Այստեղ էլ հայ արիութիւնը չէ հարցնում թշնամու թուի մասին:

Կայ եւ Թովմաս Արծրունու կողմից փառաբանուած Գուրգէնը՝ որդին Վասպուրականի իշխանի, որը հազարի չհասնող իր զօրագնդով ջարդում է Բուղայի մէկ ու կէս բիւրեակ ոյժերը: Նոյնը Սպեր գաւառում չորս տասնեակ պարտիզաններով պարտութեան է մատնում յունական մի հազարեակ: Յոյն զօրավարը զարմացած մի բուռ հայ կտրիճների անօրինակ հերոսութիւնից՝ այդ մասին տեղեկագրում է յունաց Միքայէլ թագաւորին: Գուրգէնի ձեռքը դրուած հայ սրի ոյժը զգում են եւ տաճիկները:

Հայ կտրիճից ծեծուած ու փախուստի մատնուած տաճիկ զօրքը, օրեր անց՝ կրկնում է իր յարձակումը հայերի դէմ, բայց վերստին ջարդն ու պարտութիւնն է լինում իր բաժինը:

Բուղան լսելով հայ արիութեան տարած այդ նոր յաղթութիւնների մասին, փոխում է իր քաղաքականութիւնը եւ սուսեր, գօտի եւ արաբիկ երիվար ուղարկում Գուրգէնին, կարգում է նրան իշխան: Այսպէս, հայ արիութեան գնով է ձեռք բերուում եւ Վասպուրականի ժամանակաւոր խաղաղութիւնը:

Մեր դասական պարտիզանների փայլուն համաստեղութիւնից է եւ Բաբգէն Սիւնիւն, որը Սիւնիք ներխուժող արաբական չորս հազարից անց զօրագունդը իսպառ ոչնչացնում է երկու հարիւրակ պարտիզաններով: Դաւիթ Կուրապաղատը, որ տասնապատիկ նուազ ոյժերով աննախընթաց յաղթութիւն է [տանում] Ապահունիքում բանակած արաբ հարիւր հազարից անցնող զօրքերի դէմ:

Վասակը՝ Սմբատ Բ.-ի սպարապետը՝ լսելով սկիւթացւոց ներխուժման մասին – որոնց ալիքը կը մօտենար Բջնի բերդին, սակաւաթիւ զօրքով դուրս է գալիս նրանց դէմ:

Տեսնելով սկիւթացւոց անհաշիւ ու խառնախռիւ բազմութիւնը, հայերը վճռում են առաքինանալ կռուում: Եւ գործի են անցնում «որպէս գայլ ի մէջ այծեաց»: Թշնամու շարքերից դուրս է նետուում մի քաջ ախոյեան, որին իւրայինները, «եօթը գայլ» կը կոչէին՝ իր ոյժի եւ յանդգնութեան համար, եւ առաջ է խաղում որոտալով «որպէս սեւ ամպ»: Բայց փառք հայ սպարապետին եւ իր պողովատ

թուրին. սկիւթացի հսկան փռուում է գետին, իսկ զօրքը սարսափով բռնուած փախչում է Հայաստանից:

Ահա մէկը մեր քաջանուն Աշոտներից, որի արիական շարժումների մասին չէ կարելի խորհրդածել առանց հիացումի:

Աղօթքի ժամն է եւ հայ ռազմիկը Աստուծոյ հետ կը խօսի: Աղօթողի դրութեան մէջ թշնամին կը պաշարի հայ զօրականին, բայց անկարող կը լինի խանգարել նրա խօսքն ընդ Աստուծոյ: Նա լուռ է, բայց դուք լսում էք նրա խօսքը՝ իմն է յաղթութիւնը, քանզի «ես նոր իւղով օծուեցայ»:

Հաւատքի գրահով գինուած հայ մարդը անխռով կը վերջացնի իր աղօթքը եւ ոտքի կը կանգնի՝ թշնամու յանդգնութիւնը պատժելու վճռականութեամբ: Որպէս փորձ[առու] ռազմավար, նա իր հարուածներն նախ ուղղելով թշնամու գլխաւորների դէմ, գետին կը գլորէ նրանց, որից յետոյ ջարդի եւ փախուստի կը մատնէ նրա անտիրական զօրախմբերը:

Ահա՛ մի ուրիշը մեր Աշոտներէն՝ Վասպուրականի իշխանը, որի զօրամասի վրայ Տարօնի դաշտում անսպասելիօրէն յարձակուում է արաբական հսկայաթիւ այրուծին: Բարձրանում է հայ առիւծի մռնչիւնը եւ նրա զօրքը, որպէս պողպատէ պատնէշ ցցուում է թշնամու հեծելագօրքին դէմ: Կորցնելով իր աջը, հայ իշխանը գործել է սկսում ձախ ձեռքով: Մերթ ընդ մերթ լսուում է Աշոտի յուսատու կանչը եւ հայ զինուորները, կատաղութեամբ գինով, առաջանում են որպէս գնչաւոր ու շարժուն պարիսպ: Ահաւոր է, անհաւասար գիրկընդխառն կռիւը: Ահա՛ մէկ էլ վերջին անգամ բարձրացաւ վիրաւոր առիւծի մռնչիւնը, մի վերջին յոյժ յանդուզն գրոհ եւս,- այլեւս մինակ են հայերը կռուադաշտում, քանզի խելակորոյս փախչում է թշնամին իր մեռելները կոխկռտելով:

Ահա՛ արի արանց մի այլ փաղանգ, որոնց քաջագործութիւններից այնքա՛ն օգտուել են օտարները.- Բաբիկը՝ Անդոկ իշխանի որդին, Դրաստամատը, Աշոտ Արծրունին, Սմբատ Բագրատունին, Ջօրավար Վասակը եւ այլն:

Յոները, որոնք իրենց ձիերի թամբերի տակ կ'եփէին միսը, նեղն էին դրած դուռն ու երկիրը: Այդ բարբարոսների շարքերից առաջ էր նետուել Հոնանդուր անունով մէկը եւ ասպարեզ էր կարդում պարսից թագաւորին: Անհնարին բարձր էր հասակը հսկայի: Իր ահեղատիպ տեսքով ու սպառնազինութեամբ նա զարհուրանք էր մտցրել պարսից ու մարաց զօրքերի մէջ: Հայ նախարարների

խորհրդով Շապուհը Յոն հսկայի դէմ է հանում Սիւնեաց Բաբիկին, որը պարսից արքունիքում բազմիցս աչքի էր ընկել իր քաջագործութիւններով: Սկսւում է մենամարտը եւ հայ քաջագնի միասայրի տւետերը գետին է փռում «վիշապագօր» հիւսիսականին:

Ա՛խ հա՛յն է, այստեղ էլ հա՛յն է, որ փրկում է կեանքը, երկիրը, փառքը օտար վեհապետի: Ի վարձ իր այդ ճակատագրական քաջագործութեան՝ Բաբիկը ստանում է իր հայրենական տէրութիւնը՝ Սիւնեաց Աշխարհը: Քաջ հօրը պիտի յաջորդէր իր որդին՝ քաջաց նուիրակ Գրիգորը:

* * *

Գիտենք, որ հայ արիւթիւնն էր, որ յանձին Տիգրան թագաւորագնի՝ Աժդահակի բռնութիւնից փրկել էր Պարսկաստանը, իսկ տիրասէր Դրաստամատի միջոցաւ պարսկաքուշան պատերազմում ազատել էր պարսից արքայի կաշին վերահաս վտանգից:

Ահա՛ օտարի փառքն աճեցնող մի այլ դիւցազուն՝ Աշոտ Արծրունին, որ զրկուած իր հայրենի երկրից՝ կը պահուէր Ամիրապետի արքունիքում:

Տաճիկներն ապստամբել են արաբ տիրապետութեան դէմ: Ամիրապետի որդի Մուսէն, իր հետ առած Աշոտին, շարժւում է ապստամբների դէմ: Նա խոստացել է հայ իշխանին վերադարձնել իր տէրութիւնը, եթէ յաջողութեամբ պսակուի իր արշաւանքը:

Հիւանդութիւն ձեւացնելով, հայ քաջը սկզբում չի մասնակցում ճակատամարտին, մինչեւ որ արաբների դրութիւնը կը դառնար սպառնական, որից յետոյ աշտանակելով իր երիվարը, խրախոյսի խօսքերով նա կը դառնայ հայ ռազմիկներին՝ «Հապա՛, հայոց քաջեր, այժմ թող ճանաչեն մեզ եւ մեր արիութիւնը»: Գործի է սկսում հայոց ազատագունդը ու ժամեր յետոյ բախտը իր վճիռն արձակում է ի նպաստ արաբների:

* * *

Ահա՛ եւ Սմբատ Բագրատունին, որ բախտորոշ ծառայութիւններ է կատարել պարսից արքունիքին: Մենամարտելով նա սպանել է հեփթաղների արքային՝ աճեցնելով պարսից փառքը:

Թշնամիների չարախօսութիւններից տարուած, պարսից յիմար թագակիրը մի օր երախտաշատ հայու վրայ բաց է թողնում զազաններ: Հայ կտրիճը զարկում, սպանում է արջը, բռնելով

եղջիրներից, սպանում է ցուլը: Բռնելով առիծի ականջներից, հեծնում է նրան: Քաջութեան այդ հրաշախառն գործերն նա կատարում է մի օրուայ մեջ եւ վերստին մեծարում անհաստատ արքայէն:

Հասակով բարձր, տեսութեամբ գեղեցիկ եւ անասելիօրէն քաջ է հայ զօրականը: Անտառներից անցնելիս երկու ձեռքով նա բռնում է ծառի ճիւղերը եւ ոտքերով բարձրացնում ձին:

Սմբատի քաջութիւնը անթառան դափնիներ է խլել Վարդանակերտի ճակատամարտում, որն այնքան դրուատել են հայ պատմիչները:

Այս կռումն իսմայիլացիները թւապէս կը գերազանցէին հայերին գրեթէ տասն անգամ, բայց եւ այնպէս հայերը անմահ Բագրատունու առաջնորդութեամբ ջարդում են թշնամու զօրքերի մի մասը, իսկ մնացած ոյժերը հալածական առնելով թափում են Երասխը:

* * *

Ստոր խաբէութեամբ պարսից արքունիքն է կանչուած Վասակ Զօրավարը՝ ծանօթ հերոսը պարսկահայ երեսնամեայ պատերազմի:

Շապուհը - Աղուէս, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արեաց գիւնուորներին: Այժմ դու կը սպանուես աղուէսի պէս:

Վասակը – Մի ժամանակ առիւծ էի քեզ համար, այժմ են աղուէս դարձել: Քանի որ Վասակն էի, հսկայ էի, մի ոտս մի սարի վրայ էի դրած, միւսը՝ մի ուրիշ սարի վրայ: Երբ աջ ոտիս վրայ էի յենուում, աջ ոտքս էր մտնում գետնի տակ, իսկ երբ ձախ ոտիս վրայ էի յենուում, ձախ սարն էր գետնի տակ անցնում:

Շապուհը հետաքրքրուեց իմանալ, թէ այդ ի՞նչ սարեր են, եւ Վասակը բացատրեց, թէ մէկը ինքը Շապուհն է, միւսը յունաց թագաւորը:

Ճշմարտութիւնն էր, որ հայ զօրավարի շրթունքներով կը պատասխանէր պարսից գահակալին:

Հայ արիութիւնն էր, որ դող ու դեղնութիւն կը պատճառէր երկչոտ արքային, որը չպիտի յապաղէր հրամայելու, որ խաբէութեամբ մորթեն թակարդուած իր հակառակորդին:

* * *

Հապա Անի քաղաքի ամազոնուհի՞ն՝ հայրենանուէր ու արիասիրտ Այծեամն, որ կ'առաքինանար բերդաքաղաքի պարիսպների վրայ. առնացի հայուհին, որը Անիի պաշարման ժամանակ, բերդի

պարհսպի վրայ բարձրացած՝ քարեր գլորելով ի դերեւ կը հանէր թշնամու ներխուժման փորձերը, որն իր եւ հայ ռազմիկների կրօքերից դուրս կը քաշէր արաբացւոց նետերը եւ կը վերադարձներ թշնամուն...

* * *

Երկարե՞լ: Ի զո՞ւր: Մե՞ծ է փաղանգը մերագնեայ արիների, քաջերի եւ հերոսների, որոնց փառքի չափ, աւա՞ղ, մեծ եղաւ եւ իրենց ապրած ողբերգութիւնը: Մէկի քաջութիւնից օգտուեց օտարը միայն, միւսն իր արիւութիւնն սպառեց իւրայինների դէմ, երրորդը՝ կարելիութիւն չունեցաւ Յայաստանին ի սպաս դնելու իր բովանդակ ոյժերը:

Այս եւ այլ պատճառներով շատ քիչերի անուան եւ գործերի յիշատակն է պահել հայոց պատմութիւնը: Հայը – որպէս զինուոր եւ զօրավար - ճակատագրական դեր է խաղացել պարսից, մարաց, յունաց, թաթարաց, արաբացւոց, բուլղարաց եւ այլ օտարազգի բանակների մէջ:

Եւ օտար պատմիչները՝ իրենց ցեղի փառքին նախանձախնդիր՝ հայ հերոսութեան մեծագործութիւնները վերագրել են իւրայիններին կամ էլ վատօրէն գրել «ի ջուր սոռացութեան»:

Հայկազն Վարդանը, Բիւզանդիոնի հայագի Չընըշկիկ թագավորի զօրապետը, որի բազկի ոյժը՝ քանիցս զգացել են Թրակիան ասպատակող թուրքը, ռուսը, բուլղարը, յոյն պատմիչների կողմից պիտի վերանուանուէր Վարատաս:

Վեցերորդ դարում, Յուստինիանոսի օրով յօգուտ յոյների նշանաւոր քաջութիւններ է ցոյց տուել Ներսէս Հայկազունը:

Իներորդ դարու սկզբում յոյների համար գործում էր Մանուէլ Մամիկոնեանը:

«Ես չեմ կարող,- ասում է Գ. Շլումբերգերը,- լռութեամբ անցնել, որ Բիւզանդիոնի ամենամեծ զինուորական կայսրերից շատերը հայկական ծագում են ունեցել: Բիւզանդական բանակի պատմութիւնը լի է հայազգի նշանաւոր զօրավարների անուններով: Կրկնում եմ, որ ես ուզում էի միայն մի քանի խօսք ասել հայ ազգի պատերազմական հնաւանդ արժանիքի մասին, եւ որ ուրիշներին եմ թողնում ասել, թէ այնքան փայլուն յատկութիւններով օժտուած այս ժողովուրդն ինչե՞ր է արել ժամանակին՝ արուեստների եւ գրականութեան աշխարհում»:

Հայն իր արհուրեանք ճամբայ է բացել եւ դէպի բուլղար գահը:

«Ծագումով անոնք Դերջանցի հայեր էին, որոնք Վասիլ կայսեր վարձու բանակներուն կողմէ բերուած էին Սակեդոնիա, պուլկարներուն դէմ պատերազմեցնելու նպատակով: Յարմար առիթին, անոնք խոյս տալով յոյն կայսրէն, անցան պուլկար թագաւորին կողմը, որ Իսկիւպցի մըն էր ու իրենց քաջագործութիւններուն ու հերոսութիւններուն հետեւանքով կրցան շուտով բարձր աստիճաններու տիրանալ,- կ'ըսէ Պրոֆեսոր Կացարով:

Սրանցից մէկը մի օր պիտ բազմէր բուլղար գահի վրայ, Յար Սամուէլ անունով:

«Միհրդատի բանակներում հետեւակ նետաձիգները, որոնք գլխաւորապէս Փոքր Հայքից էին հաւաքուում, ծովի թէ ցամաքի վրայ աչքի ընկան իրենց ճարպիկութեամբ եւ քաջագործութեամբ: Սուլլան այնքան գնահատեց սրանց արժանիքը, որ Դարտանի դաշնագրութեան մէջ (Քերոնիայի ճակատամարտից յետոյ, 85-ին) մի կէտ նտոցրեց, որով Միհրդատի յանձնուած պատերազմական նաւերը, պէտք է իրենց նետաձիգներով միասին լինէին»:

Արաբ տարեգրերը կը խօսին Եարմուքի ճակատամարտում¹ Յորդանանի ասիերի վրայ, հայ աղեղնաւորների ցոյց տուած ճարպիկութեան ու արհուրեան մասին, նրանց գործը անուանելով «գործ կուրութեան», քանզի հայերը կը սպանեն եօթը հարիւր արաբ կտրիճներ, բոլորին էլ աչքերէն զարնելով:

Թաթարաց պատմութեան մէջ կը կարդանք, թէ Հալաւուն խանը շատ կը սիրէր հայոց եւ վրաց գօրքերը իրենց նշանաւոր քաջութեան համար:

Այդ ցեղի զօրագլուխներէն Բաչուն, իր գրեթէ բոլոր յաղթութիւնները տարել է հայ եւ վրացի զնդերի շնորհիւ, որոնց կը գործածէր՝ որպէս առաջապահ:

Թաթարները յարձակուում են Իկոնիոյ վրայ: Խիյաթէղին զօրաւոր Սուլթանը հարիւր հազար զօրքով դուրս է գալիս թշնամու դէմ: Թաթարական բանակի մէջ է մեծն Վահրամայ որդին (Գագայ իշխանը), որը հայ եւ վրացի ազատագնդերով ջարդում է Սուլթանի բազմահազար բանակի աջ զօրաթելը եւ վճռում ճակատամարտի բախտը:

¹ Տեղի է ունեցել Բյուզանդիայի և Արաբական խալիֆաթի բանակների միջև 636թ. Հորդանան գետի վտակ Յարմուկի հովտում:

«Մանաւանդ Ռուբինեանների օրով – կ'ըսէ Շլումբերգեր – Խաչակիրների ժամանակ, Փոքր Հայաստանի թագաւորութիւնն վիթխարի նեցուկ է հանդիսացել Արեւելքի Ֆրանկ իշխանութիւններին, Անտիոքի իշխանին, Երուսաղէմի եւ Կիպրոսի թագաւորներին՝ Հալէպի, Դամասկոսի եւ Կահիրէի մահմեդական իշխանների դէմ նրանց մղած անվերջ կռիւներում: Ուրիշներին թողնելով պատմել զրպարտուած հայ ազգի հոյակապ զործերի մասին քաղաքակրթութեան, արուեստների եւ գրականութեան զանազան ասպարէզներում, ես կ'ուզէի մի քանի խօսք ասել, թէ ինչ էին հայերը զինուորական տեսակէտով միջին դարերում»:

«Potentissimus, ամենագորաւոր», - ահա՛ պատուանունը, որով լատին իշխանները իրենց աղաչաւորների բերնով կը դիմէին Թորոսին՝ Նուրեդդինի դէմ դուրս գալու համար:

«Քրիստոնեայ եկեղեցու եւ հանրապետութեան հանդէպ հայ ազգի ուրիշ արժանիքների մէջ կայ մէկը, որ վսեմ է եւ առանձնապէս յիշատակելի. դա այն է, որ, երբ ժամանակին քրիստոնեայ իշխաններն ու բանակները գնում էին ազատելու Սուրբ Երկիրը, ո՛չ մի ազգ եւ ո՛չ մի ժողովուրդ ակելի արագ եւ ակելի եռանդով, քան հայերը, չփութաց նրանց օգնել մարդկանցով, ձիերով, մթերքով, խորհուրդներով. այդ սրբազան պատերազմում նրանք քրիստոնեաներին օգնեցին իրենց բոլոր ոյժերով, ամենամեծ արիւթեամբ ու հաւատարմութեամբ»:

Ահա՛ եւ ժամ դը Մորգանի կարծիքը.-

«Կիլիկիայի հայերին մենք պարտական ենք մօտ վեց դարուց ի վեր, ուստի եւ այդ պարտքը ակելի նուիրական է... Երբեմնի հզօր այս ժողովուրդը հռովմայեցիների, բիւզանդացիների եւ պարսիկների հետ վարւում էր այնպէս, ինչպէս հաւասարը հաւասարի հետ»...

Ահա՛ հայը, այդպէս էր հին հայը, որի մասին սիրում եմ յաճախ գրեթէ արբեցուցիչ քաղցրութեամբ կրկնել Խորենացու ոսկեդիմիկ խօսքերը.

«Ի մէջ պատերազմաց իբրեւ հուր ընդ եղեգն ընթանային տիրասէր ազգն Մամիկոնեանք»:

Բնազդական ռազմիկ էր հին հայը, եզակի զինուոր մինչեւ իր ծերութիւնը:

Իբրեւ շանթ, անսպասելիօրէն ընկնել թշնամու վրայ՝ այդ էր հին հայի ռազմավարական ձեւերէն ամենամշակուածն ու սիրելին:

Հաւասար ոյժերով եւ ոչ մի ժողովրդի է յաջողել արգիլել հայ արիութիւնը իր ճամբու վրայ, իր խոյանքների ժամանակ:

Նա գիտէր մեռնել՝ ահա՛ իր ոյժը:

Արագահաս էր ու մահացու իր հարուածը, շանթահար, արիւնընծայ եւ փառունակ իր մահը:

Գոռոզ էր, ինքնայարգ եւ պատկառազրու:

Փա՛ռք, փառք հայ դասական հերոսականին, որը վերապրեցնելով միայն՝ հայութիւնը պիտի կարողանայ անկախօրէն պահել իր տեղն արեւի տակ:

* * *

Չգիտե՞ս, հայ մարդ, չգիտե՞ս ցեղիդ պատմութիւնը - ասել է՝ չգիտես ժողովրդիդ ապրած ողբերգութեան պատճառները. ասել է՝ չգիտես, թէ ինչո՞ւնն է նրա ոյժն ու տկարութիւնը. ասել է՝ աղէտալիօրէն քեզ կը պակասի ցեղային ինքնաճանաչութիւնը – մէկը եւ ամենայնուսալին այն փարատիչներէն, որոնցով պէտք է կռուել պարտուողականութեան ախտի դէմ, որն այսօր մեզ, որպէս ազգ, սպանելուց առաջ աշխատում է նախ ծիծաղելի դարձնել մեր ահաւոր ողբերգութեան մէջ:

Սիրի՛ր պատմութիւնը:

V ՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Մէկ էլ բանանք մեր ցեղի կեանքի գիրքը, ճանաչենք մեր ժառանգական բարոյական թերութիւնները՝ մեր ժողովրդի քաղաքական խեղճութեան ներգործօն պատճառները հասկանալու համար:

Պատմութիւնը ասում է.-

Իր գոյութեան ձիգ տարածութեան վրայ չի եղել մի դէպք, որ հայութիւնը իր բովանդակ բարոյական եւ նիւթական ոյժերով ծառայած լինէր թշնամու դէմ՝ արտաքին վտանգը զինաթափելու վճռականութեամբ: Հայաստան ներխուժող թշնամին երբեք իր դէմ չէ տեսել բովանդակ հայութիւնը միացեալ ճակատով՝ արտաքին աղէտը յետ մղելու վճռողականութեամբ: Թշնամին միշտ էլ ոտք է դրել Հայաստանի հողի վրայ հայ կեանքի այն խառն ու խռով շրջաններում, երբ մեր ցեղի քաղաքական ճակատագիրը վարողները զբաղուած են եղել ներքին կռիւներով:

Երկպառակութեան ախտը յաճախ եւ յաճախ ի դերու է հանել մեր ցեղի դասական քաջութիւնը: Երբ մեր արիութեան միացած չէ եղել մեր միաբանութիւնը՝ միշտ էլ չարաչար պարտութիւնն է եղել մեր բաժինը: Իսկ երբ նախարար, իշխան, թագաւոր եղել են հաշտ ու համերաշխ՝ միշտ էլ յաղթել է թեւաբաց արծիւը հայոց:

Այն բոլոր ժողովուրդներից, որոնք բարեկամաբար թէ որպէս թշնամի, ոտք են դրած հայ հողի վրայ, ոչ ոք արիութեամբ չէ գերազանցել հայուն: Օտարը Հայաստանում յաջողութիւն է ունեցել աւելի որպէս աղուէս քան առիւծ: Հայաստանը որոշ ժամանակաշրջաններում, աւելի հայէն է պարտուած եղել քան օտարէն:

Ուզում են ասել, թէ *ներքին* թշնամին է եղել հայ բազուկը տկարացնողը: Նա է առաջնորդել օտար զօրքերը դէպի հայկական լեռնակղզին: Նրա դաւաճանութիւնն է յաջողութեան նժարը յաճախ թեքել թշնամու կողմը: Եւ եթէ Հայաստան երկրում երբեւիցէ հնարաւոր է եղել որեւէ համազգային ձեռնարկ յաջողութեամբ պսակել՝ դա նշանակում է թէ այդ ժամանակաշրջանում է եղել թշնամին:

Այո՛, աշխարհակալ ազգերի սուրը չպիտի կարողանար բաժանել հայ երկիրը, եթէ հայ պետական գործչի նախանձը ու անհամերաշխութիւնը չնպաստէին թշնամուն:

Տրամաբանօրէն ի՞նչ է հետեւում այդ ամենից.-

Այն, թե՛ հայ ժողովուրդի պատերազմներում պարտուելու պատճառները եղել են գերազանցօրէն *հոգեբանական*. թէ մեր ցեղի անմիաբանութեան բերումով հայ զէնքն ու բազուկը աւելի օտարին են ծառայել քան հարազատ երկրին. թէ թշնամին յաճախ տիրել է Հայաստանին ոչ թէ յաղթական սրով, այլ այս կամ այն հայ պետական գործիչի դաւով ու դաւաճանութեամբ:

Կարճ. արտաքին թշնամին իր զէնքի յաջողութիւնները Հայաստանի հողի վրայ աւելի մեր հոգեբանական թերութիւններին կը պարտի քան իր կարողութիւններին:

* * *

Մինչ ե՞րբ այդպէս: Մինչեւ ե՞րբ հայոց պատմութիւնը շարունակէ մնալ կրկնութիւնը մեր աղէտալի թերութիւնների եւ սխալանքների: Ո՞ւր է ելքն այս աննախընթացօրէն ցածր վիճակից, որը մայր երկրին կը սպառնայ գլխովին ոչնչացմամբ, իսկ գաղութների հայութեան աստիճանական ապագայնացմամբ:

Ո՞րն է այն փրկարար միջոցը, այն համադարձանը, որ հանդիսանար փարատիչը մեր ժառանգած բարոյական ախտերի, որ հոգեփոխէր եւ ապրեցնէր մեզ որպէս ազգ, որ դարձնէր մեզ կարողներգործօն ինքնապաշտպանութեան եւ ընդունակ՝ պետական անկախ կեանքի:

Յեղային բարոյականն է այդ միջոցը, որ պահանջում է երկու բան. առաջինը՝ քաղաքական միակրօնութիւն, երկրորդը՝ զարգացումն այն բարոյական յատկութիւնների եւ ռազմարուեստագիտական կարողութիւնների, որոնք համապատասխան են մեր ժողովրդի հաւաքական կարիքներին եւ էապէս անհրաժեշտ՝ մեր ժողովրդի նիւթական եւ հոգեւոր ինքնապահպանման համար:

Արդի մեր ողբալի վիճակում, երբ մեր հայրենիքի ռազմագիտական բանալիները յանձնուած են օտար դժնապաններին, եւ երբ սպասուում է թրքական մահառիթ հարուած՝ *ցեղային բարոյականն է*, որ իմաստուն կերպով տեսնել պիտի տայ բարոյական եւ նիւթական այն հսկայական ուժերը, որ այսօր հայութիւնը կը վատնէ ընդունայն: Յեղային բարոյականն է, որ ռազմարուեստին ծառայող բոլոր գիտութիւնները պիտի լծէ մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան դժուարին գործին, ինչպէս եւ անբարտակ պիտի կանգնեցնէ այլասերման հեղեղատի առջեւ:

Ապրի՛ր համաձայն ցեղիդ իդէալի, ապրի՛ր համաձայն ցեղիդ բարձրագոյն սկզբունքներին:

Դատապարտելի եւ բարոյազուրկ է այն երջանկութիւնը, որ հակասութեան մէջ է հաւաքական երջանկութեան հետ, որ նպաստում է ցեղի տկարացման, որ խաթարում է այն ներդաշնակութիւնը, որը գոյութիւն պիտի ունենայ մեր մասնաւոր նպատակների եւ ազգային իդէալի միջեւ:

Քաղաքական միակրօնութիւն պէտք է մեզի, քանզի միակն ենք ժողովուրդներից, որն իրաւունք չունի ներքուստ պառակտուած լինելու:

Եթէ ճամբաների տարբերութիւն կայ, ապա կայ նպատակի ընդհանրութիւն:

Պէտք է լինինք միաիդէալ, միաշունչ, միական, քանզի անհամերաշխ ու անմիաբան մեր ժողովուրդը պատրաստի որս պիտի լինի իր հարեւանների համար:

* * *

Չայ ընտանիքը դեռ շարունակում է նայել իր զաւակների վրայ, որպէս իր մասնաւոր սեփականութեան:

Իսկ դպրոցը դաստիարակում է հայ մանուկները՝ ընտանիքների եւ ոչ նախ հայրենիքի համար:

Ընտանիք եւ դպրոց դաշնակցած՝ կը շարունակեն միայն առետրապաշտ խանութեան եւ արհեստաւոր հասցնել, երբ ժամանակն ու ցեղային բարոյականը հրամայողաբար կը պահանջեն հայէն՝ լինել նախ հայրենակրօն ռազմիկ, չկորչելու համար:

Չենք ուզում հասկանալ, որ Արեւելքի մեր դժբախտ պայմաններում անմտութիւն է տուն շինել ու դաշտեր մշակել, երբ նրանց պաշտպանութեան համար կանխաւ չենք պատրաստուել:

Չենք ուզում հասկանալ, որ յիմարութիւն է անկախ հայրենիքի մասին երազել, երբ նախօրօք նրա պաշտպանութեան համար չենք սպառազինուել:

Չէ՛, չէ՛, չենք ուզում հասկանալ, որ հայ հաւաքականութիւնը օրուայ իր աղքատիկ հոգեբանութեամբ բարոյապէս ազատ չէ աւելի լաւ օրերի մասին երազելու, քանի դեռ հայ աշակերտող սերունդը չէ կրթում որպէս ազգային *նոր ուխտի* միջնորդ, որպէս ցեղային բարոյականի կրող:

VI ՀԱՅ ԶԵՆՔԻ ԱՆՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐԸ

Մեր օրերը

Յանձին բանակների չափում են ժողովուրդները:

Կարսի պատերի տակ բախուեցին երկու ժողովուրդներ, երկու հաւաքական հոգեբանութիւններ եւ յաղթեց կիսալուսինը, քանզի ժողովուրդը հոգեբանօրէն պատրաստ չէր կռուի եւ յաղթանակի համար: *Մեր ժողովրդին ցաւագինօրէն կը պակասէր հոգեկան մշակոյթը:* Հայութիւնը կռուադաշտում թէ կռուից դուրս ցուցահանեց հետեւեալ հոգեբանական թերութիւնները, որոնց կը պարտի թուրքն իր գէնքի յաջողութիւնը.-

Ամէն գնով ապրելու խելագար ցանկութիւն, պարտուողական հոգեբանութիւն, նիւթական ծայրայեղ մտահոգուածութիւն, հասարակական զգացումի տհասութիւն, գիտակցական կարգապահութեան բացարձակ չգոյութիւն, տեղական հայրենասիրութիւն, ինքնասիրութեան ցաւ ու չար նախանձ` հրամանատարների մօտ, կազմակերպչական պակաս, սխալ համարում թրքութեան մասին, ստրկական վախ, եւ անռազմունակութիւն եւ այլն:

Նրանք, որ մասնակցել են մեր վարած կռիւներին, գիտեն, թէ ինչպէս հայ մարդը ձեռքն ընկած փուճ քուրջի կտորը, տնային ամանը կամ գործիքը գուրգուրանքով կը տեղափոխէր ճակատէ ճակատ, դիրքէ դիրք: Իր կովը կամ փալասը փրկելու համար` նա յաճախ առանց խղճի խայթի կը թողներ կռուադաշտը, կը դասալքեր: Այն իրը, որ դուք տեսել էք նրա շալակին կամ ձիու թամբին Կարինում, կը տեսնէք եւ Ղարաքիլիսայում, եւ Ծաղկածորում, ամէն տեղ, մինչեւ որ հասցնէր տուն: Իր կամ իր ձիու բեռը թեթեւեցնելու նպատակով, նա աւելի շուտ սակաւաթիւ փամփուշտների մի մասից կը զրկուէր քան թէ անպէտք հնոտիներից:

Շատերը զինուոր կը համարուէին այն պարզ պատճառով, որ զէնք կը կրէին: Ձէնքը չէ մարդս զինուոր դարձնում: Մեզանում կար օգտախնդիրը, նիւթական մտահոգուածութեամբ գրեթէ հիւանդ անհատը, բայց ոչ անձնուէր զինուորը: Այդ օրերին, նայելով մեր զօրամասերին, չէր կարելի չվերոյիշել Հերոդոտի դատաստանը պարսից բանակների մասին` *«Աւելի մեծ թուով մարդ կար քան զինուոր»:*

Հայ մարդու մէջ չափազանց տկար է հասարակական զգացումը: Ընդհանուր եւ հանրօգուտ աշխատանքը դեռ պատիժ համարուելու չափ խորթ է հայ մարտիկի համար: Նա ականաջից կը պատրաստի այն դիրքը, որից ինքը չպիտի օգտուի:

Պատժի չափ ծանր է նրա համար պահակութիւնը, հետախուզական առաջընթացութիւնը, բանբերութիւնը: Նա գիտէ, որ իր արթուն եւ աչալուրջ հսկումից է կախուած ռազմօրէն անպատրաստ վիճակի մէջ գտնուող զօրամասի ապահովութիւնը, բայց եւ այնպէս նա անվստահելի պահակ է: Չի կարելի խորապէս վստահ լինել, թէ նա իրեն տրուած բախտորոշ գրութիւնը ամէն գնով տեղ կը հասցնի: Մեռնել՝ ընկերոջ կամ զօրամասը վտանգից փրկելու համար՝ մնաց հատընտիրների առաքինութիւնը:

Անվարժ բանակային կեանքին եւ կռիւներին՝ նա իրեն, համեմատաբար, լաւ է զգում ժողովրդական ճակատամարտում: Կարսում նա այն չէր, ինչ որ էր Վանում, Սարդարապատում, Ղարաքիլիսայում, Սիւնիքում: Նրան պակասում է ընդհանուր հայրենիքի գաղափարը, սակայն զուրկ չէ տեղական հայրենասիրութիւնից: *Նա տաճկահայ է, ռուսահայ, պարսկահայ, ապա յետոյ հայ:* Ինչպէս եւ նախ մշեցի, վանեցի, զանձակեցի եւ ապա հուսկ, յետոյ հայաստանցի: Ահա՛ այդ իսկ պատճառով յաճախ գիտակցական չէր նրա մահը:

* * *

Տաճիկները Հայաստանում ունեցած իրենց յաջողութիւնները աւելի մեզ՝ մեր բարոյական տկարութեան կը պարտին, քան թէ իրենց զէնքին:

Հայութիւնը դեռ չէր ըմբռնել այդ պարզ ճշմարտութիւնը, եւ այսօր էլ կեղծ համարում ունի թրքական բանակի մասին: Նա տղայամտօրէն հաւատում է թուրք ցեղի քաջութեան առասպելին, գերագնահատելով նրա բարոյական ոյժը: *Այդ սխալանքը ծնունդն է ստրկութեան վախի:*

Ո՞վ չգիտէ, որ մեր ժողովուրդը, դեռ պատերազմի չբռնուած՝ ունէր իր պարտութեան ինքնաներշնչումը, - հոգեբանական մի աղէտալի վիճակ, որ ստոյգ պարտութիւն պիտի բերէր մեր զէնքին:

Պարտուողականութիւն եւ յոյս ուրիշի օգնութեան վրայ,- ահա որոնք են երկուքը հայ բանակի հոգեւոր ամենավատ թշնամիներից: Հայոց նորագոյն պատմութիւնը սրանց կը պարտի հակապետական «մայիսեան ապստամբութիւնը»:

Այս հոգեբանութիւնն էր, որ մղեց չպաշտպանել Կարսի ամրութիւնները: Հոգեպէս այդ տկար արարածներն էին, որ հարուածեցին հայ բանակի ռազմունակ եւ անձնուէր տարրերի արհուրհունը:

Սրանք խախտեցին հայ բանակի բարոյական հաւասարակշռութիւնը, յաղթութեան նժարը թեքելով թշնամու կողմը:

* * *

Մեր քաղաքական ու թուական անզօրութեան եւ հատուածականութեանց բերումով՝ հայը դառել է մեղկ, գիջող եւ նկուն օտարի հանդէպ, հիացողն ու խնկարկողը օտար ոյժի, հաւատացող՝ օտար աստուածութիւնների: Դարերով զէնք չէ բռնել նրա ձեռքը, ինչպէս եւ նա ազատ չի եղել՝ աներկիւղ ու անկաշկանդ սիրելու եւ պաշտելու ազգայինը: Հայը, մասամբ, դեռ անընդունակ է գիտակցական զոհաբերութեան, եւ բարձր թռիչքների, որովհետեւ անկարելի է եղել իշխող բարբարոս ժողովուրդների կրունկի տակ նման առաքինութիւնների մշակումը: Անանձնական բնոյթ կրող այն ամէնը, ինչ որ կատարուած է նրա կողմից իր ստրկական գոյութեան ձիգ դարերի ընթացքին, եղել է հարկադրաբար, ակամայից:

Այո՛, հայը իր նկարագրի ստուերային կողմերի մի խոշոր մասը կը պարտի դարերի ստրկութեան: Օտարի ծանր գարշապարը ժամանակ է ունեցել մէկիկ-մէկիկ տրորելու նրա ցեղային առաքինութիւնները:

Ահա՛ թէ ինչու այսօր, անշուշտ ոչ իր ամբողջութեան մէջ, նա պարտուողական է, անհայրենասէր եւ անարի: Դարերով նրա հայեացքը կտրուած է եղել կեանքի բարձունքներից, ճակատը՝ խոնարհ, մտածումը՝ թեւաբեկ, ցանկութիւնները՝ երկչոտ:

* * *

Հայ ժողովրդի թրուութիւններն ու արատները աւելի շեշտուած են իր մտաւորականութեան մէջ:

Հայ մտաւորականի հոգին անհամեմատօրէն աւելի է ամայացած: Պարզ ժողովուրդը երբ եւ ուր որ հնարաւոր է եղել, խուսափել է հրապարակից, քաշուել ու կծկուել է իր յարկի տակ: Հայ մտաւորականը, ընդհակառակը, որպէս հասարակութեան եւ հրապարակի մարդ՝ աւելի լայն յարաբերութիւններ, գործունէութեան աւելի մեծ ասպարէզ ունենալով, աւելի է ենթակայ եղել օտարի այլասերիչ ազդեցութեան: Նա յաճախ իր ցեղային առաքինութիւնների

խաթարման գնով է յարմարուել անհարազատ միջավայրին: Եւ զարմանալի չէ, որ այսօր հայ մտաւորականութեան որոշ մասը ցեղային բարոյականի փոխարէն միայն հասարակական մեռեալ ծիսակատարութիւններ ունի:

Քիչ չեն «ստուեր եւ զովութիւն» փնտռողները, մասնաւորապէս քաղաքական հոսանքների մէջ, ինչպէս եւ նրանք, որոնց հոգեւոր ողջ հարստութիւնը իրենց լեզուի ծայրին է եւ բառերի մէջ: Գիտեն եւ սիրում են ճաշել զայրոյթով, թէ քանիցս չար նախանձի երեսից է կործանուել Հայաստան երկիրը, բայց եւ այնպէս հազուադէպ չէ հոգեւոր դեղնութեամբ տառապողը մեր կեանքում: Հոգեպէս ծոյլ՝ հայ մտաւորականներից շատեր չեն հաւատում իրենց ցեղի համաճարի ոյժին: Շատերի համար չկան ազգային մեծութիւններ: Իրենք տկար՝ արտաքին թշնամին միշտ էլ գայլ է թոււմ իրենց: Սիրում են եւ ղեկավարի դերը, բայց չեն արդարացում այդ անունը: Մտնելով կուսակցութիւնների մէջ՝ արժէքաւորում են իրենց անձը եւ ոչ կուսակցութիւնը: Եւ յաճախ իրենց եսին ստորադասում են կուսակցութիւնը, այդ վերջինին՝ իրենց ժողովրդի շահերը:

Այսպէս, շատ են եւ հասկանալի հայ հոգեբանութեան ստուերային կողմերը: Դարերով զրկուած պետական կեանքից՝ հայութիւնը, մասնաւորապէս նրա մտաւորական տարրը իրեն ազատ է համարել հաւաքական պարտականութիւններից: Զրկուելով պատասխանատու պաշտօնների մէջ երեւնալու հնարաւորութիւնից՝ ժամանակի ընթացքում հայ մտաւորականի մէջ չքանալու աստիճան տկարացել է պատասխանատուութեան զգացումը: Նա օտարին ծառայել է կէս սրտով, ականալից: Եւ օտարի դարեր տեւող նւաստացուցիչ վերաբերմունքը, հասարակական կեանքի եւ անանձնական իղէալների եւ պարտականութեանց պակասը հայ մարդուն սերտօրէն կապել են իր նեղ յարկին, իր ընտանիքին:

Հասկանալի է, որ նման հոգեբանական մթնոլորտում դարերով շնչող ժողովուրդը պիտի այլանդակէր իր հասկացողութիւնը հասարակական եւ պետական կեանքի մասին, պիտի կլանուէր առօրեայ կեանքի արտաքին շինարարութեամբ, դառնալով զգալիօրէն անտարբեր դէպի իր ցեղի հաւաքական ճակատագիրը եւ պիտի կորցնէր իր ցեղային բարոյականը:

Ահա՛ թէ որտեղի՞ց եւ որո՞նք են մեր բարոյական թերիւնները, որոնց կը պարտի թուրք զենքը Հայաստանում իր յաջողութիւնները:

Աղետալի անգիտացում

Օտարներին նմանելու յիմարութիւնը ոչ մի ասպարէզում այնքան չարաչար չէ պատժուում, որքան կռուադաշտում:

Ահա՛ թէ ինչու իմաստուն *գորահրամանատարութիւնը դաստիարակութեան եւ ղեկավարութեան գործում պէտք է յենուի ցեղային անհատական թէ հաւաքական հոգեբանութեան վրայ*: Նա ընդունակ պէտք է լինի ուսումնասիրելու եւ ճանաչելու աշխարհագրական հոգեբանական միջավայրը, որի հարազատ ծնունդն էր, եւ ապա հաշուի առնելով այդ վերջինը, պէտք է մշակել կարողանայ իր խնամքին յանձնուած գորական ոյժերը նախապատրաստելու եւ որպէս ազգային քաղաքականութեան գէնք գործածելու եղանակը:

Ասել է՝ մի երկրի բարձր հրամանատարութիւնը, իր անունն արդարացնելու համար, պէտք է լինի *ազգային՝* յաջող ռազմավարութիւն ունենալու համար:

Չայաստանի Յանրապետութեան հրամանատարութիւնը ազգային էր, միայն անունով, եւ հէնց այդ էր պատճառը, որ նրա համար անձանօթ մնացին մեր երկրի եւ ժողովրդի առարկայական պայմանները, որոնց անգիտացումը իր յետեւից անխուսափելիօրէն քաշ տուեց Կարսի աղէտը:

Չայ երկրի ինքնապաշտպանութեան վարիչները հրամայող-բար պէտք է հաշուի առնէին հետեւեալ տուեալները.-

- Չայաստանի աշխարհագրական դիրքը, նրա երկրամասային ծաւալը, նրա տեղագրական բնոյթը, ժողովրդի քանակը, նրա հատուածականութիւնը, նրա քաղաքական իդէալը, նրա եւ իր իսլամ հարեւանների փոխյարաբերութեանց բնոյթը եւ այլն:

Մեր երկրի դիրքի եւ փոքրիկ ծաւալի շնորհիւ Չայաստանի բարձր հրամանատարութեան ամէն մի ռազմավարական թէ ռազմագիտական սխալը պիտի ունենար ճակատագրական հետեւանք: Շատ անգամ գրեթէ առաջին անյաջողութեամբ առաջացած գաղթը կամ զանգուածային դասալքութիւնը ամենաբարոյալքիչ ձեւով պիտի անդրադառնար թէ՛ գործօն գորամասերի եւ թէ՛ թիկունքի հոգեբանութեան վրայ, անհնարին դարձնելով հետագայ դիմադրութիւնը:

Ահա թէ ինչո՞ւ Չայաստանի գերագոյն հրամանատարութիւնը ընդգծած առաջին երկու պայմանների թելադրութեամբ պիտի ունենար անվրէպութեան աստիճան յաջող ռազմավարութիւն:

Երրորդ եւ չորրորդ պայմանների պահանջմամբ Հայաստանի զինուորական նախարարութիւնը պիտի վարէր «*փորձիկ պատերազմ*»՝ տալով իր ճակատամարտներին *ժողովրդա-պարտիզանական բնոյթ*:

Յանցաւոր տգիտութիւն էր կիրարկոււմը ռուսական զանգուածային ռազմավարութեան, որը մեծ ժողովուրդ եւ, յամենայն դէպս, ոչ մեր երկրի տեղագրական բնոյթն է պահանջում:

Հինգերորդ եւ վեցերորդ պայմանների գոյութեամբ ՀՀ զինուորական նախարարութիւնը պիտի մղուէր օր առաջ միօրինակութիւն մտցնել ռուսահայ եւ արեւմտահայ տարրերի միջեւ, զինուորական ծառայութիւնը պարտադիր դարձնելով նաեւ վերջինների համար:

Կամաւոր զօրամասերի գոյութիւնը հասկանալի է պատերազմի՝ բայց ոչ եւ խաղաղ ժամանակ, երբ այդ չէ կարող բացասաբար չազդել Հանրապետութեան կանոնաւոր բանակի հոգեբանութեան վրայ:

Կայ, վերջապէս, մահմեդականութեան տարամերժ հոգեբանութիւնը, նրա դարաւոր թշնամանքը դէպի ոչ-խլւամ մարդկութիւնը եւ մասնաւորապէս դէպի հայութիւնը, կայ նաեւ ռուսական համաթրքականութիւնը, կայ հայ ժողովրդի պահանջը տաճկահայ նահանգների մասին, եւ մի շարք այլ պատճառներ, որոնք հայ-թրքական թէ հայ-թաթարական բախումներին պիտի տային ծրագրուած կոտորածի բնոյթ:

Ոչ թէ միայն հողային նուաճում, այլեւ զանգուածային ջարդ, տեղահանութիւն, ակերածութիւն – հայ ժողովուրդը մէջտեղից բառնալու խելագար ցանկութիւն,- ահա մահմեդականութիւնը իր եւ մեր միջեւ ծագած պատերազմների ժամանակ:

Ինչո՞ւ չէ յաղթել, ինչո՞ւ յաճախ նոյնիսկ չէ կռուել հայ զօրքը:

Գիտենք, որ նա շատ անգամ վերջնական պարտութեան է մատնուել կռիւների հենց առաջին շրջանում, որ հենց առաջին անյաջող բախումը մեր զօրքի պարտութիւնը դարձրել է անսրբագրելի, վերջնական, որ մեր զօրքի մի շարք պարտութիւնները եղել են միաժամանակ եւ բարոյական:

Ինչո՞ւ Կարինից մեր զօրամասերը նահանջեցին, ուղղակի Կարս եւ ապա՝ Դիլիջան: Ինչո՞ւ Երեւանում տեղի տուածները քաշուեցին Սիւնիք, առանց կանգ առնելու մինչեւ Սիւնիք ձգուող տարածութեան որեւէ կէտի վրայ՝ դիմադրութիւն ցոյց տալու նպատակով: Ինչո՞ւ այդ հսկայ տարածութեան վրայ նրանք չվերածեցին

որոշ բարձունքներ՝ արժույթի բների, որոշ ձորեր՝ լեռնիդասեան կիրճերի, որոշ դաշտեր փառքի թատրերի:

Ո՞վ է մեղաւոր հայ գէնքի անյաջողութեան մէջ:

Անշուշտ միայն ոչ զինուորը:

Ձինուորը չէ մեղաւոր, որ իրեն պակասում է կռուեցնողը, ինչպէս եւ այն անհրաժեշտ հոգեբանական մթնոլորտը, որի մէջ միայն հնարաւոր է դիմադրութիւնն ու յաղթանակը: Ձինուորը չէ, որ իր հրամանատարութիւնը չէ հասկանում թէ կռուի օրերին ճակատամերձ վայրերում տեղ չպիտի ունենան հասարակութեան կրաւորական տարրերը:

Կարինը եւ Կարսը իրենց անկման նախօրեակին այլեւս բերդաքաղաք չէին, այլ մի-մի շուկայ, աւելին՝ մի նոր Արշակաւան, ուր կարելի էր ամէն մի քայլափոխում հանդիպել ոչնչով այդ փափուկ շրջաններին չը կապուած գաղթականին, գէնքի առետրով զբաղողին, դասալիքին, աւարառուին, չարաշահողին եւ նման մութ ահընկէց տարրերի ամբողջ խմբեր:

Չասկանալի չէ՞, որ նման քառսի եւ ապականութեան մէջ բացարձակապէս անհնարին պիտի լինէր դիմադրութեան մղել ոչ թէ բարոյալքուած հայ զօրամասերը, այլեւ Կեսարի հռչականուն լեզեռնները:

Չտեսեա՞նքը: - Աննախընթաց խուճապ, գաղթ եւ... տխուր պատմութիւն:

Ինչո՞ւ Կարսն ընկաւ 1920թ. աշնան, որովհետեւ մեր զօրքը Կարսի տակ դարձած էր հաւաքական հոգուց զուրկ մի զանգուած, որի մէջ կային՝ նախկին ռուս ծառայութեան հայ զինուորը, անշուշտ, ծանօթ գէնքի գործածութեան, բայց հոգեբանօրէն դեռ ոչ ազգային զինուոր, մանր առետրականը, իր առօրեայ ապրումներով, չնկատուելու աստիճան չնչին թուով «մտաւորականներ» իրենց ծխական տրամադրութեամբ եւ օտարալեզու զինուորական արհեստաւորը: Սեղմ ասած՝ կար պարտութեան եւ աղէտալի նահանջի համար ամէն ինչ, իսկ դիմադրութեան եւ յաղթանակի համար՝ ոչինչ:

Ահա՛ թէ ինչու ոչ միայն չյաղթեց, այլեւ չկռուեց հայ զօրքը: Այն պատերազմներից չէր հայ-տաճկականը, երբ կռուադաշտ նետուած ժողովուրդը հարիւրապատկում է իր ոյժերը եւ երիտասարդանում, երբ ոյժի եւ ոգեւորութեան մի հեղեղ է անցնում ժողովուրդների հոգեկան աշխարհով եւ ստեղծում անձնուիրութեան

համաճարակ, երբ տղամարդը՝ անկախ իր տարիքէն, արիեստէն, արուեստէն, ամաչում է մնալ ու երեւալ թիկունքում, երբ «մեռելները բարձրանում են գերեզմաններից մասնակցելու ճակատամարտերին»։ սեղմացած՝ երբ սուրը մերկացրած ժողովուրդը հոգեպէս վերածնունդ է օրերի եւ ժամերի ընթացքում։

Կար եւ աղէտալի մի սխալ ռազմավարութեան մէջ։ Դա «գծային» կոչուած ռուսական ռազմավարութեան կիրարկումն էր հայկական բնաշխարհում, որը գերազանցապէս հերոսական կռիւների թատերավայր է։

Մեր որոշ երկրամասերի տեղագրութիւնը ալպէան բնոյթ ունի. մի կարելոր պարագայ, որ հաշուի չառաւ հայկական սպայակոյտը եւ մնաց կառչած ռուսական զանգուածային մարտավարութեան մեռեալ ձեւերին։ Այդ տիպի ռազմավարութիւնը պահանջում է նախ թուապէս մեծ ժողովուրդ։ Կռուի նման ձեւեր գործադրելու համար՝ պէտք էր ունենալ քանակով եթէ ոչ աւելի զոնէ հաւասար ոյժեր։ Եթէ պէտք էր վաշտը՝ վաշտի, եւ գունդը գնդի դէմ հանել, խելագարութիւն էր կռուի ձեռնոց նետելը կամ ընդունելը։ Հասկանալի պատճառներով մենք թուապէս ոչ գերազանցել, ոչ էլ հաւասարուել կարող էինք թշնամուն։

Ասել է՝ կռուի ձեռնոցը ընդունելով՝ հայկական սպայակոյտը իր ամբողջ յոյսը պէտք է դնէր երկու բանի վրայ - գերազանց ռազմավարութեան եւ պատերազմի հրոսակային բնոյթի վրայ։

Մեր ոյժերի $\frac{3}{4}$ -ը կլանեց Կարսը, որի անկումից յետոյ նահանջի ճամբան բռնած հայկական զօրամասերը այլեւս անկերպարան զանգուածներ, ամբոխներ էին։

* * *

- Պատերազմ, եւ գաղթ ու նահանջ չէ նկատուում հայերի կողմից։ Ինչո՞ւ են անդամալուծուած թուրք բանակի շարժումները։ Պատճա՞ռը։

- Որովհետեւ հայ ժողովուրդը վճռած է կտրել նահանջի հրաման արձակողի յանցաւոր ձեռքը։ Որովհետեւ հայ ռազմիկը միայն մի հատիկ ճամբայ է թողել թշնամուն՝ իր դիակի վրայով։

- Ինչո՞ւ են ընդունայն անցնում թշնամու բոլոր հարուածները։ Ինչո՞ւ հայ գիւղեր չեն ծխում, դիակոյտեր չեն երեւում։

- Որովհետեւ կենդանի բերդ է հայ ռազմիկի կուրծքը, որովհետեւ մինչեւ այդ՝ հայը յաղթել է իր բոլոր տկարութիւնները։

- Ինչո՞ւ են այնքան աննշան հայ մահերը, եւ յաղթական բոլորն էլ: Ինչո՞ւ թշնամին անհծում է պատերազմը եւ փախչում Յայաստանի սահմաններից:

- Որովհետեւ մեր մարտիկին ղեկավարում է իր ցեղի ոգու ձեռքը: Որովհետեւ ամէն մի զինուոր եւ իր ղեկավարն է այստեղ, իսկ ամէն մի հրամանատար՝ միաժամանակ եւ զինուոր է: Դրա համար էլ նախածեռնութեան, յանդգնութեան եւ հնարագիտութեան ոգին զարգացած է հանճարեղութեան աստիճան: Որովհետեւ միայն մի հատիկ ընդհանուր հրաման կայ դրուած բոլորին, ցեղի հրամանը՝ յաղթել:

Չկայ մարդ մեքենան, չկան հոգեպէս ծոյլ զանգուածներ՝ խցկուած դիրքերի եւ երկրաչափական ձեւերի մէջ: Կան կենդանի շանթարգելներ, որ քաշում, չէզոքացնում, զինաթափում են թշնամու հարուածները: Կան դարանամուտ, յանկարծայարձակ թեթեւ հրոսախմբեր, վարժուած հին պարթեւական ռազմախաղերին: Կայ գիտակցութիւնը, թէ *ուվ պատրաստ չէ յանուն Յայաստանի մեռնելու ամէն վայրկեան՝ արժանի չէ հայ կոչուելու:*

Կայ հպարտ գիտակցութիւնը, թէ պարտուել՝ ասել է կորցնել իր գոյութեան իրաւունքը, ասել է անարժան լինել անկախօրէն տեղ գրաւելու արեւի տակ:

Կայ ազգային սրբազան պատուասիրութիւնը՝ ոչ ոք է ուզում անարգուած հայրենիքի զաւակ կոչուել:

Քաջութիւնը այստեղ գերագոյն արտայայտութիւնն է մարդկային իմացականութեան: Վախ չկայ, պարտուած է նա հայի կողմից:

Ահա՛ թէ ինչպէս պետք է լինէր մեր վերջին պատերազմը:

Աւա՛ղ, նկարագրածս բնոյթը չունեցաւ նա, եւ դրա համար էլ մի սեւ էջ եւս ունեցաւ մեր նորագոյն պատմութիւնը:

VII ՅԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

Պատարակական արդարություն

«Եւ, ո՛չ մի ընչագուրկ քո հողի վրայ», - ժամանակին այսպէս կը խօսէի լեռնահայութեան, քանզի խեղճերի արցունքից եւ թոյլերի անարիութիւնից են կործանուում հայրենիքները:

Իսկապէս, ինչպէ՞ս կարող է հզօր եւ երջանիկ լինել մի ժողովուրդ, որի ճակատագրով չեն հետաքրքրուում իր բոլոր որդիները. մի պետութիւն, ուր իշխում են որոշ դասակարգեր, բայց ոչ բոլորը. մի հայրենիք, որը հարազատ մայրը չէ բոլորի եւ ամէն մէկի, որի մայրական ստիճքները չեն ծծում իր բոլոր զաւակները:

Միայն պարտականութիւններն ու դժբախտութիւնները չեն, որ ընդհանուր պէտք է լինին, այլեւ իրաւունքներն եւ ուրախութիւնները: Սրանում է երկիրների հզօրութեան գրաւականը, սրանում է եւ հիմքը հասարակական ճշմարիտ բարոյականի:

* * *

Աւագի վրայ է հիմնուած այն պետութիւնը, ուր բարեկեցիկների կողքին կան թշուառ տարրեր՝ ենթակայ զրկանքի, գերի աղքատութեան: Ամուր չէ այն պետութեան հիմքը, ուր առատութեան մէջ գգուողի ուրախ քրքիջների հետ լսուում է եւ աղքատի վայր:

Օրհնուած չէ՛, հզօր չէ՛, ապագայ չունի այն պետութիւնը, ուր արեւը չի ծագում բոլորի համար, ուր բաւարար սնունդի եւ գլուխ դնելու տեղի համար հառաչողներ կան: Այդպիսի պետութեան մէջ է, որ իշխում է հասարակական անզգայութիւնը, ուր առանց ամօթի եւ խղճի խայթի մարդիկ անցնում են թշուառների մօտով:

Չկայ աւելի մեծ չարիք մի երկրի համար, քան դասակարգային եսասիրութիւնը: Դա խաթարում է ազգային անհատականութիւնը, ներքուստ պառակտում ժողովուրդը, թունաւորում միեւնոյն ցեղին պատկանողների փոխարարբերութիւնները, թուլացնում պետութիւնը:

Ինչպէս անհատականը, կոյր է եւ հաւաքական եսասիրութիւնը: Այդ հրէշը պէտք է սպանուի վաղուայ Յայաստանում:

Այս կամ այն դասակարգը չէ՛, որ պէտք է իշխէ վաղը, այլ ամբողջ ժողովուրդը:

Չկայ մի երկիր, ուր հնարաւոր չլինէր մօտաւոր հաւասարութիւնը, մի երկիր, որը չկարողանար անկարօտ դարձնել իր բոլոր զաւակներին, եթէ այնտեղ թագաւորում է հասարակական արդարութիւնը:

Եթէ չկայ հասարակական արդարութիւն, անհծուած է իշխանութիւնը, որ արդարացնում է որոշ տարրերի ընչազդուութիւնը:

Եթէ չկայ հասարակական արդարութիւն, ասել է՝ կայ այն ամէնը, ինչ որ արագացնում է անփառունակ անկումը պետութիւնների:

Իսկ այնտեղ, ուր թագաւորում է աստուածային օրէնքը, այնտեղ ընչազուրկին եւ անարհիւն փոխարինում է արի եւ անկարօտ քաղաքացին: Իսկ այնտեղ, ուր չկայ ընչազուրկը, անարհիւն, վատը, այնտեղ չէ երեւում արտաքին թշնամին հրով եւ սրով, այնտեղ բարզաւաճում է եօթնիցս օրհնուած, ապահով ու երջանիկ հայրենիքը:

Եթէ հայ մարդը խեղճ եւ անարհի պիտի մնար եւ իր անկախ հայրենիքում, էլ ինչո՞ւ էր պէտք անկախութիւնը: Եթէ դարերով օտար լծերի տակ չարչրկուած հայութեան մի մասը թշուառ պիտի մնար եւ իր ազատ հայրենիքում, էլ ինչո՞ւ էր պէտք ազատութիւնը:

Չէ՛, չէ՛ վաղուայ Յայաստանում չպէտք է լինին խեղճեր, ընչազուրկներ, անարհիներ: Բոլորն էլ պէտք է լինին անկարօտ, առաքինի, արի: Յայ հայրենիքի ապահովութիւնն է պահանջում այդ:

Մեր անկախութեան մայիսը

Ազգերը, ինչպէս եւ անհատները, յաճախ մեծ եւ յաղթական լինելու կարիքը կը զգան: Նրանք կ'ուզեն ունենալ գիտակցութիւնը իրենց տիրական կամքի, որը եւ ձեռք կը բերեն յաղթական պայքարի մէջ:

Այո՛, սերը դէպի յաղթանակը եղել է եւ կը մնայ բացարձակ պայմանը ազգերի եւ անհատների ստեղծագործ կեանքի:

Մեր ժողովուրդի երկու մեծափառ գործերը՝ Սարդարապատն ու Ղարաքիլիսէն, ուր նա այնքան հիասքանչ եւ բուռն կերպով երեւան բերաւ անկախ հայրենիք ունենալու իր յաղթական կամքը, պէտք է բացատրել ոչ միայն ինքնապաշտպանուելու հարկադրանքով, այլեւ իրեն մեծ ու յաղթական զգալու գերագոյն կարիքով: Ողբերգօրէն երջանիկ 1918-ի ընթացքում հայութիւնն ունեցաւ իր

քաղաքական Աւարայրը Արարատի ստորոտում: Իր դարաւոր նկուն եւ անփառունակ գոյութիւնից դժգոհ՝ մեր ցեղի ոգին իրեն տիրական ու մեծ զգալու կարիքից խթանուած՝ բարձրացրեց հայոց անկախ պետութեան շէնքը, որի գրանիտէ հիմքը դրուած կը մնայ աստուածաշունչ որդիների նշխարների վրայ:

* * *

Մայիս 28-ը:

Այդ օրը հայութիւնը հագաւ իր փառքի ու հզօրութեան ծիրանին եւ բազմեց ազատ ու անկախ ազգերի կողքին: Եւ Արարատեան արեւը երկիրը դիտելիս, ասաց այդ օրը՝ «ահա՛ մի թագաւոր ժողովուրդ եւս, որը ստրուկ էր երէկ»:

Այդ օրը - փառքն ու պսակումը մեր ժողովրդի ազատագրական գերմարդկային ճիգերի - դարերով օտար կրունկների տակ տրորուող «քրիստոնէական արհամարհուած հօտը» իր վարած աշխարհածանօթ պայքարի շնորհիւ հռչակուեց ազատ: Այս աստուածային օրը մարդկութեան անիրաւութեան կողմից աշխարհի քարտէսից անհետանալու դատապարտուած մեր հայրենիքը, որն աշխարհագրական կէտ կը համարուէր այլեւս, հռչակուեց անկախ:

Հայութիւնը յաղթեց մահն այդ օրը, վերջ դնելով իր դարեր տեւող հոգեւոր եւ նիւթական ծանր հոգեվարքին: Մայիսեան հերոսական շարժումները վերացնելով ապագայնացման մահաբեր վտանգը, փրկեց նաեւ գաղութահայութեան ազգային դիմագծութիւնը: Օտար պետութիւնների մէջ երեւաց հայ եռագոյնը, դեսպանը, հիւպատոսը, որոնց միջոցաւ տարաշխարհիկ եւ տարալեզու հայութիւնը հոգեբանօրէն կապուեց իր պետութեան, դառնալով հայահպատակ:

Հայաստանի անկախութեամբ հայութիւնը, որպէս ցեղագրական ուրոյն միաւոր, վերստացաւ մարդկութեան օգտակար լինելու իր կարելիութիւնը, որին պատմական մեծ առաքելութիւն է վերապահուած Մերձաւոր Արեւելքում:

* * *

Երկարե՞լ: Բայց ինչո՞ւ, մի՞թէ հնարաւոր է խօսքով սպառել Մայիս 28-ի բովանդակ տարողութիւնը: Ո՛չ, ո՛չ, դա ոչ ոք կը յաջողի: Այդ նուիրական թուականը կը խորհրդանշէ հայրենիքին ու իր անկախութիւնը, հայրենիքը, որ Աստծու պէս աւելի սրտի քան ուղեղի մէջ կ'ապրի:

Եզիպտական գերութիւնից վերադարձած Իսրայէլը հերոսական փորձեր կը կատարէր՝ վերականգնելու կործանուած Սիոնը: Թշնամին, սակայն, կը քանդէր այն, ինչ որ գուրգուրանքով կը վերաշինէր մարգարէների ժողովուրդը: Թշնամին կը գրոհէր, իսկ Իսրայէլը՝ մի ձեռքում սուրը, միւսում բրիչը առած՝ եւ կը մարտնչէր, եւ կը վերաշինէր: Եւ նա կործանուած չհամարեց Սիոնը, անգամ այն ժամանակ, երբ նրանից մնացել էր մի հատիկ քանդուած պատ՝ այնքան լայն, որքան որ պէտք էր հնարաւորութիւն տալու մի խումբ ուխտաւորների՝ նրան սեղմելու իրենց դէմքերը, եւ նրա ետեւը թագցնելու իրենց արցունքը:

Իրլանդիան, յարգելով գոհագործութեան օրէնքը, ազատութեան գոհասեղանի վրայ դարերով վառ պահեց կրակը: Նրա կրօնի տակ չմեռաւ ազատասիրութեան ոգին, մինչեւ որ կը վերականգնէր քաղաքականապէս, կը դառնար թագաւոր ժողովուրդ՝ տէր անկախ հայրենիքի...

Եթէ կ'ուզես լսել եւ հայ մարդուն անկախ հայրենիքի մասին, հարցրու հայ գաղթականին, որի տառապանքը ծաղրելու համար՝ ձեռքը գալի անցագիր են տուած, եւ երկրէ երկիր կը քշեն: Հարցրու հայ որբին, որին մարդկային կեղծ ողորմասիրութիւնը մի ձեռքով չոր հաց, միւսով թոյն կուտայ: Հարցրու հայ բանուորին, որ դատապարտուած է օտար հայրենիքներում աժամ աշխատաւոր ձեռքերի եւ անխաչ ու անտէր գերեզմանների թիւն աճեցնելու: Հարցրու հայրենի հողի վրայ իր արեան հետքերը թողած տարագիր հայ գօրականին, որն այրող կարօտի ժամերին անճառելի քաղցրութեամբ կը մօտենայ արծաթեայ սափորին, որի մէջ ջերմաջերմ պաշտամունքով կը պահէ հայրենի երկրէն բերած *մի բուռ* հողը:

Մեծ մեռելների պաշտամունքը

Իր ապագայի հոգը տանող ամեն մի ազգ հսկումի իր օրը, ժամը, վայրկեանն ունի: Խոհուն հսկումներ, երբ երկիւղածօրէն իր մտքի ձեռքով կը բարձրացնէ ներկայի աչքէն ապագան ծածկող վարագոյրը եւ այսպիսով կը յաջողէր գաղտնիքներ կորզել ժամանակի ծոցէն: Ազգային տօների, եւ մասնաւորապէս մեր անկախութեան Մայիսին մասին է խօսքս: Տօներ, որոնք այնքա՛ն մեծ շքով ու հանդիսաւորութեամբ կը կատարուին քաղաքակիրթ ազգերի մօտ:

Սակաւաթիւ են տօները մեզանում, եւ. աւա՞ղ, եղածներն էլ կը տօնենք կէս սրտով, կը տօնենք, որովհետեւ սովորութիւն է տօնել: Տօնակատարութիւնները մեզանում աւելի մեռեալ ծիսակատարութիւններ են քան խորհրդածութեանց օրեր, ժամեր, որոնց ընթացքում ինքնաճանաչ ազգերը կ'ոգեկոչեն իրենց սրբին, լուսակրին, հերոսին, կ'ոգեխառնուին նրանց հետ՝ հոգեպէս աճելու համար:

Ահա՛ խորհուրդն, իմաստը տօնակատարութիւնների:

Ազգերն իրենց ծոցի մէջ կ'ապրեցնեն մի որակական փոքրամասնութիւն,- սուրբը, լուսակիրը, հերոսը – որ կ'ապրի ոչ իր անձով եւ ոչ իր անձի համար, որ կը մեռնէ՝ չմեռնելու, կը մեռնէ՝ իր ցեղն ապրեցնելու համար: Ոգու ազնուականութիւնն է այդ համացեղ փոքրամասնութիւնը, ժողովուրդների ամենամեծ, անկորնչելի եւ անմեռ հարստութիւնը:

Սուրբը, որ ոսկէ շղթայով անհատի ու ժողովուրդների հայեացքը կապուած կը պահէ աստղերին՝ այդ վերջինները կեանքի ճահճէն ու բարոյական նեխութենէն զերծ պահելու համար: Լուսակիրը, որ կը հալածէ խաւարը, անհատի եւ հաւաքականութեան հերոսը, որ կռթնած իր յաղթական սրին՝ արթուն կը հսկէ հայրենի սահմանների վրայ:

Ոչինչ են անհատը ու ազգը, եթէ նրանց պակասում է աստուածային գիծը: Առանց սրբի, լուսակրի եւ հերոսի՝ գոյութիւն չէր ունենայ հոգեւոր մշակոյթը, եւ մարդկային ցեղը դատապարտուած կը լինէր քարշ տալու անասնա-բուսական մի տխուր գոյութիւն:

Փորձեցէք մի վայրկեան մոռացութեան տալ հայ խաչի, այբուբենի ու սրի հերոսներին, եւ էլ ոչինչ կը մնայ, որ իրաւունք տայ մեզ ազգ կոչուելու: Յոգեւոր անապատի կը վերածուի մեր կեանքը, պատմութիւնը: Դպրոց, եկեղեցի, ընտանիք կը կորցնեն իրենց բարոյական բովանդակութիւնն ու խարիսխը: Կը ցամքին ստեղծագործ ոգեւորութեան բոլոր աղբիւրները:

* * *

Մի ժողովրդի սրբութիւնների կարգին կը պատկանին եւ պատուոյ վերքերը, սպիներն իր ընտիր որդիների:

Որքան անխառն եւ ուժեղ է յարգանքը դէպի այս սպիները եւ որքան մեծ թուով մարդկանց հոգիների մէջ տեղ ունի այդ յարգանքը՝ այնքան լուսաւոր եւ առաքինի է ժողովուրդը, այնքան յուսալի է նրա ապագան:

Պատուոյ սպին եղել է եւ կը մնայ հոգեւոր ամենամեծ զարդը:
Սպիազարդ գործիչը կը նմանի վարդենուն, որը զարդարելով
իրեն, կը զարդարէ նաեւ իր շրջապատը, պարտեզը:

Չկայ աւելի մեծ եւ աններելի յանցանք, քան անյարգալից
վերաբերմունքը դէպի սպիացած վերքերը մեր ազգի գործիչների:
Յարգալից պէտք է լինել անգամ դէպի թշնամու պատուոյ
սպիները:

Կասկածելի է բարոյականը մի ժողովրդի, որին պակասում է
յարգանքը դէպի իր սպիազարդ հերոսը, լուսակիրը եւ սուրբը:

* * *

- Ես կ'ուզեի,- գրեթէ մարգարէի յափշտակութեամբ սկսեց
Աշոտը,- ես կ'ուզեի, որ Սիւնիքի լեռներից մէկի ստորոտում
բարձրացուէր լեռնաշխարհի կռիւներում ընկած մեր մարտիկների
փառատաճարը: Մի ընդհանուր մատուռ եւ գերզմանաքարերը
փոխարինող ժայռեր այս մակագրութեամբ՝ «Ընկան, որ ապրեն եւ
ապրեցնեն իրենց ցեղը»:

- Այո՛, մեր ժողովուրդը պէտք է ունենայ իր փառքի
սրբարանը, բայց ոչ միայն Սիւնիքի երկնքի տակ եւ ոչ լեռանց
փէշերին: Թող հոգով արծիւ մեր ռազմիկները հանգչին իրենց
սիրած լեռների երկնահաս բարձունքներին: Թող նրանց սեգ
զագաթներին անմար պլպլան կանթեղները երախտագիտութեան:
Արշալոյսները թող համբուրեն, վերջալոյսները ոսկեզօծեն քաջաց
շիրիմներն ու ժայռերն ամէն օր: Եւ թող ամէն տարի յաղթութեանց
տօներին սերունդները ոգեկոչեն մեր հայրենաշունչ մեռելները ու
դաստիարակուեն նրանց մեծագործութիւններով, որպէսզի սովորեն
կեանքէն աւելի գիտակցական մահը սիրել:

- Թող այդպէս լինի,- որպէս պատասխան իմ խօսքերին,-
աւելացրեց Աշոտը եւ իր յոգնաթախիծ հայեացքը դարձրեց դէպի
Խուսուպեան բարձունքները:

Լեռների պաշտամունքը

«Եօթը բարձունք ունի այս ռազմաճակատը՝ հպա՛րտ
բարձունքներ, որոնց տիրելու մէջ, որոնց վրայ է մեր փրկութիւնը:
Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տէրը Հայաստանի»:

Ժամանակին զօրամասերիս ուղղած իմ մարտագրերից մեկի այդ տողերի մեջ հաւասար չափով ճշմարտութիւն եւ խոր հոգեբանութիւն կայ:

Սիւնիքը լեռներ ունի, որոնց գրաւումը թշնամու կողմից կարող է ճակատագրական հետեւանքներ ունենալ ոչ միայն լեռնահայութեան, այլեւ ամբողջ Հայաստանի համար:

Գրաւելով որոշ բարձունքներ Սիւնիքում, իմ գնդերը յաջողեցան մեր լեռնաշխարհի երեսից սրբել երկու հարիւրի չափ թշնամի գիւղեր եւ վերացնել հայ ազգաբնակչութեան գլխին կախուած մահմեդական վտանգը:

Սիւնիքը սեւ հողերի վերածելու նպատակով, թուրքն ու թաթարը քանիցս ձգտել են անսպասելիօրէն երեւալ այս կամ այն ռազմագիտօրէն կարելոր բարձունքի վրայ եւ նեղը դնել հայութիւնը: Կռուի միեւնոյն ռազմափորձային ձեւերին դիմել ենք եւ մենք՝ օգտագործելով լեռներն ու բարձունքները, որպէս յամառ կէտեր, որպէս տիրապետող դիրքեր, եւ – ամենալաւը – որպէս ռազմագիտական բանալիներ:

Ահա՛ թէ ինչու ինձ պէտք էր՝ հրահրելով ժողովրդի սերը դէպի իր լեռները, յաճախ կրկնել Սիւնեցուն, թէ հայրենի լեռների վրայ է իր փրկութիւնը: Ահա թէ ինչու իմ վարած անհաւասար գոյամարտի օրերին լեռնահայութեան իմ տուած պատուիրաններից մեկն այսպէս կը յորդորէր ժողովրդին.

«Տաճարներիդ մէջ, խաչերիդ կողքին բարձրացուր մի մեծ ժայռ եւ պաշտէ՛ դա, որ աննուազ մնայ սերդ դէպի հայրենի լեռները»:

* * *

Միայն ռազմագիտական չէ լեռների արժէքը:

Այդ անմահ հսկաները զորացուցիչ ազդեցութիւն ունին իրենց կողքին ապրողներու հոգու վրայ: Սրբազան անտարբերութեամբ երկնքէն երկիր նայող այս հսկաները անխօս կը խրատեն իրենց փէշերի վրայ ապրող ժողովրդին, թէ ինչպէս պէտք է կուրծք տալ ժամանակի փոթորիկներին:

Գիտե՞ս աւելի հպարտ ու հմայիչ պատկեր, քան լեռան կատարը՝ իր վրայ թառած արծիւով:

Արծիւ զինուո՞րը հայրենի բարձունքի վրայ: Դա մի պատկեր է, որին չէ կարելի չվերաբերուել անխառն հիացումով:

Արծիւներն ու արծիւ հոգիներն են սաւառնում լեռներում եւ ոչ ճնճղուկը:

Մայրենի լեզուի պաշտամունքը

Օտար նշանագրերի հմայքը որպէս անէծք դարերով կը ծանրանար հայոց աշխարհի վրայ:

Հայ արքունիքին, եկեղեցուն եւ դպրոցին աղետալիօրէն կը պակասէր իր ժողովրդի խոպան սիրտն ու միտքը մշակելու եւ նուաճելու կարելիութիւնը: Թանձր տգիտութիւնը եւ իր զանազան-ակերպութիւնները՝ սնուցիչը մեր ցեղի հոգեբանական թերութիւնների՝ կը կրծէին, կը մաշէին հայութեան հոգեւոր եւ ֆիզիքական կազմուածքը: Քրիստոնէական վարդապետութիւնը, որ կը քարոզուէր օտար եւ անհասկանալի լեզուներով,- ասորերէն, յունարեն – կը շարունակէր մնալ որպէս արտաքին մեռեալ ձեւ ու ծէս: Երես դարձորած իր հին աստուածներէն՝ հայութիւնը կը մնար էապէս անկրօն, զուրկ նոր աստուածութեան զգացումից: Հայ պետութիւնը կ'ապրէր հոգեւոր անիշխանութիւն, քանզի իրեն կը պակասէր անհատներն իրեն կապող շաղախը, որ մայրենի լեզուն է:

Որպէս հեթանոս՝ գուցէ եւ հնարաւոր լինէր ապրել առանց մայրենի տպագրական լեզուի,- կար հեթանոս կրօնը, կային աստուածները: Քրիստոնէութեան մուտքը, սակայն, աւելի եւս անհրաժեշտ էր դարձրել մաշտոցեան գիւտը: Հայ պետութեան ճակատագիրը վարողներն այլեւս ըմբռնել էին ժամանակի գերագոյն պահանջը: Պէտք էին հայերէն նշանագրեր, եւ ահա՛ օգնութեան է հասնում տարօնցի կրօնաւորի ստեղծագործ հանճարը: Եւ ահա ձեւակերպոււմ են հայ տառերը, որոնց գործադրութիւնը հնարաւոր պիտի դարձնէր կրօնական արմատական յեղաշրջումը՝ քրիստոնէութեան վերջնական յաղթանակը Հայաստանում:

Վաղարշապատից դուրս, Ռահ գետի մօտ, թագաւոր եւ ժողովուրդ ցնծութեան աղաղակներով կը դիմաւորէին հայ լուսակրին, որ Սամոսատում իր միսթիկ յափշտակութիւնների եւ հսկումների մէջ յաջողել էր կորզել «երկնքէն» հայ տառերի ձեւերը, եւ միասնական յոյսերով կը փութար հայրենիք:

Հասկանալի եւ արդար էր հայ ժողովրդի ուրախութիւնն այդ օրը, քանզի իրեն կը տրուէր «պրոմէթէան կրակը», որ պիտի հալածէր ցուրտն ու խաւարը հայ ցեղի կեանքէն, քանզի նա կ'ունենար

մի եւ անբաժան հոգեւոր կազմուածք դառնալու կարելիութիւնը. քանզի այդ օրը հայոց աշխարհում իրար կը հանդիպէին հայ գրիչը, խաչն ու հայ սուրը, կը հանդիպէին, կը համբուրէին:

Այլեւս կար տպագրական մայրենի լեզուն՝ զենքերի հրաշագործ զենքը, որով մեր ցեղը պիտի կարողանար դիմագրաւել աշխարհակալ ցեղերի հայասպան փորձերը:

* * *

Մերոպեան գիտը, սակայն, որի անդրանիկ գործը եղաւ փառահեղ Աւարայրը, իր մեծ փառքի հետ ունէր եւ իր խոր ողբերգականութիւնը: Այն է, նա շատ ուշ էր դառնում հայ ժողովրդի սեփականութիւնը: Այլեւս երեւութական էր դառել հայոց թագաւորութիւնը, որ կը տառապէր հոգեւոր եւ քաղաքական հիւժմախտով:

Հայութիւնը՝ կորցրած ազգային միութեան եւ միաբանութեան բնագոյն ու գիտակցութիւնը՝ կորցնելու վրայ էր իր քաղաքական անկախութիւնը: Մեր երկրի բանալիները վաղուց էին յանձնուած օտար դոնապաններին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ նախանձի դեւով բռնուած հայ նախարարները, չնչին բացառութեամբ, ծառայութիւնն օտարին ակելի տանելի կը համարէին, քան իրար ենթարկուելը: Թշնամիների բարբարոս հարկահաւաքութեան դիմացող հայն այլեւս չէր հանդուրժեր իր եղբօր մի հատիկ դառը խօսքին: Ոչ ոք կը ճանաչէր իրենից ակելի ձեռնհասը, արժանաւորը, մեծը: Քիչերը կ'ուզէին հասկանալ, թէ հարազատ հայրենիքում եղբօր աջակցութիւնը, որքան էլ որ համեստ լինի, ակելի արժէ քան արտաքին օգնութիւնը, որը չէ տրուում ձրիաբար:

Կար երկպառակութեան մաշող ախտը, որը կը մղէր Սահակ Մեծին իր դառնութեան ժամերից մէկում զարկելու հայութեան երեսին՝ «Քահանայանալ ի վերայ տիրանենգ, եւ տիրասպան, եւ մատնիչ ժողովրդոց ոչ կարեն»:

Կար ներքին իրարակերութիւնը, որ հայ կաթողիկոսին արդար ցասունով ասել կուտար - «Ի տանէ առաւել քան յօտարաց բուսաւ մարտ դառնութեան: Յովհաննէս»:

Կար ներքին «դժոխքը», որ կը թելադրէր հայ պատմագրին - «ազգս հայոց, որք մատամբ եւ կամօքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց. զի ինքեանք կործանեցին զթագաւորութիւն իւրեանց: Առաքել»:

Իրերի այդ անմխիթար դրութեան մէջ ահա՛ հայութեան տրուեց նոր հոգեւոր զենքը, որից աւա՜ղ, այլեւս նա չպիտի կարողանար օգտուել ցանկալի չափով:

Զգալիօրէն կրճատուած էին «ծայրք հայ խօսից»: Օտար ոտից կոխան էր եւ հայոց միջնաշխարհը, ուր անվերջ արշաւանքներ կը սփռէին արտաքին թշնամիները, յաճախ իրենց նուաճողական նպատակներին ծառայեցնելով եւ մերազնեայ, ներքին թշնամիներն:

Կը պակասէր խաղաղութիւնը՝ մայրը պետական շինարարութեան ու հոգեւոր մշակոյթի: Հայ նշանագրերէն անհրաժեշտ չափով օգտուելու կարելիութիւն չկար այլեւս եւ հէնց դրանում էր մայրենի այբուբենի դրութեան ողբերգականութիւնը:

* * *

Հայ լեզուն այսօր ազգային հոգեւոր ինքնապաշտպանութեան գրեթէ միակ զենքն է, մասնաւորապէս տարագիր հայութեան համար:

Ազգային ինքնաճանաչութիւնը պարապ խօսք է – սին՝ առանց մայրենի լեզուի:

Վաղուց ենք գիտակցել, թէ լեզուի մահը դառնում է ժողովուրդների հոգեւոր եւ քաղաքական մահը: Արդարացիօրէն կը դատապարտենք օտարախօսներին, քանզի «նրանց հոգիները կը նմանին պղնձի, որից հրեան գատել է արծաթը:

Կ'ընդունինք, թէ լեզուն միակ ոսկէ կամուրջն է, որ ձգուած կը մնայ անցեալի եւ ներկայի միջեւ:

Պարզ է այդ ամէնը, ֆիզիքական ցաւ պատճառելու աստիճան, բայց եւ այնպէս չգիտենք, չենք ուզում իմաստնօրէն օգտուել մայրենի լեզուից: Թէեւ յաճախ կը խոստովանինք, որ եթէ հայութիւնը ինքզինքը չկրօ՛ճէր դարերով՝ բարբարոսների սուրը անկարող պիտի լինէր մաշելու մեր ազգի մարմինը: Բայց եւ այնպէս ոչինչ կը խնայենք հայութիւնը պահելու ներքուստ պառակտուած վիճակի մէջ՝ պատրաստի որս գիշատիչ հարեւանների համար:

Կարծէք ճակատագիրը լեզուների խառնակութեան նոր պատիժ է տւել մեզ՝ իրար չհասկանալ:

Զարհուրելի է օրուայ հայ խօսքը.-

«Անոնց բերանը բաց գերեզման է»:

Ներքին ստեղծագործ համերաշխութիւն

Երբ հանրային գործիչների փոխյարաբերութիւնները կը պաղին, ժողովուրդն առնուազն կ'անբարոյականանայ:

Պատմական իրողութիւն է, որ հայ ժողովուրդը դարերի իր քաղաքական տնանկութիւնը կը պարտի անելի իր պետական կամ ազգային գործիչների փոխյարաբերութեանց այլանդակութեան, քան երկրի աշխարհագրական դիրքին եւ արտաքին թշնամիների նուաճողական ախորժակներին: Այլ պիտի լինէր հայութեան ճակատագիրը, եթէ նրա ղեկավարները՝ ներքին իրերակերութեամբ զբաղուելու փոխարէն, կռիւ յայտարարած լինէին իրենց թերութիւնների դէմ:

* * *

Ոչինչ այնքան կրթիչ, ազնուացուցիչ է անհատի եւ զանգուածների համար որքան ղեկավարների յարաբերութեանց վեհութիւնը: Իսկ գործիչները, որոնց յարաբերութիւնների մէջ տեղ չունի ազնուութիւնը՝ լռելեայն կը նուիրագործեն եւ կը խրախուսեն իրենց շուրջը կատարուող բոլոր տեսակի վատութիւնները:

Երբ մի ժողովրդի գործիչները եսապաշտ են, անհաշտ, ոչընկերական, այլեւս կարիք չկայ անելի մեծ դժբախտութիւններ ցանկանալու նրան:

Եւ միշտ էլ ժողովուրդն է, որ կը քաւէ իր ղեկավարների մեղքը:

Հայութիւնը դարեր տեսող ստրկութեամբ, անպատում տառապանքով ու անհաշիւ զոհերով է քաւել եւ դեռ կը քաւէ իր անհամերաշխ գործիչների փոխյարաբերութեանց այլանդակութիւնը:

* * *

Մեր ժողովրդի համար անեօք է եւ իր օրուայ գործիչների յարաբերութիւնները, որ խունկ չեն հոտիր:

Շա՞տ են հայ մարդիկ, որոնք բարոյական արիութիւն ունենան՝ հաճոյքով խօսելու իրենց հակառակորդների եւ նրանց յաջողութիւնների մասին:

Ես մի գերեզման գիտեմ Սիւնեաց աշխարհում, որի վրայ տասնութերորդ դարի հայ ձեռքը խորհրդանշօրէն յաւերժացրել է մեր ժողովրդի եւ իր անձնուէր պաշտպանների գոյութեան ողբերգութիւնը: Գերեզմանաքարերի վրայ քանդակուած աղուէտը խեղդում է առիւծին: Դա ասել է՝ խորամանկութիւնը սպանում է քաջութիւնը,

խորամանկը յաղթում է քաջին: Առաջինը՝ Մելիք Ֆրանգիլին է, ծանօթ դաւաճանը, երկրորդը՝ Թորոս իշխանը՝ քաջ հայրենապաշտը:

Ի՞նչ, ընթերցող, դժուա՞ր է եւ այսօր մեր կեանքում տեսնել, թէ ինչպէս յաճախ աղուէրը «խեղդում է» առիւծին: Ինչպէ՞ս, աղուէրը յաղթակա՞ն է առիւծը պարտաւ՞ժ...:

Ահա՛ թէ ինչու մղում են ասելու, թէ ապագան բազում խաչեր ունի պահած ցեղի համար:

Կեանքի օրէնքը

Անկախ թափածո՞ ճիգերէն դու չպիտի հասնես նպատակիդ, եթէ սխալ է ընտրածո՞ ճամբան, եթէ ճամբան, որով կ'առաջանաս, չի տանիր դէպի նպատակ:

Հերիք չէ նպատակ դնել միայն, պէտք է իմաստութեամբ նաեւ ընտրել կարողանալ դէպի նպատակը տանող ճամբան: Որքան բնական ու հեշտ է այս կամ այն նպատակի ընտրութիւնը, այնքան դժուար է այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ միջոցների անսխալ ընտրութիւնը:

Ժողովուրդներ ու անհատներ կան, որոնք Մետերլինկեան կոյրերի¹ պէս մոլորուած տգիտութեան անտառում՝ կը շարունակեն խարխափել մթութեան եւ անստուգութեան մէջ, մոլար ճամբաների վրայ:

Մոլորանք ու խարխափում,- ահա՛ թէ երբ է ծնունդ առնում տառապանքը եւ հսկայական սեւ թռչունի պէս իր ցուրտ թելերը տարածում իրենց նպատակի ճամբին մոլորուած, ճամբից դուրս ընկած, ճամբան կորցրածների հոգու վրայ:

Այո՛, *ժողովուրդները տառապել են եւ կը տառապեն իրենց առաջնորդների անիմաստութեան եւ հոգեւոր անզօրութեան երեսից*: Իսկ իմաստուն չեն այն բոլորը՝ ժողովուրդ թէ անհատ, որոնք չզհիտեն թէ ի՞նչ է եւ ինչո՞ւն է կայանում կեանքի օրէնքը:

Դա բնութեան մեծ եւ անողոք օրէնքն է, անփոփոխ օրէնքը անհատի եւ ցեղերի զարգացման, որի նպատակն է՝ թոյլ չտալ ցեղերին կանգ առնելու, քարանալու մի որոշ կէտի վրայ, այլ երթալու առաջ մինչեւ որ պայքարողները կը հասնեն մարդկային

¹ Հեղինակը նկատի ունի բելգիացի աշխարհահռչակ գրող Մորիս Մետերլինկի «Կույրերը» պիեսի հերոսներին:

իդէալ վիճակի, երբ պատերազմը սպանած կը լինի պատերազմը, երբ կը դադարի պայքարը, տեղի տալով կատարելագործուած եւ հաւասարապէս յարգուած ժողովուրդների եղբայրութեան առջեւ:

Եղի՛ր այնպէս, որ արհամարհելու փոխարէն կարողանամ յարգել քեզ,- այս իմաստով պէտք է թարգմանել յարձակուողի հոգեբանութիւնը:

Անվերջ ինքնակատարելագործում

Դժբախտ է այն ժողովուրդը, որի ղեկավարները չեն ճգնում լրացնելու բնութեան թերին, չեն աշխատում կատարելագործել իրենց հոգեւոր էութիւնը:

Աւելի քան դժբախտ է նա, երբ իր ղեկավարները չեն տառապում իրենց անկատարելութեան գիտակցութիւնից: Անձնական անկատարելութեան գիտակցութիւնը երկունքն է վաղուայ կատարելալ ղեկավարի:

Ով չի կարող իր կրքերը ենթարկել կամ ծառայեցնել իր կամքին, իր բանականութեան, չի կարող նաեւ արդիւնաւոր կերպով ծառայել իր ազգին:

Սէր, յարգանք, պաշտամունք պարտադրել՝ կը նշանակէ իշխանութիւն ունենալ հոգիների վրայ:

Երբ կը սիրենք, կը յարգենք, կը պաշտենք, կը նշանակէ կը ճանաչենք ուրիշի իշխանութիւնը եւ որոշ բարոյական տուրք կը տանք նրան:

Այլ խօսքով՝ ուրիշների մէջ մենք սիրում ենք այն, ինչ որ որոշ չափով կայ եւ մեր մէջ: Դայրենասէրը ջերմ սէր ունի դէպի հայրենապաշտը: Արին սիրում է արիութիւնը անգամ իր հակառակորդի մէջ: Մենք սիրում ենք մեր նմանին եւ առնուազը անտարբեր ենք դէպի այն բոլորը, որոնք հոգեբանօրէն օտար են մեզ:

Դու՝ հայրենաճուրդ՝ հոգով խորթ ես այն բոլորին, որոնք հայրենիք սիրելու, նրան գինուորելու քաղցրութիւնը չեն ունեցել որոշ չափով՝ եւ թշնամի այն բոլորին, որոնք չեն ճանաչում քո աստուածները:

Սէկը քո անձի մէջ տեսնում է մի բան իր հոգուց, իրենն է համարում քո յաջողութիւնները եւ լիուլի բերում իր պաշտամունքի տուրքը: Մի ուրիշը, քո մէջ չի տեսնում մի բան իրենից եւ դրա

համար էլ չի հանդուրժում քո հոգեւոր լուծը, դրա համար էլ զլանում է իր հոգեւոր տուրքը:

Ահա՛ թէ ո՞ւր է շրջապատիդ որոշ տարրերի անտարբերութեան, երբեմն էլ թշնամանքի գաղտնիքը:

* * *

Բարձր չես թշնամիներհցոյ, եթէ վախենում ես նրանց չարախօսութիւններից: Մաքուր խղճի չափ ուժեղ չէ եւ ոչ մի վահան:

Իր խղճի պաշտպանութիւնը վայելողը կարիք չի ունենայ ուրիշների պաշտպանութեան:

Գիտցիր ներել: Մեծ իմաստութիւն է դա: Ներել բոլորին, բոլորին, միայն ոչ քեզ, միայն ոչ քո թերութիւնները:

Ներիր ապացուցանելու համար գերազանցութիւնդ անձնական հակառակորդներիդ նկատմամբ:

Չափազանց ծանր բեռ է յիշաչարութիւնը, դուն ներիր եւ անցիր: Ներիր, քանզի յանցանքներ կան, որոնց մեծագոյն պատիժը ներումն է:

Եւ եթէ մի օր քեզ հարցրին, թէ ի՞նչ է ներումը՝ պատասխանիր ծանօթ հէքեաթի կոյր աղջկայ խօսքերով՝ «Դա անուշահոտութիւնն է, որ արձակում է մեզ համար ծաղիկը, երբ տրորում ենք այն»:

* * *

Անվերջ ինքնակատարելագործում,- ահա՛ թէ ինչ պէտք է լինի հանրային գործիչի կեանքը: Նա պէտք է նախ մշակէ իրեն համար մտապատկերը կատարեալ առաջնորդի եւ ապա նրա հետ ամէն օր բաղդատութեան դնէ իր անձը:

Քաղաքական գերագոյն իմաստութիւնը

Ժամանակն իր լեզուն ունի, որը միայն մեր ժողովուրդը չէ հասկանում:

«Ես ե՛ւ չար եմ, ե՛ւ բարի», - ասում է հինը փոխարինելու փութացող նոր ժամը, օրը, տարին:

«Ես յաղթութիւն եւ սպեղանի եմ բերում նրանց, որոնք կը հասկանան իմ լռութիւնը, կը մեկնեն իմ գաղտնիքները: Ընդհակառակը, նոր պարտութիւն ու վերքեր ունեն պահած նրանց համար,

որոնք չեն հասկանայ ինձ, որոնք կը լքեն պայքարի դաշտը, որոնք չեն պատրաստուի նոր ճակատամարտների համար»:

«Այնպիսի ձեռով մը կնքուած է Լօզանի դաշնագիրը, որ իբր թէ հայերը գոյութիւն չունենային», - ասում է Զ.Յ. Պատուիրակութիւնը Ազգերի Դաշնակցութեան ուղղած իր մի գրութեան մէջ:

Այո՛, «ընդունելի չէ - ասենք Կրաֆտ Բոնարի հետ – որ գրչի մէկ հարուածով ժողովուրդ մը ջնջուի»:

Ո՞րն է այն բառը, որով կարելի լինէր որակել այն հարուածը, ինչ որ հասցրին մեր ցեղին:

Վիրաւորա՞նք, անարգա՞նք, նւաստութի՞ւն: Մաշուած խօսքեր, որոնք ճշմարիտ հայ հոգու ամօթանքի եւ դառնութեան մի հարիւրերորդ մասն իսկ չպիտի կարողանան արտայայտել:

Արեւի տակ դեռ չէր տեսնուել, որ մէկը կարողանայ խրոխտաւ.- «Ես չեմ ուզում, որ այս ինչ ազգի նոյնիսկ անունը յիշատակէք». մէկը, որ այս ձեռով արտայայտէր իր կամքը եւ դա պարտադրել տար ողջ աշխարհին: Բայց գտնուեց այդ մէկը՝ երէկուայ այնքան ոտնահարուած ու նուաստ թրքութիւնը:

Նա սպանեց մեր ժողովուրդը եւ թողեց, որ ապրի:

Եւ մի օր Զ.Յ. Պատուիրակութիւնը, Ազգերի Դաշնակցութեան ուղղած իր գրութեան մէջ աւելացրեց հետեւեալը.

«Լօզանի դաշնագիրը դատելու գործը պատմութեան կը թողնենք»:

Վա՛յ հայութեան, եթէ մեր սերունդը չընդունէ, թէ իրեն է ձգուած սրբելու Լօզանի արատը:

Վա՛յ նրա ապագային, եթէ մեր սերունդը չկարողացաւ վաղն ասել թրքութեան - «Յնչե՛ց դատաստանի ժամը»:

* * *

Մեղաւոր է մարդկութիւնը մեր հանդէպ, սակայն, անմեղ չենք եւ մենք: Մերն է մեղքի մեծ բաժինը, քանզի մեր ձեռքն է բանալին այն բոլոր դրութիւնների, որոնց մէջ կ'ուզէինք եւ կարող էինք լինել, քանզի մենք ենք մեր ճակատագրի ճարտարապետը:

Օտա՞րն է մեղաւոր մեր տոհմիկ թրքութիւնների համար, որոնք միշտ էլ դիւրացրել են թշնամու գործը:

Օտա՞րն է մեղաւոր, որ հայն իր ձեռքով իր գլխին փլցրեց իր թագաւորութիւնը, որպէսզի այնուհետեւ նստէր ու վայէր իր անկախութեան փլատակների վրայ:

Օտա՞րն է մեղաւոր, որ դեռ երեկ Կարսի պատերի տակ հայ զօրավարն ու զինուորը պատուաւոր ու յաղթական մահէն թրքական անարգ գերութիւնը գերադասեցին:

Օտա՞րն է մեղաւոր, որ դեռ այսօր էլ պատերազմի գործին ծառայող գիտութիւնների մէջ մեր սերունդն էլ դեռ ճանաչում է մշակոյթի միայն կանացի կողմը:

* * *

Ամենէն զարհուրելիւն պարտութիւնը չէ, այլ պարտուողականութիւնը, որով բռնուած ժողովուրդը լրացնում է, կատարեալ դարձնում իր թշնամու յաղթանակը:

Չասկանանք այդ: Ժողովուրդները վերջանականապէս չեն պարտուում, չեն մեռնում իրենց երկրամասի կէսն իսկ կորցնելով: Էականը եւ աղէտալիւն մեզ համար Կարսի կորուստը չէ, այլ պարտուողականութիւնը – մայրը նորանոր պարտութիւնների, որի գիրկը Կարսի գրաւումով մեզ նետեց թշնամին:

Պարտուողականութիւնը արձագանգն է թշնամու յաղթանակի ու սարսափի, որ շարունակում է ապրել պարտեալի հոգում, անվերջ տրորելով եւ ուժաթափելով այդ վերջինը:

Պարտուողականութիւնը հոգեւոր հիւժախտ է, ինքն իրեն կրծելու խելագարութիւն, ինքնանուաստացումի ցաւ՝ աստիճանական անձնասպանութիւն:

Այդ զարհուրելի ախտով տառապող ժողովրդի մէջ իր ամենալաւ ոյժերը մնում են թմրած վիճակում, եթէ չմեռան:

Թուրքը գիտէ, իսկ մենք չենք ուզում հասկանալ, որ ցաւի ամէն մի արտայայտութիւն, հառաչանքի ամէն մի պոռթկում, արցունքի ամէն մի կաթիլ ուժաթափում է մեր ցեղի ֆիզիքական եւ հոգեւոր կազմուածքը՝ տկարացնելով մարդն ու մարտիկը հայու մէջ:

Թուրքն ուզում է, իսկ հայ պարտուողականը աշխատում, որ խորտակուի մեր ցեղի եւ բարոյական ողնաշարը, որ մեր պարտութիւնը լինի վերջնական:

Նայում ենք բաց աչքով, բայց չենք տեսնում, թէ ի՞նչ է դառնում մեր շուրջը: Պարտուած ենք ու պարտուողական,- եւ ահա՛ ազգերը սկսել են արհամարհանքի աչքով դիտել մեզ: Նրանք սկսել են աւելի թերութիւններ տեսնել մեր ժողովրդի վրայ, քան որ ունի նա: Նրանք փորձում են մեր ուսին բռնցնել համբաւներէն վատթարագոյնը:

Այսօր մեռեալ սիրոյ աչքով են դիտում մեզ եւ մեր օտարազգի սակաւաթիւ բարեկամները: Նրանք – հինք ունին այսպէս մտածելու – մի օր պիտի լքեն հայ դատը, եթէ հայութիւնը չկարողանայ արդարացնել նրանց բարեկամութիւնը:

- Թուրքն սկսել է իր սեփական թելերով թռչելու փորձեր կատարել, իսկ դո՞ւք,- վերջերս ասում էր ինձ մի օտարազգի հայասէր,- դուք պիտի կարողանա՞ք յաղթական վստահութեամբ ասել նրան՝ «թէկուզ արծուի պէս բարձրանաս եւ քո բոյնդ աստղերուն մէջ դնես, քեզ անկէ պիտի իջեցնեն»:

- Այո՛,- եղաւ իմ պատասխանը:

- Երաշխի՞քը:

- Տեղային բարոյականը, որով այսուհետեւ ապրելու եւ առաջնորդուելու ուխտն ունի *նոր հայր*:

Եղի՛ր ահաբեկիչ

Վա՛յ այն երկրին, որի որդիները պայքարի են մտնում հայրենից թողնւած զէնքերով: Պարտութիւնն է նրանց բաժինը:

Ապրում ենք Արեւելքում, շրջապատուած հայակեր բարբարոսներով, որոնց աւերիչ թելն ու թափը տկարացնելու համար, նրանց վառ երեւակայութիւնը ահաբեկել պէտք է կարողանանք:

Ի՞նչ է այդ ահաբեկիչ ուժը:

Սարսափը՝ զէնքերից մեծագոյնը, որ մեր ձեռքը պէտք է տայ նորագոյն գիտութիւնը:

Ի՞նչ կը լինէր, եթէ մեր ժողովուրդն իր ինքնապաշտպանութեան գործին լծած լինէր գիտութիւնը, եթէ հարիւր հայ մտաւորականներից մէկը լինէր հրարուեստագէտ կամ զինուորական քիմիագործ:

Մեր ազատագրական պայքարը մեզմից խլած պիտի լինէր հարիւր անգամ պակաս զոհեր եւ մեր պատմութեան վերջին էջերը կը լինէին նուազ չափով ամօթալի եւ սել:

Թրքութիւնը մեծ եւ անպարտելի է թւում հային, որովհետեւ հայ մարդը զոհ է ստրկական վախի: Սակայն, թող հայը փորձի ոտքի կանգնել, թող ճգնի իր հայրենապաշտութեան միացնել զինուորական հրարուեստագիտութեան եւ քիմիայի ահաւոր ոյժը, այն ժամանակ ահաբեկուած հայը կը դառնայ ահաբեկիչ:

Եղի՛ր ահաբեկիչ, - ահա՛ մի ուրիշը ցեղային բարոյականի պահանջներից:

Նոր գեներ

Թրքութիւնը պատժելու մի հատիկ միջոց գիտեմ ես՝ նրան, հակառակ իր կամքին, դարձնել մեր փրկիչը: Այդ միջոցը ուրիշ բան չէ, բայց եթէ գերազանցել նրան ռազմարուեստագիտաբար եւ հոգեբանօրէն: Այսպիսով մենք ապահոված կը լինենք երկու բան,- առաջինը՝ մեր փրկութիւնը, երկրորդը՝ թրքութեան պատիժը:

Այո՛, ա՛յս ճամբով, այլապէս պիտի շարունակենք մեզ մահ սպառնացող թշնամու ոտքն ու ձեռքը սարդոստայնով կաշկանդելու միամիտ փորձեր կատարել:

Կայ գլխովին կորչելու վտանգը եւ հայութիւնը հրամայողաբար պէտք է դառնայ ինքնապաշտպանունակ: Իսկ դրա համար նա խորապէս պէտք է գիտակցի, թէ անբարոյականութիւն է չձգտել տիրանալու գիտութիւններին, երբ ե՛ւ սուր կարիք, ե՛ւ հնարաւորութիւն կայ:

Իսկ դրա համար պէտք է դադարել պատերազմի գործին ծառայող արուեստներից օգտուելուց այնպէս, ինչպէս կոյրը լոյսից է օգտուում:

«Բնութիւնը շանթեր է արձակում մարդու անպաշտպան տնակի դէմ,- եւ մարդը հնարեց շանթարգելը»:

Թրքութիւնը մահուամբ է սպառնում մեր ցեղի մնացորդին, եւ հայութիւնը ցեղային բարոյականից հրահրուած, պէտք է հնարէ իր «շանթարգելը», պէտք է զինուի պատերազմական քիմիայի եւ հրարուեստագիտութեան ահաւոր ոյժերով:

Այլապէս, հայ ժողովուրդը մահուան է դատապարտուած:

* * *

Քիմիական լիակատար սպառազինութիւն,- ահա՛ ազգերի օրուայ կարգախօսը:

Քիմիական ներգործօն պաշտպանողական,- ահա՛ թէ ինչի կարիքը վաղը պիտի զգայ Յայաստանը, եւ ինչը, որպէս գիտութիւն եւ արուեստ պէտք է իւրացնի մեր սերունդը:

Վաղը պիտի յաղթի քիմիագիտական եւ ոչ թէ թուական գերազանցութիւն ունեցողը:

Ասել է՝ հայութեան կը մնայ ապացուցել, որ ինքը որպէս իմացականութիւն աւելի զօրաւոր է քան իր թշնամին:

VIII ՆՈՐ ՀԱՅՑ

Կայ արտաքին վտանգը՝ յիշի՛ր պատերազմը. կայ եւ այդ վտանգը զինաթափել կարողանալու, այդ վտանգին յաջողութեամբ դիմագրաւ լինելու խնդիրը. կայ ուրեմն կարող եւ իմաստուն առաջնորդի եւ առաջնորդութեան պահանջը:

Ամէն մի ժողովրդի մէջ կայ առի՛ծը նիրհած վիճակում՝ ցեղի ոյժը:

Կարող առաջնորդը նա է, որ գիտէ արտաքին վտանգի ժամանակ իր ժողովրդի մէջ արթնցնել այդ առի՛ծը:

Եթէ ժողովուրդները, մասնաւորապէս մեծ վտանգների ժամանակ կը սպասեն մի հրաշագործ փրկչի՝ ապա իմաստուն ժողովրդավարը, զանգուածների հոգեբանութեան ծանօթ առաջնորդը միշտ էլ հաշուի կ'առնէ ժողովրդի խորհրդապաշտութիւնը եւ ըստ այնմ կը կազմակերպէ նրա փրկութեան գործը:

Ուժեղ իմացականութիւն, մեծ եւ բուրրանուէր ծառայութիւն,- ահա՛ իրական առաջնորդը: Նրա ներկայութիւնը ազնուացնում է հոգիները, թեւաւորում, գօտեպնդում: Նրա շնորհիւ անկարելի համարուածը դառնում է դժուարին միայն, դժուարինը՝ կարելի: Շքեղ երազները դառնում են նպատակ եւ երջանիկ իրականութիւն:

Պիտի գայ, դեռ պիտի յայտնուի նոր հայը որպէս ազգային ղեկավար՝ զինուորականի, պետական մարդու եւ մշակութային գործիչի դերերում: Նա կը գայ, կը յայտնուի *նոր էութեամբ*, զերծ հին թխմորէն, ազատ դարեւոր ստրկութեան ախտերէն՝ որպէս ցեղային նոր բարոյականի մարդ:

Անձնական երջանկութեան վարդապետութիւնը,- ահա՛ թշնամին մեր ցեղի հաւաքական երջանկութեան:

Այդ կարգախօսով նոր հայը ձեռնոց կը նետէ մեր ցեղը մաշող հին բարոյագուրկ հասկացողութիւններին:

Ազգերի մէջ միայն ճապոնացին է ասել. «Եթէ խորապէս գիտակցենք, որ սերը դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը աւելի մօտ է կանգնած մեծ ու գեղեցիկ արեւին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամանակ մահը մեզ համար թռչունի փետուրից էլ թեթել կը թուայ»:

Այսպես պետք է լինի վաղուայ հայրը, այսպիսի բարոյականով առաջնորդուող հայութիւնը միայն կարող է ապահովել հայ ազգի տեղն արեւի տակ:

*«Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1930թ.,
մայիս, յունիս, թիւ 5472-5478, 5480-5501*

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՅՈՎՅԱՆՆԵՍ ՅՈՎՅԱՆՆԵՍՅԱՆԻՆ

1.

29 սեպտեմբերի 1933թ.

Սիրելիս Յովհաննէս,

Քաջայոյս եմ, որ լաւ ես, եւ որ լաւ եմ տղաները:

Ցեղակրօնութեան նուաճումներին հետեւում ես, անշուշտ: Այդ շարժումը ապրեցնելու եւ զայն համագաղութայնացնելու համար արժէ ոչ թէ ապրել եւ գործել, այլ եւ մեռնել: Շատ ուրախացայ՝ կարդալով դասախօսութեանդ մասին:

Աշխատիր մօտենալ Ասատուրին¹ եւ Մալխասին²: Արմենակը³ խոստացած է գրել «Յառաջ»-ին Ցեղակրօն շարժման մասին, գրե՞ց, թէ ոչ՝ թող գրէ:

Բարեւիր տղաներին:

Համբուրելով քեզ՝ քոյդ **Նժդէհ**

1933, 29 սեպտ.

Ն-Ֆնո

2.

[1933թ.]

Սիրելի Օհաննէս,

Ամսիս 13-ին կլինեմ Բոստոն:

Եւ կմնամ մինչեւ ուրբաթ գիշեր: Չգիտեմ թէ [Յ.Յ.Դ.] կ[ենտրոն-ական] կոմիտէն այդ երկու երեկոներէն ո՞րն է ընտրել - հինգշաբթի թէ ուրբաթ: Ստուգէք ու նշանակէք Ուստրիինը:

Համբոյրներով՝ քոյդ **Նժդէհ**

¹ ԱՄՆ-ում Ցեղակրօն Ուխտերի Կենտրոնական վարչութեան առաջին ատենապետ Ասատուր (Արթուր) Կիրակոսյան:

² Արտաշես Յովսէփյան (1877-1962) - գրող, հասարակական գործիչ:

³ ԱՄՆ-ում Ցեղակրօն շարժման գործիչ, 1932-1936թթ. Ալիստոնուս հրատարակվող «Արփի» հանդէսի խմբագիր Արմենակ Բարսեղյան:

P. S. Օհաննես, մեր Գաբրիելին ըստ, որ կուզեն հետս տանիլ մի ջեղակրօնական դրօշակ՝ նման Ուոտրթաունի դրօշակին:

Այդ, խնդրե՛ իմ կողմից, որ ընկեր ուսանողին պատրաստել տայ մի հատ մինչեւ գալս:

Նոյնը:

3.

5 յունւար 1935թ.
Սօֆիա

Իմ սիրելի, բայց Հոյլ Օհաննես,

Ընկալեալ սովորութեամբ նախ ասեմ՝ Շնորհաւոր Նոր Տարի:

Այդ առթիւ իմ հազար բարեմաղթանքների հետ հազար եւ մէկ նորագիր Ցեղակրօններ Ձե՛զ: Շնորհաւորելով Մարիամին, համբուրում եմ երեխաներին:

Լսի՛ր այժմ եւ լրջօրէ՛ն լսիր: Գիտես, անշուշտ, որ ռամկավար կոչւած տականքը փորձեց գաղթահայ դպրոցներին պարտադրել Պօլսի «Բարի լոյս» դասագիրքը, որ թրքականութիւն կհոտի: Այդ «դասագրք»ի մէջ - աւելի ճիշտը թրքագրքի մէջ - ասւած է՝ «Թուրքիան է իմ հայրենիքը», «Քենալն է իմ մեծ հայրը», թրքական դրօշակն է... եւ այլն...

Հակաազգայնական տականքի այդ թրքասիրական արարքը մնաց չպատժւած բարոյապէս: Հիւանդանալու աստիճան զայրացած եմ: Կամ մեր հայրենասիրական ջղերն էլ բթացել են կամ չգիտենք պրոպագանդ անել: Օհաննէ՛ս, հակաազգայնականների այդ արարքէն չ'օգուտելը - ոճիր է ե՛ւ մեր կուսակցութեան, ե՛ւ մեր դատի, ե՛ւ մեր դրօշակի դէմ: Ձայրոյթի, կատաղութեան ու զգւանքի մի մեծ ալիք պիտի բարձրացնել Ամերիկահայ գաղութի մի ծայրէն մինչեւ միւսը: Դա պիտի դարձնել հակաթուրք պրօպագանդի զէնք: Պէտք է մասնաւոր օր հռչակել՝ «Պայքար թրքասիրական ախտի դէմ» նշանախօսքով: Այդ պրոպագանդին պէտք է լծել մեր բոլոր ուխտերը: Ցեղակրօնին պէտք է շիկացնել թրքատեցութեամբ: Այդ պրոպագանդի մէջ իր զգւելի մերկութեամբ կ'երեւայ եւ հակադաշնակցական տականքը: Weekly-ի¹ մի համարը յատկացրէք այդ «հակաթուրք

¹ ԱՄՆ-ի Ցեղակրօն Ուխտերի «Հայրենիք» անգլերեն շաբաթաթերթ, հրատարակվում էր 1934թ. մարտից:

պրոպագանդի» օրւան: Այդ «օր»ը կ'արդիւնաւորէ եւ «Տեղակրօնների օր»ը¹: Նամակս կարդա ընկ[եր] Տեստեկիւլիմ²: Թող Կ[արմիր] Խաչի կ[ենտրոնական] վարչութիւնը մասնաւոր շրջաբերականով լուսաբանէ իր մասնաճիւղերը եւ դպրոցներ կազմակերպել տայ արծիկների համար:

Երկու ամիս յետոյ կվայելէք Էջմիածնի պատւիրակը³: Նրա խօսքը քաղցր թոյն է: Խորհրդային իշխանութիւնը սատանայի իր գործը կատարում է «սուրբի» միջոցաւ: Նա եկած է մի նոր հակադաշնակցական կազմակերպութիւն առաջացնելու մեր գաղութներում - «Էջմիածնի լումա» անւան տակ: ԴՕԿը⁴ քաղաքականապէս վարկաբեկւած է, նրանից, Ամերիկայէն դուրս, չի կարելի օգտուել: «Էջմիածնի լումա»ն աւելի թանձր դիմակ է - բոլոր վտանգւած տականքները կ'երթան թափւելու այդ նոր Արշակաւանը:

Պարզ է, խորհրդ[ային] իշխանութիւնը Էջմիածինը պահում է նրանից օգտուելու համար, եւ միայն նա է օգտւում, եւ օգտւում է մեծապէս: Նա դիտմամբ է ուշանում, որ մեր 9 անմեղների⁵ վերաքննութեան խնդիրը այս կամ այն ձեւով կարգադրի: Էջմիածինն ուրախ է, որ մեր 9 անմեղ ընկերները խստագոյնս պատժւած են: Եթէ Կոպերնիկը⁶ հող է, «համբուրէ իմ կողմից»: Նամակս կարդա իրեն: Իրեն գրել են բժ. Քէշիշեանի հասցեով: Գրել են եւ Արմենակին՝ Կոստանեանի հասցեով: Լուռ է Արմենակը:

Մոռացա՞ք ինձ, աւելի՛ լաւ: Մոռացէք, միայն թէ աշխատէք, որովհետեւ թշնամին աշխատում է:

Բոլորիդ բարեւում է Թափառականը⁷, որ այժմ նստած է մօտս: Կաղը մեկնում են շրջաններ:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

¹ Տեղակրօնների օրը նշվում է հունվարի 14-ին:

² ԱՄՆ-ի Հայ կարմիր խաչի Կենտրոնական վարչության քարտուղարուհի Սիրանուշ Տեստեկյան:

³ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանց - 1934թ. որպէս Սփյուռքում Հայրապետական լիազոր պատվիրակ մեկնել էր արտասահման:

⁴ Հայաստանի օգնության կոմիտե - ստեղծվել էր 1921թ. Սփյուռքի օգնությունը Հայաստանի վերաշինությանը կազմակերպելու համար:

⁵ 1933թ. դեկտեմբերի 24-ին Նյու Յորքի Սբ. Խաչ եկեղեցում ԱՄՆ-ի Հայոց առաջնորդ Ղևոնդ արքեպս. Դուրյանի սպանության մասնակիցները:

⁶ Հ.Յ.Դ. հայտնի գործիչ Կոպերնիկ Թանդրճյան:

⁷ Թափառական - Գևորգ Հալաճյան:

Սիրելիս Օհաննէս,

Ստացայ անթուակիր նամակդ: Անթուակիր, այդ լաւ է: Երջանիկները ոչ թէ միայն ժամացոյց չեն սիրում, այլ եւ՝ օրացոյցը: Անթուակիր նամակների հեղինակները յաճախ ենթագիտակցօրէն մատնում են իրենց երջանկութիւնը: Ի՞նչու գիտնալ, թէ ո՞ր օրն է, ո՞ր ժամը, երբ երջանիկ են նրանք: Սկսել ես ժամանակից դուրս ապրել - այդ լաւ է, լաւ նշան է: Կուզէի, որ յետ այսու բոլոր նամակների անթուակիր լինէին: Այս փոքրիկ նախաբանից յետոյ անցնիմ քիչ հետաքրքրող մէկ-երկու խնդիրների: Սիրելիս, չեմ գարմանում, որ Իփէկեանը¹ տկարացաւ՝ մարդկօրէն, դաշնակցականօրէն, բաւական չէ, որ մէկը իր գլխի մէջ այբուբեն, ուսմունք, տեսութիւն ունենայ՝ ժողովուրդը իր հոգեւոր խորքի մէջ ցնցել, շարժել կարողանալու համար: Չեմ ասում, թէ Իփէկեանը տկար մարդ է - չեմ ճանաչում նրան - պնդում եր, սակայն, որ ժողովրդավար-ղեկավար լինելու համար նախ պէտք է լինել խոր, անկեղծ, հոգեփոխիչ ապրումի մարդ: Այդ էլ բաւական չէ: Պէտք է լինել նաեւ՝ նոր գաղափարի, նոր ապրումի, նոր, վերակառուցուող աշխարհի մարդ: Սրա շրթունքներին դիր զօրաւոր խօսքը, որէն հոգեւոր արիւն կաթեր: Այդ յատկութիւններին աւելացուր ամենէն անհրաժեշտը՝ արիութիւնը - շրջապատի մտաւոր ծուլութիւնը, հոգեւոր մանրութիւնը, կեղծիքը, տգիտանքը, չկամութիւնը, նախանձը առաքելաբար կոխելու եւ անցնելու քաջութիւնը, եւ կստացուի ժողովրդի մարդը, ղեկավարը:

Հասարակական գիտութիւններին անծանօթ ողորմելին միայն կարող է իր անյաջողութիւնները արդարացնել իր նախորդի ժողովրդականութեամբ: Ես չեկայ Ամերիկա ժողովրդականութիւն փնտռելու, այլ աշխատելու մեր ցեղի հոգու անսպառ հանքերում: Ամերիկան ոչինչ աւելացուց այն բանին, որ ես ստացած եմ Հայաստանէն, Լեռնահայաստանէն: Ամերիկան կռադաշտ չէ, որ նոր բան տար ինձ: Ամերիկայում ինձ յաջողւեց - հակառակ շատերի չկամութեան - ոտքի հանել հայոց ցեղը, ցեղայնութիւնը նորահաս սերունդի մէջ: Իսկ ինձ յաջողւեց, որովհետեւ ես Ամերիկա եկայ որոշ առաքելութեամբ, որովհետեւ ես ունէի իմ որոշ ճամբան, ես գիտէի իմ

¹ Գասպար Իփէկյան:

գործը, իմ անելիքը: Ես չեկայ հրահանգելու եւ հրահանգներ կատարելու, ես եկայ հրահանգելու, ղեկավարելու:

Այդ անարժան դերի համար լեգիօն դերակատարներ կարելի է գտնել մեր կեանքում: Շշմարիտ ղեկավարներ են պակասում: Ժամանակները մեծ են, գործիչները՝ փոքրիկ - ահա՛ պատճառը օրւայ մեր դժբախտութեան: Ի՞նչ խօսք, որ կարելի է վատ գործիչ լինել, բայց՝ անկեղծ մարդ: Ցաւում եմ, որ Իփէկեանը իր անկեղծութիւնն էլ կասկածի տակ է դրել՝ իր նախորդի չփնտռուած ժողովրդականութեան քար նետելով:

Փարիզաբնակը¹ շարունակում է իր դաւերը Ցեղակրօնութեան դէմ, եւ մեր շրջանի դէմ: Այդ մարդը վերջերս իր փարիզեան մի ճառի մէջ ասել է՝ «քաղաքականութեան մէջ երկու «ոչ» եւ մի «այո» պիտի ասել: Սա նոր ձեւի քաջազնունիականութիւն² է: Փարիզցին էլ է գտնում, որ Դաշնակցութիւնը անելիք չունի (քաղաքական անելիք): Տեսնու՞մ ես օրւայ իմաստութիւնը?! Դա քաղաքական զգուշաւորութիւն չէ, այլ ընկածութիւն, պարտաւորականութիւն: «Ձգոյշ պէտք է լինել», դա հոգեբանօրէն նշանակում է՝ պէտք է ձեռնածալ նստել, նստել երեկւայ պարսիկի եւ երկայնամազ չինացու նման: Ցեղակրօն՝ ասել է ջահել ոյժ, խռովքոտ ոյժ, պահանջկոտ ոյժ, որը չի հաշտւիր ան - Հայաստան կեանքի հետ, որը կարող է գործ պահանջել, արիւնի զոհաբերութիւն պահանջել - մի բան, որից սարսափում են այն բոլորը, որոնք վաղուց է թաղած յեղափոխական, մարտական, արիւնի Դաշնակցութիւնը, եւ սկսած են «կուլտուրականութիւն» քարոզել, ոտանաւոր գրելու սէր երգել: Ոչ թէ չեն հասկանար Ցեղակրօնութիւնը, այլ չեն սիրեր ցեղակրօնը, որովհետեւ այդ վերջինը Դաշնակցութիւնը կպաշտէ որպէս ուխտ, կրօն, ցեղի ոյժը, եւ ոչ թէ որպէս սովորական կուսակցութիւն: Ցեղակրօնութիւնից դուրս բոլոր ճամբաները տանում են դէպի հակադաշնակցականութիւն, դէպի հակադաշնակցական Հռոմ: Մոսկւան նոր լոզունգ է շարտել մեր գաղութները՝ ապակուսակցականացում (որ ասել է՝ մահ Դաշնակցութեան): Պէտք է ապակուսակցականացնել գաղութահայութիւնը - դա ասել է՝ պէտք է սպանել Դաշնակցութիւնը: Ապակուսակցական ախտը արմատ է նետել եւ մեր շարքերում:

¹ Ռուբեն Տեր-Մինասյան:

² «Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս» գրքի հեղինակ Հովհաննես Քաջազնունի:

«Կուլտուրական» դաշնակցականն էլ սկսել է հաշտել անՉայաստան կեանքի հետ: Օրւայ մեծագոյն վտանգն է դա, որի դէմ պէտք է պաշտպանել անենայն վճռականութեամբ: Դաշնակցութիւնը պիտի ապրի՝, օհ, պիտի ապրի որպէս մարտական Դաշնակցութիւն:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

5.

[1935թ.]

Սիրելիս Օհաննէս,

Ստացայ նամակդ: Շնորհակալութիւն տուածդ տեղեկութեանց համար: Խօսում ես Արսէնի¹ մասին - արժէ՞, ափսոս չէ թուղթն ու մելանը: Ուղեղը ջրակալած այդ ոչնչութիւնը ատելութեան իսկ արժանի չէ: Յանուն տղաների փրկութեան՝ անցեալ տարի չուզեցինք աղմուկ հանել: Դու դեռ չես մոռացել իր եւ Կոպերնիկի «Տկարութիւնը քրիստոնէական»:

[Ղ.Յ.Դ.] Կ[ենտրոնական] Կոմիտէ կազմի մասին ասելիք չունեն: Հոգեբանօրէն միատա՞րր էք: Լաւ ընկերներ կան այդ մարմինի մէջ, աշխատէք արտաքին ազդեցութիւններից զերծ պահել Կ[ենտ]կոմը: Փարիզաբնակ չարիքն աշխատում է: Այդ վատի քոսոտ «սօցիալիզմն» է դաւում Յեղակոսնութեան դէմ: Յեղակոսնութիւնը ճշմարիտ սօցիալիզմին դէմ չէ: Հայ վարժապետի հասկացած սօցիալիզմին – որը դժբախտ Հայաստանում մեր օրով դարձաւ բուլշեւիզմ - դէմ պիտի լինի ամէն մի դաշնակցական, եթէ քաղաքական սրիկայ չէ դա: Սօցիալիզմէն մինչեւ բուլշեւիզմը մի թիզ է, եւ ոչ աւելին: Բուլշեւիզմը - դա սօցիալիզմի հոգեւոր պիճն է: Մասնաւորապէս Ամերիկայում աչքը բացած մեր պատանիների եւ երիտասարդների համար չարիք է «սօցիալիզմը»: Սօցիալիզմը դասակարգային վարդապետութիւն է, դա միշտ էլ ենթադրում է դասակարգեր, դասակարգայնացած հասարակութիւն: Դա հարւածում է, կոտորակում, տկարացնում ազգը – ժողովուրդը: Իսկ Յեղակոսնութիւնը ձգտում է մի եւ անբաժանելի դարձնել ազգը: Թուրքէն զարնւած, կիսւած, թուրքին հարեւան լինել, եւ «սօցիալիզմից» բարբաջել, ասել է «իզացեալ» լինել, կենսաբանօրէն անբարոյական լինել, անհայրենասէր լինել: Սօցիալիստէն ամէն բան դուրս կուգայ, բայց ոչ մարտիկ, զինուոր: Մի ժողովուրդ,

¹ Արսէն Միքայէլյան - Երեւանում 1919թ. Հ.Յ.Դ. 9-րդ համագումարի մասնակից, 1940թ.՝ Արգենտինիայում «Արմենիա» թերթի խմբագիր:

որն իր փիլիսոփայութիւնը, աշխարհայեցողութիւնը, կրօնն անգամ չի յարմարեցնում իր ինքնապաշտպանութեան պահանջներին՝ անբարոյական է եւ անապագայ: Մի ժողովուրդ, որն իր զէնքերն ընտրելու ժամանակ հաշւի չի առնում իր թշնամիների զէնքերը – քաղաքականապէս տգէտ ու տհաս ժողովուրդ է: Թուրք թշնամի ունենալ եւ Ցեղակրօնութեան դէմ լինել – դա առնուազը ազգային ընկածութիւն է: Փարիզաբնակ սրիկան ոչ թէ դէմ է ցեղակրօն անունին, այլ՝ գաղափարաբանութեան: Նա սարսափի մէջ է՝ չլինի թէ Ամերիկայի մեր կազմը թարմանայ, զտուի, մարտականանայ: Նա եւ նմանները դէմ են, որովհետեւ 1-2 տարի յետոյ այլեւս անկարելի կդառնայ դաշնակցական Ամերիկան շահագործել որպէս պարսկական խանութիւն: Ընդամենը մի ամիս առաջ Փարիզի Յոմընդմէնը իր ընդհանուր ժողովում, «միաձայնութեամբ» յայտարարեց, թէ չէ մասնակցելու Մայիս 28-ի տօնակատարութեան: Շաւարշն¹ այդ սերունդը «Յառաջի» մէջ յայտարարեց «չարլստօն սերունդ²»: Ահա՛ փարիզցի մեր թշնամական սօցիալիստների հասցրած սերունդը: Նորահաս սերունդի այդ քայլը՝ թուրք էր նետուած Ցեղակրօնութեան դէմ հաջող ընկածների երեսին: Զգո՛յշ, զգոյշ, էլի զգոյշ պիտի լինել, սիրելի Օհաննէս, ծանօթ սրիկաները անունի դէմ չեն միայն: Այսօր՝ անունը, վաղը՝ վարդապետութիւնը կխլեն Ամերիկահայ նորահասէն, եւ այսպիսով կփլչի այն հաւաքական սիրտը, հոգին, մտայնութիւնը, որ ստեղծեց վերջին երկու տարւայ ընթացքում: Փոխել անունը, ասել է՝ ուխտերին ներշնչել այն համոզումը, որ թէ Դաշնակցութիւնն իր արածն ու անելիքը չգիտէ: Դա կնշանակէ՝ մղել նորահաս սերունդը մտածելու, թէ Դաշնակցութիւնը ինքը ներքնապէս «պառակտուած է»: Իսկ ունեցաւ ամերիկահայ նոր սերունդն այդ համոզումը՝ նա կփլչի հոգեպէս եւ կպաղի Դաշնակցութիւնից: Այն բոլորը, որոնք անուան փոփոխում են պահանջում՝ դաւում են, դաւաճանում - զիտակցօրէն թէ անզիտակցաբար – թէ Դաշնակցութեան եւ թէ ամերիկահայութեան ապագայի դէմ: Այս մասին եղիր արթուն (խոստովանեմ՝ ամբողջ յոյսս քեզ վրայ է, Օհաննէս ջան): Եթէ այս տարի ոյժ տաք Ցեղակրօնութեան դաւաճանքի պրոպագանդին եւ եթէ զգուշաբար լուսաբանէք արթուն տղաներին՝ դաւադիրները կմեռնեն:

¹ Շավարշ Միսաքյան (1884-1957) – Փարիզում «Յառաջ» թերթի խմբագիր:

² 1920-ական թվերին երիտասարդության շրջանում մեծ հեղինակութիւն ունեցող ամերիկյան պար, որը տարածվեց նաեւ Եվրոպայում:

Ի՞նչպէս պահեց իրեն ընկ. Իփեկեանը: Մէկը գրում է նրա մասին՝ «բարեբախտաբար կմեկնի»: Չէի կարծում, որ կոժճոհէք նրանից: Ի՞նչ է պատճառը: Նոր գործիչ կուզէք: Ձգո՛յ՜ շէք ընտրութեան մէջ – յետ այսու գործիչը պէտք է լինի ցեղակրօն՝ իր ապրումներով: Եթէ եալանչի¹ սօցիալիստ փեկեվան² լինի – չարիք կդառնայ: Ուրեմն, վախեցէք Փարիզի դաւադիրի գործակալներից եւ սօցիալիզմի գուման փչողներից: Գ-ն³ դժւար թէ գայ: Չեմ կարծում, որ օգտակար լինի: Փարիզցու⁴ հետ է: Եթէ դոքսոր Յայկ Ասատրեանին տանէք – չէք զղջայ: Ցեղակրօն է, պատրաստած եւ անկաշառ:

Օհաննէ՛ս, ախպէրս, առողջութիւնս լաւ չէ: Ժամանակ եւ սիրտ չունեցայ բժշկելու: Վերադարձայ և Բալկանը կիսակործանւած գտայ: Բալկանը վերականգնեց, բայց առողջութիւնս իսպառ քայքայեց: Քեզ գրում են՝ կողքիս ցաւեր զգալով: Կեանքիս մէջ առաջին անգամ լինելով, սկսել եմ տարակուսիլ, թէ մէկ էլ պիտի տեսնեմ Յայոց լեռները: Երեւի հէնց այդ հոգեվիճակն է պատճառ, որ երէկ մի ճառիս մէջ կ'ըսէի - «Ձգւանքի եւ դառնութեան վայրկեաններիս հայեացքս սուր կփնտռէ, քանզի երբ ձեռքս սրիս վրայ դնեմ՝ կհաւատամ, թէ չպիտի մեռնիմ հեռու հայրենի լեռներից»... Կարդա՛ այդ ճառս՝ «Յայ սուրը» («Ազատ խօսք»ի եւ «Յորիզոն»ի մէջ): Յաւաքիր շուրջդ տղաներին - ...⁵

Յակոբին, Ստեփանին եւ կարդա ու բացատրէ տղաներին:

Իմ եւ Եփիմէի համբոյրները բոլորիդ:

Նժդեհ

P. S. Թոյլ մի տաք, որ «Յայրենիք Weekly»-ի մէջ ցեղակրօն անունը անգլերէն գործածի:

Ո՞վ ասեց, որ դա անհրաժեշտ է: Ի՞նչպէս թարգմանել կուբրատիզմը (բուլղարական), ֆաշիզմը, հիթլերիզմը, ֆրանսիզմը եւ այլն: Ցեղակրօն անունը աւելի խօսուն է, քան հազար բացատրութիւններ անգլերէն: Փոխելով անունը՝ շարժումն ու կազմակերպութիւնը աստիճանաբար կդառնայ «ո՛չ միս, ո՛չ էլ ձուկ» (հոգեբանօրէն), դա

¹ Ծաղրածու:

² Լարախաղաց:

³ Յավանաբար, խոսքը Գաբրիէլ Լազյանի մասին է:

⁴ Ռուբեն Տեր-Մինասյան:

⁵ Նամակը վնասված է և մի քանի բառ անընթեռնելի են:

կճապաղանայ, կրառնայ անորոշ, անբովանդակ, անուղի, անանուն -
դա կհամրանայ:

Նոյնը

Ստեփանը գանգատել է, որ իրեն գրած չեմ: Մխալում է, վերջերս բացիկ մը գրած եմ իրեն: Միթե Ստեփանը չգիտէ, որ իր նման ոսկի տղաներին ես չեմ կարող մոռանալ: «Հայ սուրը»՝ առ մեր Կոստանեաններէն:

Նոյնը

6.

[1936թ.]

Սիրելի Օհաննէս,

Կարդացիր, անշուշտ Գելորգին գրածս նամակը: Դեռ մխալած եմ անկողինիս: Ծուռնկա շարունակում է մնալ ուռած: Վաղը կտամին ինձ ծնկոսկրս ռենտգենեան ճառագայթներով լուսանկարել տալու: Լեարդիս հիւանդութիւնը բաւական չէր: Առաջին անգամն է կեանքիս մէջ, որ այդքան երկար կպառկիմ հիւանդութիւնից: Իմ մասին - ինչ որ է - այդքանը կբաւէ: Այժմ լսէ այն մասին, որն ինձ աւելի է չար-չարում, քան հիւանդութիւնս: Որովհետեւ երկար չեմ կարող նստած մնալ անկողինիս մէջ՝ ստիպւած եմ կարճ գրել: Ահա՛ թէ ինչ՝

1. Ինչպէս եւ սպասելի էր՝ Յեղակոծութիւնն էլ ունեցաւ իր ներքին թշնամիները: Գիտէի, որ որոշ «ընկերներ» - մասնաւորապէս Ամերիկայէն դուրս - ի տես Յեղակոծն ուխտերի - կգալարէին գլխից զարնւած օձի նման: Այդ հրէշները իրենց պատժւած կհամարէին: Չէին կարող հանգիստ նստել, երբ Յեղակոծութեան ալիքը կբարձրանար եւ կսպառնար հեղեղել մեր բոլոր գաղութները: Եւրոպայում, որոշ տեղեր, ինքնաբոլիս կերպով, սկսեցին ուխտեր ստեղծել: Հարաւ[ային] Ամերիկան երկու անգամ դիմեց, խնդրեց, որ մեկնիմ այդ հեռաւոր գաղութը՝ նորահասը կազմակերպելու: Յունաստանի պատգամաւորական ժողովը հրաւիրեց, Ֆրանսան խնդրեց եւ այլն, եւ այլն: Հող կար ամէն տեղ, կսպասէին ամէն տեղ, բայց միայն վերջերս պարզւեց – որ ծանօթ դաւադիրը¹ շարժման մէջ է դրել իր գործակալները Յեղակոծութեան դէմ հաչելու եւ քարեր գլորելու համար: [Ր.Յ.Դ.] Բիւրօն, դեռ իմ Ամերիկա եղած ժամանակ,

¹ Ռուբեն Տեր-Մինասյան:

կգրեր, կխնդրեր, որ փութացնենք Յեղակրօն ուխտերի կանոնագրութիւնը, «որպէսզի զայն պարտադրենք արտասահմանի մեր բոլոր մարմիններին»: Կուզէին, որ օր առաջ արտասահմանը օգուի «Ամերիկայի թարմ օրինակից»: Եւ արտասահմանը կսպասէր: Իրերի այդ դրութեան մէջ զարմանալի կլինէր, եթէ դաւադրութեան եւ նախանձի ձեւը մեքենայութիւնների չդիմէր: Գիտես, նա մարդիկ ունի - իրեն հոգեկից - գրեթէ բոլոր գաղութներում: Պէտք է երիտասարդացնել, թարմացնել Դաշնակցութիւնը՝ կգրէր Բիւրոն: Եւ Յեղակրօնութիւնը աշխարհ կուգար, որպէս «գարնանային ջրեր», որպէս թարմացուցիչ մի հոսանք - կուգար ջահելացնելու Դաշնակցութիւնը: Բայց ծանօթ թայֆան, որը դաշնակցական գործ ասելով հասկանում է - Դաշնակցութեան արխիւներով զբաղւելը միայն՝ իր ազդեցութեան տկարացումը տեսաւ Յեղակրօնութեան մէջ եւ դաւեց նրա դէմ: Շաբաթ առաջ Բուքրէշի «Արագ»ը¹ քար նետեց Յեղակրօնութեան դէմ: Այդ լրբենի ելոյթներով դաւադիր խմբակը - որը երկրորդ տարին է, ինչ կդաւէ Բալկանի եւ իմ դէմ - կաշխատէ ոչ թէ միայն դժուարացնել Յեղակրօնութեան տարածումը, այլ եւ կուզէ հարուածել զայն Ամերիկայի մէջ: Քեզ, Արմենակին-դոքտորին եւ այն բոլորին, որոնք հոգի տւին մեր շարժումին, կմնայ սրբազան կատաղութեամբ պաշտպանել Յեղակրօնութիւնը: Յետեւում եմ «Weekly»ին: Բաւական չէ ուխտերի արտաքին կեանքը տալ: Արտաքին լուսանկարչութիւնը չ'ապրեցներ Յեղակրօնութիւնը: Շարժման էութեան, դաւանանքի մասին ոչինչ կարելի է գտնել «Weekly»-ի մէջ: «Արագ»ը իբրեւ թէ ձեւի դէմ է: Ոգի՛, ոգի՛, ոգի՛ չկայ: Ոտանաւորներ, անվերջ ոտանաւորներ արտասանելու փոխարէն պէտք է Յեղակրօնութեան դաւանանքը ժողովրդականացնել: Վերջերս ինձ տեղեկացրին ձեր շրջանի - Բոստոնի - ուխտերի տարեդարձի տօնակատարութեան մասին: Նամակագիրը ասում է, 50-60-ից չէր անցներ ներկաների թիւը: Խորապէս ցաւեցի: Նիւ Եորքից գրում են՝ «մեր փայլուն եւ բազմամարդ հանդեսին կբացակայէին մտաւորականները»: Օհաննէս, սիրելիս, գիտեմ, շատ ես զբաղւած, բայց գիտեմ եւ այն, որ դու եւ Արմենակը ոչինչ պիտի խնայէք Յեղակրօնութիւնը վառ պահելու Ամերիկայում եւ աշխատելու, որ դա համազաղութայնանայ: Արմենակին կգրեն շուտով: Յոգնեցայ, ոտքս ցաւում է, վերջացնեմ:

¹ Տպվել է 1932-1939թթ. Բուխարեստում: Խմբագիր՝ Յ. Սիրունի:

Համբոյրներ քեզ, Արմենակին եւ բոլոր իդէալիստ ընկերներին:

Նժդեհ

Իմ եւ տիկնոջս բարեւները Մարիամին, համբոյրներ երեխաներին:

Նոյնը

7.

25 ապրիլի 1936թ.

Սօֆիա

Սիր[ելի] Յովհաննէս,

Չգիտեմ, ստացե՞լ ես նամակս՝ ուղղած Կոստանեանների հասցէին: Այսօր գրեցի նաեւ Արմենակին, խնդրելով որ կարդայ քեզ: Երկու խօսքով կրկնեմ գրածներս:

Վերջերս Բուքրէշ, Ռոմանիա լոյս տեսնող մեր թերթը, «Արագ»ը, լրբութիւն ունեցաւ մի խմբագրական գրելու Յեղակոնութեան դէմ: «Հիթլեր կհոտի» ասելով՝ այդ թերթուկ մրոտողը կ'եզրակացնէ՝ «Ինչ կարիք կայ Յեղակոն Ուխտերի, երբ Դաշնակցութիւնը ինքնին մի ուխտ է»: Այդ թերթը՝ թելադրած որոշ դաւադիրներէ՝ ճիգ կընէ նախապաշարել մեր կ.[ենտրոնական] կոմիտէութիւնները եւ ազգայնական հայութիւնը Յեղակոնութեան դէմ: Դիակնացած սօցիալիզմը չէ, որ կխօսի այդ թշուառականի մէջ, այլ անձնական շնականութիւնը: Եթէ Բուքրէշի դաւադիրը անպատիժ մնաց՝ թեւ պիտի առնեն եւ ուրիշները: Բացի այդ՝ սրա եւ նմանների հակապրօպագանդի շնորհիւ, Ամերիկայից դուրս, արտասահմանում կարող է մոլորանք ստեղծուել ցեղաշարժման դէմ: Քեզ, որպէս Յեղ.[ակրոն] Ուխտերի կենտրոնական] վարչութեան advisor-i (խորհրդականի) եւ կ[ենտրոնական] կ[ոմիտէի] անդամի, կմնայ վճռապէս եւ անյապաղ կերպով անել հետեւեալը՝

1. Թելադրել կենտրոնական] վարչութեան, որ բողոքէ Չեր կ[ենտրոնական] կոմիտէին «Արագ»ի հակացեղակոն (իր խորքի մէջ հակադաշնակցական) ընթացքի դէմ:

2. Խնդիր յարուցել Չեր կենտրոնական] կոմիտէի մէջ եւ վերջինի կողմից դիմել [Յ.Յ.Դ.] Բիւրօին, խնդրելով, որ վերջինը անպատիժ չթողնէ «Արագ»ի ելոյթը, որից անմիջապէս օգտուեցին բօլշեւիկ թերթերը:

3. Գրել Ռոմանիոյ Մեկուսի կոմիտէին եւ բացատրութիւն պահանջել իր թերթի թշնամական ելոյթի համար:

Օհաննէս, սիրելի՛ս, այդ 3 կետերը գործադրել տուր, որովհետեւ մասնաւորապէս աշխարհի այս փափուկ օրերին ամէն աշխատանքի եւ զոհաբերութեան արժանի է Ցեղակրօնութիւնը: Անմիջապէ՛ գրէ՛ առաձո՛ղ քայլերի մասին:

Համբոյր քեզ եւ տղաներին:

Քոյդ Նժդեհ

8.

25 յուն.[իսի] 1936թ.

Սիր[ելի] Օհաննէս,

Ստացայ նամակդ: Ուրախ եմ, որ Վ. Նաւասարդեանն¹ է ուղարկւած տեղը: Սրտի տէր մարդ է: Գիտէ փարիսեցիօրէն կուրծք ծեծող թշուառականը տարբերել ուղղափառից: Ինքն ուղղափառ է, Մարքսի մօրուքին - սոցիալիզմին - ոչ սիրահար: Կմնայ, որ մօտենաք իրեն, մօտենաք ջերմօրէն, որպէսզի հասկանայ ձեզ: Չվիրաւորւէք նրա այս կամ այն արտայայտութիւնից, եւ հեռու պահէք ձեզ:

Վ-նը² Ցեղակրօնութեան հետ էր, նրա ջատագովը: Մեր եալանչի պօլսական սօցիալիստները - մութ կիրքից մղուած - Ցեղակրօն շարժման առջեւ դժարութիւններ հանելու նպատակով - նամակներ են գրել [Ղ.Յ.Դ.] Բիւրօին եւ վախ յայտնել, թէ կուսակցութեան մէջ կուսակցութիւն կարող է ստեղծուել, եւ այլն, եւ այլն: Գիտես, թէ ո՞րի թելադրանքով է եղած դիմումները Բիւրօին: Նախանձի շէթանը³ չէր քնած, երբ մենք հոգի կուտայինք նորահաս սերունդը բերելու եւ կապելու եռագոյնին: Դաւը շարունակուում է Ցեղակրօնութեան եւ իմ դէմ: Կեանքիս մէջ անձս, անձնականս պաշտպանելու վատութիւն չեմ ունեցել - կազմակերպւած դաւը միայն զգւանքս է շարժել եւ խորապէս ցաւեցրել հոգիս այն պարզ պատճառով, որ Հայութեան, տարագիր Հայութեան հոգեվարքի օրերին իսկ ընկերոջ դէմ դաւելու վատեր կան: Գուցէ կարեւորութիւն տայի, եթէ գիտակցութիւնս

¹ Վահան Բեգլարի Նավասարդյան (1888-1956) – Ղ.Յ.Դ. հայտնի գործիչ, Կահիրեում հրատարակվող «Հոսաբեր» թերթի խմբագիր:

² Նկատի ունի Վահան Նաւասարդյանին:

³ Թուրքերեն՝ սատանա:

չ'ասեր - «թրքօ-բօլշեւիկ» տապարէն քո սրի շնորհիւ փրկւած թշուառականին¹ արժե՞ պատասխանել:

Ինչ որ է, այդ չէ էականը: Դուք, օգտւելով Վ-ի ներկայութիւնից, պէտք է համոզէք Բիւրօն, թէ Ցեղակրօնութեան դէմ քար նետողները ինտրիգանտներ են եւ ոչ ուղղափառ դաշնակցականներ: Քննադատութեան չի դիմանար այն փաստարկութիւնը, թէ «չգիտենք դեռ ինչի՞ կվերածօւի Ցեղակրօնութիւնը Ամերիկայում»: Ցեղակրօնութիւնը կծգտէ դաստիարակել մարտիկը: Եթէ Դաշնակցութիւնը չէ դադարել մարտական լինելուց՝ չի կարող դէմ լինել Ցեղակրօնութեան: 2-3 տարի յետոյ - եթէ Ցեղակրօնութիւնը իր շուրջը չհաւաքեց նորահաս սերունդը - ՅՕԿը (իմա՛ Խ. Յայաստանը) կլափի հայ մանկտին, պատանեկութիւնը եւ երիտասարդութիւնը: Պէտք է աճապարել քանի դեռ ուշ չէ համազաղութայնացնելու Ցեղակրօնութիւնը, այլապէս Դաշնակցութիւնը կմեռնի շատ բնական մահով - ծերանալով: Վերջերս Դրօն² ինձ մօտ էր, խոստովանեց, որ ինքն էլ ժամանակին Բիւրօի ուշադրութիւնն է հրաւիրել Ցեղակրօնութեան շարժման վրայ, եւ որ Բիւրօն իրեն պատասխանել է, թէ այդ շարժումն անհրաժեշտ է Ամերիկայի համար: «Արագը» մրտտողի վրայ լաւ տպաւորութիւն չի թողել այն պարագան, որ Ուխտերը Նժդեհի լուսանկարը կգործածեն որպէս մարկա: Գիտես, Օհաննէս, որ ես տղաների ցանկութեան դէմ էի, որ ես մի գրութեամբ դիմած եմ Ցեղակրօն] Ուխտ[երի] կ[ենտրոնական] վարչութեան եւ խնդրած, որ իմ լուսանկարի փոխարէն գործածեն իմ ուսուցչի՝ Ռոստոմի լուսանկարը: Այդ պարագան պրովոկացիաների պատճառ է տւել: Այդ մասին պարտք եմ դնում քեզ վրայ, որ դու Վահանին կարդաս իմ ձեր վարչութեանն ուղղւած գրութիւնը: Այդ գրութիւնը Ցեղակրօն] Ուխտ[երի] կ[ենտրոնական] վարչութեան արխիւում կգտնես: Քո օրով էր, դու ադվիզօր³ էիր: Վահանը մօտիկից ճանաչում է մեր Արմենակին-դոքտորին: Արմենակին ասա, որ Վ-ին մօտիկ լինի:

¹ Սկատի ունի Ռուբեն Տեր-Սիմասյանին:

² Դրոն իր առաքելութեան մասին մանրամասն պատմել է Սիմոն Վրացյանին գրած մամակում: Տես «Բամբեր Յայաստանի արխիվների», 2006, թիվ 1, էջ 129-137:

³ Խորհրդական:

Ինչպես երեւում է Թափառականի եւ իր երկու դասակիցների¹ (հասկացիր՝ հացակիցների) գրութիւնը՝ ուղղւած Յ[այ] Կարմիր Խաչի կենտրոնական վարչութեան, լուրջ տարածայնութիւններ է ստեղծել Յ[այ] Կ[արմիր] Խաչի կենտրոնական վարչութեան մէջ: Շրջանիս կոմիտէները խնդրած էին այստեղի Գթ[ութեան] խաչի շրջ[անային] վարչութեան, որ 2-3 նամակներ գրելու համար ամսականով քարտուղար չպահի, եւ որ քարտուղարին տրելիք գումարը տրւի տասի չափ շատ կարելոր եւ հին, վետերան ընկերների: Միաժամանակ դիտել էին տւել, որ հանրային գործիչը (այն էլ՝ գթութեան գործով զբաղող) իրաւունք չունի 2-3 ամսականով պաշտօններ ունենալ, որպիսին է Փիլիպոսեան կոչւած ախտաւոր մէկը: Թափառականը, որը այլ խնդիրներով դատի տակ էր, միացաւ այդ ախտաւորին եւ ծանօթ մարդու² գործակալին, ու աղմուկ հանեց, թէ Դաշնակցութիւնը կուզէ կուսակցականացնել կ[արմիր] խաչը, որ Գթ[ութեան] խաչն անկախ է, որ Ջամալեանը³ իրենց այդպէս է ասել եւ այլն: Այդ իմաստով գրութիւն մը կ'ուղղեն նաեւ Յ[այ] կ[արմիր] խաչի կենտրոնական վարչութեան:

Ընկերուհի Սիրամուշի (Տեստեգիւլի) նամակից այն տպաւորութիւնը ստացայ, որ կենտրոնական վարչութեան մէջ տարածայնութիւններ կան - կան անկախականներ եւ Յ[այ] Կ[արմիր] Խ[աչ]ը կուսակցականացնելու կողմնակիցներ: Անկախականները – մոլորւած Թափառականի պրովկատորական նամակից - դառնացած են, որ Նժդեհը թոյլ է տւել, որ կենտրոնական կ[ոմիտէն] կոնտրոլ բանեցնէ Գթ[ութեան] խաչի վրայ: Երկրորդ պարտականութիւն եմ դնում ուսերիդ, որ երկու խօսքով լուսաբանես հ[այ] կ[արմիր] Խ[աչի] վարչութիւնը: Մեր մարմինները երբէք դէմ չեն եղել Գթ[ութեան] խաչի անկախութեան: Գործակցութեան եւ կոնտրոլի նման մի բան եղել է Գթ[ութեան] խաչի գոյութեան առաջին օրից: Գթութեան խաչի մէջ տեղաւորւած երեք տղամաղկանց բարոյական արժէքը հասկանալու համար բաւական է հաշի առնել նրանց յարուցած աղմուկը Դաշնակցութեան կոնտրոլի դէմ: Թափառականը իր մութ եւ ակնյայտնի արարքներով ասպացուցեց մի բան - որ ինքն արժանի չէր

¹ Խոսքը Արամ Յակոբյանի և «Նոր խոսք» թերթի խմբագիր Օնիկ Մխիթարյանի մասին է:

² Ռուբեն Տեր-Մինասյան:

³ Արշակ Ջամալյան:

տարիների այն պաշտպանութեան, որ տրւած էր իրեն իմ կողմից: Նա այժմ էլ քեզ ծանօթ մարդու գործակալների հետ է: Խոստովանիմ, որ ես էլ չէի ճանաչում Թափառականին: Այդ դժբախտը քամքով լեցուն մի թորբայ¹ է եղել, ոչ թէ մարդ: Տկար է բարոյապէս, կեցուածք չունի եւ այդ իսկ պատճառով դաւող, եւ վատերին գործակցող: Եթէ այդ մարդը տղամարդ լինէր - մինչեւ հիմա տասն անգամ անձնասպան եղած պիտի լինէր կամ էլ պատժած պիտի լինէր իրեն ամբողջ տասը տարի ահաւոր կասկածանքի տակ պահողների: Այդ մարդը, որն առաջին օրերին ամբողջ ընտանիքով նետուեց Ցեղակրօնութեան աւազանը՝ այժմ գործում է Ցեղակրօնութեան դէմ՝ միացած մի քանի փուլտերի: Դեռ չմեռած՝ մեռնողների թւին պատկանում է եւ այդ խեղճը: Նա էլ է կարծում, որ ազգաւի իր ծիրտը բաւական է, որ ծովն ապականի: Կախակայւած է 2 տարով: Արժանի չէ ոչ թէ բարեկանութեանդ, այլ բարեւիդ:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

1936, 25 յուն.

Սօֆիա

Քանի վահանը հող է, ինձ գրիր յաճախ:

9.

1 սեպտեմբերի 1936թ.

Սիրելի Օհաննէս,

Ստացայ նամակդ: Գրում եմ քեզ որոշ բաներ, որոնք պէտք է մնան - առայժմ միայն քո սեփականութիւնը: Գրում եմ, որ իրազեկ լինես, եւ ըստ այնմ վարես «նադ»:

1. Երեւի չես հետեւում «Յառաջ»ին, այլապէս պէտք է գիտցած լինէիր այն, որի մասին որ գրում եմ քեզ: «Յառաջ»ի 24 յունիս համարի մէջ երեւացին Սուրէնի «Բաց նամակները»: Սուրէնը - Դրօն է: Նա նոր երգ է սկսել երգել... «Մենք պարտաւոր ենք մոռանալ մեր թշնամութիւնը նրա հանդէպ (խօսքը այսօր Հայաստանում նստած բոլշեւկեան ոյժի մասին է): Մենք պէտք է վերջ տանք մեր հակառակութեան: Պէտք է հաշտուինք»... եւ այլն:

Նա գրել է, որ «մեր պայքարը աւելորդ է եւ եթէ կուզես մենք չենք հասկանում մեր ազգային եւ քաղաքական շահերը»...

Ինչպէս տեսնում ես - դա նոր օրիանտասիոն է, որն ընդունելու դէպքում Դաշնակցութիւնը պէտք է մեղայ ասէ Քաջազնունուն, որ

¹ Թորբա - տոպրակ:

«յիմարութիւն» ունեցաւ ժամանակին չընդունելու «Դաշնակցութիւնը անելիք չունի»ն: Գիտես, որ Սուրէնը ոչ մտաւորական մէկն է, ոչ էլ քաղաք[ական] խորհողութեան տէր, որ նման բաներով զբաղւի:

Նրան թելադրել են, եւ նա էլ անխորհուրդ կերպով հրապարակ է նետել նոր «Դաշնակցութիւնը անելիք չունի»ին:

Գիտես, որ նման խնդիրներ կարող են յարուցել միայն մեր ընդհանուր ժողովներում, եւ որ միայն ընդհ[իսանուր] քաղ[աքականութիւնը] կարող է Դաշնակց[ութեան] քաղ[աքական] գիծը փոխել:

Գիտես, թէ ո՞վ է - մութի մէջ - կանգնած Սուրէնի թիկունքում: Սուրէնը մինչեւ վերջերս կզբաղւէր իր սեփական գործերով, սակայն, մեկէն եւ անսպասելի կերպով ելաւ ասպարէզ:

Երբ Վ-նը¹ «Դաշնակցութեան օրւայ»² առթիւ անցեալ տարի Ֆրանսայում կճառէր՝ «Հայ Հայրենիքն է հայի համար եւ ոչ թէ հայը՝ հայրենիքի - այս է Դաշնակցութեան դաւանանքը: Հայ անհատը ամենից առաջ, եւ ամէն բանից վեր»... Երբ այսպէս կհասկացւէր Դաշնակցութիւնն ու իր դաւանանքը, իսկապէս որ պէտք է ընդունենք, թէ «մեր պայքարը անելորդ է»: Վ-եանի համար Հայրենիքը միջոց է, անհատը՝ նպատակ: Նրա համար Հայրենիքը երկրորդական բան է, անահտն է «ամէն բանից առաջ եւ ամէն բանից վեր»: Միջոց - Հայրենիքը չի պաշտուիր, եւ նրա համար չեն մեռնիր: Նպատակ - անհատն է սուրբը, «ամէն բանից վեր»ը, գերազոյնը:

Միջոցը միշտ էլ ծառայել է նպատակին: Եւ որովհետեւ ըստ իր էութեամբ հակադաշնակցական «դաշնակցական» Վ-եանի՝ Հայրենիքը միջոց է, նա պիտի ծառայի եւ մեռնի զգւելի անհատի, պատահական հայ կարապետի համար: Նման միջոց - Հայրենիքը պէտք է կործանւէր եւ կործանւեց: Նմանը պէտք է անցնէր Հայրենիքների մասին անելի բարձր բարոյական հասկացողութիւն ունեցող թուրքի եւ բուլղերիկի ձեռքը, եւ անցաւ: Վ-ի քարոզած Հայրենիքը սովորական շուկայ է, ապրուստի միջոց «ամէն բանէ վեր» անհատի համար, իսկ նմանը չէ կարող ապրել որպէս Հայու Հայրենիք, դա կմեռնի, եթէ չմեռաւ Վ-եանի «բարոյական»ը: Միջոց - Հայրենիքը (ինչպիսի պղծութիւն) կարող է միշտ էլ մնալ օտարի ձեռքը, կբաւէ, որ այդ օտարը անելի զօրաւոր լինի, քան է Հայը այդ երկրի պատմական տէրը: Ահա՛ թէ ինչու Վ-եանի աշակերտ Սուրէնը գրում է «մեր

¹ Սիմոն Վրացյան:

² Հ. Յ. Դաշնակցութեան օրը նշվում է հոկտեմբերի 1-ին:

պայքարը աւելորդ է»: Արդարեւ, ինչու՞ պայքարիլ, երբ ընդունել ենք, թէ Հայրենիքը միջոց է միայն անհատն ապրեցնելու: Պայքարը պահանջում է զոհեր, զոհողութիւններ, իսկ այլասիրաբար, հայրենասիրաբար զոհուում, զոհաբերում է միայն նա, ո՛վ Հայրենիքը համարում է գերագոյն նպատակ, իսկ անհատը՝ միջոց - Հայրենիքն ապրեցնելու համար:

Չերկարեմ այդ մասին, որպէս բարձր սրտի եւ ցեղային բարոյականի տեր՝ դու չես կարող չընդունիլ, որ Ա-ի եւ Վ-ի օրինատացիան եւ բարոյական ըմբռնումը սահմանաւած են սպանելու Դաշնակցութիւնը, որպէս յեղափոխա-մարտական ոյժ, եւ ընդմիջտ թրքօբու-շեւիկի ձեռքը թողնելու մեր Հայ Հայրենիքը:

2. Կարդացի Վ-ի¹ «հրաշագործութեան» մասին Հարաւ[ային] Ամերիկայում: «Մեծ խանդավառութիւն է ստեղծել», «խօսել է ռադիօով», «լուսանկարել է», «տեսակցութիւն է ունեցած օտար թերթերի խմբագիրների հետ», «օտար թերթերը դրած են մեր ընկերոջ լուսանկարը» եւ նման այլ բաներ: Այս բոլորի արդիւ՞նքը - ոչինչ, բացարձակապէս ոչինչ: Մի հատիկ ամողջ գաղափա՞ր է տրւած Հարաւային Ամերիկայի] հայութեան, նորահաս սերունդն է կազմակերպւած - ո՛չ: Հնարակեղծ, խաղաղասիրական քարոզներ է տւել: Ասել է «սիրեցէք զմիմեանս», «համերաշխութիւն» է քարոզել: Յետո՞յ: Ի՞նչ է փոխւել: Քաղաքական գործիչի համար շառլատանութիւն է՝ խօսել համերաշխութեան մասին, որին չէ հաւատում: Եթէ քաղաքական խորհողութիւնից զուրկ չէ գործիչը, եթէ շառլատան չէ՝ չի խօսի այնպիսի բաների մասին, որոնց ինքը չէ հաւատում, որոնք չեն կարող իրականանալ: Հակադաշնակցական հայութիւնը շնորհիւ երկու բանի - ա) իր հոգեբանութեան, եւ բ) Մոսկուայի - մեզ չի մօտենայ քաղաքականապէս, չի հաշտւի մեզ հետ: Այդ տարրական ճշմարտութիւնը պէտք է հասկանալ: Իսկ հասկանալով այդ ճշմարտութիւնը՝ ելնել շառլատանաբար կեղծ եւ աժան հաշտութիւն քարոզել, ասել է՝ պահանջել, որ Դաշնակցութիւնը մօտենայ, համերաշխի հակադաշնակցական տարրերի հետ, ասել է՝ աշխատել, որ դաշնակցականը ռամկավարանայ, բուշեւիկանայ, տկարանայ գաղափարաբանօրէն եւ քաղաքականապէս:

Վ-ի պրոպագանդը՝ իր էութեամբ հակադաշնակցական է: Նա քաղաքական խուժանավարութիւն է, գաղափարախօսական անազնութիւն,

¹ Սիմոն Վրացյան:

բարոյական քծնութիւն, որով դաշնակցականը մատնում է իր գաղափարային խեղճութիւնը եւ հակառակորդի կեղծ բարեկամութիւնը մուրում, փնտռում: Դա քաղաքական պրոպագանդ չէ, այլ քաղաքական «քաւոր Պետրոսութիւն», որով կարելի է մի հատիկ բան կատարել - այն է տկարացնել եւ զգելի դարձնել Դաշնակցութիւնը:

- Այդ մարդու բարեկամները, որոնք պատկերամարտիկ կտրած՝ Նժդեհի պատկերի դէմ կպայքարեն, ի՞նչպէս թոյլ տւին, որ իրենց տերը լուսանկարի եւ իր լուսանկարը օտար թերթերին տայ:

Շառլատանները ... արժէ՞ անելին խօսիլ նրանց մասին:

Այս տողերը գրում եմ, որ իրենց տիրոջ արժանի ծառաների «քաւոր Պետրոսներ»ը անելի լաւ հասկանաս:

Վահանի¹ հետ անպայման տեսնւիր եւ երկարօրէն խօսիր հետը: Առանց նամակս իրեն կարդալու՝ իմ մտքերը, որ քո մտքերն են, յայտնիր իրեն:

Հասկացուր, որ մենք Դաշնակցութեան մէջ սրբութիւն եւ բարձր կրօնականութիւն կղնենք, միւսները Դաշնակցութիւնը դարձրին հասարակ կազմակերպութիւն, որ մեր քարոզած Դաշնակցութեան կը մօտենայ նորահաս սերունդը, իսկ միւսների քարոզածէն՝ կխորշի, կը փախչի:

Վահանին խօսիր Վ-նի՝ Հայրենիքի մասին յայտնած գաղափարի, եւ Սուրէնի նոր օրիննտացիայի մասին: Հասկացուր, թէ սրանք քաօս են ստեղծում, հոգեւոր քաօս Դաշնակցականի գլխում: Թելադրէ Ցեղ[ակրօն] Ուխտերի վարչութեան, որ նրան հրաւիրեն իրենց մի նիստին եւ խնդրեն, որ Վահանն աշխատի «Յուսաբեր»ի միջոցաւ ժողովրդականացնելու Ցեղակրօնութիւնը: Աշխատիր սպառել տալ «Ցեղ եւ Հայրենիք»ը²: Հայկի³ դէմ եղածը ծանօթ խմբակի⁴ դաւն է: Շուտով կկարգադրուի խնդիրը: Դաւի մանրամասնութեանց մասին կգրեն շուտով: - Այստեղի Գութեան խաչի շրջ[անային] վարչութիւնը, որի 3 տղամարդ անդամները (2-ը կանայք են) պատժւած են 2-ական տարով - գաղտնաբար գրած են տեղիդ Կ[արմիր] խաչի

¹ Վահան Նաւասարդյան:

² «Ցեղ եւ Հայրենիք» կիսամսյա հանդեսը հրատարակվել է 1936թ. Սոֆիայում Հայկ Ասատրյանի և Ներսես Աստվածատրյանի խմբագրությամբ:

³ Հայկ Ասատրյան:

⁴ Խոսքը Թափառական - Գ. Հալաճյանի, Արամ Հակոբյանի և Օնիկ Մխիթարյանի մասին է:

կենտրոնական] վարչութեան, թէ Նժդեհը ծանր հիւանդ է, չէ կարող մասնակցել Գթ[ութեան] խաչի շրջանային ժողովին - որով՝ կխնդրեն, որ իրենց ներկայացուցիչ նշանակեն թափառական առաւ-փախաւին: Թափառականի այդ լրբու[թիւնը] բացւած է եւ գրգռութիւն առաջացրած շրջանում: Տիկ. Սիրանուշին անմիջապէս յայտնիր, որ սրբագրէ եղած սխալը:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

1936 թ. սեպտ. 1

10.

1 նոյեմբեր 1936թ.
Սօֆիա

Սիրելի Օհաննէս,

Էլի ծուլացար, չէ՛ս գրում: Որպէսզի չմոռանաս, որ ընկերական քաղցր պարտականութիւն ունիս ինձ գրելու պարբերաբար՝ որոշում առ գրելու ինձ երկու ամիսը մի անգամ, եւ տղաներէն մէկին յուշարար նշանակիր, որ մոռացութեանդ դէպքում քեզ յիշեցնէ որոշումդ: Եղա՞ւ: Այս մէկ: Այժմ լսիր երկրորդը: Սիրելիս, ինչպէս երեւում է մեր այս լիրբ աշխարհում միայն Օզանեանը¹ չի փոխւում: Վերջերս, անսպասելիօրէն [Յ.Յ.Դ.] Բիւրօէն մի գրութիւն ստացայ, որով կտեղեկացնեն, թէ Ամերիկայի մեր կ[ենտրոնական] կոմիտէն գրած է իրենց, թէ Նժդեհը մեր Ամերիկայի որոշ ընկերներուն յանձնարարած է [տարածել] «մեր շարքերէն վտարւած» Հայկ Ասատրեանի «Ցեղ եւ Հայրենիք» պարբերաթերթը: Այդ մասին Փարիզէն ինձ գրած էր նաեւ Նաւասարդեանը: Ես երկու օր առաջ գրեցի Ամերիկայի կ[ենտրոնական] կ[ոմիտէ]ին, որ ինքը թիրիմացութեան մէջ է, որ «Ցեղ եւ Հայրենիք»ը խմբագրում եւ հրատարակում է ոչ թէ Հայկ Ասատրեանը, այլ դաշնակցական Ներսէս Աստուածատրեանը: Հայկ Ասատրեանը աշխատակցող մըն է, եւ ուրիշ ոչինչ: Դաշնակցական մամուլի որոշ օրգանների մէջ ոչ-դաշնակցական աշխատակիցներ միշտ եղել են: Հայկ Ասատրեանի աշխատակցութեան համար պաշտօնական խնդիր յարուցելը արդարացում չունի: Ի՞նչ կարիք կար աղմուկ հանել, երբ կարելի էր գրել ինձ եւ լուսաբանութիւն ուզել:

Գիտեմ, որ եղածը սիրտ պղտորելուց զատ ուրիշ բանի չի ծառայի: Այս ահաւորօրէն ծանր եւ պատասխանատու ժամանակ-

¹ Մերուժան Օզանյան:

ներում մանրուքով զբաղելը մեղանչում է Ցեղի եւ Հայաստանի դէմ: Դէ՞մ էին «Ցեղ եւ Հայրենիք»ի տարածման Ամերիկայում, կարող էին գրել Ներսէս Ասատրեանին¹, որ չուղարկէ այլևս: Իմ հիւանդութեան օրերին ինձ խնդրեց Ներսէսը, եւ ես էլ ամառանոցից մի քանի ընկերների մի-մի բացիկով յանձնարարեցի ծանօթ պարբերաթերթը այն գիտակցութեամբ, թէ նա կծառայէ մեր ցեղակրօն պրոպագանտի գործին: Ինչ որ է, թուրքէն առաջ, այդ հոգեւոր մանրուքը, մանրօրէն թշնամանելու զգւելի տկարութիւնը պիտի սպանեն մեր ժողովուրդը:

Չգրեցիր Վահանի հետ ունեցածդ վերջին տեսակցութեանց մասին: Նորն եկա՞ւ:

Հ[այ] Կ[արմիր] Խաչի կեդր[ոնական] վարչութեան հեռագիրը ժամանակին ստացւեց, սակայն հին վարչութիւնը ժողովատեղիէն փախաւ եւ մի մասնաւոր տան մէջ, Սօֆիայէն դուրս, «շրջանային ժողով» խաղաց: Մանրամասնութեանց մասին տղաները կգրեն քեզ: Գիտցիր, որ Բալկանի² թշնամիները յաջողել էին մութի մէջ մոլորեցնել նաեւ Հ[այ] Կ[արմիր] Խաչի կ[ենտրոնական] վարչութիւնը: Աշխատում է դէմոնը: Շրջ[անային] ժողովը, որը տեղի պիտի ունենար (ըստ կանոնագրի) մայիսին, շրջանի պահանջով տեղի ունեցաւ հոկտեմբերին: Թայֆան վճռած էր ձեռքից չտալ դելը՝ անպատիժ մնալու նպատակով: Հակադաշնակցական բոլոր կազմակերպութեանց հետ հացի ներքին բարեկամութիւն է մշակած: Այժմ միացած Բարեգործականին՝ կուզեն խաբել Հ[այ] Խաչի կեդր[ոնական] վարչութիւնը եւ քաշել նրանից 650 դոլարը՝ Բարեգործականի կոնտրոլի տակ անցած Գեւորգ Մեսրոբի ճենարանի շրջանի համար:

Բարեւում է Եփիմէն: Համբոյր երեխաներին: Բարեւ Սարիամին: 1936, 1 նոյեմբեր, Սօֆիա:

Համբոյրներով՝ **Նժդէհ**³

¹ Ներսէս Աստվածատուրյան - Ցեղակրոն և Տարոնական Շարժումների անվանի գործիչ: Ծագումով տարոնցի է: Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության Բուլղարիայի շրջանի պատասխանատու: Նյութապէս զգալիորեն օժանդակել է ազգայնական շարժումներին: 1944թ. ձերբակալվել է ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեի կողմից, մահացել է Ուրալյան գաղութում:

² Նկատի ունի Հ.Յ.Գ. Բալկանյան կենտրոնական կոմիտեությունը:

³ Վերջին երկու տողը Գ. Նժդէհը նամակը վերջացնելուց հետո տեղ չլինելու պատճառով հավելել է նամակի առաջին էջի սկզբին:

7 յուն. 1937թ.
Սօֆիա

Սիր[ելի] ընկերներս՝ Օհաննես, Արիս¹ եւ Յակոբ,

1. Գիտեք, որ Ցեղակրօնութիւնն էլ ունեցաւ իր ներքին թշնամիները: Հայկական հրէշային նախանձը եւ տգիտութիւնը, որոնք պատճառ դարձան, որ Ցեղակրօնութիւնը հնարաւորութիւն չունենայ դուրս գալու իր ծննդավայրէն՝ Ամերիկայէն եւ տարածելու Հայոց սփիւռքի մէջ: Մեր նորագոյն պատմութեան մէջ ես չգիտեմ աւելի մեծ դաւաճանութիւն՝ կատարած մեր ցեղի դէմ - քան այն, որ հայկական կոյր նախանձն ու տգիտութիւնը կատարեցին Ցեղակրօն շարժման դէմ:

Այդ շարժման մէջ մէկն իր Հոգեւոր մահը տեսաւ, երկրորդը՝ իր ազդեցութեան տկարացումը Դաշնակցութեան մէջ, երրորդը՝ մեր Ուխտերի մէջ ցեղի խռովքի փոխարէն, մատ ու քուէներ տեսաւ, սարսափեց, ապա սկսեց դաւել նրա գոյութեան եւ ծաւալումի դէմ: Եւ այդ իսկ պատճառով մեր ստեղծած ջահէլ, ցեղանորոգ եւ փրկարար շարժման ճակատագիրն եղաւ այն, ինչ որ կուգէին թուրքն ու բոլշեւիզմը - մեր ցեղի օրւայ երկու մահացու թշնամիները: Այսօր Ցեղակրօնութիւնը հող գտած կլինէր մեր բոլոր գաղութներում, ամէն գաղութ ստեղծած կլինէր ուխտաւածների իր լէգէօնը, այսօր մեր թիւը հասած կլինէր տասնեակ հազարի, եթէ մեզ յաջողէր ժամանակին զինաթափել ներքին չարութիւնը՝ տգէտ ու նախանձալի:

2. Հայոց սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող երիտասարդական կազմակերպութիւնների մէջ կայ միայն մէկը, որ անսխալ կերպով թարգմանում է մեր ցեղի կամքը - լինել ուժեղ, էլի ուժեղ, մի՛շտ ուժեղ՝ չկորչելու համար: Ցեղակրօնութիւնը - դա ցեղային ոյժի, հպարտանքի եւ հերոսականութեան կրօն է: Այդ իսկ պատճառով Ցեղակրօն Ուխտերը կձգտեն դառնալ մի ուժաստեղծ գործօն սփիւռքի հայութեան մէջ. նաեւ՝ դառնալ միութեան եւ համերաշխութեան մի

¹ Արիս (Արիստակես) Տեր-Իսրայելյան - ծնվել է Բուլանըխում: Մանուկ հասակում ծնողների հետ տեղափոխվել է Էջմիածին, ուր սովորել է Գևորգյան ճեմարանում: 1912թ. անցել է ԱՄՆ և 1917թ. դարձել Տարոն-Տուրուբերան Հայրենակցական Միության հիմնադիրներից: Մինչև կյանքի վերջը ապրել է նյութական ծանր պայմաններում: Մահացել է 1942թ. դեկտեմբերի 18-ին ԱՄՆ-ի Էքրըն Օհայո քաղաքում:

գիծ, որովհետեւ ոյժը միացուցիչ ազդակ է: Գաղութահայութեան դժբախտութեան, նրա անհամերաշխութեան, նրա ներքին իրերակերութեան պատճառներից մէկն էլ՝ իր ծոցի մէջ գործող կազմակերպութիւնների գաղափարախօսական եւ թւական տկարութիւնն է: Խորապէս ազդելու, պատկառանք, միութիւն, համերաշխութիւն պարտադրելու աստիճան եւ ո՛չ մէկն է բաւականաչափ զօրաւոր: Գոյութիւն ունեցողներից ամենահինը՝ Յոմընդմենը, իրաւ, է՛ ու կմնայ զուտ մարզական մի կազմակերպութիւն, որը երկուսուկէս տասնեակ տարիների ընթացքին չկարողացաւ հասկանալ, որ սպորտը մարմնակրթանք չէ միայն, այլ եւ Հայրենիքի ինքնապաշտպանութեան գործին սատարող մի զօրաւոր ազդակ: Մի նոր սերունդ, վտանգի՝ սերունդ, որը ոչ թէ միայն պաշտեր իր Յեղը, այլեւ քաղաքականապէս ծառայէր ու մեռնէր իր Հայրենիքի համար:

Յոմընդմենը եղաւ հոգեբանօրէն չէզօք, քաղաքականապէս դիմագուրկ, ու անտարբեր դէպի նոր ժամանակի բարձր պահանջները: Նա իր գործունէութեան մէջ դրեց նպատակի չնչինութիւն, հաստ սրունքներ, իդէազուրկ զբօսասիրութիւն: Մխալ հասկացած ու կիրարկած սպորտը տանում է նարցիսիզմի - ինքնասիրահարութեան: Եսկանը հոմընդմենականի համար - դա սպորտային թատերականութիւնն է, ծափահարելու տենչը, ամբոխից խլած աժան դափնին: Նա չի հասկանում, որ բաւական չէ սիրել սպորտը - սպորտին պէտք է միացնել նաեւ սպարտականը, պէտք է զինւոր լինել, Յեղի եւ Հայրենիքի զինւորը: Ուրիշ ազգերի մօտ մարզադաշտը հանդիսանում է նախադուռը ռազմադաշտի: Նրանց մօտ մարզարուեստը ծառայում է ռազմարուեստին, որով մարզիկը դառնում է մարտիկ: Այսօր ողջ աշխարհում - բոլոր պետութեանց մէջ մարզական եւ այլ կարգի դաստիարակութեան խնդիրը դրոււմ եւ լուծոււմ է Հայրենիքի եւ Յեղի պաշտպանութեան խնդրի կապակցութեամբ: Ամենուրեք սպորտին տրւած է ազգային բնոյթ: Մեզ մօտ միայն փոխառիկ սպորտը ազգային իդէոլոգիա չունի: Եւ հէնց այդ է պատճառը, որ մեզանում սպորտային գրականութիւն, մշակոյթ չէ ստեղծոււմ: Մեզանում դա կիրարկոււմ է մեքենաբար: Հայ մարզականին ցայսօր յանցապարտօրէն պակասում է երեք բան - Հայաստանին եւ Հայ Յեղին սպառնացող Մեծ վտանգի գիտակցութիւնը, Մեծ Նպատակը եւ Մեծ Նւիրումը - Ուխտը:

3. Նորահաս սերունդին վերաբերող ամեն կազմակերպութիւն - անկախ իր քաղաքական դաւանանքէն - եթէ աշխարհ եկած չէ

ցեղի անունով - անպետք է հայրենիքի համար: Նա, որ Ցեղակրօն չէ՝ ոյժի չի՝ վերածւիր: Նա, որ Ցեղակրօն չէ՝ կմնայ առանց մարտական խմորի, կմնայ անմարտունակ - ռազմիկ չի՝ դառնայ: Ռազմիկ, հրաշունչ ու յաղթական ռազմիկ լինելու համար բաւական չէ անգամ դաշնակցական լինելը, քաղաքականապէս անհրաժեշտ է դաշնակցական լինելը, նաեւ պատիւ է դա, բայց մեր դաշնակցական դաւանանքին պէտք է միացնենք ցեղի խռովքը, յաւիտենականի զգացումը, պաշտամունքը՝ կատարեալ մարտիկ դառնալու համար: Դաշնակցութիւնը չէ ունեցած մի հատիկ մարտիկ, որ ցեղակրօն, ցեղաշունչ, ցեղահոգ չլինէր: Անցեղաճանաչ ու անցեղապաշտ կազմակերպութիւնները - մասնաւորապէս նորահասին պատկանողները - հեշտութեամբ դառնում են ներքին չարիք, նրանք դիմամիկ նպատակի ու խանդավառիչ գործերի պակասի շնորհիւ դառնում են հոգեւոր ճահիճ, եւ այսպիսով թունաւորում իրենց մատղաշ անդամների միտքն ու զգացումը: Այդ ճահճացած կազմակերպութիւնները՝ իրենց մէջ առնելով ցեղի ջահել զաւակները՝ նրանց կտրում են ցեղի հոգեւոր կաթէն, որով եւ հեշտացնում վերջինների վատասերումը: Նրանք նմանում են այն հոտած ճահիճներին, որոնք առնում են իրենց մէջ զետ ու առուակների վճիտ ջրերը եւ հոտեցնում: Հայօրէն դաստիարակելու կարօտ ամէն էակ - մանուկ, պատանի, երիտասարդ - կարիք ունի իր յաւիտենական մօր ծօին, իր ցեղին: Արդ, թէ ինչո՞ւ պէտք է ողբալ ճակատագիրն այն բոլոր դժբախտների, որոնք դեռ միացած չեն Ցեղակրօնութեան: Պէտք է ողբալ այն բոլոր կազմակերպութեանց ապագան, որոնց հոգեւոր կեանքը լեցնում են փոքրիկ նպատակը, նոյնքան փոքրիկ գործերը եւ «կրիայի քայլերի» խղճուկ պրոպագանդը: Չէ՛ կարելի ջահել լինել - պատանի ու երիտասարդ լինել - եւ ցեղակրօն չլինել: Հոգեւոր ծերեր են նմանները: Ով ուզում է - սա պէտք է ընդունել որպէս օրէնք - ով ուզում է ոյժի վերածւել եւ իր ցեղի դիմադրական ոյժն աճեցնել՝ մի տեղ, մի՛ միայն մի տեղ ունի - Ցեղակրօն Ուխտերը:

4. Ներքին թշնամիները - սուտ դաշնակցականը ու պակասաւոր հայը - Ցեղակրօնութեան դէմ կգործածեն վատութեան հետեւեալ զէնքերը՝

ա. «Ցեղակրօնութիւնը յարմար է միայն ամերիկահայութեան պայմաններուն: Այսպէս թութակողները - մտքի անազնութեամբ տառապողները - կուզեն կեղծել, որ միայն Ամերիկայի մէջ վտանգաւած է մեր նորահաս սերունդը, երբ նոյնը հաւասարապէս վտանգ-

լած է մեր բոլոր գաղութներում՝ Թավրիզին մինչև Փարիզ, Սուրիային մինչև Բալկանները: Ամենուրեք հայ մանկտին ու պատանեկութիւնը՝ ցեղօրէն անհնքնաճանաչ տառապում է ստորադասութեան, անլիարժեքութեան, նուաստութեան գիտակցութեամբ:

բ. «Յեղակրօն Ուխտերը Դաշնակցական պատուաստը չեն ընդունած»: Այդ գրպարտութեան հեղինակները հանդիսացան նախ տեղիդ մէկ երկու դատարկապորտ կիսամտաւորականները, որոնք ուզեցին [Յ.Յ.Դ.] Բիւրօն եւ արտասահմանի մեր մարմինները նախապաշարել:

գ. «Դաշնակցութիւնը ուխտ մըն է ինքնին եւ պէտք չունի յաւելւածական ներարկումներու»: Այստեղ այլեւս ամենատգիտականութիւնը չէ, որ հաչում է Յեղակրօնութեան դէմ, այլ պօլսաշունչ, լըվանթէն կիսամտաւորականը, որի սուտ սոցիալիստութիւնը դէմ է Յեղին, Յեղակրօնութեան: Անցեղաճանաչը պակասաւոր դաշնակցական է, անկախ իր տարիքէն: Բացի այդ՝ ցեղը մարդկային նորահաս սերունդի համար, համաշխարհային պատերազմէն յետոյ, ստացած է հոգեբանական զօրաւոր գրաւչութիւն, դա դարձած է մի փրկարար *idée force* - «գաղափար զօրութիւն»:

դ. «Կարելի է - չարաբանում են ներքին թշնամիները - առանց ցեղակրօն անուան էլ նորահաս սերունդը ցեղապաշտ դարձնել»: Այդ պնդումի մէջ եւ շառլատանութիւն եւ վատութիւն կայ: Դա ասել է՝ մէկին կարելի է քրիստոնէայ դարձնել առանց Քրիստոսի եւ քրիստոնէութեան: Սրանք էապէս անուան դէմ չեն միայն, այլ՝ ցեղի, Յեղակրօնութեան: Յաջողեցա՞ն այսօր անունը փոխել տալ, վաղը այլեւս վրան բաց կերպով կհալածեն մեր դաւանանքն ու նորահաս տարիքը:

զ. Արտասահմանի ուխտերը, հեռաւորութեան պատճառով, չեն կարող ղեկավարել [Յ.Յ.Դ.] Ամերիկայի կ[ենտրոնական] վարչութեան կողմից: Սնանկ է եւ այս միտքը:

Յապա Պարսկաստանի, Սուրիոյ, Երոպայի եւ Բալկանների «Գթութեան խաչերը» ինչպէս են ղեկավարում Ամերիկայի կենտրոնական] վարչութեան կողմից:

է. «Ուխտերն աւելի Նժդէհին են կապւած, քան Դաշնակցութեան» - այդ պրովակասիոնի հեղինակներին դուք ճանաչում էք տեղիդ վրայ, որոնք մեր շարժման դէմ դաւել սկսեցին նրա գոյութեան հէնց առաջին օրերից: Վերջերս գրեցի տեղիդ կենտրոնական] կոմիտէին որ գործածութիւնից հանէ իմ պատկերը կողո դրոշմա-

նիշը: Գուցէ այսպիսով բաւարարուեն հայկական նախանձն ու փոքրոգութիւնը եւ դադարեն դաւել Յեղակրօն շարժման դէմ:

Չերկարեն: Մատնանշածներէս աւելի՛ են հակացեղակրօն չարութեան զէնքերը: Նկատի առնելով այդ ամէնը, դուք, որպէս ուխտերի ղեկավարներ, ձեր սրբազան պարտականութիւնը պէտք է համարէք՝

1) Պատգամաւորական ժողովների մէջ ամենայն վճռականութեամբ [դատապարտել] Յեղակրօնութեան դէմ դաւող բոլոր չկանութիւնները: 2) Ատամներով պաշտպանել ցեղակրօն անունն ու դաւանանքը: 3) Ձգւանքի ու զայրոյթի բանաձեւ քուէարկել տալ Բուքրէշում լոյս տեսնող հոսոսաշունչ «Արագ» թերթուկի հակացեղակրօն ելոյթի դէմ: 4) Աշխատել, որ Խ.[ayrenik] Weekly-ն պրոպագանդ տանի Յեղի-Յեղակրօնութեան գաղափարների համար: 5) Խնդրել «Չայրենիք» օրաթերթի խմբագիրներին, որ տեղ չտան ծպտուած հակացեղակրօնների գրուածքներին (վերջերս «Չայրենիք» օրաթերթի մէջ լոյս տեսաւ Արմէն կոչւած (Յով[հաննէս] Դեվէճեան՝ քշուած Բաւկանէն, եւ այժմ Բուքրէշում միացած Սիրունի¹-Սարունի² հակացեղակրօն թայֆային) գրչի շառլատանի մի գրութիւնը Յեղի մասին, որը էապէս ուղղւած է Յեղակրօնութեան դէմ):

6) Ուխտերը մղել զբաղելու առաւելապէս օդաչուական սպորտով, պարաշուտիզմով:

7) Շարունակել - մեծ թափով - նորահաս սերունդի զօրահաւաքը Յեղակրօնութեան դրօշի տակ:

Համբուրելով ձեզ՝ յաջողութիւն կմաղթեն ձեզ:

Նժդեհ

1937, 7 յուն. Սօֆիա

12.

6 ապրիլ 1937թ.
Բուքրէշ

Սիր[ելի] Օհաննէս,

Գեւորգի նամակից իմացայ, որ դեռ չես ստացած քեզ գրածս նամակը: Այժմ ստացած կլինես: Յուսով եմ, որ քեզ յատուկ վճռականութեամբ կգործադրես գրածներս: Մեր կուսակցութեան բարձունք-

¹ Հակոբ Սիրունի (1890-1973) - հրապարակախոս, պատմաբան:

² Ս. Սարունի - 1927թ. Բուխարեստում խմբագրել է «Հրազդան» ամսաթերթը:

ներում աւելի ապականութիւն կայ, քան տեսնում ենք: Միայն վերջին 5-6 ամիսների ընթացքում տեղի ունեցած հոգեւոր այլանդակութիւնները կբաւեն զգուանքով ու զայրոյթով լեցնելու ամէնէն հաւատաւոր ու մեղմ դաշնակցականին: Վահան Փափազեան - նախկին Բիւրօի անդամ - «Վէմ»ի մէջ լոյս ընծայեց իր յուշերը Տարօնի մասին: Իր յուշերի մէջ այդ մարդը Ռուբէն Տէր Մինասեանին դուրս է բերել իբրեւ ժողովրդասպան: Միեւնոյն «Վէմ»ի մէջ Ս. Վրացեանը բարոյապէս սպանում է Ռուբէնին - Տարօն աշխարհի ղեկավարութեան բացարձակ անկարողութեամբ: Սրանով չբաւականացան: Ռուբէնի մի գրքոյկի առթիւ՝ Վրացեանը իր ամսագրի մէջ մի կրքոտ յարձակումով բարոյապէս տրորում է Ռուբէնին՝ վերջինիս անւանելով հիմնական ձեւակերպւած մտքերից զուրկ, հակագիտական, «վիճելի, տարօրինակ», բուլշեւիզմն արդարացնող, «քաջազնունի» եւ այլն եւ այլն: Թոյն ու թշնամանք - ահա՛ թէ ինչով է թաթախւած Վրացեանի գրախօսականը: Վրացեանը գիտէ, որ Ռուբէնը Բիւրօի անդամ է, որ նման հրապարակային ելոյթներով նա մատնում է Բիւրօի եւ իր միջեւ գոյութիւն ունեցող թայֆայական կռիւր, որ դրանով շարքերը գրգռում է Բիւրօի դէմ եւ զէնք է տալիս հակադաշնակցական տարրերի ձեռքը՝ Դաշնակցութիւնը հարուածելու համար:

Թշնամութիւնը այնքան զօրաւոր է այդ մարդկանց միջեւ, որ դժւարանում են զսպել իրենց ախտաւոր կիրքը, եւ մատնում են, թէ Դաշնակցութիւնը ղեկավարութիւն չունի, թէ ղեկավարները իրար են կրծում եւ այլն: Եւ այդ այն ժամանակ, երբ քեմալական թուրքիոյ մէջ նոր օրէնքով, 16-ից մինչեւ 64 տարեկանը, երկսեռ, յայտարարւած է զինւոր, երբ թուրքիան ծի է նստել աշխարհի այս խռով օրերին:

Ինտրիգանը անկախ իր տարիքից եւ կարողութիւններից, չէ կարող ղեկավար լինել թայֆա ստեղծողը, եւ թայֆայի քուէներով իւր ընտրութիւնը ապահովելու ձգտողը չէ կարող մնալ կուսակցական ղեկավարութեան մէջ: Եթէ 15 տարի հաց ու հանգիստ փնտռողը եւ ամէն ընդհանուր ժողովի նախօրեակին արհեստական կերպով շրջաններ խառնշտկողը չէ կարող Բիւրօի անդամ լինել: Այդ դաւանտութեամբ հիւանդ մարդիկ պիտի հասկանան, որ չէ կարելի շարքերը նախիր համարել եւ մութ մեքենայութիւններով կուսակցութեան ղեկը իրենց ձեռքին պահել: Ով պատրաստ չէ, ով հաղորդւած չէ՝ ամէն վայրկեան մեռնելու Հայաստանի համար, պէտք է համարուի կենդանի դիակ՝ մեռեալ Դաշնակցութեան եւ Հայութեան համար:

Այդ դաւադիրները, այդ կենդանի մեռեալների օձաթոյն նախանձը պատճառ դարձաւ, որ Ցեղակոսնութիւնը մնայ միայն Ամերիկահայութեան սեփականութիւնը, որ ցայսօր անկազմակերպ մնայ գաղթաշխարհի նորահաս սերունդը:

Թուրքն ու բուլշեփը կուզէին մեզ տեսնել այս անկեալ վիճակի մէջ, իսկ այդ անկեալ վիճակում է հայութիւնը մեր դաւադիրների քաղաքական դատարկապորտութեան շնորհիւ: Գիտցիր, որ Վրացեանը վրան բաց կերպով կռիւ է յայտարարել օրւայ Բիւրօին: Ռուբէնը ինչ-ինչ հաշիւներով հրաժարուում է ընդունել Վրացեանի մարտահրաւերը: Վրացեանի կատարածը մի ռազմախաղ է: Նա ճգնում է ամէն գնով, ընդհիլանուր] ժողովում փրկել իր Բոստոնի ծանօթ 3 դաւադիրներին, որոնց դաւաճանութեան երեսէն Ամերիկայի մեր կազմակերպութիւնը մատնեց անհաշիւ մեռեալ ծախքերի եւ դեռ երկար ժամանակ պիտի աշխատի քաւել 3 սրիկաների մեղքը: Մօտենում է ընդհիլանուր] ժողովը եւ ներքին վատութիւնները ակտիւացած են:

Մութի մէջ գործի են դուած բոլոր ժանգոտ գէնքերը - կաշառում, խոստում, սպառնալիք եւ այլն: Այս ճամբով են ուզում շէֆութիւն ձեռք բերել նրանք, որոնք հայոց նորագոյն պատմութեան ամենավտանգալից եւ նեղ օրերին՝ տմարդօրէն լքած են ժողովուրդը: Այդ մեռնել չգիտցողներն են այսօր կոււաղաշտի վերածել մեր ներքին կեանքը: Ամէն գնով ընտրուել՝ ահա՛ սրանց կեանքի միակ նպատակը: Իսկ ընտրուելուց յետոյ՝ ամէն գնով արգիլել գործելու, ստեղծագործելու, մեռնելու տրամադիր մարդկանց - ահա՛ եւ սրանց միակ գործը: Վրացեանը վերադարձաւ Զարաւ[ային] Ամերիկայէն եւ անմիջապէս այդտեղ ուղարկեց մութ անցեալի տէր Աշոտ Արծրունուն¹: Այդ լակտըր գնացել էր Երկիր, եւ երբ վերադարձաւ, այլեւս կասկածներ կային, որ կարմիրների հետ կապ ունի: Ընդհիլանուր] ժողովը սրան ներս չառեց: Վրացեանը տէր կանգնեց (սրա տակտիկան է՝ տէր կանգնել բոլոր տեսակի վատերին եւ օգտագործել նրանց ընկածութիւնը) սրան եւ շահագործեց:

Մի ուրիշին կաշառով անբարոյականացնելէ յետոյ այժմ ուղարկում են Սուրիա, Պարսկաստան: Վերջին տարիները կաշառը դարձրել են զօրաւոր միջոց՝ նիւթապէս ու հոգեպէս աղքատ ընկերներ

¹ Աշոտ Արծրունի (1902-1979) - մի քանի անգամ գաղտնի կերպով եղել է Զայաստանում, ԽՍՀՄ-ում կազմակերպել Զ.Յ.Դ. կենտրոնական կոմիտեների գաղտնի խորհրդաժողով:

որսալու: Մարդկանց կաշառում եւ ուղարկում են իրենց թայֆայի համար պրոպագանդ, իսկ իրենց հակառակորդների դէմ բամբասանք անելու: Դա է օրւայ «յեղափոխական» ու «մարտական» գործը: Մենք ասում ենք՝ երբ մեռնելու տրամադիր մարդիկ կան, կարելի է յեղափոխական գործ անել: Նրանք զգացնել են տալիս, թէ իբր աշխարհում անբարոյականութիւն, իսկ իրենց գրպանում դրամ կայ՝ կարելի է Բիւրօի անդամ ընտրուել եւ ոչինչ չանել: Չերկարեն այդ մասին: Էլի կրկնում են՝

ա. Ատամներով պաշտպանել Յեղակրօն անուճը: Անուճը փոխելով՝ դաւադիրներն ուզում են սրտից զարկել Յեղակրօն շարժումը:

բ. Պատգամաւորական ժողովում ցաւ յայտնել Բիւրօին, որ չօգուեց Յեղակրօն շարժումէն եւ չաշխատեց զայն դարձնելու համագաղութային:

գ. Ջայրոյթ յայտնել «դաշնակցական» այն վրացեանական թերթերին, որոնք դէմ արտայայտեցան Յեղակրօն շարժման («Արագ», «Յառաջ»):

դ. Պահանջել ընդհանուր ժողովէն, որ համագաղութայնացնէ Յեղակրօն շարժումը:

ե. 3-ի կողմից Ամերիկայում նիւթած դաւը հնարաւոր դարձնող վրացեանի նամակը, խարդախած պատգամաւորական ժողովը եւ Սաչաքլեանին հեռացնելը դարձնել խնդրի առարկայ ընդհանուր ժողովում եւ պահանջել դաւադիրների արտաքսումը Դաշնակցութիւնից:

Միայն, միմիայն այս ճամբով կարելի պիտի լինի փրկել Դաշնակցութիւնը իր դէմ գործող եւ զինքը շահագործող մաֆիայից եւ զայն ծառայեցնել Հայաստանին:

Եթէ չընէք այդ՝ մեղանչած պիտի լինէք թէ՛ Դաշնակցութեան եւ թէ՛ Հայաստանի դէմ: Հաւատում են, որ կընէք: Գտնում են Բուքրէշում: Սպասում են վիզայի՝ մեկնելու Եգիպտոս: Ի՞նչ է անում Կոպերնիկը: Նրան էլ գրած են: Դաշնակցութեան մէջ բաւական չէ արդար եւ ուղղափառ լինելը: Պէտք է նաեւ ճակատ ունենալ, այլապէս դաւադիր հացապաշտները իրենց հանգիստն ապահովելու համար արդարի դիակի վրայով կանցնին:

Ընկ. Սարգիս Արարատեանի մօտ են: Կապէք սրա հետ: Է՛ր, է՛ եւ կմնայ մեր ամենապատրաստած մտաւորականը: Անփոխարինելի է որպէս քաղաքական գործի մարդ: Պիտի ուզէի, որ նրան հրաւիրէիք Ամերիկայ: Գրիր, կապւիր նրա հետ: Ահա հասցէն.

Mr. S. Araradian, str. Stf. Mihaileanu N. 21, Bucuresti, Romania.
Բարեւիր Գաբրիէլին եւ բոլոր ընկերներին:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

1937, 6 ապրիլ, Բուքրէշ

13.

21 ապրիլի 1937թ.
Խստօրէն անձնական է

Սիր[ելի] Օհաննէս,

Երկու օրէն կմեկնիմ Եգիպտոս՝ [Յ.Յ.Գ.] Բիւրօի հետ տեսակցելու: Ջզւանքս ու զայրոյթս չափ ու սահման չունի: Հոգեւոր մանրութիւն - մանրօրէն դաւելու, թշնամանելու, նախանձելու ախտէն պիտի մեռնի մեր հին սերունդի այն տարրը, որը հացէն ու նախանձէն զատ ուրիշ բան չը ճանաչեց իր անպտուղ կեանքում: Այդ չարագործ տարրի շնորհիւ Դաշնակցութիւնը դատապարտուած է քաղաքական դատարկապարտութեան: Այդ տարրը անշնչելի է դարձրել կուսակցական մթնոլորտը, թունաւորել: Աստուր կոչուած ինտրիգանիմ Բուլղարիա ուղարկելը կմնայ ամենամեծ վատութիւնը:

Բուլղարիոյ Գթութեան խաչի պատգամաւորները տարիներով եղած են դոքտ. Բարսեղեանը եւ Սեպուհը, եւ սպասելի էր, եւ տարրական շիտակութիւնը կպահանջէր Բուլղարիա ուղարկել Արմենակին կամ Սեպուհին:

(Եթէ կարիք կար մարդ ուղարկելու, եւ ոչ թէ Ասատուրին, որը տարիներով դաւած է իմ եւ Բուլղարիոյ դէմ: Ցաւում եմ, որ տիկին Տեստիգիւլը գիտակցօրէն մոլորանքի մատնեց ինձ: Չէի սպասում: Միթէ նա չգիտէ, թէ ինչ դաւեր կային, կան իմ եւ Բալկանի դէմ: Միթէ չգիտէ, որ Ամերիկայում եղածս ժամանակ, Կ[արմիր] Խաչի պատգամ[աւորական] ժողովներում, իրեն պաշտպանած լինելուս համար ծանօթ խմբակին (Ասատուր, Օզան¹, Համօ) մեծապէս գրգռած էի իմ անձի դէմ: Ինչպէս կարելի էր Գթ[ութեան] խաչի խնդրի քննութիւնը թողնել Ասատուր կոչուածին, երբ տիկին Դեստիգիւլը եւ դոք բոլորդ գիտէք, որ Ասատուրը մութ հաշիւներով է ուղարկուում Բուլղարիա: Երկու ամիս է, ինչ այստեղ է եւ Գթութեան խաչի անունն իսկ բերանը չէ առել: Նա սպասում է, որ ես մեկնիմ, հեռանամ Բուլղարիայէն, որ իր ուզածի պէս թիւ է ու հաղորդագրէ: Տիկին Դեստիգիւլը

¹ Խոսքը Սերուժան Օզանյանի մասին է:

ինչու՞ գրեց ու հեռագրեց, թե ես եմ իրենց լիազօրը,- նրա համար, որ երկու օր յետոյ չեղեա՞լ յայտարարէին այդ լիազօրութիւնը: Այդ սպասելի չէր տիկին Սիրանուշէն: Ինչ որ է, չեմ գարմանում, որովհետեւ վաղուց եմ համոզուել, թէ գաղութ կոչուած դժոխքում սուրբն ու սրիկան, ռազմիկն ու սրիկան միեւնոյն արժէքն ունեն: Եւ այդ հայութիւնը հայրենիք կուզէ !?...

[Բ.Յ.Դ.] Ամերիկայի կ[ենտրոնական] կոմիտէն էլ չուզեց չէզոք մնալ, չխառնուել Բալկանի խնդիրներին: «Յեղ եւ Յայրենիք»ի դէմ պաշտօնական խնդիր յարուցողը եղաւ տեղիդ կ[ենտրոնական] կոմիտէն: Նոյնը Բիւրօին պաշտօնապէս հաղորդագրած է նաեւ այն մասին, թէ Տժդեհը յանձնարարած է «Յեղ եւ Յայրենիք»ը:

Ես գիտէի, որ Օզան կոչուածը իժաբար պիտի խայթէ ինձ: Ծանօթ ինտրիգանի այդ սաստակ գործակալը վրժ է լուծում: Ինձ գրած են, թէ Ամերիկայում եղածս ժամանակ ես աշխատած եմ գոյութիւն ունեցող կողմերէն մէկի համար - ձեր կողմի համար: Այդ «համոզումն» է կայացրած Ամերիկան այցելողները: Ծանօթ խմբակը այսպէս է «լուսաբանել» լիազօրներին եւ գործիչներին: Ես գիտէի, թէ իմ ազդեցութիւնը տկարացնելու համար՝ պիտի դաւեն Յեղակրօնութեան դէմ: Անունի խնդիր չէ: Ոչ թէ անունին դէմ են, այլ ոգուն, գաղափարին, նորին, նոր սերունդին: Կռիւր Ամերիկայի համար է: Իմ դէմ կդաւեն՝ Յեղ տկարացնելու, ինչպէս Յեղ կգարկեն՝ ինձ տկարացնելու: Կոպերնիկին «զարկեցին» Ամերիկայի մէջ, կփորձեն ինձ զարկել Բալկանի մէջ: Հին տակտիկա է: Գործ պահանջողը ուղղափառ չէ, իսկ գործ անողը՝ նա՛եւ վտանգաւոր է: Մենք գործ ուզեցինք, եւ գործ արինք - եւ սուտ դաշնակցականների թշնամութիւնն ու թոյնը գրգռեցինք: Յիշու՞մ ես Վրացեանի նամակը գրուած Արսէն Միքայէլեանին Ձեր պատգամաւորական ժողովի նախօրեակին: Այդ նամակի մասին խօսեց Արսէնը Օզանի տանը, իմ եւ Սաչաքլեանի ներկայութեան: Այդ նամակով Վ-ը կոնկրետ թելադրութիւններ կընէր, թէ որոնց պիտի քաշել կենտր[ոնական] կոմիտէի մէջ: Այդ նամակի հիման վրայ խարդախուեց ծանօթ պատգամաւորական ժողովը, որի օրինականութեան դէմ ժամանակին բողոքեցին դոքսորը՝ Կայծակը եւ մի շարք ընկերներ մասնաւոր կարծիքներ արձանագրել տւին: Այդ ապօրէն ժողովին, Վրացեանի հրահանգով պէտք է ընտրուէր ծանօթ կենտր[ոնական] կոմիտէն: Ծանօթ դաւադիրների մեքենայութեանց շնորհիւ գործավարութիւնէն պիտի հեռացուէր Սաչաքլեանը, որպէսզի մնացածները կատարեն այն տեղիդ մեր

կազմակերպութեան (եւ ողջ Դաշնակցութեան) գլխին, ինչ որ կատարեցին: Թէ ինչո՞ւ տեղի ունեցաւ պրովոկացիան եւ թէ ո՞րի դէմ էր ուղղւած դա, այդ մասին ժամանակին խօսած էք ինձ: Պէտք էր վտանգել Նժդեհի գործը, Նժդեհին - ահա՛ թէ ինչո՞ւ տեղի ունեցաւ դաւը, եւ սատանայաբար վերագրուեց Նժդեհին:

Գիտէք, թէ Քրմոն¹ ինչ լուրեր կտարածէր: Չերկարեմ այդ մասին: Ամերիկայի մեր կազմակերպութեան - ինչպէս Բալկանի - դժբախտութեան պատճառ դարձաւ Վր[ացյա]նի մութ նամակը: Այդ նամակէն կսկսի մեր եւ ձեր դժբախտութեան այբուբենը: Այդ նամակի գոհերն են մեր 9 ընկերները: Այդ նամակը խառնշտկեց գաղթաշխարհը՝ առիթ տուեց հակադաշն[ակցական] տար[ր]երին մեզ ամբողջապէս զբաղեցնելու ներքին ճակատի վրայ: Այդ նամակի պատճառած ծախքերը կմնան անարդարանալի: Ծախսուած գումարներով կարելի պիտի լինէր գլուխ հանելու մեր երկրի ինքնապաշտպանութեան մի մասը, նրանով կարելի պիտի լինէր հսկայական հակաթիրք գործ կատարել:²

Մօտենում է ընդհ[իսանուր] ժողովը: Ասատուրին Բիւրօի լիազօր դարձնելը նշան է, որ ընդհ[անուր] ժողովում նա ոչ թէ կպատժի իր նիւթած անօրիակ դաւի համար, այլ կվարձատրուի: Եթէ այդ վատութիւնը Ասատուրներին եւ նրանց դաւերի մղող վարժապետին³ ներեց Ամերիկան՝ նա անուղղակի կերպով ներած կլինի թուրքերին: Չգիտեմ, թէ ովքեր են լինելու ձեր պատգամաւորները, բայց գիտեմ, որ դաւի հեղինակները ամէն ինչ պիտի անեն, որ ձեզանից մի հատիկ մարդ չերեւայ ընդհ[անուր] ժողովում: Կմնայ, որ դուք կանչէք Կոպերնիկին եւ ամէն գնով նրան ուղարկէք ընդհ[անուր] ժողովին:

Կոպերնիկը լա՛ւ պիտի հասկանայ, որ եթէ ինքը ներկայ չլինի, եւ երեւան չգայ դատապարտողի դերում՝ անասուածօրէն պիտի սեւացնեն իրեն: Չեր կ[ենտրոնական] կոմիտէն կարող է լինել, որ ուղարկեն դոքս. Դաշչեանին: Իմ հանդէպ բարեացական չէ այդ մարդը: Թէ ինչպէս է տրամադրուած դէպի դաւադիրները եւ դէպի

¹ Հավանաբար նկատի ունի Յ.Յ.Դ. գործիչ Վ. Քրմոյանին:

² Եջի լուսանցքում Գ. Նժդեհը հավելել է. «Գրեցի Ամերիկայի կ[ենտրոնական] կոմիտէին, որ վերջ տրուի Ուխտերի կողմից գործածուող իմ պատկերը կրող դրօշմանիշին: Պահանջեցի նոյնպէս, որ իմ անունը վերցուի չգիտեմ թէ որտեղի ակումբի վրայէն»):

³ Նկատի ունի Ս. Վրացյանին:

ծեզ՝ չգիտեմ: Գուցէ եւ յարմար համարէք ձեր բողոքը ընդհիւսնուրը ժողովին յղել սրա միջոցաւ, եթէ Կոպերը¹ կարելիութիւն չունեցաւ գնալ, կամ չուզեց գնալ: Լսի՛ր, եւ մի մոռանար, սիր[ելի] Օհաննէս, մի ժողովուրդ, որը չգիտէ իր ներքին սրիկաները պատժել՝ չպիտի կարողանայ պատժել իր գոյութեան արտաքին թշնամիներին:

Ինչպէս ասացի՝ երկու օրէն կմեկնիմ Եգիպտոս: Դաւադիրներին յաջողեց ոչ թէ անպատիժ կերպով դաւել մեր դէմ, այլեւ՝ Բիւրօին հանել, լարել իր բարեկամների դէմ: Այսպէս է գործում դաւամտութեան սատանան: Եւ յաջողում է դաւադրողը, երբ շրջապատը քուն է մտած: Եթէ ժամանակին Վ-ի նամակը խնդրոյ առարկայ դարձնէր Բիւրօի լիազօրը (Կոպերնիկը)՝ այսօր ինքը, մենք եւ կուսակցութիւնը այդ վիճակի մէջ չէր լինի:

Բիւրօի հետ տեսակցելէ յետոյ վճռած եմ օպերացիայի ենթարկել լեարդս եւ լեղուցքս: Բժիշկները խորհուրդ են տալիս առայժմ խուսափիլ օպերացիայէն, որովհետեւ կարիք ունիմ բարդ օպերացիայի: Լեղուցքս եւ 12-մատնեայ աղիքս միացել են իրար: Պէտք է աշխատել, որ այդ երկուսը զատուեն իրարից, եւ յետոյ կատարել օպերացիան: Իսկ սրա համար պէտք 2-3 ամիս մնալ Վիշի (Ֆրանսա) եւ օգուել հանքային ջրերից: Նիւթ[ական] միջոցներ չունիմ: Ուղարկում եմ քեզ «Իմ պատասխանը կամ Հայաստանի ողբերգութիւնը թրքօ-բուլշեւիկ փաստաթուղթերի լոյսի տակ» գիրքը:

Բարի եղիր, խնդրում եմ, տղաներիդ միջոցաւ (ինչպէս եւ մօտիկ ընկերուհիների՝ Սինայի, Նուարդի, Սիրունեանի եւ այլոց) սպառել տալ եւ փոխարժէքը մաս առ մաս հասցնել ինձ: Արտասահմանի հասցէս կգրեմ Եգիպտոսից: Քեզ ուղարկածս գրքերը սպառել տուր Ուստրի, Ուոթթաունի, Ուայնթինսվիլի մէջ: Աճապարիւր, որ չհարկադրուեն վերադառնալ առանց բժշկւելու: Գինն է \$ 1:

Նամակս ուրիշների ձեռքը չտաս: Նախագգուշացուր Կ.[արմիր] Խաչ վարչութեան մօտիկ ընկերուհիներիդ, որ աշխատեն գործիք չդառնալ դաւադիրների ձեռքում:

Սիրով եւ եղբայրօրէն՝ **Նժդեհ**

1937, 21 ապրիլի, Սօֆիա

Նամակները գրիր Սոֆիայի հասցէիս, տիկինս կուղարկէ ինձ:

Նոյնը²

¹ Նկատի ունի Կոպեռնիկ Թանդրճյանին:

² Այսքանը հակառակ շարքով գրված է թղթի վերևում՝ հավելագիր է:

Սիր.[ելի] Օհաննես,

Գրում եմ Սօֆիայէն: Վերադառնալով՝ սեղանիս վրայ գտայ Ռուբէն Դարբինեանի¹ նամակը, որով երկտող կուզէ «Յ»-ի² համար: Ուղարկեցի Կոստանեանների հասցէին, որ տանին անձամբ յանձնելու Դարբինեանին: Այդ միեւնոյն նամակի մէջ Դարբինեանը հարցնում է՝ արդեօք հաւատ ունի՞ս անգամ մը եւս Ամերիկա գալու: Թերեւս այս անգամ կընես պէտք եղած գործողութիւնը: Գրէ տրամադրութիւնդ: Չգիտեմ, թէ ընկ[եր] Դարբինեանը որի կողմից է թելադրած ինձ գրելու այդ մասին: Ես նրան խոստացայ մի քանի օրէն գրել՝ «այո՛» կամ «ոչ»:

Պիտի ուզէի, որ դու շօշափէիր ձեր կ[ենտրոնական] կ[ոմիտէ]ի տրամադրութիւնները եւ անմիջապէս ինձ գրէիր: Այո՛, կուզամ, եթէ գիտեանամ, որ կգործակցիմ մի բարեացական կ[ենտրոնական] կ[ոմիտէ]ի: Ցեղակրօն շարժումը խորացնելու եւ զայն համագաղութային դարձնելու համար կուզամ թէկուզ համոզւած լինեմ, որ առողջութեանս մնացորդն էլ այս անգամ վրայ կուտամ:

Սիրելիս, Եգիպտոս այցելելէս յետոյ խորապէս համոզւեցի, որ Դաշնակցութիւնն անգլուխ է, անղեկավար, քաղաքականապէս անգործ: Չորս-հինգ հոգի, ամբողջ 15 տարի իրենց հացին ու հանգստին կծառայեցնեն մեր կուսակցութիւնը: Ամբողջ տասնամեակներ սպանեցին՝ սպանելով մեր ժողովրդի քաղաքական կամքը: Սիրտ եւ կարողութիւն չունեն տասը սէնթի գործ կատարելու, բայց հազար ու մի մեքենայութեանց կդիմեն ընտրուելու եւ վերընտրուելու Բիւրօի անդամ:

Ռուբէն Տէր Մինասեան կոչւածը, որը Սասունի ու Տարօնի ժողովուրդը կրակների մէջ թողնել-փախչելէն յետոյ խղճի խայթից մղւած ատրճանակը ճակտին պիտի դներ՝ (նոյնը, եթէ տղամարդ լինէր, եւ ոչ թէ երկչոտ ինտրիգան, պիտի կատարէր Ղարսն առանց գնդակի թուրք չետաներին յանձնելուց յետոյ) ողջ 20 տարի Բիւրօ կխաղցնէ, ղեկավարութիւն կկեղծէ եւ իր վճարովի անգործութեամբ կդաւէ ու կդաւէ այն բոլորի եւ այն բոլոր փրկարար շարժումների, նախածնունդութեանց դէմ, որոնք հայ ժողովրդի ճակատագրով ապրողները կփորձեն

¹ Դարբինյան Ռուբեն (Չիլիկնկիրյան Արտաշէս) - Յ.Յ.Գ. ղեկավար գործիչ, «Յայրենիք» ամսագրի խմբագիր:

² «Յայրենիք» ամսագրի:

մեր ապագան մասամբ ապահով դարձնելու միակ նպատակով: Այդ դաւադիրը՝ Ցեղակրօն շարժումը տապալելու, նրա առջեւ խոչընդոտներ հանելու, ինձ եւ իմ գործը վտանգելու դիւային հաշիւներով Խդրեան կոչուած մի հասարակ սրիկայի միջոցաւ կազմակերպեց Ամերիկայի քեզ ծանօթ դէպքը եւ հարիւր հազարների հասնող մեռեալ ծախքերի դուռ բացեց մեր կուսակցութեան առջեւ: Այդ հրէշի շնագայլային չարութիւնը դեռ գործի վրայ է: Նա իր վերընտրութիւնը (պատժելու մասին Խդրեանի հետ բնաւ չեն մտածում) ապահովելու համար արդէն պառակտած է Բալկանը, Սուրիան եւ Պարսկաստանը: Քանի դեռ դա մեր կուսակցական ղեկավարութեան մէջ է, Հայաստանի ինքնապաշտպանութեան համար ոչինչ կարելի է կատարել: Ինքն անկարող ու երկչոտ՝ նա դէմ է եւ թշնամանում է, խանգարում այն բոլորին, որոնք կուզեն բան կատարել Հայ Հայրենիքի համար:

Ամերիկայում տեղի ունեցած անիմաստ եւ տմաքանդ դէպքի համար ընդունայն ծախուած հարիւր հազար դոլարներով կարելի էր Հայաստանի ինքնապաշտպանութիւնը կազմակերպել, կարելի էր տասնեակներով աշխարհադրոդ հակաթուրք գործեր կատարել: Հրէշը իր կաշին եւ ոսկորը բոլշեւիկէն եւ թուրքէն փրկած իր ընկերոջ կեանքի եւ գործի դէմ դաւելու համար էապէս ծառայեց թուրքին եւ բոլշեւիկին: Ով շահագործում է Հայաստան եւ Դաշնակցութիւն անունները, բայց ոչինչ չէ անում նրանց հզօրացման համար, նա զինակիցն է թուրքի եւ բոլշեւիկի: Ամբողջ 20 տարի նախարարական ամսական ստանալ, եւ այդ լրբութիւնը միայն եւ միմիայն Հայաստանի եւ ճշմարիտ դաշնակցականութեան համար աշխատողների դէմ դաւեր նիւթելու համար: Ես հայոց պատմութեան մէջ չգիտեմ աւելի մեծ դաւաճանութիւն, քան այդ: Ընդունիր եւ հասկացուր ընկերներիդ, որ ամէն հանդէս՝ զօրահանդէս չէ՛, որ տարին հանդէսներով ու խօսքով լեցնել՝ չի նշանակում ծառայել Հայաստանին: Վերջ, վերջ պէտք է դուր ժամանակասպանութեան, որ ասել է՝ ժողովրդասպանութիւն, հայրենաքանդութիւն: Տէր Մինասեանի համար գոյութիւն չունի գաղափարաշունչն ու սրիկան, հացի կամ գաղափարի ծառայողը, եօթվէրք զինուորը կամ դաշնակցութիւն խաղացող Խդրեանը, այլ անոնք, որ դէմ են Ամերիկայում տեղի ունեցած սեւ դէպքին եւ անոնք, որ կարողարացնեն եղածը 100.000 դոլարների վատնումով:

Այսօր մէկն այնքան լաւ դաշնակցական է, որքան Տէր Մինասեանի հետ է ծանօթ խնդրում: Իսկ անոնք, որոնք հարիւր հազարների գնով մի սեւ կատու սատկեցնելը համարում են յեղափոխական

սկանդալ՝ համարում են հակառակորդներ, որոնց դեմ Տէր Սինաս-եանը իրեն ազատ է համարում դաւել թրքաբար: Ընդունելով, որ ընդհիլանուր] ժողովում ես կատաղօրէն պիտի դատապարտեմ ու պատժել տամ Խղրեաններին (նաեւ իրեն), նա Բալկանը սատանայ-ական հաշուով խառնշտկեց, որ զայն զրկէ պատգամաւոր ունենալու իրաւունքից - նա ընդհիլանուր] ժողովում - եթէ Ամերիկան եւ մեր այլ շրջանները չկարողացան պատին սեղմել չարագործներին՝ նա այս անգամ էլ կփրկւի եւ հազար ու մէկ մեքենայութիւններով կպարտադրի իրեն: Ամէն անգամ, երբ այդ հրէշը նեղը կընկնի (Տարօնի աղէտը, Չաւուշի սպանութիւնը, Ղարսի սկանդալը, 1933ի Փարիզեան խայտառակութիւնը եւ այլն) արիեստական կերպով ծնունդ կուտայ ներքին կուսակցական թնճուկների եւ այսպիսով կուսակցութեան ամբողջ ուշադրութիւնը կզբաղեցնէ նրանցով, եւ վարպետօրէն կփրկի իր պոչը: 1921ին Թավրիզում Ղարսի սկանդալը մարսելու համար կուսակցութեան գերագոյն մարմինին համոզեց, որ ես պատրաստուում եմ Անդրանիկի պէս քաշելու Դաշնակցութիւնից եւ ինձ կախակայել տուեց (կանխեց), պատճառաբանելով, թէ ես մարդկանց եմ ապտակել: 1933ին, ամենայն վարպետութեամբ հրահրեց Մարտկոցական շարժումը (սուտ կազմեր ստեղծելով, ինչպէս այսօր Բուլղարիայում) եւ գլխատել տուեց զայն՝ իր գլուխը անգամ մը եւս փրկելու համար: 1934ին, իմ բացակայութեան ժամանակ, իր լրտեսների միջոցաւ կխառնշտկէ Բալկանը, 1935ին Պարսկաստանը, 1936ին՝ Սուրիան - սեւ քուէներից ազատելու նպատակով:

Այդ մարդու շնորհիւ ոչ թէ բարոյա-քաղաքականապէս, այլ եւ թւապէս չէ աճում Դաշնակցութիւնը: Վերջին 20 տարւայ ընթացքում այս շահատակողը կուսակցութիւնից որպէս ամսական ստացած կլինի աւելի քան 2 միլլիօն բուլղարական] լեվա, որի դիմաց, իր ողջ կեանքում, Դաշնակցութեան համար շահած չէ եւ՝ ոչ մի հատիկ մարդ: Որքան վարպետորդի է, այնքան դերասան: Ժողովրդին եգիպտական հին փարաւոնների նման, քիչ կ'երեվայ, կ'ապրի մութի մէջ, եւ այնպէս կընէ, որ իր մասին խօսւի, թէ յեղափոխական ակտեր կազմակերպելով է զբաղւած: Եգիպտոսի շարքայիմները կխօսէին, թէ Տէր Սինասեանը անցած է Տերսիմ, երբ նա Բերլինում հիւր էր իր եղբօրը: Այս վերջին երեք տարիները աւելի ակտիւացած է իր ներքին չարագործութեան մէջ: Կատու է՝ աղուեսաբար առիւծի ինքնապաշտպանութիւն կկեղծէ:

Ողջ տարօնցիութիւնը իր դէմ է: Այս տարի Վրացեանը նրան իր «Վէմ»ի մէջ յայտարարեց՝ «տգէտ», «բոլշեւիզմը արդարացնող քաջագնունի»: Իսկ մի տարի առաջ Վահան Փափագեանը նրան նոյն «Վէմ»ի մէջ հռչակեց ժողովուրդասպան (Տարօն, Սասուն): Տ[արօն] Տուրուբերանի [Չայրենակցական Միութեան] կ[ենտրոնական] վարչութիւնը Ռ. Տէր Մինասեանին բարոյապէս պատժած լինելու համար Չայկ Ասատրեանին կարգած է իր պաշտօնական թերթի խմբագիր: Նոյն վարչութիւնը դիմած է ինձ հետեւեալ գրութեամբ՝ «...այդ կ[ենտրոնական] կոմիտէն (խօսքը տեղիդ նախին կ[ենտրոնական] կոմիտէի մասին է, որի միջոցաւ Տէր Մինասեանը կփորձէր Տ[արօն] Տուրուբերանի կ[ենտրոնական] վարչութիւնը կտրել Չայկէն) կողմ նկատելով անոր թելադրանքներու հանդէպ վերապահ պիտի մնանք: Ձեզ նկատած ենք անաչառ դատաւոր այս ...¹, կսպասենք Ձեր վճռին, որ մեզ համար ընդունելի պիտի լինի»...

Ասեմ, որ Տ[արօն] Տուրուբերանի վերջին պատգամաւորական ժողովը շատ լուրջ որոշումներ է առած, որոնք միայն պատիւ կարող են բերել իրեն: Կուզէի, որ կապէիր Տ[արօն] Տ[ուրուբերանի] կ[ենտրոնական] վարչութեան քարտուղար Տէր Իսրայէլեանի հետ: Պէտք է ակտիւանալ, պէտք է զգացնել տալ դաւադիրին, որ այլեւս Դաշնակցութիւնը «անշուն գիւղ» չէ, որ շարքերը այլեւս գիտեն, որ Տէր Մինասեանների գործը քամի է, եւ ուրիշ ոչինչ:

Օհաննես, սիրելիս, մի՛ զարմանար, եթէ ասեմ որ Տէր Մինասեանների դատարկապորտութիւնը սնուցանողը Ամերիկան է, այլեւս վայել չէ անգամ ամենապարզ շարքայինին, որ «եաշասն»² կանչէ եւ գիշերները հանգիստ քնանայ: Առիթն եկած է - Տէր Մինասեանը կատարեալ աղէտի մատնեց Ամերիկան - պէտք է սանձը քաշել եւ իր իսկական տեղը ցոյց տալ այդ տաղանդաւոր ինտրիգանին - Ռոստոմի մահէն յետոյ Տէր Մինասեանները երկու սուտ աստուածութիւնների պաշտամունքը կքարոզեն - կարգապահութիւն եւ կուսակցական մեքենա - այս երկու բաները կշահագործեն ճիշտ այնպէս, ինչպէս խաչագողը՝ խաչը: Կարգապահութիւն - ի՞նչ է դա: Ըստ Տէր Մինասեանի՝ կուսակցական ու հոգեւոր էշութիւն, որ շարքայինները պարտաւոր են ցոյց տալու, բոլոր դէպքերում, անգամ երբ «շէֆ»ը ժողովուրդը թողնում է կրակների մէջ եւ փախչում: Ոչ

¹ Մեկ բառ անընթեռնելի է:

² Թուրքերեն՝ կեցցե:

մի «քաւոր Պետրոս» այնքան օգուած չէ այդ անբովանդակ խօսքէն, որքան՝ Տէր Մինասեանը: Կարգապահութի՞ւն: Ճշմարիտ կարգապահութիւն ասել է՝ շարքայինների հաւատը դէպի իրենց ղեկավարների ամէն վայրկեան Յայաստանի համար մեռնելու, յանդգնելու, մի բան ճարտարելու կարողութիւնը: Շարքերի մէջ կա՞յ այդ հաւատը: Ոչ չկայ: Իսկ չկայ, որովհետեւ ղեկավարների մէջ հերոսական-բարոյական գործելու, զոհաբերելու, քաջաբար մեռնելու տրամադրութիւն չկայ: Ուրեմն, շարլատանութիւն է խօսիլ շարքերի կարգապահութեան մասին, երբ ղեկավարութեան պակասում են սովորական մահկանացուներին յատուկ առաքինութիւնը: Ամէն ծառայութիւն, որ դառնում է վճարովի արհեստ՝ պղծում է: Բալկան, Պարսկաստան, Սուրիա - այս բոլոր վայրերում ցաւ կայ, խռովք, հայրենապաշտութիւն եւ դաշնակցական խոր ուղղափառութիւն: Այս շրջաններում այլեւս շարքայինը կառքի ձիերի պէս աչքակալներ չէ կրում: Նա ուզում է իսկապէս եւ գիտակցօրէն օգտակար լինել իր ազգին - եւ սրա համար էլ ուզում է, որ Դաշնակցութիւնը ծառայէ իր կոչումին, ոչ թէ Տէր Մինասեանի հացին: Շատ երկարեցի: Այժմ կոնկրետացնեմ խօսքս:

1. Նախապատրաստիք քեզ գաղափարակից տարրերը, որ հաւաքաբար բողոքեն ընդի[հանուր] ժողովին եւ հասկացնեն, որ եթէ Խդրեանը եւ իր դաւակիցները չպատժեն-չքշեն կուսակցութիւնից՝ հազարաւոր ընկերներ Ամերիկայէն պայմանադրաբար կքաշեն կուսակցութիւնից, կ'ինքնամեկուսանան, մինչեւ որ նոր Բիւրօն կքննէ տեղի ունեցած դաւը եւ արդար պատիժներ կսահմանի: Լաւ գիտցէք, որ միայն այս վճռական քայլով կարելի պիտի լինի փրկել Դաշնակցութիւնը մութ ու շահագործող չարագործներից եւ այսպիսով նրան կարելիութիւն տալ, որ ծառայի Յայաստանին եւ հայ ժողովրդին:

2. Տէր Մինասեանը ձեր պատգ[ամաւորական] ժողովի տրամադրութիւններն ու որոշումները ծաղրելու համար՝ Խդրեան կոչւածին լիազօր կարգեց, ուղարկեց Բալկան նորանոր դաւերի համար, եւ ապա քաշեց տարաւ Եգիպտոս: Եթէ այդ կանոնագրա-բարոյական սկանդալը ներքէ, մոռանաք՝ Ջաւարեանի եւ Ռոստոմի արթուն խղճմտանքը պիտի դատապարտէ ձեզ: Խնդիր դարձրէք այդ աղաղակող վատութիւնը: Տէր Մինասեանը առանց սպասելու ընդի[հանուր] ժողովի դատաստանին՝ արդէն բարոյապէս արդարացրած է իր գործ-

ակալ Խդրեանին: Ի՞նչ է մտածում ձեր կ[ենտրոնական] կոմիտեն, ինչո՞ւ է լուռ, որոշ կարծիք չունի նա: Գրե՛ երկարօրէն եւ շուտով:

Տգրութիւն:

Համբոյրներով՝ Նժդեհ

15.

[1938թ.]

Սիրելի Օհաննէս,

«Հայրենիք» օրաթերթի մէջ (սեպտ. [եմբերի] 28) աչքէ անցուցի Ցեղակրօն Ուխտերու պատգ[ամաւորական] ժողովի որոշումները եւ եկայ այն տխուր եզրակացութեան, որ մեր ստեղծած այնքան կենսունակ ու խոստմնալի շարժումը ապրում է իր վայրէջքը՝ իր կոչումի եւ առաջադրութեանց բարձունքէն: Առնւած որոշումները վայել են մի շատ հասարակ երիտասարդական ընկերութեան, եւ ոչ մի դէպքում ցեղային խռով ապրող եւ յանուն վտանգւած ցեղի ուխտւած մի կազմակերպութեան:

Որոշումների մէջ չկայ եւ ոչ մի հատիկ բառ Ցեղակրօնութեան, ուզում եմ ասել՝ Ցեղակրօն Ուխտերի դաւանանքի մասին: Ղարսի սերունդը գաղջ վերաբերմունք ունէր դէպի այդ դաւանանքը, եւ այսօր ուխտերէն խլւած է այն: «Առանձնապէս ուսումնասիրել Դաշնակցութեան եւ Հայ Կ[արմիր] խաչի ծրագիր-կանոնագիրը» - մի սերունդ, որի «առանձնապէս»ը կանոնագրեր ուսումնասիրելն է դառնում, նա դժւար թէ շատ բանով տարբերի Խդրեաններէն ու Համօներէն:

«Ց[եղակրօն] Ուխտերը կը համարւին Զ.Յ.Դ. եմթակայ քաղաքական դպրոցներ»: Այդ այդպէս համարելով հանդերձ, խնդրում է՝ ա) «Հնարաւորութիւն տալ բոլոր Ցեղակրօն Ուխտերուն օգտւելու Դաշնակցութեան ակումբներէն՝ ժողովներու եւ հանդէսներու համար»: բ) «Պարտադրել բոլոր կոմիտէներուն, որ կազմակերպելիք կարելոր հանդէսներուն անպայման մասնակից ընեն Ցեղակրօն Ուխտերը»: գ) «Կոմիտէներուն եւ Ց[եղակրօն] Ուխտերուն միջեւ ստեղծել սերտ եւ ընկ[երական] յարաբերութիւններ»: դ) «Աջակցութիւն ցոյց տալ (կոմիտէներէն) տեղին վրայ գոյութիւն ունեցող Ց[եղակրօն] Ուխտերուն», եւ այլն: Որոշումների այդ մասին արտաքին աշխարհը չէր կարող չզգալ այն տրամաբանական եզրակացութեան, թէ կոմիտէների վերաբերմունքը դէպի Ուխտերը եղած է պաղ եւ անբարեացակամ: Սակայն, այդ չէ եականը: Անդրադարձիր, որ առաջին անգամ է, ինչ «Հայրենիք»ի մէջ երեւում է այս կամ այն կազմակերպութեան (Դաշնակցութեան Կարմիր խաչ, Ցեղակրօն] Ուխտեր) առած որո-

շունները: Այդ բանը արևած է որոշ հոգեբանական հաշիւներով, այն է՝ արտասահմանին հասկացնելու, թէ «այս պատգամաւորական ժողովը նշանակալից է նաեւ այն տեսակետով, որ հիմնական վերաւանշակութեան ենթարկեց ցեղակրօններու ծրագիր կանոնագիրը, որ պիտի ներկայացուի Դաշնակցութեան ընդի[անուր] պատգ[աւորական] ժողովին՝ վերջնականապէս ձեւակերպելու համար: Մինչ այդ պատգամաւորականը վերցուց իր ծրագրէն Շաւասպեան եւ Յառաջապահ անուանակոչութիւնները» եւ այլն: Ե՞րբ է տեսնւած, որ թէկուզ ամենէն հասարակ միութիւնը, կազմակերպութիւնը իր որոշումները փողոցի սեփականութիւնը դարձնէ: Որոշումները վերաբերում են տւեալ կազմակերպութեան եւ նրանք ներքին շրջաբերականով հաղորդոււմ են նրա մասնաճիւղերին, եթէ գոյութիւն ունին: Դա արևած է՝ արտասահմանին հասկացնելու, թէ իզուր աշխատանք է Ցեղակրօն Ուխտեր ստեղծելը, քանզի Դաշնակցութիւնը որոշած է աստիճանական այլանդակունով ոչնչացնել այդ կազմակերպութիւնը: Եղածը վատթարագոյն հարևածն է, որ տրոււմ է Ցեղակրօնութեան, եւ այդ այն օրերին, երբ գրեթէ մեր բոլոր գաղութներում ցեղային խռովք է սկսւած (երեւի կարդացիր «Յառաջ»ի զայրալից հարցումը - «ինչո՞ւ կուշանայ Ցեղակրօնութիւնը Ֆրանսայի մէջ. ո՞վ է ասոր պատճառը»): Արդէն սպանւած է շարժումի հիմնական գաղափարը, նրա դաւանանքը եւ շուտով հերթը կուգայ անունին: Դաշնակցութիւնը թունաւորող ծանօթ թայֆան իրեն թշնամի է յայտարարում այն ամենը, ինչ որ բարոյապէս իրեն չի նմանում: Հոգեւոր դիակի պէտք է վերածել նաեւ Ցեղակրօնութիւնը, որ նման է իրենց: Ամերիկայի մէջ պէտք է քանդել դա, որպէսզի դա հող եւ ազդեցութիւն չնուաճէ արտասահմանում: Այս է թայֆայի պլանը, այս է Դարսի սերունդի հայրենասիրութիւնը: Այսպէս է աշխատում ծանօթ մաֆիան: Դուք ի՞նչ էք անում: Մաֆիան իր առաջին հարևածը հասցրեց Ցեղակրօնութեան, թէ այժմ յաղթականի նման իր «բեխերն է ոլորում»: Իսկ դո՞ւք: Գիտցի՛ր, որ «հիմնական վերամշակութիւն» ասելով դաւադիրները հասկանում են ցեղակրօն անուան փոփոխութիւնը: Երկրորդ եւ վերջին հարուածը կնախապատրաստեն նոր հրաւիրելիք գործիչի միջոցաւ: Ա-ին ամենափայլուն կերպով կատարեց իր դերը: Համոզուեցի, որ տեղիդ գաղափարաշունչ տարրերը հրապարակը թողած են մաֆիայի մարդկանց: Ցաւում են: Տասը մարդ էր հարկաւոր, որ ծանօթ ներքին պրովոկասիոնէն յետոյ, Նազովրեցու խարագանով տաճարէն քշէր վատերին:

Դուք չարիք այդ: «Կարգապահութեան դէմ չմեղանչենք»՝ մտածեցիք, եւ հրապարակը թողեցիք դաւադիրներին: Կարգապահութիւն, ա՛հ, այդ զգւելի բառը, որը յաճախ մղում է մարդկանց մեղանչելու իրենց ազգի եւ Հայրենիքի դէմ: Այն, որ մաֆիան անւանում է կարգապահութիւն, էապէս հոգեսպանութիւն է: Շուտով կվերադառնան ձեր պատգամաւորները, եւ կտեսնէք, որ ընդհանուր ժողովում էլ յաղթանակել է «կարգապահութիւն»ը, եւ ոչ թէ Դաշնակցութիւնը, ազգը: Չերկարեն այդ մասին: Կուզէի ասել, որ եթէ տեղիդ գաղափարական տարրը մի քիչ աւելի ակտիւ լինէին, չէր լինի այն, ինչ որ եղաւ: Դու գիտես, որ Ցեղակրօն Ուխտերի անդրանիկ պատգամաւորական ժողովի նախօրեակին Բիւրօն մի գրութեամբ կպահանջեր «ցեղակրօն սերունդ»ի փոխարէն գործածել «հայ սերունդ»¹ բացատրութիւնը: Վատութեան այդ դոկիւմանը մօտս է: Ամբողջ 5 տարի է, ինչ թշնամանքը կգործէ Ցեղակրօնութեան դէմ: Եւ այն բոլոր դաւերն ու վատութիւնները, որ կատարւեցին եւ կշարունակւեն կատարւել, մի նպատակ ունէին - քանդել Ցեղակրօնութիւնը:

Երեւի գիտես, որ Վրացեանը հրաժարեց մասնակցել «ընդհանուր ժողով»ին: Նա գրած է ընկ. Ս. Արարատեանին հետեւեալը - «ընդհանուր ժողովից միայն չարիք են սպասում»: Նա պայման է դրել ժողովին մասնակցելու - ժողովը հրաւիրել ոչ Եգիպտոսում եւ հնարաւորութիւն տալ մասնակցելու բոլոր պատասխանատու ընկերներին: Իրեն առաջարկը մերժեցին, ուստի ինքն էլ հրաժարել է պատգամաւորի կոչումից, որովհետեւ «այդպիսի պայմաններում ես անելիք չունեմ, ու ամէն մի պարկեշտ դաշնակցական այդպէս պիտի վարի» (գրում է Վրացեանը): Նա գտնում է, որ «Բիւրօն որոշ օհօ է տանում, կենտրոնացում է մտցրել, կործանում է կուսակցութիւնը, եւ անհնարին է որեւէ բան անել, քանի որ երկրից եկած 20-25 պատասխանատու ընկերներս «իրար միս ենք ծամում եւ սկսել ենք իտտել»»: Վրացեանի կարծիքով, եթէ հնարաւոր չեղաւ ընդ[հանուր] ժողովը յետաձգելու, ապա մի հեղինակաւոր մարմին ընտրել - ամէն ինչ կորած է, եթէ չասենք նաեւ աւելորդ է լուրջ հարցերի մասին մտածելը: Նա, Վրացեանը այսպէս է դատում - «ուրիշ մարդ չգտնելով (խօսքը հիմ Բիւրօսի մասին է) իրենք պիտի վերընտրւեն եւ մի երկու հացկատակ-

¹ Ինչ ասել է «հայ սերունդ»: Մի մեռեալ բառ առանց բովանդակութեան: «Հայ սերունդ»ի մէջ չեն մտնում ռամկավարը, հնչակը, քաղաքականապէս անտարբեր հայը:

ներ էլ կմտցնեն իբրեւ թարմութիւն»: Ահա նախկին Բիւրօնների անդամի կարծիքը օրւայ Բիւրօի եւ նրա խարդախած ընդլիանուր] ժողովի մասին: Այո՛, սկսել են «նեխել», իսկ ուր նեխութիւն կայ, այնտեղ բարոյական մաքրութիւն, ազգային բարձր մտահոգութիւն չի կարող լինել: Նեխող ղեկավարութիւնը կնեխեցնէ իր կուսակցութիւնը եւ ժողովուրդը, իր նորահաս սերունդը - իր «հացկատակային» ղեկավարութիւնը վայելող ամէն անհատ եւ խմբակցութիւն:

Այդ հոգեւոր նեխութիւնն է ահա՛, որ ինձ բերած է այն եզրակացութեան, թէ կորած պիտի համարել մեր ժողովուրդը եւ իր Յայրենիքը, եթէ մի խորունկ եւ զօրաւոր հոգեւոր վերանորոգումի չենթարկենք տարագիր հայութիւնը: Ամէն քաղաքական ու յեղափոխական շարժում եղած է աղէտաւոր ժողովուրդի համար, երբ քաղաքականին զուգահեռ չէ տարւած նաեւ ժողովրդի հոգեւոր վերանորոգումի, վերադաստիարակութեան գործը: Մեր յեղափոխութիւնը մոթել տուց մեր ժողովրդի կէսէն աւելին, որովհետեւ չհոգեփոխած վերջինը՝ նրանից մարտունակութիւն, կռիւ եւ յաղթանակ պահանջեցինք:

Այդ մտահոգութեան ծնունդն է Տարօնականութիւնը, որի դէմ նոյնպէս դաւեց ծանօթ մաֆիան: Տարօնականութիւնը ոչ քաղաքական շարժում է, ոչ լոզունգ, դա միայն եւ միմիայն օրւայ «նեխած» հայը Մամիկոնեանների բարոյականով հոգեփոխելու մի միջոց է: Պարզեց, որ հայ կուսակցութիւնները ոչ թէ տարրական հասկացողութիւն չունին օրուայ մարդկութեան հանրային ու ազգային կեանքը վարող օրէնքների մասին, այլ եւ թշնամին ամէն մի նոր գաղափարի եւ գաղափարական շարժման: «Նեխել»ով՝ նրանք նեխութիւն են տարածում եւ շարունակում են իրենց «հացկատակութիւն»ը համարել ազգ[ային] գործ՝ իրենց եւ ազգը խաբելով:

Տարօնականութեամբ՝ Մամիկոնեանների բարձր նւիրումով պէտք է թրծել օրւայ Յայը, եթէ ուզում ենք ամէն բանից առաւել փրկել Դաշնակցութիւնը: Տարօնականութեան դէմ եղած հրապարակային ելոյթները (Վրացեանը եւ «Նոր օր»ի ասորի խմբագիրը¹) աւելի թելաւորեցին Տարոն Տուրուբերանի հայրենակցական միութիւնները եւ նրանց վարիչ կենտրոնականը վարչութիւնը: Տարօնականութիւնը - դա միեւնոյն Ցեղակրօնութիւնն է հասակն առած սերունդի համար: Մէկը - Ցեղակրօնութիւնը - հալածողը, միւսի բարեկամը չէր դառնայ: Մաֆիան սկսած է դաւել նաեւ Տ[արոն] Տուրուբերանի [Յայրենակց-

¹ Աթենքում տպվող «Նոր օր» օրաթերթի խմբագիր Անտոն Կազել:

ական Միության] սկսած հոգեւոր շարժման դէմ: «Թողէք, որ «նեխութիւն»ը շարունակւի, թողէք որ նեխինք, մեզնից յետոյ - ջրհեղեղ» - ա՛յս է ուզում Ղարսի սերունդը: «Չէ՛ - պիտի ասի նեխութեան սիրահարներին ամէն հոգեպէս անխաթար դաշնակցական,- չէ՛, հակառակ նեխելու եւ մեռնելու ձեր ցանկութեան, մենք պիտի փրկենք ձեզ»:

Օհաննէս, սիրելիս, ես կուզէի, որ դու եւ քեզ նման նւիրումի ընդունակ մեր բոլոր ընկերները այս կեցւածքն ունենային: Եղէ՞ք վճռական, շատ մի գերագնահատէք «կարգապահութիւն» ասւած բանը, որ մեր եգիպտոսցիների ծիծաղն է շարժում:

Լսեցի, որ «Յայրենիք»ը հրաժարուել է Տարօն Տուրուբերանի կ[ենտրոնականո] վարչութեան յայտարարութիւնը դնել: Չէի սպասում: Չեր կ[ենտրոնական] կ[ոմիտ]էն աւելին գիտէ այն մարդկանց կուսակցաւեր արարքների մասին, քան Ղաշնակցութեան այլ մարմինները: Չեր կ[ենտրոնական] կ[ոմիտ]էն պէտք է հասկացներ այդ պարոններին, որ չէ կարելի կուսակցութիւնը վերածել թայֆայի, եւ զայն հանել ամէն գաղափարական խռովքի ու շարժման դէմ, որոնցից առաջին օգուողը պիտի լինի Ղաշնակցութիւնը:

Ամիսներ առաջ ինձ կգրէիր, որ ես եմ ընտրել Ռուբէնը եւ այլն: Սխալւում ես, Ռուբէնին նոր չէ, որ ճանաչում եմ. ես նրան քուէ չէի տայ, եթէ նա իր դաւանութեամբ Համօիմ¹ հոգեպէս նուաճած չլինէր: Համօն պայման դրեց - «եթէ թոյլ չտաք, որ Ռ[ուբէն]ը ընտրուի, ես չեմ մտնի Բիւրօի մէջ»: Համօի այդ աղէտալի սխալը եւ անձնական բարեկամութիւնը պատճառ դարձան, որ նախկին Բիւրօի անդամներէն ամենադատապարտելիին քուէ տանք: Վերջապէս, խոսմ չընտրեցինք նրա համար, որ ամբողջ վեց տարի դաւեր սարքէ եւ շրջաններ քանդէ: Գիտես, անշուշտ, որ Յունաստանէն տարան իրենց մարդը - Լազեանին, իսկ Կ. Գեորգեանին² («Հորիզոն»ի խմբագիրը)

¹ Խոսքը Համօ Օհանջանյանի մասին է:

² Անվանի ազգայնական գործիչ, հրապարակախոս Կարո Ռուբէնի Գևորգյանը ծնվել է 1892թ. Կյունուլժինայում (Հունաստան): 1923-27թթ. Սալոնիկում խմբագրել է «Ալիք», 1928-37թթ.՝ «Հորիզոն» թերթերը, 1937-44թթ. Հայկ Ասատրյանի հետ՝ Ցեղակրոն Շարժման «Ռազմիկ» պաշտոնաթերթը, որը տպագրվել է Սոֆիայում, ապա՝ Պլովդիվում, 1954-66թթ. Բեյրութում՝ «Ամենուն տարեգիրք» մեծաթիվ տարեգիրքը և երկարատև մոռացությունից հետո առաջին անգամ ներկայացրել և արժեքավորել է Գարեգին Նժդեհի և Հայկ Ասատրյանի կյանքն ու գործունեությունը: Մահացել է 1975թ. նոյեմբերի 11-ին Բեյրութում:

չտարան: Եգիպտական իշխանութիւնը վիզա է «տւել» Լազեանին, իսկ Կարօին «մերժել է տալ», հակառակ որ երկուսն էլ միեւնոյն վայրից են, երկուսն էլ յունահայատակ եւ դաշնակցական: Ռոմանիայէն տարած են մէկին, որի անունը իր շրջանի ընկերները առանց թքելու չեն արտասանի: Այժմ խռովուած է նաեւ Ռոմանիան, որովհետեւ «պատգամաւոր»ը մեկնել է առանց նոր շրջ[անային] ժողովից ընտրուած լինելու: Իսկ Խորեան կոչուած գործակալի ներկայութիւնը Գահիրէում կլրացնէ պատկերը: Չգիտեմ, թէ ձեր պատգամաւորները որքան մտքի եւ խղճմտանքի անկախութիւն կցուցադրեն ընդհիւսնուր] ժողովում, բայց կանխաւ ասեմ, որ մաֆիային կյաջողէ մարսել եւ «Նիւ-Եորք»ը¹, եւ այդ էլ յանուն այն «կարգապահութեան», որը պահանջողները հայոց ազգին եւ Դաշնակցութեան «Ղարս»էն² զատ ուրիշ բան չեն տւած:

Ինձ չգրեցիր - կարծում եմ, որ չես մասնակցել Ցեղ[ակրօն] Ուխտերի պատգամաւորականին: Եթէ ճիշտ է «կարծեմ»ս, լաւ չես արել: Այստեղ մաֆիայի գործակալները լուրեր են տարածում, թէ ընդհիւսնուր] ժողովը վերջացել է, որ Սուրիան «հաշտւել է», եւ այլն, եւ այլն: Բարի եղիր, խնդրեմ, երկարօրէն գրելու ինձ (պատգամաւորներին լսելուց յետոյ եւ առաջ) այն ամէնը, ինչ որ գիտես ընդհիւսնուր] [ժողովի] առած որոշումների մասին:

Գրի՛ր նաեւ, թէ ի՞նչ պիտի անէք, եթէ ծանօթ ներքին պրովոկասիոնի հեղինակները պատժուած լինելու փոխարէն «վարձատրուած» լինեն, այսինքն՝ վերընտրուած լինեն: Կարո՞ղ է նման բան՝ պիտի գոռայ խղճմտանքը - այո՛, մեր իրականութեան մէջ ամէն ինչ կարող է լինել:

Ամէն անգամ - հաստատում է պատմութիւնը - երբ ժողովուրդը բարոյական քաջութիւն չի ունենում պատժելու իր դժբախտութեան հեղինակներին, այդ միեւնոյն հեղինակների միջոցաւ պատմութիւնը պատժում է ժողովուրդին: Ահա՛, սիրելիս, թէ ի՞նչն է տազնապեցնում ինձ:

Քանի դեռ չարագործները եթէ ոչ պատժելու, գոնէ չէզոքացնելու քաջութիւն չունի Դաշնակցութիւնը՝ նորանոր պատիժները անպակաս կլինեն իր գլխէն:

Սիրով եւ եղբայրօրէն՝ **Նժդեհ**

¹ Նկատի ունի Ղևոնդ Արքեպիսկոպոս Դուրյանի սպանությունը:

² Նկատի ունի Կարսի անկումը 1920թ.:

Բարեւիր դոքտորին, Վերածինին¹, Անգինին եւ այլոց:

Ք. Տ. Տեղիդ «Արարա» կոմիտեւ² երկու ամիս առաջ ինձանից մի գրութիւն ուզեց, եւ ես գրեցի, ուղարկեցի Սմբվիլ իրենց տւած հասցէին: «Յայրենիք»ի բացառիկում չ'երեւաց: Չլինի թէ Բիւրօի «աստուածային» հրամանով «Յայրենիք»ում արգիլւած են նաեւ իմ յօււածները: Իսկապէս, որ Դաշնակցութեան Բիւրօն քսաներորդ դարում ապրում է իր խաւարամիտ միջնադարը:

Նոյնը

16.

[1938թ.]

Սիրելի ընկերներ,

Ինձանից, ինչպէս եւ շրջանիցս քիչ գրութիւններ չէք ստացել՝ իմ եւ շրջանիս դէմ նիւթւած աննախընթաց դաւի մասին: Ձեզ շուտով կուղարկի տեղիս կազմի ամբաստանագիրը, եւ դուք հնարաւորութիւն կունենաք յստակ գաղափար կազմելու դաւի մեխանիզմի եւ դաւադիրների մեքենայութեանց մասին: Մինչ այդ, կուզէի մի քանի խօսքով ձեզ տալ դաւի պատմութեան կմախքը, որպէսզի ժամ առաջ դիմէք անհրաժեշտ միջոցների՝ փրկելու համար ոչ թէ խաչւած ճշմարտութիւնը, այլ Դաշնակցութեան բարոյականը, առանց որին կուսակցութիւնները, անկախ իրենց դաւանանքէն եւ հետապնդած նպատակներէն, դառնում են մաֆիա - գործիք անձնապէս շահագրգռւած որոշ անհատների ձեռքում - դառնում են չարիք իրենց ժողովրդի համար:

1. Նիւ Եորքի պրովոկասիոնի³ գաղափարը յղացել է Բ[իւրօ]ն: Դա ոչ թէ եռագոյնի համար էր, այլ խմորւող Ցեղակրօն շարժման եւ զայն սկսողի անձի դէմ: Գիտէք անշուշտ, որ 1933ի ընդհ[անուր] ժողովը որոշած էր նորահաս սերունդը կազմակերպել անկուսակցական գետնի վրայ՝ կուսակցական ղեկավարութեամբ: Հակառակ սրան՝ Բիւրօն Ցեղակրոն[ի] Ուխտ[երի] Պատգ[ամավորական] ժողովի նախօրեակին պահանջեց կուսակցականացնել Ցեղակրօնութիւնը:

¹ Վերածին Մինաս Գաբրիելի (1882-1945) – սփյուռքահայ անվանի գրող, աջակցել է Ցեղակրոն շարժմանը:

² Խոսքը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում Պաղեստինում՝ Արարայում կրված Արևելյան Հայկական լեգեոնի վետերանների կոմիտեի մասին է:

³ Առնոդ արքեպիսկոպոս Դուրյանի սպանությունը:

Ինձ ուղղած իր գրութեան մէջ Բ[իւրօ]ն առաջարկում է Յեղակրօն «անւան» փոխարէն գործածել Հայ անունը: Ես չըրի այդ, որովհետեւ «հայ» է եւ՝ ռամկավարը, եւ՝ հնչակեանը, եւ՝ բոլշեւիկը: Կարելի է անունով հայ լինել, բայց ցեղակրօն չլինել: Ես դաւան[ան]ք էի քարոզել եւ ոչ թէ դատարկ անուն: Բ[իւրօ]ի այդ անսպասելի միջամտութիւնը ժամանակին կուգար մատնելու իր թշնամանքը այդ շարժման դէմ:

Նա չհաշտուեց մեր ստեղծած շարժման հետ: Իմ՝ Ամերիկան թողնելէն յետոյ եւ մինչեւ այսօր Յեղակրօնութիւնը ապրում է իբրեւ սոսկական անուն եւ ոչ թէ իբրեւ դաւանանք: Անգամ «Weekly»-ն ցայսօր մի հատիկ տող գրած չէ ցեղակրօն դաւանանքի մասին: Երկու տարի առաջ Բ[իւրօ]ի այն հրահանգը, որով Եւրոպայի Յեղակրօն Ուխտերի կապը կկտրէր Ամերիկայի կ[ենտրոնական] վարչութիւնից՝ նոյնպէս կուգար մատնելու հրահանգողի թշնամանքը: Իսկ Դեղոսիոյի մէջ գումարուած պատգամաւորական ժողովի առած մի քանի որոշումները կմատնեն, որ Բիւրօն վճռած է բարոյապէս լղրճել Յեղակրօնութիւնը եւ նրանից խլել անգամ իր անունը: Թէ ինչեր կորցրեց գաղութի հայութիւնը Բ[իւրօ]ի այդ թշնամանքէն՝ մի օր կտեսնենք, կզգանք:

Մի՛ կարծեք, որ Բ[իւրօ]ի դաւանանքին դէմ է: Այդ մարմինի մէջ մարդիկ կան, որոնք անդաւանանք կոչուելու աստիճան խառնադաւան են եւ՝ «սոցիալիստ» են եւ՝ «ցեղապաշտ»՝ նայած տեղին ու յարմարութեան: Նրանք դէմ են իմ՝ տեղիդ նորահաս սերունդի հետ ունեցած բարոյական կապին, որը կտրելու համար անհրաժեշտ է Յեղակրօնութիւնէն խլել իր անունը եւ դաւանանքը: Խղրեանը յաջողած էր համոզել Բ[իւրօ]ին, որ եթէ Յեղակրօն Ուխտերը չ՛առնւին Բիւրօի մարդկանց ազդեցութեան տակ՝ նրանք կուժեղացնեն ձեզ եւ ինձ: Գիտցէք, այդ կռիւը Յեղակրօն Ուխտերին տէր դառնալու նպատակով է տարւում: Աւելի ճիշտը՝ կռիւը տարւում է Ամերիկայի շուրջը:

Բ[իւրօ]ն թեթեւ սրտով կիրաժարի (ինչպէս իր համար փաստօրէն գոյութիւն չունին Սուրիան, Պարսկաստանը եւ Բուլղարիան) իր բոլոր շրջաններէն, միայն ոչ եւ ամերիկացիներ կազմեն: Բիւրօի նիւթականը - ամսականները ապահովողը Ամերիկան է - ահա՛ թէ ինչու նա միջոցների մէջ խտրութիւն չի դնում չէզոքացնելու ամէն հոգեւոր ազդեցութիւն այդ շրջանում: Իմ օրով - Յեղակրօնութեանը դա վտանգուած համարեց Ամերիկան իր համար, եւ չքաշեց դիմելու դաւերէն ամենադիւայինին: Ինձանից յետոյ նա Ամերիկա է ուղարկել իր գործակալները՝ որոշ գաղտնի առաքելութեամբ: Եկողներին

հրահանգում է՝ աշխատել տկարացնելու ձեր ազդեցութիւնը Ցեղակրօն Ուխտերի վրայ: Եւ այսուհետեւ էլ տեղդ եկող գործիչները կլինեն Բ[իւրօ]ի գործակալները, եթէ դուք չակտիւացաք:

2. Ցեղակրօն շարժումը սպանելու համար Բիւրօն իր մարդկանց միջոցաւ դաւեց իմ անձի դէմ նաեւ Բուլղարիայում: Գիտէք, որ ինձ բուլղար իշխանութեանց հրամանով խուզարկեցին դեռ սահմանագլխի վրայ: Մի խումբ «դաշնակցական»ներ՝ միացած դուրեանական հոսանքներին՝ հրապարակում կ'աղմկէին, թէ Դ[ուրյանին] սպանել տւողը Նժդեհն է: Սրանով կձգտէին գրգռել հայութեան որոշ տարրերն ու իշխանութիւնները իմ անձի դէմ՝ հասկացնելով վերջիններին, որ Ցեղակրօնութեան անդրանիկ գործն եղաւ Դ[ուրյանի] սպանութիւնը, նոր սպանութիւններ տեղի կունենան նաեւ այս երկրում, եթէ ինձ կարելիութիւն տրւի Ցեղակրօնութիւնը տարածելու:

Մի շարժում վարկաբեկելու համար մեր աշխարհի սրիկայութիւնը միշտ էլ աշխատել է կամ վարկաբեկել կամ էլ սպանել տալ նրա վարիչին: Իսկ պէտք էր ինձ համար Բալկանում առնուազը փափուկ դրութիւն ստեղծել, որպէսզի իշխանութիւնը եւ հայ հանրային կարծիքը անկարելի դարձնեն Ցեղակրօնութեան տարածումը իմ ապրած երկրում: Թէ ի՞նչ գաղտնի ժուռնալներ են դրուած իշխանութեանց՝ այդ մասին կկարդաք շրջանիս ամբաստանագրի մէջ: Բիւրօն հասած էր իր նպատակին - հայութիւնը Դ[ուրեանի] սպանութիւնը կվերագրէր ինձ, եւ վրեժ լուծելու համար կշարունակէր դաւեր նիւթել իմ անձի դէմ: Բիւրօն գիտէր, որ ես դաւադրուած եմ, եւ եթէ իր հաշիւն չգար այդ բանը՝ նա ինձ դուրս կբերէր այս շրջանէն, կուղարկէր մի այլ երկիր, մանաւանդ որ գիտէր, թէ գրեթէ, մեր բոլոր գաղութները կիրաւիւրէին ինձ՝ նորահաս սերունդը ոտքի հանելու եւ՝ իրենց շրջաններում:

Բիւրօն - որի օրհնութեամբ իր մարդիկ ներքնապէս միացած հակադաշնակցական կազմակերպութիւններին կշարունակէին թմամանել ինձ - ոչ թէ չաշխատեց դաւադրութեան օղակէն դուրս բերել ինձ, ընդհակառակը, նա ինձանից թաքցրեց, որ Յարաւային Ամերիկան խնդրում է գէթ վեց ամսով մեկնել այնտեղ: Նա՛ ինձ Բուլղարիոյ մէջ դաւադրուած ու վանդակուած պահելու նպատակով, այս շրջանէն հեռանալուս արգելք հանդիսացաւ նաեւ այն ժամանակ, երբ մեր հարեւան Յունաստանի պատգամաւորական ժողովը կխնդրէր այցելել իր կազմերը եւ ծնունդ տալ Ցեղակրօնութեանն: Իրերի այդ դրութեան մէջ դրսից ու ներսից դաւադրուած, Ցեղակրօն Ուխտեր ստեղծեցի եւ՝ Բալկաններում: Այս պարագան աւելի գրգ-

ռեց դաւադիր թշնամիներին: Նրանք սկսեցին գործել կաշառելով: Հակադաշնակցական մի դրամատան դիրեկտորը իմ եւ Ցեղակրօնութեան դէմ դաւողներին զանազան անունների եւ ձեւերի տակ բաց կթողնէ աւելի քան 300,000 լեվա: Ծանօթ դրամատան դիրեկտորը եւ Բիւրօի մարդիկ գաղտնի ժողովներ կգումարեն դրամատան շէնքի մէջ, կիրաւիրեն երիտասարդ կազմակերպութեանց ներկայացուցիչներին, կխոստանան նրանց նիւթական միջոցներ տրամադրել, պայմանաւ, որ չմօտենան ցեղակրօններին եւ գործեն Ցեղակրօնութեան դէմ: Մեր կլենտրոնականը կոմիտէն ժամանակին կմերկացնէ դաւը եւ կփրկէ շրջանիս նորահաս սերունդը: Կգործենք թէ մենք, եւ թէ դաւադիրները:

Կուզայ օգոստոս 18-ը (1935), Եաւորովի¹ արծանի բացման օրը, որի առթիւ կազմակերպած մեր հանդիսութիւնները կվերածին քաղաքական ցոյցի եւ խորապէս կգրգռեն ու աւելի եւս կ'ակտիւացնեն Ցեղակրօնութեան եւ իմ թշնամիներին: Ծանօթ էք թուրք մամուլի որոշ օրգանների յարծակումներին իմ անձի դէմ: Այդ օրերին Սօֆիայում կգործէր զօրավար Միլլերին² առեւանգող Սկոբլինը³, որը հակաբոլշեւիզմ կեղծելով՝ կգործէր բոլշեւիզմի համար: Ըստ ֆրանսական թերթերի - որ ձեռքիս տակ են - զօրավար Սկոբլինը բացի իր ընկերները Ռուսիոյ սահմանազխիսն մատնելէն, ուներ նաեւ մի այլ դեր - բարոյապէս կամ ֆիզիքապէս ոչնչացնել նորահաս սերունդի ղեկավարներին: Միեւնոյն օրերին մեր դէմ կգործէր թուրք լրտեսութեան շեֆ Մեմդուխ բէյը, որի մասին իր ժամանակին հաղորդւած է Բիւրօին, եւ որի լուսանկարը մեզ մօտ է: Տեսնելով, որ միութեան մէջ մի ցենտրալ⁴ ամէն ինչ կատարում է, որպէսզի վնասէ ինձ եւ անկարելի դարձնէ Ցեղակրօնութեան տարածումը, ես պաշտօնապէս դիմեցի Բիւրօին եւ խնդրեցի (գիտե՞նալով

¹ Պէյո Յավորով (Կրաշոլով, 1878-1914) - բուլղար բանաստեղծ, Թուրքիայի կողմից 1890-ական թվականներին կազմակերպած հայկական կոտորածների տպավորության տակ գրել է «Հայեր» նշանավոր բանաստեղծությունը:

² Միլլեր Եվգենի Կարլի - ռուս գեներալ, Ֆրանսիայում գործող Ռուսական համագորային միության ղեկավար, 1937թ. առևանգվել է խորհրդային գործակալների կողմից:

³ Սկոբլին Նիկոլայ Վլադիմիրի - ռուս գեներալ, օգնել է խորհրդային գործակալներին առևանգելու գեներալ Միլլերին:

⁴ Նկատի ունի կենտրոնական կոմիտէ:

հանդերձ որ նա գիտէ)՝ հրահանգել մեր բոլոր կլենտրոնական] կլոմիտեներ]ին՝ իրենց շրջաններում ստեղծելու Յեղակոն Ուխտեր եւ միանալու Ամեր[իկայի] կենտրոնական] վարչութեան: Ինձ պատասխանեցին, որ իբրեւ թէ «որոշ մարմիններ դեմ են Յեղակոնութեան», որ դեռ չգիտեն, թէ ի՞նչ դուրս կուգայ Ամերիկայի մեր ուխտերից եւ այլն: Սրանից յետոյ, տեղիս Յեղակոնութեան թշնամիները հրապարակ նետեցին հետեւեալ գրոյցը - Ամերիկայի Յեղակոն Ուխտերի եւ դաշնակցական մարմինների միջեւ վեճ է ծագել, որի պատճառով Բիւրօի անդամ Նաւասարդեանը կ'երթայ քննութեան: Այդ օրերին Բիւրօի ներկայացուցիչը՝ Ջամալեան¹ Բերլինի մեր Յեղակոն Ուխտին խորհուրդներ կուտայ թողնել Յեղակոնութիւնը, մնալ չէզօք, անկուսակցական: Բիւրօի ընթացքը կթելաւորէ Յեղակոնութեան դեմ դաւողներին: Դէպքերը կզարգանան Քրիստափոր² - Եաւորովին նուիրած մեր բուլղարերէն բացառիկը մի մութ ձեռք կտանէ (դեռ Թափառականը տպարանէն հրապարակ չելած) կյանձնի թուրք դեսպանատունը, որը պատճառ կդառնայ, որ երկրիս արտաքին գործոց նախարարը արգիլէ մեր հանդիսութիւնները եւ նորանոր մեծ ծախքերի մատնէ մեզ:

Մեր շրջանային ժողովը կպատժէ դաւադիրների խմբակը՝ արտաքսելով, կախակայելով: Վերջինները կսկսին այլեւս վրան բաց կերպով գործել շրջանիս դէմ:

Բիւրօն՝ շրջանային ժողովի պատիժներ հաստատելու փոխարէն՝ իր ընթացքով ոյժ կուտայ դաւադիրներին: Մենք կպահանջենք, որ Բիւրօի անդամը զայ տեղս - կիրաժարին ուղարկել: Եւ մի օր շրջանս կուղարկեն Յեղակոնութեան դէմ դաւող, մեր շրջանի դաւադիրների հետ կապ պահող Լազեանին եւ Սարունուն, որոնց շրջանս կթքէ եւ ճամբու կդնէ: Դրօն կխոստովանի, որ իրեն ուղարկած են, գիտնալով որ մեր յարաբերութիւնները ջերմ չեն, պարզապէս մեզ կուեցնելու նպատակով: Դրօի հետ հաշլեյարդարի կենթարկենք Բալկանի խնդիրը, եւ կհաղորդենք Բիւրօին: Վերջինը մեր կատարածը հաստատելու փոխարէն, շրջանս կհասցնի Խդրեան կոչւած պրովոկատորը, որին իր դաւադրական արարքների համար Բուրգասի տարօնցիները կ'անարգեն ու ճամբու կդնեն: Այդ վերջինը եկած էր երկու քուէներ ապահովելու իր եւ իր տերերի համար: Նա կեղծ ցանկեր կպատ-

¹ Արշակ Ջամալյան (1882-1940) – Զ.Յ.Դ. հայտնի գործիչ:

² Նկատի ունի Քրիստափոր Միքայելյանին:

րաստ է և կուղարկէ Բիւրօին, որն անմիջապէս կհաստատուէ կեղծ կազմը: Խորեանը իր դերը խաղալէ յետոյ, կկանչուի Եգիպտոս, որից յետոյ հրապարակ կնետուի հետեւեալ լուրը - Բալկանը Նժդէհի գլխաւորութեամբ աշխատած է տապալել Բիւրօն. «Բալկանեան մամուլ» (հնչակեան թերթ)¹, «Հայ մարտիկ»² (Սմբատի թերթը), «Ամրոց»³, «Ձանգու»⁴ (բոլշեւիկեան) - այդ բոլոր թերթերը ինձ եւ մեր շրջանը հռչակեցին «հակաբիւրօական», եւ իրենց ամբողջ համակրութեամբ պաշտպանեցին տեղիս «բիւրօական»ներին, իրենց ներքին գործակիցներին: Երբ յոյները մերժեցին ինձ անգամ տրանզիտ վիզա տալ, ես ընտրեցի Փարիզ-Մարսել-Եգիպտոս ճամբան: Փարիզ հասնելուս պէս կարողացի «Հայ մարտիկ»ի մէջ. «Նժդէհը եկած է Եւրոպա համախմբելու հակաբիւրօեական ուժերը»: «Ձանգու»ն բոլշեւիկեան թերթը - տեղիս «բիւրօեական»ների» բանսարկութեամբ «ՀՅԿ»ի ակումբների փակումը վերագրեց Դաշնակցութեան «Նժդէհեան ցեղակրօն թել»ին, եւ Խ. Հայաստանի ռադիոն սկսեց հայիոյել ու սպառնալ ինձ: Հակառակ որ [Հ.Յ.Դ.] Ամերիկայի կ[ենտրոնական] կոմիտեն որոշում էր առած, որ ես Ամերիկայէն վերադարձիս անցնիմ Բիւրօի վայրը եւ զեկուցում տամ Ամերիկայում ստեղծուած ծանր կացութեան մասին՝ Բիւրօն ինձ մուտքի վիզա չուղարկեց, որովհետեւ նա մութ հաշիւներով վճռած էր ինձ վանդակուած պահել Բալկանում, որպէսզի ես չկարողանամ խուսափել իմ դէմ նիւթուած դաւէն: Նա չէր ուզում, որ ես երեւամ այս կամ այն շրջանում, որովհետեւ չէր ուզում ուխտեր տեսնել այդ շրջաններում: Վերջապէս, մօտաւորապէս 2¹/₂ տարի յետոյ, երբ նա այլեւս հասած էր իր նպատակին (եւ դաւադրուած էի, իմ շրջանում արհեստական կերպով խմբակ մը հանած էին կ[ենտրոնական] կ[ոմիտե]ի դէմ, եւ հրաժարած էի, կ[ենտրոնական] կ[ոմիտե]ին) ինձ ուղարկեց վիզան: Հասայ Գահիրէ եւ հէնց առաջին օրը հիւանդացայ զգաւնքից: Կաշից դուրս կու գային ինձ համոզելու, թէ իմ լաւագոյն բարեկամներն են, որ գիտեն թէ դաւ կայ, բայց իրենք անմասն են, թէ ինձ պէտք է

¹ «Պալքանեան մամուլ» - ՍԴՀԿ շաբաթաթերթ, ապա եռօրյա, լույս է տեսել Ռուշչուկում 1931-1945թթ.:

² Կիսամսյա պաշտոնաթերթ հին հայ մարտիկների կազմակերպութեամբ, լույս է տեսել Մարսելում 1936-1938թթ.:

³ Շաբաթաթերթ Արևմտահայ Ազատական ուխտի, լույս է տեսել Աթենքում 1936-1937թթ.:

⁴ Շաբաթաթերթ, լույս է տեսել Փարիզում 1935-1938թթ.:

բժշկել, օպերասիոնի ենթարկել, թե կուսակցութիւնը իմ առողջութիւնն է ուզում եւ ոչ թէ իմ գործը, եւ այլն: Տէր Սինասեան իբրեւ թէ մոռացել էր, որ $1\frac{1}{2}$ տարի առաջ նա իր մի նամակի մէջ ինձ իրեն թշնամի է յայտարարել, իսկ ես իրեն՝ ընկերադաւ: Ես գնացել էի քաղաքական գործի համար՝ որոշ ծրագրով, անելիքների առաջարկներով, իսկ նրանք ինձ բժշկէ բժիշկ եւ հիւանդանոցէ հիւանդանոց կ'առաջնորդէին: Իսկ Բուլղարիոյ մէջ, այդ միեւնոյն օրերին, իրենց խմբակի միջոցաւ լուրեր կտարածէին, թէ Նժդեհը լքել է Բալկանի 500 ընկերների դատը եւ միացել Բիւրօին՝ այդ շրջանը ինձնից պաղեցնելու հաշուով: Զգւանքիս բաժակը լեցւած էր այլեւս, պէտք էր ազատուել կեղծիքի մթնոլորտէն, եւ պահանջեցի, որ իմ դրած լուրջ հարցերին պատասխանեն: «Վայրկեանը աննպաստ է, անելիք չունիմք»՝ եղաւ Բիւրօի պատասխանը: Մեր վերջին նիստում ինձ վրան բաց կերպով ասացին՝ ա) եթէ ուզես, Ամերիկան կիրաժարի Դուրեանի սպանութեան պատասխանատուութեան խնդիր յարուցելէ, բ) եթէ դու ճանաչես մեր նշանակած (կեղծ կազմէն բղխած) Բալկանի մարմինը՝ 6 դժգոհ շրջանն էլ կճանաչի:

Դա պատճառ դարձաւ, որ ծանր խօսքեր փոխանակեմք: Ձեր կողմից Արսէնին¹ քուէ տալը նրանք համարեցին իմ գործը: Յամօն² ուզեց, որ ընկերաբար բաժանուենք, եւ դրա համար խնդրեցին, որ վերադառնալով Սօֆիա, փորձեմ վերականգնել Բալկանի միասնականութիւնը: Խոստացան չեղեալ յայտարարել Յայկի³ եւ Սէթօի⁴ դէմ հանւած որոշումը, անշուշտ, միշտ էլ հասկացնելով (սակարկելով), որ եթէ Բալկանի 500 ընկերները որեւէ ամբաստանագիր չուղարկեն Ընդհ.լանուր] ժողովին՝ Բիւրօի դէմ: Վերադարձայ Սօֆիա, երկրորդ օրը բարեկամներու գնդապետ Գրիգորովը լուր բերեց, թէ Բիւրօի գործակալներէն Թափառականը տարածում է, որ Բիւրօն կանչել է ու սպառնացել Նժդեհին՝ «եթէ չմիանաս մեզ եւ չլռես, քեզ սպանել կտանք»: Գերմարդկային համբերութեամբ անցայ շրջան: Բիւրօն աննշան թիւ ունի Ռուսչուկում եւ Սօֆիայում միայն: Ռուսչուկում հաշտեցրի կողմերը եւ անցայ Վառնա-Բուրգաս, ուր, անսպասելիօրէն(?) ստացայ կեղծ

¹ Խոսքը Արսէն Սիքայեւյանի մասին է:

² Խոսքը Յամո Օհանջանյանի մասին է:

³ Խոսքը Յայկ Ասատրյանի մասին է:

⁴ Խոսքը Սեդրակ Զալալյանի մասին է:

կազմեն բղխած մարմիններն մի գրութիւն, որով կյայտունէր, թէ «Բիւրօն դէմ է հաշտութեան ձեւին»:

Կատաղութեանս մէջ կեղծ կ[ենտրոնակայն] կ[ոմիտե]ի ներկայացուցիչ-նամակաբերին, ինձ կմնար վերադառնալ Սօֆիա եւ գրել Բիւրօին հետեւեալը. «Շրջանիս միասնականութեան եւ իմ անձի դէմ դաւ կայ: Նոր չէ, որ գրում եմ այդ մասին: Դաւում եմ Դաշնակցութեան թշնամիները: Այդ դաւը հեշտացնում եմ որոշ մարդիկ ներսէն: Դիւային յամառութեամբ տարւող այդ դաւը զինաթափել կարենալու համար անհրաժեշտ է ինձ վերստին ինքնամեկուսանալ: Եթէ ամէն կարելիութիւն չափտք է ընծեռէք ինձ՝ մերկացնելու այդ դաւը, ինձ համարէք պայմանադրաբար հեռացած կուսակցութիւնից: Զիւանդի եւ դաւադրուածի իմ վիճակում ես այլ ելք չեմ գտնում: Ընկ[երական] բարեւներով՝ Նժդեհ, 1937, 17 դեկտ. [եմբերի]»:

Բիւրօն քար լռութիւն պահեց իմ այդ հրաժարականի մասին: Բացի այդ՝ Բիւրօին ուղղած եմ մի երկար գրութիւն, որի մէջ վերստին եւ վերստին Ռուբէնին անւանած եմ ընկերադաւ: Այդ գրութեանս պատճեն[ն] ուղարկւած է Յունաստան՝ ընկ[եր] Կարօ Գէւորգեանին եւ Ռոմանիա՝ ընկ[եր] Ս. Արարատեանին:

Գիտնալով հանդերձ, որ Ընդի[անուր] ժողովը խարդախւած է, որ այդ ժողովին որոշ հաշիւներով մասնակցում եմ այն բոլորը - Լազեան, Սարունի, Խդրեան, որոնք Բիւրօի կողմից ուղարկւած էին մեր շրջանում կեղծ կազմ ստեղծելու եւ երկու քուէներ ապահովելու, ես Բիւրօ կոչւածին գրեցի հետեւեալը. «Դաշնակցական զինւորի արժանապատուութիւնս թոյլ չի տալիս գրի առնելու անձիս դէմ նիւթւած դաւի պատմութիւնը: Բալկանի, մասնաւորապէս, վերջին ամիսների դէպքերը եկան վճռապէս հաստատելու այն, որ տեղիս կազմին իմ դէմ սարքւած դաւը աւելի քստմնեցուցիչ է, քան կկարծէինք: Մեր կուսակցութեան պատմութեան մէջ նախընթաց չունեցող այդ վատութեան մասին ինձ անձնապէս պէտք է լսի Ընդ[իանուր] ժողովը: Առ այդ, խնդրում եմ ինձ վիզա եւ ճանապարհածախս հասցնել, որ մեկնեմ տեղդ: Եթէ Ռուբէնի՝ իմ հանդէպ տածած անձնական թշնամութիւնը պատճառ դարձաւ, որ դուք ինձ չը հրաւիրէք, խնդրեմ այս գրութիւնը համարել ուղղւած Ընդ[իանուր] ժողովին: Խնդրում եմ պատասխանել ինձ հեռագրով: Իմ անցեալ ճամբորդութեան վերաբերող հաշիւները կբերեմ հետս: Ընկ[երական] բարեւներով՝ Նժդեհ: 1938, 5 յուլիս, Սօֆիա»:

Ինձ չիրաւիրեցին: Եղածը Ընդհի[հանուր] ժողով չէր: Դաշնակց-
ութեան պատմութեան մէջ նման խայտառակութիւն տեսնած չէ:
Դա վեց տարւայ ներքին դաւերի, հաշիւների ու վատութեանց
արդիւնք էր: Միակ շրջանը, որը օրինաւոր պատգամաւորներ
ուներ՝ դա Ամերիկան էր:

Ընդհի[հանուր] ժողովի վայրը ընտրեցին Եգիպտոսը, որպէսզի
պատասխանատու ընկերները չմասնակցին խորհրդ[ակցական]
ձայնով, նաեւ, որպէսզի անցանկալի համարած պատգամաւորները
զրկւեն Եգիպտոս մտնելու կարելութիւնէն: Յունաստանի երկու
պատգամաւորներէն (երկուսն էլ՝ յունահպատակ) մէկին վիզա
ուղարկեցին (իրենց գործակալին), միւսին՝ ոչ: Ֆրանսայէն որոշ
ընկերներ չկարողացան մեկնել՝ արտօնութիւն «չկարողացան»
ստանալ: Վրացեանը պայման դրեց իբրեւ պատգամաւոր մաս-
նակցել ժողովին, եթէ՝

ա) ժողովը գումարի ոչ-Եգիպտոսում, բ) Եւ այդ ժողովին խոր-
հրդ[ակցական] ձայնով մասնակցելու հրաւիրւեն բոլոր պատասխան-
ատու ընկերները: Նրա այդ առաջարկը մերժեց Բիւրօն, որով Վրաց-
եանը հրաժարեց մասնակցել ժողովին: Նա ընկ[եր] Ս. Արարատ-
եանին գրած իր նամակի մէջ ասում է. ա) Այդ ժողովէն «միայն չարիք
եմ սպասում», բ) Բիւրօն կործանում է կուսակցութիւնը, գ) Ուրիշ
մարդ չգտնելով ժողովում, Բիւրօն իրեն վերընտրել պիտի տայ՝ մի
երկու «հացկատակներ» էլ աւելացնելով իրեն իբրեւ «թարմութիւն»:

Ահա՛ այն «ժողովը», որից բղխած որոշումների բարոյական
կանոնագրական արժէքը ամենայն իրաւամբ պէտք է համարել
թքելի: Այդ խարդախւած ժողովը իրաւունք կունենար իմ խնդրով
զբաղւելու միայն այն դէպքում, երբ. ա) հրաւիրէր ինձ լսելու, բ)
կամ էլ բացատրութիւն պահանջէր ինձանից: Նա ոչ հրաւիրեց ինձ,
ոչ էլ իմ դէմ նիւթած դաւի մասին փաստեր ու փաստաթուղթեր
պահանջեց: Նրան կմնար՝ ա) կամ հաստատել, որ ես հեռացած
եմ կուսակցութիւնից, բ) կամ էլ քննութիւն նշանակել: Ես հեռացած
եմ պայմանադրաբար. 1) քանի դեռ թոյլ չի տրւիր ինձ տարածելու
Ցեղակոծութիւնը, 2) քանի դեռ Ցեղակոծութեան դէմ ուղղւած
Նիւ Եորքի պրովոկասիոնի հեղինակները կմնան ղեկավարութեան
մէջ, 3) քանի դեռ պատժւած չեն Բուլղարիոյ մէջ իմ անձի դէմ
դաւողները: Ես մինչեւ օրս չուզեցի հրապարակել իմ հրաժարա-
կանը երկու պատճառներով - նախ որ այս երկրում կուսակցու-
թիւնները գոյութեան իրաւունք չունին, ապա որ որոշ պատաս-

խանատու ընկերներ չուզեցին, որ այդ բանը անեն: Երեւի կուզէիք, որ հրաժարականս յայտարարեմ, բայց դա քաղաքական-քրեական հետապնդումի պատճառ կդառնար երկրի իշխանութեան կողմից հէնց այս շրջանի եւ իմ անձի դէմ: Բիւրօս գիտէ, որ այս տեսակետից իմ եւ Բալկանի դրութիւնը փափուկ է, եւ հէնց դրա համար էլ ընկերադաւութեան հասցրեց իր ընթացքը այս շրջանի դէմ: Թուում է, որ այսքանը կբաւէ, որ համոզւէք թէ՛

ա) Ն[յու] Եորքի ծանօթ պրովոկասիոնը ուղղւած էր Ցեղակրօնութեան ու իմ անձի դէմ,

բ) դաւադիրները ամէն բան արին, որ հայութիւնը ծանօթ արարքը վերագրէ ինձ,

գ) դաւը շարունակւեց իմ անձի եւ Ցեղակրօնութեան դէմ նաեւ Ամերիկայէն դուրս, Բալկանում,

դ) Բ[իւրօ]ի հետագայ ընթացքը - արհեստական կերպով տեղումս թնճուկներ ստեղծել, կտրել Եւրոպայի ուխտերի կապը, իր մի անդամն ուղարկել Ամերիկա: Բալկան ուղարկել իմ դէմ դաւող Խդրեանին եւ այլոց, ինձ տարիներով վանդակւած պահելը, իր մարդկանցից երեքին (որոնք հարբած վիճակում գիշերանց մտել էին իմ տուն եւ հրաշքով ազատուել իմ զնդակէն) կեղծ կ[ենտրոնական] կոմիտէի մէջ մտցնել - հաստատելը - այդ բոլորը եկան հաստատելու, որ ծանօթ խնդրում դեր կատարողը եռագոյնը չէր,¹ այլ Ցեղակրօնութիւնը,

ե) Ընդ. ժողովը Եգիպտոս փախցնել-խարդախելը մի նպատակ ուներ - կեղծւած քուէներով ապահովել իր «անպատասխանատութիւնը» եւ իր վերընտրութիւնը,

զ) Նժդեհից ազատուելով՝ վերջնականօրէն ջուրը ձգել Ցեղակրօնութիւնը համագաղութային շարժում դարձնելու կարելիութիւնն ու խնդիրը, եւ

է) իրեն, իր անունին էլ ներքին այնքան գայթակղութիւններով, դաւերով ու հոգեւոր աղէտի հաւասար պրովոկասիոններով հարուստ վեցամեայէն հեռացնել հանրութեան ուշադրութիւնը եւ զայն զբաղեցնել Նժդեհով:

Սիրելիներ, ըստ անգլիացի մի քաղաքագետի Բրիտանիոյ միութեան գաղտնիքը պէտք է փնտրել նրանում, որ այդ երկրում ազնիւ մարդիկ նոյնքան յամարձակ են, որքան եւ լիրբերը, սրիկա-

¹ Բիւրօի մարդիկ մեր շրջանում ներքնապէս հրաժարւած են եռագոյնէն՝ հակադաշնակցականների աջակցութիւնը ապահովելու համար:

ները: Այդ միեւնոյն բունի մէջ պէտք է փնտրել ամէն մի հաւաքականութեան, մի կուսակցութեան ոյժի եւ մեծութեան զաղտնիքը: Այո՛, առանց բարոյական յամարձակութեան ու քաջութեան ամէն հաւաքականութիւն կդառնայ հոգեւոր սատակութիւն: Առանց այդ առաքինութեան մարդ չէ կարող մտածումի ու խղճմտանքի անկախութիւն ունենալ, իսկ առանց այդ վերջինի՝ ամէն դաշնակցական սուտ դաշնակցական է: Ի՞նչ անել, որպէսզի Դաշնակցութիւնը մաքիայի վերածող վատերի համարձակութիւնը սանձւի: Ի՞նչ անել, որ Դաշնակցութիւնը դադարի մի խումբ անպատասխանատու մարդկանց հարստութիւնը լինելէ: Ի՞նչ անել, որ դա դադարի ներքին դաւերի եւ մախանքների կրկէս լինելուց եւ ծառայի միայն եւ միայն այն բանին, որի համար աշխարհ է եկել - որ ազատ եւ ընդունակ լինի ծառայելու հայոց վտանգւած Յայրենիքին: Այդ հարցումները ունին մի հատիկ պատասխան. դուք եւ նմանները պէտք է լինեն աւելի համարձակ, քան են՝ դեռ երէկ իրենց կաշին փրկած ընկերոջ դէմ դաւող վատերը: Էականը - դա դաւադրուած Նժդեհը չէ, խաչուած արդարութիւնը չէ, այլ Դաշնակցութեան բարոյականը, ինչպէս ասացի նամակիս սկզբում, բարոյական, առանց որին Դաշնակցութեան ղեկավարութիւնը «Ղարս»-երէն տարբեր բան չէ կարող տալ հայութեան:

Երէկ էր, ինչ թրքո-բուլղերիկ տապարից փրկեցի երկրի Դաշնակցութիւնը: Եւ այսօր փորձել՝ իր հացն ու անպատժելիութիւնը ապահովելու հաշուով այդ իմ փրկած կուսակցութիւնը հանել իմ անձի դէմ - այդ շնական ապերախտութիւնը ոչ թէ բարոյապէս մի կուսակցութիւն կարող է սպանել, այլեւ անբարոյացնել մի ամբողջ ժողովուրդ:

Կուզէի, որ յանուն մեր ժողովրդի վտանգւած ապագայի, անէք հետեւեալը.

ա) Մի շարք ստորագրութիւններով դիմել Բիւրօին եւ պահանջել՝
1) Նյուլ] Եորքի պրովոկասիոնի պատասխանատուութեան խնդիրը յանձնել քննելու Եւրոպայի դաշնակցական] աւագ ընկերներին, 2) որովհետեւ ծանօթ դէպքը զուգահիսպեց Ցեղակրօն շարժման սկզբին, եւ եղածը վերագրուեց Նժդեհին, մի բան, որից մեծապէս վնասուեց Ցեղակրօնութիւնը՝ խնդրում է հրապարակել Նժդեհի 17 ղեկավարների հրաժարականը, եւ Բիւրօ-Նժդեհ վէճը յանձնել նոյնպէս Եւրոպայի աւագ ընկերների քննութեան:

բ) Լուսաբանել Ուխտերը եւ նրանց կենտրոնական] վարչութեան կողմից եւս մի գրութիւն ուղղել Բիւրօին եւ հասկացնել, որ Յեղակոնութեան ու Տօղեհի դէմ գոյութիւն ունեցող թշնամանքը չէ կարող չխռովել մեր ուխտերը:

գ) Կապել «Տարօն Տուրութեան» հայրենակցա[կա]մների կ[ենտրոնական] վարչութեան (Akron, Ohio):

դ) Ազդել Հ[այկական] Կ[արմիր] խաչի կ[ենտրոնական] վարչութեան վրայ, որի նիւթական միջոցներով իմ եւ շրջանիս դէմ դաւողները փորձում են անբարոյացնել Գթ[ութեան] խաչի որոշ տար[ր]երը, դադարեցնել տւէք նիւթական ամէն աջակցութիւն Գթ[ութեան] խաչի Սօֆիայի աւանական վարչութեան:

ե) Դիմել ընկերներ Դարբինեանին, դոքտ. Բարսեղեանին եւ Դաշճեանին, որ զգաստութեան հրաւիրեն Բիւրօն:

զ) Արտէնը - Յեղակոնութեան եւ իմ հին թշնամին - վերադարձել է որոշ սուր յանձնառութիւններով (Տարօնականութեան եւ Յեղակոնութեան դէմ գործելու յանձնառութեամբ) - նախազգուշացրէք:

է) Պահանջէք, որ իբրեւ գործիչ տեղդ ուղարկեն Ս. Արարատեանին կամ Կարօ Գեորգեանին:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

եղէք արագ, քայլեր առէք վայրկեան առաջ, եւ ինձ գրէք յաճախ, որ իրազեկ լինեմ ձեր առած քայլերին:

Նոյնը

17.

Սիր[ելի] Օհաննէս,

Նամակդ, ինչպէս եւ ընկերներ՝ Հայթեանի, Պարսամեանի, Սվաճեանի, Սողիկեանի եւ Վարժապետեանի հաւաքական երկտողը ստացած եմ:

Շնորհակալութիւն եւ քեզ եւ ընկերներին, որոնց այնքա՛ն քաղցրութեամբ կ'իշխեմ դառնութեանս, մասնաւորապէս, դառնութեանս ժամերին:

Գիտեմ, որ բոլորդ էլ դառնացած էք, որ Դաշնակցութիւնը չաշխատեց՝ Յեղակոնութիւնը համազարկութեամբ շարժում դարձնելու: Մեր թշնամին - հակազգայնական հոսանքները - մի պահ սարսափեց, տեսնելով թէ ինչպէս Յեղակոնութիւնը անտառում ծագած հրդեհի նման, ճարակում է մեր նորահաս սերունդը: Թշնա-

մին խելօք էր եւ արթուն,- նա ժամանակին աղմկեց, հայիոյեց, խեղաթիրեց, որ կասեցնէ մեր երիտասարդ շարժման թափը: Եւ այն ինչ չյաջողեց կատարել մեր թշնամուն, կատարեցին մեր դժբախտ կուսակցութեան մէջ բոյն դրած փոքրիկ եսերը, նախանձները, գաղափարախօսական երկուութիւնը, սեփական օրիենտասիոնի պակասը, քաղաքական համլէթականութիւնը, անկանութիւնը, ռազմական խանդի անկումը, հասարակագիտական տգիտութիւնը եւ այլն:

Շնորհիւ ներքին չկանութեան ու անճարակութեան՝ Ցեղակրօն շարժման հոգեւոր դինամիզմը մնաց մինչեւ օրս չօգտագործւած: Արտաքին թշնամին զինակիցներ գտաւ Դաշնակցութեան մէջ եւ դաւեց Ցեղակրօնութեան դէմ: Եւ այդ այն ժամանակ, երբ պատերազմը դղրդագին քայլերով կմօտենայ մեր երկրագնդին, երբ քեմալական Թուրքիոյ մէջ զէնքի տակ կմտնեն կանայք եւ աղջիկները: Մարտական կուսակցութիւն ենք, բայց մարտիկն ու մարտական խանդը մեռած է մեր մէջ: Ցեղակրօնութեան դէմ դաւեցին նրանք, որոնք ճակատ չէր տեսած, նրանք, որոնց «սօցիալիզմ»ը, մեր օրով, բուլշեւիկեան լակոտներ տւեց Չայաստանին, նրանք, որոնց արուեստն է գլուխ պահել, թէկուզ մեր ժողովուրդը անգլուխ թողնելու գնով: Խեղճ ենք, խեղճ, մեր ժողովրդի չափ խեղճ է եւ մեր կուսակցութիւնը: Զգիտես, թէ որի՞ դէմ դարձնես հարուածդ, որի՞ց պաշտպանել՞ արտաքի՞ն թէ ներքին թշնամիներից: Երրորդ տարին է, այժմ Ամերիկայում մենք պէտք է ունենայինք Ցեղակրօն լեզիօներ՝ նահւան ու վտանգի հետ խաղալու տրամադիր: Այժմ մենք տասնեակ հազարի հասնող Ցեղակրօններ պէտք է ունենայինք Սփիւռքի մէջ, գաղութ գաղութ: Իսկ այսօ՞ր, Ամերիկայէն եւ, մասամբ, Բուլղարիայէն դուրս, հայ նորահասը հոգեւոր իբիշութեամբ¹ է անցկացնում իր ժամանակը: Թուրքն իր կինը տղամարդ-զինուոր է դարձնում այսօր, մենք, իսկ մե՞նք...

Մեր երիտասարդութիւնը հոգեպէս մանրանում է, մեռնում: Սուտ սօցիալիզմ-միւթապաշտիկ սրիկայութիւն քարոզողները տեսնում են այդ, բայց եւ այնպէս անտարբեր են՝ a la սօցիալիստ: Մեռնու՞մ է - թող մեռնի նորահաս սերունդը, միայն թէ մեր սօցիալիստների օձաթոյն նախանձն ապրի:

¹ Այդպէս է տեսնուում, պէտք է լինի իբիշութեամբ, որ նշանակում է անառակութեամբ:

Օհաննէս ջան, հետեւում եմ «Հայրենիք»ներին, եւ որեւէ Յեղակրօն պրոպագանդ, աշխատանք չեմ տեսնում: Առաջին տարին մեր ազգային բոլոր տօները թողնւած էր մեր ուխտերին տօնելու: Վերջին տարիները այդ նախաձեռնութիւնը զլացւած է Ուխտերին: Դա լաւ չէ: Բոլոր տօնակատարութիւնները պէտք է թողնել Ուխտերին: Այդպիսով, կարելի է նրանց մէջ մշակել պատասխանատուութեան գիտակցութիւնը:

«Weekly»-ին գործածում է Յեղակրօն անունը միայն, եւ ոչ աւելին: Յեղի, Յեղակրօնութեան, իր դաւանանքի մասին ոչինչ եւ ոչինչ: Միայն սպորտը չի բաւեր: Դա անհրաժեշտ է, բայց ոչ ամէն ինչ: Ստիպւած եմ շուտով մի յօլւածաշարք գրել:

Ի՞նչ է անում Կոպերնիկը:

Գրի՛ր ինձ նրա հասցէն:

Համբոյրներ բոլորիդ՝ **Նժդեհ**

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ՑԵՂԸ

Հայութեան ամենագորութենական տարրը, քաղաքական եւ այլ կարգի պատճառներով, անկարող ստեղծագործելու իր բնաշխարհում, յաճախ եւ յաճախ հարկադրուել է արտագաղթել:

Հայը Հայաստանից դուրս, հայը տարագիր, բայց ստեղծագործ - ահա՛ մեր Ցեղի ամենամեծ ողբերգութիւնը, միաժամանակ՝ նրա անօրինակ կենսունակութեան ամենայաղթական գրաւականը:

Ստեղծագործել, ասել է՝ հոգեւորապէս ազատ եւ անկախ լինել անգամ բռնութեան շղթաների տակ:

Արժէքներ ստեղծել, ասել է՝ հոգեւորապէս իշխել անգամ քաղաքական ստրկութեան մէջ:

Ստեղծագործ լինել, ասել է՝ յաղթական կանգնել առօրեայի, ժամանակի եւ մահուան դէմ, եւ իր համճարի լոյսով լուսաւորել Յաւիտենականի բարձունքները:

Արժէքագործել գիտնալ - ահա՛ ժողովուրդների՝ ազատ եւ անկախ ապրելու իրաւունքը, եւ ճշմարիտ չափանիշը, ըստ որի՝ ստեղծագործ ցեղերը հաւասար են ոչ միայն յաւիտենականի առջեւ, այլեւ գործնական կեանքում:

Հայը գիտցաւ համամարդկային արժէքներ ստեղծել անգամ օտար արեւների տակ, որով հաստատեց երեք բան՝

Որ անասելիօրէն մե՛ծ է իր հոգեւոր զօրութենականութիւնը:

Որ անխաթար է իր կենսաբանական բարոյականը:

Որ նա գիտէ իր ճակատագրի հանդէպ եղած անարդարութիւնը հատուցանել՝ մարդկութեան իր բերած ծառայութիւններով:

Մենք – ցեղային խոր մտահոգութեամբ – կ'ուզէինք, որ մեր երիտասարդ սերունդը, արդար հպարտանքով, ապրէր, հարազատէր այդ երեք ճշմարտութիւնները, որպէսզի կարողանար յաղթահարել օտար փեղի վրայ, իր ցեղային կեցուածքը հարուածող *Sentiment d'interiorite-ն*, ստորադասութեան, սակաւարժէքութեան, նուաստութեան զգացումը, եւ որպէսզի բարձրանար վեր, շա՛տ վեր առօրեայի մեղ ու միութեան շահերից ու հաճոյքներից՝ իր Ցեղի կուլտուրական փառքին արժանի դառնալու համար:

Մենք էլ կ'ուզէինք, որ մասնաւորապէս, նորահաս հայութիւնը գիտակցէր, թէ հայն այն ցեղերից չէ, որոնց մասին ցեղաբան Լապուժն ասում է - «Ի ծնէ ստրուկ, որոնք նոր տէրեր են փնտռում, հէնց որ հինը կորցրին,- մի բնագոյ, որ յատուկ է կարճագլուխների

բնութեան եւ շներին միայն»։ Մենք պատկանում ենք այն ժողովուրդների կարգին, որոնց մասին ասուած է՝ «ճակատն աստղերին դիպաւ»։

Կ'ուզէիք, որ խորապէս գիտակցուէր, թէ ցեղայինը, միայն ցեղայինն է զերծ պահում ժողովուրդի հոգին այլասերումից։

Խռովքոտ ժամանակներ ենք ապրում, երբ ազգերը բազմապիսի տագնապների շնորհիւ դարձել են օտարատեսցութեան աստիճան նեղսիրտ, երբ միջազգային լուսնոտ ռոմանտիզմն ու քաղաքական ուտոպիզմը իրենց տխուր մայրամուտն են ապրում, եւ *նորը*, ժամանակի նոր *նոզիմ* զարկում է հայրենիքների դռները եւ ուսուցանում, խրատում սերունդներին՝ չդողալ, չտկարանալ, երբ պէտք լինի կեանքի գնով իրենց Յեղի գոյութեան իրաւունքը պաշտպանել։ Այսպիսի մի ժամանակ մենք պէտք ունինք հոգեպէս թարմանալու, երիտասարդանալու։ Մենք պէտք է ուժ տանք մեր ցեղային ինքնաճանաչութեան։ Մենք պէտք է զինուինք հոգեբանական լաւատեսութեամբ, - մի հոգեւոր զէնք, որն այնքա՛ն անհրաժեշտ է մեր ցեղին Հայաշխարհից դուրս վիճակուած դժուարին գոյամարտը յաջողութեամբ վարելու համար։

Եւ, իրապէս, ի՞նչ է ցեղերի կեանքը, եթէ ոչ անդադրում պայքար՝ իրենց մահկանացութեան դէմ – իրենց յաւիտենականի համար։ Յեղերը տիեզերական էութիւններ են. նրանց մէջ բաժին ունին ե՛ւ երկիրը, ե՛ւ երկինքը։

Յեղերը մեռնում են, հէնց որ կտրուում են յաւիտենականից։ Իսկ կտրուում են յաւիտենականից, երբ դադարում են ստեղծագործել, հանճարել, արժէքներ ստեղծել։

Ասել է՝ ցեղերը իրաւունքի չափ եւ պարտականութիւն ունին իրենց յաւիտենականն ապահովելու։ Առ այդ՝ նրանք արժէքագործում են անզա՛ն տարագիր վիճակում։

1936, Վըրշեց
«Հայրենիք» օրաթերթ, հոկտեմբեր 7, 1936թ.

ՈՂՋՈՅՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»ԻՆ

Մեր անհայրենիք կեանքի այս գորշ օրերում, երբ տարագիր հայ սիրտն ու միտքը կը շարունակեն իրենց դեգերանքը «բաբելական գետափեր»ին, գերագոյն հաճոյք է ինձ համար` խորհրդածել Հայ Հայրենիքէն դուրս հայութեան մշակութային տարերքը սնուցանող հայ ամսագրի մասին:

«Հայրենիք»ն է դա` օրուան միակ մեր մեծ հանդէսը, որ եզականապէս իր փառաւոր տասնամեակը բոլորեց:

Ամենահարազատ հայ գիրքը - ահա՛ թէ ինչպիսին եղաւ եւ կը մնայ նա:

Նրա յաջողութիւնը` աննախընթաց մեր հրապարակագրութեան մէջ` պէտք է համարել ազգի յաջողութիւնը, որ կը պարտինք խմբագրութեան արտակարգ ճիգերուն եւ Նոր Աշխարհի հետ մեր կազմակերպութեան ոգուն:

Ողջոյն «Հայրենիք»ին:

* * *

Տօնելով գրքի, մասնաւորապէս հայրենի գրքի օրը, որ միշտ էլ ընկերա-հոգեբանական արգասիք է, ժողովուրդները էապէս իրենց մշակութաստեղծ հոգու օրը կը տօնեն:

Նրանք վաղուց են գիտակցել, թէ ցեղերի եւ մշակոյթների պայքարում յաջողում են այն ազգերը միայն, որոնք օգտուել գիտեն գաղափարներով զօրաւոր գրքի թագուն ոյժէն: Նրանք պաշտամունքերէն ամենաինաստալին համարում են գրքի պաշտամունքը եւ հրամայողաբար ստեղծում այդ` ճշմարիտ գրքի միջոցաւ մարդկային հանճարի նուաճումներէն օգտուիլ կարողանալու համար: Նրանք գիտեն, թէ ցեղային անհատականութեան եղծումը ոճիր է` ուղղուած մարդկութեան դէմ: Նրանք գիտեն, որ ազգայնութիւնը կենսագործ ոյժ է մարդկային մշակոյթի գործում, եւ աշխարհին բերում է ցեղաշունչ գիրքը, որպէս գործօն իրենց հոգեւոր վերածնունդի եւ ազգային վերելքի: Գիրքը խթանում է ցեղի ստեղծագործ ոյժերն ու առաքինութիւնները: Որպէս լուսատու փարոս, նա լուսաւորում է ազգերի եւ անհատների վերելքը կեանքում:

Գիրքն է, որ հայը հայ է պահում օտար աշխարհներում` իր հեռածիզ եւ վտանգալից ճամբաների վրայ: Գիրքն է դիմադրական

այն ոյժը, որով ցեղի ոգին յաղթականօրէն ծառանում է բոլոր այլասերիչ եւ չար ոյժերի դէմ:

Տեղի ոգու կեանքն է գիրքը: Տեղի բիւրեղացած միտքն է այն: Նաեւ՝ մէկը նրա ինքնայայտնութեան միջոցներէն:

Գիրքը այն զգեստն է, որ հագած՝ աշխարհ է գալիս ցեղի մտածունը:

Գիրքը հոգեւոր արտայայտիչն է տուեալ ժամանակաշրջանի գաղափարների եւ ապրումների:

Դարերն ու սերունդները իրար միացնող օղակն է գիրքը, որի միջոցաւ միայն կը հաղորդակցինք մարդկային հանճարի անցեալ հսկաների հետ:

* * *

Պէտք է գիտակցինք, որ մեր ազգայնութեան խնդիրների ուղիղ ըմբռնումէն եւ անսխալ լուծումէն է կախուած մեր ցեղի ապագան: Իսկ այդ հնարաւոր է միայն հարուստ մշակոյթի միջոցով: Իսկ մշակոյթ ասել է՝ նախ ճշմարիտ գիրք, գրականութիւն:

Մեր ճակատագիրը կը սրբագրուի, երբ կեանքում յաճախ երեւայ զօրաւոր գիրքը, որպէս ազգային ինքնատիպ մշակոյթի արտաքին աճումի եւ նրա ներքին իմաստաւորումի միջոց:

Մեր ճակատագիրը կը բարելաւուի, երբ գիրքը կատարի իր գերագոյն դերը՝ *վերադաստիարակել* ազգը եւ *իմաստաւորել* նրա պատմական առաքելութիւնը: Այդ յաջողուէ՞ց նրան՝ նա կը դնի հիմքը մեր ցեղային հզօրանքի, եւ այսպիսով ապահոված կը լինի նաեւ մեր ցեղային անհատականութիւնը համամարդկային ընտանիքում:

Ահա թէ ինչո՛ւ են ասում, որ անտարբերութիւն դէպի հայրենի գիրքը՝ ասել է անտարբերութիւն դէպի սեփական ճակատագիրը:

Անտարբերութիւն դէպի ճշմարիտ գիրքը, ասել է՝ անտարբերութիւն դէպի հոգեւորն ու ազգայինը. դա ասել է՝ հոգեւոր եւ ազգային բարոյալքում: Իսկ երբ դա իրողութիւն է՝ այլեւս տուեալ ժողովրդի դրօշակն ընկնում է գետին, այլոց ոտքի տակ, եւ նրա թիկունքում սպառնալիօրէն ցցւում է խաչը,- այլեւս վա՛յ նրան, կորա՛ծ է նա:

* * *

Ուր չկայ գիրքը, ճշմարտօրէն Մեծ Գիրքը՝ այնտեղ հոգեպէս մեռնում է ժողովուրդը:

Իսկ մեծ է այն գիրքը, որի մեջ ընթերցողը յաճախ իր ցեղի անհանգիստ սրտի զարկն է գգում:

Այս կարգի գրքերից է «Հայրենիք» ամսագիրը: Օրուան միակ կենսագործ հայ գիրքն է այդ, որ ամեն ամիս մեր առջեւ կը բանայ իմաստութեան իր էջերը, եւ լոյս ու ջերմութիւն կը սփռէ մեր անհայրենիք հոգու վրայ: Նա այլեւս դարձել է հոգեւոր անհրաժեշտութիւն հայութեան ազգայնօրէն խորհող ու զգացող մասի համար:

Միայն մի տասնամեակի ընթացքում «Հայրենիք» ամսագիրը մեծապէս զարգացրեց ընթերցասիրութիւնը մեր գաղթաշխարհում: Նա կանոնաւոր ընթերցողների մի ամբողջ բանակ ստեղծեց իր համար, ամրապնդելով կապը հայրենի գրքի եւ ընթերցողի, գրողի եւ ժողովրդի միջեւ: Եւ այդ իսկ պատճառով այսօր նա ջերմօրէն սիրւում է, փնտռւում, սպասւում:

Ժողովուրդէն սիրուելու համար, պէտք է սիրել նրան՝ անշահասիրօրէն:

«Հայրենիք»ը գիտցաւ, որ ժողովրդին պէտք է խօսել ոչ թէ «փղոսկրեայ ապարանքներ»ի բարձունքէն, այլ պէտք է գնալ դէպի նա, եւ խօսել նրան՝ իր հոգու միջոցաւ: Ահա՛ թէ ո՛ր է իր շուրջն ստեղծուած աննախընթաց գուրգուրանքի զաղտնիքը:

«Հայրենիք» ամսագիրը, ուր ապրեցնող ժողովուրդը ազատ է առաւելագոյն լաւատեսութեամբ նայելու իր կուլտուրական ապագային, ամենայն իրաւամբ կարող է տեղ գրաւել համամարդկային մշակութային կեանքում:

Ազգային պարտականութիւն համարենք «Հայրենիք»ին բաժանորդագրուիլը:

Օրուան մշակութային մեր ամենամեծ հպարտութիւնն է նա: Ապրեցնենք Հայ Մեծ Գիրքը՝ «Հայրենիք» ամսագիրը:

Սոֆիա
«Հայրենիք» օրաթերթ, հունվար 4, 1933թ.

ԾՈՎԸ ԿԸ ԽԱՐԱԶԱՆԵՆ

Պարսից յիմար թագակիրներէն Քսերքսէսը, որի բանակները կը փորձէին Ասիայի խաւարը Եւրոպա փոխադրել, իր կատաղութեան մէջ հրամայեց խարազանել իր զօրքերի ճամբան կտրող ծովը: Ապա հրամայեց շղթաներ նետել ալիքների մէջ՝ զանոնք սանձելու համար:

Նոյնը, այսօր նոյնն են փորձում Մոսկուայի եւ Էնկիւրիի գործակալները: Նրանք փորձում են շղթայի զարնել հայ մարտական ցեղայնութեան մշտախոռով տարերքը: Նրանք ընդունայն մեր ցեղի էութեան ծովն են խարազանում: Նրանք՝ թուրքը, բոլշեւիկն ու հակադաշնակցականը՝ մի կատաղի դռոյթ (*զրոհ, արշավ - խմբ.*) են սկսած ցեղակրօն հայութեան դէմ:

Չարագոյի թուրքը, մեր ցեղի մարմինը տրորելէն ու մեր հազարամեայ ստացուածքը կողոպտելէ յետոյ, այսօր բոլշեւիկմի զինակցութեամբ կաշուից դուրս է գալիս կողոպտելու նաեւ մեր ցեղի հոգու հարստութիւնները: Եւ հասկանալի է դա, չէ՞ որ մեր պատմական թշնամին քաջ գիտէ, թէ բարձր քաղաքականութեան մէջ գերագոյն տխմարութիւն է հօրը սպաննելէն յետոյ զաւակներին հոգեպէս անխաթար թողնելը:

Թուրքը երազում է *դժբախտութեան եւ ամօթանքի մի յաւիտենականութիւն* ապրեցնել մեր ցեղին: Եւ առ այդ՝ նա նկրտում է վերջնական դարձնել իր յաղթանակը:

Այդ բանում նրան սատար է հանդիսանում բոլշեւիկմը: Իսկ երրորդը՝ հակադաշնակցականը, վատաբար համբուրում է թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի հետ, եւ ծափ է զարնում: Իսկ մենք, մենք զգու՛ն ենք, բայց չենք զարմանում: Չենք զարմանում, որովհետեւ խորապէս հասկանում ենք հակադաշնակցականի արարքների էութիւնը:

Դա հին ցեղամերժն է՝ նոր անուամբ:

Դարերի խորքէն կուգայ նրա ծայնը, որի համար հայոց պատմութիւնը այնքա՛ն սեւ էջեր ունի պահած: Մենք ճանաչում ենք հայութեան ներքին թշնամին:

Մարդս ա՛յն է կատարում, ինչ որ է ինքը, - ասել է հին հոգեգիտութիւնը: Նորը պնդում է.- *Մարդս ա՛յն է, ինչ որ կատարում է:* Յետեւաբար հակադաշնակցականը կատարում է ա՛յն, ինչ որ չի կարող չկատարել:

Այդ վերջինի լայն աջակցութեամբ թուրքն ու բուլղարները յաջողել են ներս սողալ հայութեան որոշ տարրերի հոգու սեմէն, եւ այնտեղ աւերածութիւն առաջացնել:

Օրինակ, թուրքը չի ուզում լսել հայ դատի մասին, եւ ահա՛ հակադաշնակցականը մեր դատի նուիրականութիւնն է հայիոյում: Բուլղարները չի ուզում տեսնել մեր սրբազան Եռագոյնը, եւ ահա ներքին թշնամին ցեխ է նետում նրան: Եւ այդ աննախընթաց ուրացումը ծախում է միամիտ զանգուածներին որպէս քաղաքական իմաստութիւն:

Չէ՛, չէր տեսնուած, որ մի ժողովրդի որոշ տարրերը՝ հակաքարշ տարրերը իրենց ընկածութեան մէջ անարգէին սեփական սրբութիւնները եւ իրենց այդ լրբենի արարքը քաղաքականութիւն կոչէին:

Այո՛, չէր տեսնուած, բայց հայ գաղթաշխարհն այսօր ականատես է մարդկային հոգու այդ աննախընթաց անկումին:

Այլեւս փաստ է, որ որոշ տարրեր կ'ուզեն կորչել, կորչել հայօրէն, եւ պիտի կորչեն: Դա նշան է, որ *տառապանքի հնոցէն անցնող հայութիւնը սրբւում է իր կեդտերէն:*

Չաւաղենք ի զուր:

Անտեղի են մեր վայերը, քանզի անկարելի է փրկել այնպիսիներին, որոնք վճռել են անձնասպան լինել:

Արդարեւ, ի զուր են մեր կանչերն ու յորդորները, որովհետեւ, «ոչ առիժը աղուէսի որջը կը մտնի, ոչ էլ աղուէսը՝ առիժի»:

Հասկանանք այդ, հասկանանք, որ *պայքարը ցեղակրօն հայու եւ հակադաշնակցականի միջեւ էութիւնների պայքար է, եւ ոչ թէ ընթրումների եւ գործելակերպի:*

Հասկացի՛ր այդ, ցեղակրօն հայութիւն, եւ աշխատիր առիժի հետքեր թողնել մեր ցեղի կեանքում, ու մի՛ անհանգստանար, թէ մի օր աղուէսը՝ ներքին թշնամին, պիտի գայ իր աղբը փռելու քո թողած հետքերի վրայ:

Իսկ դո՛ւ, Հայոց արդար պատմութիւն, դու էլ հսկէ՛ արթուն, որ վաղը սեւով յաւերժացնես քեզ այնքա՛ն ծանօթ մեր ներքին թշնամու անունը:

Չէ՞ որ «զոր օրհնես դու՝ օրհնեալ է, եւ զոր անիծես՝ անիծեալ»:

«Հայրենիք» օրաթերթ, օգոստոս 11, 1933թ.

ԻՄ ԽՕՍՔԸ Գ.Յ.Դ. ՑԵՂԱԿՐՈՆ ՈՒԽՏԵՐԻՆ

Լսի՛ր, Ցեղակրօն:

Ձեզ, ցեղիս կամքի կորիւններ, Դրօշակի առաջին տօնակատարութեան առթիւ, ձեզ իմ խօսքն են ուղղում:

Սերունդ սերունդի ետեւէ կուգայ ու պատուի բռնած կ'անցնի ցեղի անմեռ արժէքներն ու սրբութիւնները, ցեղի անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու իրաւունքը խորհրդանշող ազգային Դրօշակի առջեւից:

Այսպէս է եղած բոլոր դարերում, բոլոր ազգերի մօտ:

Այսպիսին է եղած՝ եւ անթիւ սերունդների արիւնով, քրտինքով ու արցունքով օծուն Եռագոյնը մեր: Օտար ազգերի պէս մենք էլ դրօշակով կը ներկայանանք աշխարհին:

Մենք էլ ազգային դրօշակով կը խօսինք մարդկութեան:

Եւ աշխարհն ու ազգերը՝ նայելով մեր Եռագոյնին՝ կը տեսնեն մեզ, կը հասկանան մեզ:

Դրօշակը ցեղի արքայական ծիրանին է, որ երբեք ծախու չհանուեց ձեզ ծնող ժողովրդի կողմից: Դա հոգեւոր կերպարանքն է, բազմակնճիռ դէմքը մեր ցեղի:

Դա ցեղի գերագոյն Ես-ն է, նրա մշտարթուն մտածումը, նրա կամքն է աշխարհի անիրաւութեան դէմ ծառայած:

Մեր ազգային եւ մարդկային պարտականութեանց աստուածութիւնն է Եռագոյնը:

Մասնաւորապէս մեր օրերի համար ազգային դրօշակ ասել է՝ սրբութիւն, քաղաքական դատ եւ ազգային ոգի - անվիճելի արժէքներ, որոնց պաշտպանութեան համար Ցեղակրօն ուխտերդ երդուած էք պայքարել՝ աննահանջ, զոհաբերել՝ քաղցրօրէն, եւ կարիքի դէպքում՝ մեռնել քաջաբար:

Ուխտակիցներ, Դրօշակի Օր է այսօր:

Այս հանդիսաւոր օրը, հոգով ձեզ հետ, կուգամ ասելու ձեզ, որ մեր ցեղը իր անօրինակ գողգոթաների մէջ իսկ չտկարացաւ, որ նա գիտցաւ ժպտիլ անմարդկային ցաւերու մէջ իսկ, եւ ամենադաժան պայմաններում ստեղծագործութեան աստուածօղէն հետքեր թողեց արեւի տակ, ազգերի կողքին. նա կեանքի գրեթէ բոլոր մարգերում ունեցաւ մեծագործութիւններ, որոնք իր անմահութեան պատուանդանը կը կազմեն:

Այսօր կուգամ յիշեցնելու ձեզ, որ պարտականութեան, գործի եւ զոհաբերութեան մէջ ձեր բաժինը պիտի լինի առիւծի բաժինը:

Ու դուք աւելի մեծ պարտականութիւն ունէք ցեղի հանդէպ, քան ունէր հին սերունդը, որովհետեւ հայութեան եւ Յայաստանի ապագային սպառնացող *թրքօրոյշելիզմը* մեծ, աննախընթացօրէն մեծ վտանգ է, որին դուք, ցեղակրօնաբար, կուրծք պիտի տաք:

Ահա՛ թէ ինչո՞ւ եմ ասում` պաշտեցէ՛ք ցեղը, որ ճանաչէք նրան:

Ճանաչէ՛ք ցեղը, որ հոգեփոխուէ՛ք, հզօրանա՛ք, որ ձեր մէջ ապրի Ջօրութեան եւ Գերազանցութեան սէրը, որ ձեր սրտերի եւ բազուկների մէջ մեր ցեղի կենսարիւնը եւ ոյժը բնակին, որ օտար ազգերի նորափթիթ սերունդը յարգանք ունենայ ձեր Եռագոյնի, հիացում` նրա պահակի – ձեր Յեղակրօն սերունդի հանդէպ:

1934, 10 օգոստոս

Պոսթըն

«Յայրենիք» օրաթերթ, օգոստոս 12, 1934թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ՅԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ	4
I. ԿԱՅ ՄԱՐԴԸ՝ ԿԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ	5
II. ՉԽՐԱՏՈՒՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ	8
III. ՈԱԶՄԱՐՈՒԵՍՏ (ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ)	11
IV. ՑԵՂԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹԻՒՆ	39
V. ՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ	61
VI. ՀԱՅ ԶԷՆՔԻ ԱՆՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	64
VII. ՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	73
VIII. ՆՈՐ ՀԱՅԸ	91
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻՆ	93
ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ՑԵՂԸ	150
ՈՂՋՈՅՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»ԻՆ	152
ԾՈՎԸ ԿԸ ԽԱՐԱԶԱՆԵՆ	155
ԻՄ ԽՕՍՔԸ Հ.Յ.Դ. ՑԵՂԱԿՐՕՆ ՈՒԽՏԵՐԻՆ	157

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ
ՅԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 10 տպ. մանուկ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo.com
www.vmv-print.am